1898 Ch

2000

1016 ... 527 6.

# ՍԱՂՄՈՍ
## Երջանիկ Մարգարէին Դաւթի։

Տպագրեցաւ ՚ի Հայրապետութեան տն Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

՚Ի Էջմիածնականս Վանս

1219։

9066-57



Ձեռք իմ արարին զՍաղմոսարան , և
Մատունք իմ կազմեցին զքնարն օրհնութեանց

## Սաղմոս Դաւթի.
## Ա

ԵՐԱՆԻ

այր՝ որ ոչ գնաց ՚ի
խորհուրդս ամբա-
րշտաց. ՚ի ճանա-
պարհի մեղաւորաց նա ոչ եկաց.
և յաթոռս ժանտից ոչ
նստաւ.



Այլ

Այլ յօրէնս տն են կամք նորա, և յօրէնս նր խորհեսցի նա՛ ՚ի տուէ և՛ ՚ի գիշերի. և եղիցի նա՛ որպ ծառ
որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց։
Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ և տերև նր մի՛ թափեսցի. և զամ զոր ինչ արասցէ՝ յաջողեսցի նմա։
Ո՛չ այսպէս են ամբարիշտք և ո՛չ այնպէս. այլ որպ հողմ զփոշի՝ զոր
հոսէ ՚ի վերայ երեսաց երկրի։
Վս այսորիկ ո՛չ յարիցեն ամբարիշտք ՚ի դատաստան. և ո՛չ մեղաւորք ՚ի խորհուրդս արդարոց։
Բանզի ճանաչէ տր զճանապարհս արդարոց. ճանապարհք ամբարշտաց կորիցեն։

Անվերնագիր ՚ի յեբրայեցիսն. Ասորւոցն
առաջ ընդ մի համար են։ Բ։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։
Յանդիման եղեն թագաւորք երկ


րի

րն, եւ իշխանք ժողովեցան իմիասին
վ̃ տ̃ն եւ վասն օծելոյ նորա։
Խզեսցուք զկապանս նոցա, եւ ըն
կեսցուք ՚ի մէնջ զլուծ նոցա։
Բնակեալն յերկինս ծիծաղեսցի
զնոքօք, եւ տ̃ր արհամարհեսցէ զն̃ս։
Յայնժամ խօսեսցի ընդ ն̃ս բար-
կութ̃բ իւրով, եւ սրտմտութեամբ
իւրով խռովեցուսցէ զնոսա։
Ես կացի թագաւոր ՚ի նմանէ ՚ի
վերայ լերինն սիօնի սրբոյ նորա,՚ի
պատմել զհրամանս տ̃ն։
Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու,
եւ ես այսօր ծնայ զքեզ։
Խնդրեա՛ յինէն եւ տաց քեզ զհե-
թանոսս ՚ի ժառանգութ̃ի եւ իշխա
նութ̃ի քեզ ընդ ա̃մ ծագս երկրի։
Հովուեսցես զնոսա գաւազանաւ
երկաթեաւ. որպէս զանօթ բրտի
փշրեսցես զնոսա։
Արդ թագաւորք զայս ՚ի մի՛տ ա-
ռէք. եւ խրատեցարո՛ւք ամենեքեան

որք դատէք զերկիր։
Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, եւ ցնծացէք առաջի նորա դողութեամբ։
Ընկալարուք զխրատ նորա՝ զի մի՛ բարկասցի Տէր, եւ կորնչիցիք ի ճանապարհաց արդարութեան։
Ի ժամանակի յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա։
Երանի ամենեցուն որ յուսացեալ են ի Տէր։

Սաղմոս Դաւթի. Ի ժամանակի՝ յորժամ փախուցեալ էր նա յերեսաց Աբիսողոմայ որդւոյ իւրոյ. Գ.

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ եւ բազումք յարեան ի վերայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ թէ չիք փրկութիւն սորա առ Աստուծոյ իւրում։
Բայց դու Տէր օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի եւ լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի եւ ի քուն եղէ, զար-


թեայ

թեայ՝ և տէր ընդունելի իմ է։
Ո՛չ երկեայց ես 'ի բիւրաւոր զօ-
րաց նոցա, որք շուրջ զինև պա-
տեալ պաշարեալ պահէին զիս։
Արի՛ տէր և փրկեա զիս ած իմ, զի
դու հարեր զամենն որք էին ընդ իս
թշնամութե՛ 'ի տարապարտուց, և
զատամունս մեղաւորաց փշրեցեր։
Տեառն է փրկութի՛ 'ի վերայ ժողո
վրդեան քո օրհնութիւն քո։

* Ի կատարած ընդ օրհնութեան
Սաղմոս Դաւթի։ Դ։

Ի կարդալ իմում լուար ինձ
ած ըստ արդարութե. 'ի նեղ-
ութենէ ինձ անդորր ա-
րարեր. ողորմեա ինձ և լուր աղօ-
թից իմոց։
Որդիք մարդկան մինչև յերբ էք
խստասիրտք. ընդէր սիրէք զնան-
րութիւն, և խնդրէք զստութի։
Ճանաչերուք՝ զի սքանչելիս արար
տէր

որ սրբոյ խաչում. եւ տէր լուսեցէ
ինձ ՚ի կարդալ իմում առնա։

Բարկանայք եւ մի՛ մեղանչէք. զոր
ինչ ասէք ՚ի սիրտս ձեր, յանկո-
ղինս ձեր զղջացարո՛ւք։

Մատուցէ՛ք պատարագս արդարու-
թեան, եւ յուսացարո՛ւք ՚ի տր̄։

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ
զբարութի̄ տն̄. նշանեցաւ առ մեզ
լոյս յերեսաց քոց. եւ ետուր ուրա-
խութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ՝ գինոյ՝ եւ ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութբ̄ յայս եւ ՚ի սոյն ննջես-
ցուք եւ զարթիցուք. զի դու տր̄
միայն առանձին յուսով քով բնա-
կեցուցեր զմեզ։

Ի կատարած վասն ժառանգաւորին,
Սաղմոս Դաւթի. Ե։

Բանից իմոց ունկն դիր տէր, եւ ՚ի
մի՛տ առ զաղաղակ իմ։

Նայեա՛ ՚ի ձայն աղօթից իմոց՝ թա-
գաւոր իմ եւ ած̄ իմ։



Ես

Ես զքեզ աղաչեմ տ՟ր՝ ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել առ քեզ։

Մի թէ դու ա՟ծ կամիս զանօրէնութիւն, և ո՛չ բնակին առ քեզ չարք. և անօրէնք մի՛ բնակեսցեն առաջի աչաց քոց։

Ատեցեր զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան որք խօսին զսուտ։

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պղծ առնես դու տ՟ր. այլ ես ըստ բազում ողորմութ՟ե քում, մտից ՚ի տուն քո՝ և երկիրպագից ՚ի տաճար ս՟բ քո երկիւղիւ քո։

Տ՟ր՝ առաջնորդեա ինձ յարդարութ՟ե քում. վ՟ս թշնամեաց իմոց՝ ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո։

Զի ո՛չ գոյ ՚ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են։

Որպ՟ գերեզման բաց են կոկորդք

նո

նոցա, և լեզուօք իւրեանց նենգա-
ւորք եղեն։

Դատեա՛ զնոսա ա̃ծ՝ զի անկցին ՚ի
խորհրդոց սրտից իւրեանց. ըստ
բազում ամբարշտութեան նոցա՝
մերժեա՛ զնոսա, զի դառնացուցին
զքեզ։

Ուրախ լիցին ա̃մքն որք յուսացեալ
են ՚ի քեզ. յաւիտեան ցնծասցեն
և բնակեսցես դու ՚ի նոսա։

Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք ան-
ուան քո՝ զի օրհնեսցես դու զար-
դարն Տր̃. ո̃պ զինու հաճութ̃ քով
պսակեցեր զնոսա։

Ի կատարած ընդ օրհնութեան, սաղմոս Դաւթի։ ԼԷ։

Տէր մի՛ սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս, և մի՛ բար-
կութ̃ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ ինձ Տր՝ զի հիւանդ եմ
ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռո-
վեցան ոսկերք իմ։



Անձն

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր մինչև յե՞րբ։

Դարձի՛ր Տէր և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստովան առնիցէ առ քեզ։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում, լուա՛ցի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամ թշնամեաց իմոց։

Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց, և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Սաղմոս Դաւթի՝ զոր ասաց Տեառն բանիցն Քուսայ որդւոյ Յեմինեայ։ Է.

Տէր իմ 'ի քեզ յուսացայ փրկեա զիս. և յա̃մ հալածչաց իմոց ապրեցո զիս։

Գուցէ երբէք յափշտակեսցէ որպ̃ առիւծ զանձն իմ. ո՛չ ոք իցէ որ փրկիցէ, և ո՛չ այն որ ապրեցուցանիցէ.

Տ̃ր Ա̃ծ իմ թէ արարի զայս, և թէ իցեն անօրէնութ̃ք 'ի ձեռս իմ։

Թէ հատուցի երբէք այնոցիկ՝ որք հատուցին ինձ չար, անկեայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն.

Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ, հասցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ, և զփառս իմ 'ի հող բնակեցուսցէ։

Արի՛ Տ̃ր բարկութ̃ քով, և բա՛րձր լե՛ր 'ի սպառիլ թշնամեաց իմոց։

Զարթի՛ր Տ̃ր Ա̃ծ իմ 'ի հրամանս քո զոր պատուիրեցեր. և ժողովք



ժո

ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ։
Վ̄ այսորիկ ՚ի բարձունս դարձ տ̄ր
եւ տ̄ր դատէ զժողովուրդս իւր։
Դատ արա ինձ տ̄ր՝ ըստ արդարու-
թեան իմում, եւ ըստ անմեղութե̄
իմում որ յիս։
Կատարեսցին չարիք ՚ի վ̄ր մեղաւո-
րաց, եւ յաջողեսցես դու արդարոյ։
Որ քննէ զսիրտս եւ զերիկամունս
ա̄ծ արդար. յիրաւի՛ է օգնութի̄
յա̄յ՝ որ ապրեցուցանէ զայնոսիկ
ոյք ուղիղ են սրտիւք։
Ա̄ծ դատաւոր արդար՝ հզօր եւ եր-
կայնամիտ. որ ո՛չ ածէ զբարկու-
թիւն իւր զօրհանապազ։
Ապա թէ ո՛չ դառնայք առ նա, ըզ-
սուր իւր սրեալ է՝ եւ զաղեղն իւր
լարեալ. եւ ՚ի նմա պատրաստեալ է
զանօթս մահու. եւ զնետս իւր
այրեցելովք է գործեալ։
Ահաւասիկ երկնեաց զանօրէնու-
թիւն, յղացաւ զցաւս եւ ծնաւ
զանիրաւութիւն։

 Գուբն

Գուբն զոր փորեաց և պեղեաց, ՚ի նոյն անկցի ՚ի խորխորատ՝ զոր և գործեաց։

Դարձցին ցաւք ՚ի գլուխ նորա, ՚ի վերայ գագաթան նորա անօրէնութիւնք իւր իջցեն։

Խոստովան եղէց տեառն ըստ արդարութէ նորա, և սաղմոս ասացից անուան տ՟ն բարձրելոյ։

## ※ Ի կատարած ՚ի վերայ հնձանացն՝ Սաղմոս Դաւ՟թի։ Ը։

Տէ՟ր տ՟ր մեր՝ զի սքանչելի է անուն քո ՚ի վերայ ա՟մ երկրի։

Համբարձաւ մեծ վայելչութի՟ւ քո ՚ի վերայ քան զերկինս. ՚ի բերանոյ մանկանց տղայոց և ստընդեայց հաստատեցեր զօրհնութիւն։

Վ՟ն թշնամեաց քոց տ՟ր՝ զի եղծցի թշնամին և հակառակորդն։

Տեսից յերկինս զգործս մատանց քոց. զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր.



Ո՞վ

Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ թէ այց ինչ ա-
ռնացես դու նմա։

Փոքր ինչ խոնարհ արարեր ըզնա քան զհրեշտակս քո. փառօք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր
զնա ՚ի վր̅ ա̅մ ձեռակերտաց քոց։

Զամենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նր̅. զխաշն և զար-
ջառն և զամենայն ինչ։

Եւս և զերէվայրի, զթռչունս երկ-նից՝ և զձկունս ծովու՝ որք շրջին
ընդ շաւիղս ծովու։

Տր̅ տր̅ մեր՝ զի սքանչելի է անուն
քո ՚ի վերայ ա̅մ երկրի։

## ՚Ի կատարած վասն գաղտնեաց որդւոյն Սաղմոս Դաւթի Թ։

Գոհացայց զքեզ տր̅՝ բոլորով սրտիւ իմով. պատմեցից զա-
մենայն ըսքանչելիս քո։

Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ.



սաղ

սաղմոս ասացէք անուան տեառն
բարձրելոյ։
'Ի դառնալ յետս թշնամեաց իմոց՝
տկարասցին և կորիցեն յերեսաց քոց։
Արարեր զդատաստանս իմ և զի-
րաւունս . նստար յաթոռ դատաւ-
որ արդարութեան ․
Սաստեցեր 'ի հեթանոսս՝ և կորեաւ
ամպարիշտն . զանուանս նոցա ջնջեցեր
յաւիտեանս յաւիտենից . և թշնա-
մոյն զէն՝ պակասեաց մինչ իսպառ։
Զքաղաքս աւերեցեր, և կորեաւ
յիշատակ նոցա աղաղակաւ ․
Տէր կայ և մնայ յաւիտեան . պատ
րաստ արար զաթոռ իւր 'ի
դատաստանի։
Ինքն դատէ զաշխարհս արդարութեամբ
և զժողովուրդս իւր ուղղութեամբ։
Եղև Տէր ապաւէն տնանկի . օգնա
կան 'ի նեղութեան 'ի դէպ ժամանակի։
Յուսասցին 'ի քեզ ամենեքին որք գի-
տեն զանուն քո . զի ոչ թողեր
զայնոսիկ որք խնդրեն զքեզ Տէր։

Սաղմոս ասացէք տեառն՝ որ բնակեալ է 'ի սիօն . պատմեցէք 'ի հեթանոսս զգործս նորա:

'Ի խնդրել զարիւն նոցա՝ յիշեց . և ո՛չ մոռացաւ տր̃ զաղօթս տնանկաց:

Ողորմեա́ ինձ տր̃՝ և տես զխոնարհութիւն իմ 'ի թշնամեաց իմոց . ո՛ բարձր արարեր զիս 'ի դրանց մահու:

Որ պատմեցից զամ̃ օրհնութի̃ս քո 'ի դրունս դստեր սիօնի՝ և ցնծացայց 'ի փրկութեան քում:

Ընկղմին հեթանոսք յապականութեան իւրեանց զոր արարին . և որոգայթ զոր թագուցին՝ առցէ զոտս նոցա:

Ճանաչի տր̃ յառնել ըղ դատաստանս իւր . և 'ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք:

Դարձցին մեղաւորք անդրէն 'ի դժոխս . և ամ̃ հեթանոսք որք մոռացան զա̃ծ:

Ո՛չ իսպառ մոռանայ տր̃ զաղքատն.



3066-58/1016

համբերութիւն ընտանեկաց մի՛ կը-
րիցէ իսպառ։

Արի՛ Տ͞ր՝ և մի՛ զօրասցի մարդ. դա-
տեսցին հեթանոսք առաջի քո։

Կացո՛ Տ͞ր՝ և օրէ՛նս դիր 'ի վերայ
նոցա. և ծանիցեն հեթանոսք
թէ մարդիկ են։

Ընդէ՞ր Տ͞ր կացեր 'ի հեռաստանէ.
անտես արարեր՝ 'ի դէպ նեղութ͞ե
ժամանակի։

Յամբարտաւանել ամբարշտին,
այրի աղքատն. արգելցին 'ի խոր-
հուրդս իւրեանց զոր և խորհեցան։

Զի գովի մեղաւորն 'ի ցանկութ͞ի
անձին իւրոյ. որ զրկէ՛ն, և նմա գովի։

Իսկ ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն
զ͞ած. ըստ բազում բարկութեան
իւրում թէ ոչ խնդրի։

Ո՛չ է ա͞ծ առաջի աչաց ն͞ր. պիղծ
են ճանապարհք ն͞ր յա͞մ ժամ։

Բարձեալ են իրաւունք յերեսաց
նորա. 'ի վերայ ամենայն թշնամեաց
իւրոց տիրեսցէ։

Ասաց ՚ի սրտի իւրում թէ ոչ սասա–
նեցայց յազգէ յազգ. առանց չարի։
Անիծիւք և դառնութեամբ և նենգութեամբ լի է բերան նորա ․ և ՚ի ներքոյ լեզուի նորա՝ ցաւք և վաստակք։
Նստի դարանեալ ընդ մեծամեծս ՚ի գաղտնիս՝ սպանանել զանմեղն։
Աչք նորա ՚ի տնանկս հային ․ դարանի ՚ի գաղտնիս որպէս առիւծ ՚ի մորւոջ իւրում։
Դարանի յափշտակել զաղքատն, յափշտակել զաղքատն և ձգել զնա
Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ զնա ․ խոնարհեսցի՝ անկցի ՚ի տիրել իւրում ՚ի վերայ տնանկաց։
Ասաց ՚ի սրտի իւրում թէ մոռացաւ ած ․ դարձոյց զերեսս իւր զի մի՛ տեսցէ իսպառ։
Արի՛ տէր ած իմ բարձր եղիցի ձեռն քո ․ և մի՛ մոռանար զտնանկս։
Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամբարիշտըն զած, զի ասաց ՚ի սրտի իւրում թէ ոչ քննի։

Տեսանես դու զնա 'ի ցասումն՝ և 'ի
սրտմտութիւնս հայիս. 'ի քեզ թո
ղեալ է աղքատն. և որբոյն դու
ես օգնական:

Խորտակեսցի բազուկ մեղաւորի
և չարի. խնդրեսցին մեղք նորա՝
և նա մի՛ գտցի:

Տ՟ր թագաւոր յաւիտեանս յաւի
տենից. կորիցեն հեթանոսք
յերկրէ նորա:

Զցանկութիւն տնանկաց լուաւ
տէր. 'ի պատրաստութիւն սրտից
նոցա հայեցաւ ունկն քո:

Դատ առնել որբոյն և տնանկի.
զի մի՛ ևս յաւելցի մարդ 'ի մեծաբա
նել իւրում 'ի վ՟ր երեսաց երկրի:

'Ի կատարած Սաղմոս Դաւթի:

Ժ.

Ի Տ՟Ր յուսացայ՝ որպէս ասի
ցէք ցանձն իմ փախիր եաց
'ի լերինս ոպ՟ ճնճղուկ:

Զի ահա մեղաւորք լարեցին զա
ղեղունս իւրեանց · պատրաստ ա
րարին զնետս ՚ի կապարճս · ձգել
ընդ խաւար զայնոսիկ որք ուղիղ
են սրտիւք ։

Զի զոր դու շինեցեր, նոքա աւե
րեցին · իսկ արդարն զի՞ արար ։

Տէր ՚ի տաճար սուրբ իւրում · տէր
յերկինս յաթոռ իւրում ։

Աչք նորա ՚ի տնանկս հային · արտեւ
անունք նորա քննեն զորդիս մարդկան ։

Տէր քննէ զարդարն և զամբարիշտն
որ սիրէ զմեղս, ատէ զանձն իւր ։

Տեղասցէ ՚ի վերայ մեղաւորաց որո
գայթ · հուր և ծծումբ · այս մրր
րիկ՝ բաժին բաժակի նոցա ։

Արդար է տէր և զարդարութիւն սիրէ ·
զուղղութիւն տեսանեն երեսք նորա ։

## Սաղմոս Դաւթի ։ ԺԱ ։

Փրկեա՛ զիս տէր՝ զի նուաղեաց
սուրբ · նուաղեցան ճշմարտութիւնք
յորդւոց ՚ի մարդկանէ ։

Ինանիր խօսեցաւ այր ընդ ընկե-
րի իւրում. շրթամբք նենգաւո-
րօք սրտէ 'ի սիրտ խօսեցաւ:

Սատակէ Տէր զամենայն շրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս:

Որք ասացին՝ զլեզուս մեր մեծա-
րասցուք. շրթունք մեր առ մեզ
են, և արդ մեր ո՞վ է տէր:

Վասն տառապանաց աղքատին և
հեծութեան տնանկին՝ այժմ յա-
րեայց ասէ Տէր. եդից զփրկութիւն
և համարձակեցայց 'ի նմա:

Բանք Տեառն են բանք սուրբք. որպէս
զարծաթ ընտրեալ և փորձեալ
յերկրէ. սրբեալ և պարզեալ
եօթնպատիկ 'ի հողոյ:

Դու Տէր պահեսցես զմեզ. և ապրե-
ցուցես զմեզ յազգէ յայսմանէ
մինչև յաւիտեան:

Շուրջանակի ամբարիշտք շրջին
ըստ բարձրութեան քում. մեծա-
րասցես դու զորդիս
մարդկան:

 Մին

## Սաղմոս Դաւթի. ԺԲ.

Մինչեւ յերբ Տ՟ր մոռանաս զիս իսպառ. մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Մինչեւ յերբ դնեմ զխորհուրդս յանձն իմ. եւ ցաւք սրտի իմոյ զաւուրս։

Մինչեւ ցերբ բարձրանայ թշնամին ՚ի վ՟ր իմ. նայեա եւ լուր ինձ Տ՟ր ա՟ծ իմ։

Լոյս տուր աչաց իմոց՝ զի մի երբեք ննջեցից ՚ի մահ։

Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

Ես յողորմութիւնս քո Տ՟ր յուսացայ. ցնծասցէ սիրտ իմ ՚ի փրկութեան քում. օրհնեցից զՏ՟ր զբարերարն իմ։

## Սաղմոս Դաւթի. ԺԳ.

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ ա՟ծ։

 Ապա

Ապականեցան և պղծեցան յանօ-
րէնութեան իւրեանց. և ո՛չ ոք է
որ առնէ զքաղցրութիւն։
Տ՟ր յերկնից նայեցաւ յա՟մ որդիս
մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք
իմաստուն որ խնդրիցէ զա՟ծ։
Ամենեքեան խոտորեցան իմիասին
և անպիտանացան։
Ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութ՟ի,
և ո՛չ ոք մինչև ՚ի մի։
Ո՞չ ծանիցեն ամենեքեան՝ որք
գործեն զանօրէնութիւն։
Որք ուտէին ըզ ժողովուրդ իմ
որպէս կերակուր հացի, և առ տ՟ր
ո՛չ կարդացին։
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ո՛չ իցէ
երկիւղ. զի տ՟ր է յազգս արդարոց։
Զ խորհուրդ աղքատին յամօթ ա-
րարին. զի տ՟ր է յոյս նորա։
Ո՛ տացէ ՚ի Սիօնէ ըզ փրկութիւն
իս՟ղի. ՚ի դարձուցանել տ՟ն ըզ գե-
րութի ժողովրդեան իւրոյ, ցնծաս-
ցէ յակոբ՝ և ուրախ եղիցի իս՟ղ։


Տ՟ր

## 'Ի կատարած Սաղմոս Դաւթի ԺԴ.

Տ՛ ով կացցէ 'ի խորանի քում. կամ ով բնակեսցի 'ի լեառն ս՟բ քո։

Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով. և չար ընկերի իւրում ոչ արար։ Նախատինս 'ի մերձաւորաց նա ոչ առնու. արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Զերկիւղածս տեառն փառաւոր առնէ. որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ։

Զարծաթ իւր 'ի վաշխու ոչ տայ. և կաշառս 'ի վերայ անպարտից ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի' սասանեսցի յաւիտեան։

## Սաղմոս Դաւթի։ ԺԵ։

Պահեա զիս ա՟ծ իմ, զի ես 'ի քեզ



յու-

յուսացայ. ասացի տ՟ն՝ տ՟ր իմ ես
դու. և բարիք իմ ինձ 'ի քէն են։
Սրբոց քոց որք են յերկրի քում, ըս
քանչելի արարեր զա՟մ կամս իմ 'ի նոսա։
Յաճախեցին հիւանդութիւնք նոցա.
յետ այսորիկ ապա վաղվաղեցին։
Ոչ ժողովեցայց 'ի ժողովս նոցա
արեանց. և ոչ յիշեցից զանուանս
նոցա 'ի շրթունս իմ։
Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝
և բաժակի իմոյ դու ես, որ այս
րէն դարձուցանես զժառանգու
թիւն իմ յիս։
Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս.
և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։
Օրհնեցից զտ՟ր որ իմաստուն արար
զիս. մինչ 'ի գիշերի ևս խրատեցին
զիս երիկամունք իմ։
Յառաջագոյն տեսանէի զտ՟ր առա
ջի իմ յա՟մ ժամ. զի է ընդ աջմէ
իմմէ՝ զի մի՛ սասանեցայց։
Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ
իմ և ցնծացաւ լեզու իմ. ևս և



մար

մարմին իմ բնակեսցի յուսով։
Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։
Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ։

## Սաղմոս Դաւթի. ԺԶ։

Լուր Տ̃ր արդարութե̃ և նայեաց 'ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք։
Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։
Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր 'ի գիշերի. փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։
Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վ̃ս բանից շրթանց քոց՝ ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանա-
պարհի քում, զի մի՛ գայթակղես-
ցին գնացք իմ։

Ես առ քեզ տ̃ր կարդացի՝ զի լը-
ւար ինձ ա̃ծ. խոնարհեցո՛ առ իս
զունկն քո և լո՛ւր բանից իմոց։

Սքանչելի արարեր զողորմութիւնս
քո. ո՛ փրկես զայնոսիկ որ յուսա-
ցեալ են 'ի քեզ՝ յայնցանէ որք հա
կառակ կան աջոյ քո։

Պահեա՛ զիս ո̃պ բիբ ական ընդ հո
վանեաւ թեւոց քոց. ծածկեսցես
զիս յերեսաց ամբարշտաց որք տա-
ռապեցուցին զիս։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին.
և 'ի ճարպս իւրեանց արգելին. և
բերանք նոցա խօսեցան զամբար-
տաւանութիւն։

Մ՝երժեցին զիս՝ և այժմ դարձեալ
պատեցան զինև. ուշ եդին խոնար
հեցուցանել զիս յերկիր։

Համարեցան ինձ որպէս առիւծ
զի պատրաստի յորս. որպէս կորիւն

 առիւ

առիւծու զի նստի դարանեալ։

Արի՛ Տ͞ր՝ ժամանեա՛ նոցա եւ խափանեա՛ զնոսա. փրկեա՛ զանձն իմ յամբարշտաց. ՚ի սրոյ՝ եւ ՚ի ձեռաց թշնամւոյն։

Տէր՝ կորո՛ զն͞ս յերկրէ. բաժանեա՛ եւ խափանեա՛ զն͞ս ՚ի կեանս իւրե͞նց։

Գաղտնեօք քովք լցան որովայնք նոցա. յագեցան կերակրովք՝ եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց։

Ես արդարութեամբ երեւեցայց երեսաց քոց, եւ յագեցայց յերեւիլ փառաց քոց։

՚Ի նորոգումն Սաղմոս Դաւթի։

Սիրեցից զքեզ Տ͞ր զօրութի͞ն իմ. Տ͞ր հաստատիչ իմ ապաւէն իմ եւ փրկիչ իմ։

Ա͞ծ օգնական իմ, եւ ես յուսամ ՚ի նա. ապաւէն իմ, եղջիւր փր կութ͞ն իմոյ ընդունելի իմ է։

Օրհնելով կարդացից առ Տ͞ր, եւ ՚ի

'ի թշնամեաց իմոց ապրեցայց։

Շուրջ եղեն զինև երկունք մա
հու. և ուխք անօրէնութեն խռո
վեցուցին զիս։

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս
և ժամանեցին ինձ որոգայթք մահու։
Ի նեղութե իմում ես առ տ՟ր կար
դացի. և առ ա՟ծ իմ աղաղակեցի։
Լուաւ ինձ 'ի տաճարէ ս՟րբ իւրմէ
ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ
առաջի նորա մտցէ յականջս նորա։
Խռովեցաւ և դողաց երկիր. և
հիմունք լերանց սասանեցան և խռ
ովեցան. զի բարկացաւ 'ի վերայ
նոցա ա՟ծ։

Ել ծուխ 'ի բարկութենէ ն՟ր. և
հուր յերեսաց ն՟ր բորբոքեցաւ. և
փայլատակունք հատան 'ի նմանէ։
Խոնարհեցոյց զերկինս՝ և էջ. և
մէգ 'ի ներքոյ ոտից նորա։

Ել 'ի քրովբէս՝ և թռեաւ. սլացաւ
նա 'ի թևս հողմոց։

Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր. և

շուրջ զնովաւ են յարկք իւր. եւ խա-
ւարային ջուրք մինչեւ յամպս օդոց։
Ի փայլատակել նորա առաջի նոցա,
ամպք անցուցին զկարկուտ եւ
զկայծակունս հուր։
Որոտաց Տր յերկնից. եւ բարձ-
րեալն ետ զձայն իւր ՚ի կարկուտ
եւ ՚ի կայծակունս հուր։
Առաքեաց զնետս իւր՝ եւ ցրուեաց
զնս. յաճախեաց զփայլատակունս
իւր՝ եւ խռովեցոյց զնոսա։
Երեւեցան աղբերք ջուրց, եւ յայտ
նեցան հիմունք աշխարհի։
Ի սաստէ քումմէ Տր, եւ ՚ի շնչել
հողմոյ բարկութե քո։
Առաքեաց ՚ի բարձանց եւ ընկալաւ
զիս. ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց։
Փրկեսցէ զիս տէր ՚ի թշնամեաց
իմոց հզօրաց. եւ յատելեաց իմոց,
զի հզօրք եղեն քան զիս։
Ժամանեցին ինձ աւուրք չարչա-
րանաց իմոց. եղեւ Տր հզօրիչ իմ
եւ եհան զիս յանդորր. փրկեսցէ

զիս Տր՝ զի կամեցաւ զիս։
Հատուսցէ ինձ Տր ըստ արդարու-
թեան իմում. ըստ ամբծութեան
իմում հատուսցէ ինձ։
Ես պահեցից զճանապարհս Տն,
և ոչ ամբարշտեցայց յԱյ իմմէ։
Ամենայն իրաւունք նորա առաջի
իմ են. և զարդարութիւն իւր ոչ
իբացեայ արար յինէն։
Եղէց և ես անբիծ ընդ նմա, և
զգուշացայց յանօրէնութէ իմմէ։
Հատուսցէ ինձ Տր ըստ արդարու-
թե իմում. ըստ սրբութե ձեռաց
իմոց առաջի աչաց իմոց։
Ընդ սրբոյն սուրբ եղիցիս. ընդ
առն անբծի ամբիծ եղիցիս. ընդ
ընտրելոյն ընտրեալ եղիցիս. և ըղ
թիւրսն կործանեսցես։
Դու զժողովուրդս խոնարհս կե-
ցուցանես. և զաչս ամբարտաւանից
դու խոնարհեցուցանես։
Դու լուսաւոր առնես զճրագ իմ
Տր Ած իմ. լոյսարա ինձ՝ ի խաւարի։

Եւ փրկեսցես ՚ի փորձութենէ.
ա̃վ իմով անցից ընդ պարիսպս
Ա̃ծ իմ անբիծ են ճանապարհք
քո. եւ բանք տեառն ընտրեալ են.
եւ պաշտպան են ամ̃ցն որք յուսան ՚ի նա:
Վասն զի ով է ա̃ծ բաց ՚ի տ̃նէ.
կամ ով է ա̃ծ բաց յա̃յ մերմէ:
Ա̃ծ որ զգեցուցեր ինձ զօրութի̃
եւ եդեր յանբծութեան զճա֊
նապարհս իմ:
Հաստատեցեր զոտս իմ որպ̃ զեղ
ջերուի, եւ ՚ի վերայ բարձանց կա֊
ցուցեր զիս:
Ուսուցեր ըզձեռս իմ ՚ի պատե֊
րազմ. եւ արարեր զբազուկ իմ որ
պէս զաղեղն հաստ. եւ ետուր ինձ
զպաշտպանութի̃ փրկութե̃ քո:
Աջ քո ընկալաւ զիս՝ եւ խրատ քո
կանգնեաց զիս իսպառ. եւ խրատ
քո ուսուսցէ զիս:
Ընդարձակեցեր ըզ գնացս իմ ՚ի
ըստորէ իմմէ, եւ ոչ տկարացան
շաւիղք իմ:

Հալածեցից զթշնամիս իմ եւ հասից նոցա . եւ ոչ դարձայց 'ի նոցանէ մինչեւ սպառեցից զնոսա։

'Նեղեցից զնոսա' եւ այլ մի' կարասցեն կեալ . եւ անկցին 'ի ներքոյ ոտից իմոց։

Ո՛ զգեցուցեր ինձ զօրութիւն 'ի պատերազմի . եւ զյարուցեալսն 'ի վերայ իմ' ներքոյ իմ արարեր։

Զթշնամիս իմ հալածականս արարեր, եւ զատելիս իմ սատակեցեր։

Աղաղակեցին' եւ ոչ ոք էր որ փրկէր զնոսա . կարդացին առ տէր' եւ ոչ լուաւ նոցա։

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ . եւ որպէս կաւ գըռեհաց կոխեցից զնոսա։

Փրկեսցես զիս տէր 'ի հակառակութենէ ժողովրդոց . եւ կացուսցես զիս գլուխ հեթանոսաց։

Ժողովուրդ զոր ոչ գիտէի' ծառայեաց ինձ . եւ 'ի լուր ականջաց լուաւ ինձ։

 Որ

Որդիք օտարաց ըստեցին ինձ. որդիք օտարաց մաշեցան և կաղացան ՚ի շաւղաց իւրեանց:

Կենդանի՛ է Տր և օրհնեալ է Ած. և բարձր եղիցի աստուած փըրկութեան իմոյ:

Ած է որ խնդրէ ըզվրէժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև:

Փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բարկացողաց. յայնցանէ որք յարուցեալ են ՚ի վերայ իմ, բարձր արարեր զիս. և յառնէ անիրաւէ փըրկեցեր զիս:

Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասացից:

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա. առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա դաւթի. և ընդ զաւակի նր յաւգէ մինչև յաւգ.



Օրհ

## Օրհնութիւն Մովսէսի և Որդւոյն Իսրայէլի· Ելից 15։

Օրհնեսցուք զՏէր՝ զի փա-
ռօք է փառաւորեալ։
Զհեծեալս և զերիվարս
ընկէց ՚ի ծով. օգնական ընդունե-
լի իմ Տէր՝ և եղև ինձ ՚ի փրկութիւն։
Սա է իմ Տէր՝ և փառաւոր առնեմ
զսա. Աստուած հօր իմոյ՝ և բարձր արա-
րից զսա։
Տէր խորտակէ զպատերազմունս.
և Տէր է անուն նորա։
Զընտիրս արանց՝ և զընտիրս ըս-
պառազինաց. զկառս և զերիվարս՝
և զամենայն զօրութիւն փարաւոնի
ընկէց ՚ի ծով։
Ծով ծածկեաց զնոսա. ընկղան
յանդունդս խորոց իբրև ըզ վէմ։
Աջ քո Տէր փառաւորեալ է զօրու-
թեամբ իւրով. աջ քո Տէր խորտա-
կեաց զթշնամիս քո։
Եւ մեծութեամբ փառաց քոց մաշ-


րե

րեցեր զհակառակորդս քո. առա-
քեցեր զբարկութիւն սրտմտութեան քո,
և եկեր զնոսա որպէս զեղէգն։
Հոգւով զօրութեան սրտմտութեան
քո՝ պատառեցան ջուրք. դիզան
կացին որպէս պարիսպ քարեայ ջուրք
ծովուն. և պաղեցան դիզան ալիք
ջուրցն 'ի մէջ ծովուն։
Ասաց թշնամին. ասէ, հալածեցից՝
հասից հարից. բաժանեցից զաւարն՝
և լցուցից 'ի նոցանէ զանձն իմ։
'Ի սուր իմ արկից զնոսա. տիրեսցէ
և բարձրասցի 'ի վերայ նոցա աջ իմ։
Առաքեցեր զհոգին քո՝ և ծածկեաց
զնոսա ծով. ընկղմեցան և իջին որպէս
կապար 'ի ջուրս սաստիկս։
Ո՞ նման է քեզ յաստուածս տէր. կամ ո՞ նը
մանեսցի քեզ փառաւորեալդ 'ի սուրբս։
Սքանչելի փառաւորեալ՝ որ առնես
զնշանս և զարուեստս. ձգեցեր զաջ
ձեռն քո՝ և եկուլ զնոսա երկիր։
Առաջնորդեցեր արդարութեամբ ժողո
վրդեան քո. զայս, զոր և փրկեցեր։


Առ

Մխիթարեցեր զնս՟ զօրութբ՟ քով
՚ի բնակետեղ սրբութն՟ քո . լուա՛ն
ազգք և բարկացան . և երկունք
կալան զբնակիչս փղշտացոց։
Յայնժամ փութացան դատաւո՛րք
եդովմայ՝ և իշխանք մովաբացոց։
Կալա՛ւ զնոսա դողումն . հալեցան
ամ՟ բնակիչք քանանացոց։
Անկցի ՚ի վր՟ նց՟ ահ և դողումն .
և ՚ի զօրութէ՟ բազկի քո քարասցին։
Մինչև անցցէ ժողովուրդ քո տր՟՝
մինչև անցցէ ժողովուրդ քո այս՝
զոր ստացար։
Տարեալ տնկեսցես զնս՟ ՚ի լերին
ժառանգութեան քո . ՚ի պատրաս
տուե՟ բնակուե՟ ժառանգուե՟ քո։
Զոր ստացար ՚ի սկզբանէ տր՟ .
ստացար սրբութբ՟՝ զոր պատրաստ
եցին ձեռք քո . տէր թագաւո՛ր
յա՛ւիտեանս յա՛ւիտենից և ևս։
Զի եմուտ փարաւօ՛ն կառօք և
երիվարօք՝ և ընտիր սպառազինօք
՚ի մէջ ծովուն։

Սա՛ եած ՚ի վերայ նոցա տր զջուրս ծովուն. և որդիքն իսրայէլի գնա֊
ցին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն։
Փառք Հօր և որ"։

Սա է իմ ած՝ և փառաւոր արարից զնա. ած հօր իմոյ՝ և բարձր արարից զնա։

Մարդասէր տր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի, և վս խաչի քո պատուականի, ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ։

※ Քարոզ Նորափեսային և Հարսին։

Վս ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութե անձանց մերոց՝ զտր աղաչեսցուք։

Վս լսելի լինելոյ տն այ՝ ձայնի աղաչանաց մերոց՝ զտր աղա"։

Վս քաւիչ և ներօղ լինելոյ այ ՚ի վերայ մեղաց մերոց՝ զտր աղ"։

Վասն թողլոյ մեզ զամ յանցանս մեր՝ զկամայ և զակամայ՝ զ"։

Վասն զի մի ընդ խոտանեան դատա֊

նեցիմք յաւուրն պատասխանատու
ւութեան՝ զքո աղաչեսցուք։
Սբ հոգւոյն հանգուցելոց ողք՛։
Լուսս միաբան վն ճշմարիտ է՛։
Զանձինս մեր և զմիմեանս՝ տն՛։
Ողորմեա մեզ տր ած մեր՝ ըստ՛։

Աղօթք։

Տէրունջեան՝ և գոյացուցիչ դի
շերոյ. որ արարեր զտիւ՛ 'ի զբօ
սանս բարեգործութե 'ի փրկութի
անձանց մերոց. և զգիշեր 'ի հան
գիստ քնոյ՝ տըկարացեալ բնութե
մերոյ։ Իսկ այժմ զարթուցեալ,
բացեր զդրունս մեր յօրհնաբանու
թիւն՝ ահաւոր եւ փառաւորեալ
անուանդ քում սրբոյ։ Ընկալ և
այժմ զաղաչանս մեր՝ և յաջողեա
մեզ ուղիղ հաւատով և առաքինա
սէր վարուք 'ի նոյն պաշտօն քո կան
խել միշտ. և նովին կանոնիւ ան
դադար փառաւորել զհայր և զոր
դի և զսբ հոգիդ. այժմ և՛։



Իսո

Խաղաղութիւն ամենեցուն:

Քեզ որ յամենայնի գթած և մարդասէր Տէրդ ես՝ աղաչեմք անտապաղ · զի զօրացուսցես զմեզ ըստօրէ կալ 'ի կարգի կրօնաւորութեն մերում: Թեթեւացո տէր զքաղցր լուծ քո զոր եդեր 'ի վերայ մեր · զի կարասցուք կալ 'ի պատուիրանի քում, և զհաճոյսն առնել առաջի քո յամ ժամ 'ի տուէ և 'ի գիշերի: Հրեշտակային երգակցութեամբ ընդ քեզ օրհնել՝ ընդ քեզ գովել · և քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր Տէրութեդ: Այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Աստուածային և օրհնութեամբ և երգօք հոգևորօք՝ անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսբ Հոգին: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից

Ամէն:

Հայր մեր որ՛՛:



Տէր



Ողորմուք Տեառն լի՛ եղև երկիր․ և Բանիւն տն երկինք հաստատեցան․ և Հոգւով բերանոյ նր՛ ամենայն զօրութիւնք նոցա։

Սաղմոս 32․4։

Ի կատարած Սաղմոս Դաւթի. ԺԸ.

ԵՐԿԻՆՔ պատմեն զփառս այ և զարարածս ձեռաց նորա՝ պատմէ հաստատութին։

Օր աւուր բղխէ զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն։

Ո՛չ են բանք և ո՛չ են խօսք՝ որոց ո՛չ լսին ձայնք նոցա։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

 Յա

Յարեւու եդ զխորան իւր. և ինքն որպէս փեսայ, զի ելանէ յառագաստէ իւրմէ. և ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր։

Ի ծագաց երկնից են ելք նորա. և հանգիստ նորա մինչև ՚ի ծագս նորուն. և ոչ ոք իցէ որ թագիցէ ՚ի տապոյ նորա։

Օրէնք տն անբիծ են՝ և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն տն հաւատարիմ է, և իմաստուն առնէ զտղայս։

Ուղղութիւն տն ուղիղ է՝ և ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք տն լոյս են՝ և լոյս տան աչաց. երկիւղ տն սուրբ է՝ և մնայ յաւիտեան։

Դատաստան տն ճշմարիտ է, և արդար է ՚ի նոյն։

Ցանկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս բազում. քաղցր է նա քան զմեղր և խորիսխ։



Քան

Բանզի ծառայ քո պահեսցէ զայս
՚ի պահելն նմա զհատուցումն բազում։
Ո յանցուածս իւր ո՞վ կարէ առ-
նուլ ՚ի միտ. ՚ի գաղտնեաց իմոց ս՟բ
արա զիս տ՟ր. եւ յօտարէն պահեա՛
զծառայս քո։
Ապա թէ ո՛չ տիրեսցեն ինձ, յայն-
ժամ անբիծ եղէց. եւ ս՟բ եղէց ՚ի
մեղաց մեծաց։
Եղիցին քեզ հաճոյ բանք բերա-
նոյ իմոյ. եւ խորհուրդք սրտի իմոյ
առաջի քո յամենայն ժամ. տ՟ր օգ-
նական իմ եւ փրկիչ իմ։

## Սաղմոս ԺԹ.

Լուիցէ քեզ տէր յաւուր անձ-
կութեան. օգնական եղիցի քեզ
անուն ա՟յ յակոբայ։
Առաքեսցէ քեզ տէր օգնութիւն
՚ի սրբութենէ իւրմէ. եւ ՚ի սիոնէ
ընկալցի զքեզ։
Յիշեսցէ տ՟ր զա՟մ պատարագս քո,
եւ զուխտս քո ընդունելի արասցէ։

Տացէ քեզ տէր ըստ սրտի քում.
և զամենայն խորհուրդս քո
նա կատարեսցէ։

Ցնծասցուք մեք ՚ի փրկութեան քում. յանուն այ մերոյ՝ մեք մեծք եղիցուք։

Լըցուսցէ տր զամ խնդրուածս քո. այժմ ծանեայք՝ զի կեցոյց տր զօծեալ իւր։

Լուաւ սմա յերկնից ՚ի սրբութենէ իւրմէ. ՚ի զօրութիւն փրկութեան աջոյ իւրոյ։

Սոքա կառօք՝ և սոքա երիվարօք. այլ մեք զանուն տեառն այ մերոյ կարդասցուք։

Սոքա խափանեցան և անկան. մեք յարեաք և ուղիղ եղաք։

Տր կեցո զԹգւրն՝ և լուր մեզ յաւուր յորում կարդասցուք առ քեզ։

## Սաղմոս Դաւթի. Ի.

ՏՐ ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն. ՚ի փրկութե քում ցնծասցէ յոյժ։

 Զցան

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա. և զկամս շրթանց նորա ոչ արգելեր 'ի նմանէ։

Ժամանս արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո. և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի քարէ պատուականէ։

Կեանս խնդրեաց 'ի քէն՝ և ետուր նմա ընդ երկայն աւուրս յաւիտեանս յաւիտենից։

Մեծ են փառք նորա 'ի փրկութեան քում. զփառս մեծ վայելչութեան քո դիցես 'ի վերայ նորա։

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. ուրախ արասցես զնա յուրախութեան երեսաց քոց։

Թագաւոր յուսացաւ 'ի տէր. յողորմութենէ բարձրելոյն նա մի սասանեսցի։

Գտցի ձեռն քո 'ի վերայ թշնամեաց քոց. և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո։

Դիցես զնոսա որպէս հնոց 'ի հուր՝ 'ի ժամանակի երեսաց քոց։

Տէր բարկութեամբ իւրով խռովե



ցուս

ցուսցէ զնոսա. և հուր կերիցէ զնոսա։
Պտուղ նց յերկրէ կորիցէ. և զաւակ նոցա յորդւոց ՚ի մարդկանէ։
Խորհեցան ՚ի քեն չարութեամբ խորհեցան զխորհուրդ, զոր ոչ կարասցեն հաստատել։
Արասցես ըզնոսա հալածեալս ՚ի ձագուածս քո. և պատրաստեսցես զերեսս նոցա։
Բարձր լեր Տր ՚ի զօրութեն քում. օրհնեսցուք և սաղմոս ասասցուք ՚ի զօրութեան քում։

՚Ի կատարած վասն առաւօտուն օգնականութեան. Սաղմոս Դաւթի։

ԻԱ

Ած իմ, նայեա առ իս ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ՚ի փրկութենէ իմմէ՝ վս բանից յանցանաց իմոց։
Ած իմ, ՚ի տուէ կարդացի առ քեզ՝ և ինձ ոչ լուար. ՚ի գիշերի՝ և ինձ ոչ անսացեր։

Դու 'ի սուրբս բնակեալ ես . և
գովեալդ Իսրայէլի ։
Ի քեզ յուսացան հարքն մեր . յու-
սացան 'ի քեզ և փրկեցեր զն̃ս ։
Առ քեզ աղաղակեցին՝ և կեցին . 'ի
քեզ յուսացան՝ և ոչ ամաչեցին ։
Այլ ես որդն եմ , և ոչ եմ մարդ .
նախատինք մարդկան՝ և արհամար
հանք ժողովրդոց ։
Ամենեքեան որք տեսանէին զիս ,
արհամարհէին զինև . խօսէին շր
թմբք՝ և շարժէին զգլուխս իւրե̃նց
Յուսացաւ 'ի Տր̃՝ և փրկեսցէ զնա .
կեցուսցէ զնա՝ զի կամի զնա ։
Դու ես որ հաներ զիս յարգան-
դէ . յոյս իմ 'ի ստեանց մօր իմոյ ։
Ի քեզ անկեալ եմ յարգանդէ . յորո
վայնէ մօր իմոյ դու ես Ած̃ իմ ։
Մի՛ հեռանար յինէն . զի
նեղութիւնք մերձեալ են և ոչ ոք է
որ օգնէ ինձ ։
Շուրջ եղեն զինև զուարակք բա
զումք . և ցուլք գէրք պաշարեցին
զիս ։

Բացին 'ի վերայ իմ զբերանս իւր-
եանց՝ որպէս առիւծ զի մռնչէ
և յափշտակէ։
Ես ո̄պ զջուր հեղայ և ցրուեցան
ա̄մ ոսկերք իմ. և եղև սիրտ իմ ո̄պ
մոմ հալեալ 'ի մէջ որովայնի իմոյ։
Չորացաւ ո̄պ խեցի զօրութի̄ իմ.
լեզու իմ 'ի քիմս իմ կցեցաւ. և 'ի
հող մահու իջուցին զիս։
Շուրջ եղեն զինև շունք բա-
զումք. և ժողովք չարաց պաշարե-
ցին զիս։
Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ.
և թուեցին զա̄մ ոսկերս իմ. նոքա
հայեցան և տեսին զիս։
Բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ
իւրեանց. և 'ի վ̄ր պատմուճանի
իմոյ վիճակս արկանէին։
Դու տ̄ր՝ մի̄ հեռի առներ զօգնութի̄
քո յինէն. և տ̄ր յօգնել ինձ նայեաց։
Փրկեա 'ի սրոյ զանձն իմ. և 'ի ձե-
ռաց շանց՝ զմիամօրութիւն իմ։
Փրկեա զիս 'ի բերանոյ առիւծու.

յեղջերէ միեղջերուի զխոնարհութիւն իմ.

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ.
Երկիւղածք տ՟ն օրհնեցէք զտ՟ր. և ա՟մ զաւակք յակոբեան փառաւոր արասցեն զնա.
Երկիցէ ՚ի տ՟նէ ամենայն զաւակն իսրայէլի. զի ոչ արհամարհեաց և ոչ անարգեաց տ՟ր զաղօթս աղքատի. և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ՚ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ.
Ի քէն է գովութիւն իմ տ՟ր. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։
Զուխտս իմ կատարեցից առաջի ա՟մ երկիւղածաց նորա.
Կերիցեն տնանկք և յագեսցին. օրհնեսցեն զտ՟ր որք խնդրեն զնա։
Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից. յիշեսցեն՝ և դարձցին առ տ՟ր ա՟մ ծագք երկրի։
Երկիրպագցեն նմա ամենայն տոհմք



ազանց

ազանց. զի Տեառն է արքայութիւն. և նա տիրէ 'ի վերայ ամենայն հեթանոսաց։

Կերին և երկիրպագին նմա ամենայն պարարտք երկրի. առաջի նորա անկցին ամենեքեան որք իջանեն 'ի հող։

Անձն իմ նովաւ կեայ. և զաւակ իմ ծառայեսցէ նմա։

Պատմեսցի Տեառն ազգ որ գալոց. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծընանելոցն է՝ զոր արար Տէր։

## Սաղմոս Դաւթի. ԻԲ.

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։

'Ի տեղւոջ դալարւոյ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առ իս. և առաջնորդեաց ինձ 'ի շաւիղս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ. զի դու ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մ-
խիթարեցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ սե-
ղան․ ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ․ բաժակ
քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Ողորմութիւն քո որ զհետ իմ եկեսցէ
զամենայն աւուրս կենաց իմոց․ բնակել
ինձ ՚ի տան Տեառն ընդ երկայն աւուրս։

## Սաղմոս միաշաբաթուոջ Դաւթի։ ԻԳ։

Տեառն է երկիր լրիւ իւրով․
աշխարհ՝ և ամենայն բնակիչք նորա։

Նա՛ ինքն ՚ի վերայ ծովու հիմունս
էարկ նմա․ ՚ի վերայ գետոց պատ-
րաստեաց զնա։

Ո՞վ ելցէ ՚ի լեառն Տեառն․ կամ ո՞վ
կայցէ ՚ի տեղւոջ սրբութեան նորա։

Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ,
որ ոչ էառ զնանրութիւն յանձն
իւր․ և ոչ երդուաւ ընդ ընկերի
իւրում նենգութեամբ։

Սա առցէ զօրհնութիւն ՚ի Տեառնէ․

զողորմութին յոյս փրկչէ իւրմէ։
Այս ազգ է որ խնդրէ զՏր · խնդրէ տեսանել զերեսս Այ յակոբայ։
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր · համբարձցին դրունք յաւի տենից՝ և մտցէ Թագաւոր փառաց։
Ո՞վ է սա Թագաւոր փառաց՝ Տր հզօր զօրութեամբ իւրով · Տր հզօր 'ի պատերազմի։
Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր · համբարձցին դրունք յաւի տենից՝ և մտցէ Թագաւոր փառաց։
Ո՞վ է սա Թագաւոր փառաց Տէր զօրութեանց · սա՛ ինքն է Թագաւոր փառաց։

## Սաղմս Դաւթի։ ԻԴ ·

ԱՌ քեզ Տէր համբարձի զանձն իմ · Ած իմ 'ի քեզ յուսացայ՝ մի՛ ամաչեցից · և մի՛ ծի ծաղեսցին զինև թշնամիք իմ ·
Ամենեքեան որք համբերեն քեզ, մի՛

մի՛ ամաչեսցեն. այլ ամաչեսցեն ու-
նօրէնք յունայնութենէ իւրեանց։

Զճանապարհս քո տր ցո՛յց ինձ,
և զշաւիղս քո ուսո՛ ինձ։

Առաջնորդեա՛ ինձ՝ ի ճշմարտութե
քում և ուսո՛ զիս. զի դու ես Ած
փրկիչ իմ, և ես քեզ համբերեի
զօրհանապազ։

Յիշեա՛ տր զգթութիս քո և զողոր
մութիս քո որք են յաւիտենից։

Զմեղս մանկութեան իմոյ և զան
գիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ
յիշեա՛ զիս տր ըստ ողորմութեան
քում վասն քաղցրութեան քո. զի
քաղցր և ուղիղ ես։

Վասն այսորիկ օրէնս դնէ առնես
զմեղաւորս ՝ի ճանապարհի. առաջ
նորդես հեզոց ՝ի դատաստանի. և ու
սուցանես հեզոց զճանապարհս քո։

Ամենայն ճանապարհք տն ողորմու
թի և ճշմարտութի են այնոցիկ՝ որք
խնդրեն զուխտ և զվկայութի նր։

Վն անուան քո տր քաւեա՛ զմեղս
իմ

իմ՝ զի բազում եղեն ո՞վ է մարդ-
որ երկնչի ՚ի տ՟նէ. օրէնսդէտ առնէ
զնա ՚ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ։
Անձն ն՟ր ՚ի բարութ՟ե հանգիցէ. և
զաւակ ն՟ր ժառանգեսցէ զերկիր։
Զօրութիւն է տ՟ր երկիւղածաց
իւրոց. և զկտակարանս իւր ու-
սուցանէ նոցա։
Աչք իմ յա՟մ ժամ առ տ՟ր են. և
նա հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեաց առ իս և ողորմեա ինձ. զի
միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն
յոյժ. և ՚ի վշտաց իմոց հան զիս։
Տես զխոնարհութի՟ իմ և զվաստակ
իմ. և թող ինձ զա՟մ զմեղս իմ։
Տես զթշնամիս իմ զի բազում եղեն
ատելու՟ք որք ՚ի նանիր ատեցին զիս
Պահեա զանձն իմ և փրկեա զիս.
և մի յամօթ եղէց՝ զի յուսա՟ցայ ՚ի քեզ։
Ամբիծք և ուղիղք կցորդք եղեն
ինձ. և ես քեզ համբերի. փրկեա
ա՟ծ զիսրայէլ յա՟մ նեղութե՟ց ն՟ր։

## Սաղմոս Դաւթի ԻԵ.

Դատ արա ինձ Տէր՝ զի ես յանմեղ
ութեան իմում գնացի. ՚ի Տէր յուսա
ցայ՝ զի մի՛ եղէց հիւանդ։
Փորձեա՛ զիս Տէր և քննեա՛ զիս. փոր
ձեա՛ զերիկամունս իմ և սիրտս իմ։
Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց
և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։
Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց.
և ընդ անօրէնս ես ո՛չ մտից։
Ատեցի ես զժողովս չարաց. և ընդ
ամբարիշտս ես ո՛չ նստայց։
Լուացից սրբութեամբ զձեռս իմ. և
շուրջ եղէց զսեղանով քով Տէր։
Լսել ինձ զձայն օրհնութեան քո.
և պատմել զամ ըսքանչելիս քո։
Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո
և զտեղի յարկի փառաց քոց։
Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս
զանձն իմ. և մի՛ ընդ արս արեան
ահեղս զկեանս իմ։
Որոց ձեռք իւրեանց յանօրէնու
թեան են. և աջ նոցա լի՛ է կաշառօք

 Իս

Ես յանբծութեան իմում գնացի. փրկեա՛ զիս Տէր և ողորմեա՛ ինձ։

Ոտն իմ կացցէ յուղղութեան. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

## Սաղմոս. ԻԶ.

Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յում մե՞րկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց՝ ես յումմէ՞ դողացայց։

'Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմարմինս իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ. նոքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի 'ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ 'ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսու ես 'ի քեզ Տէր յուսացայ։

Զմի խնդրեցի 'ի Տեառնէ և զայն աղաչեմ՝ բնակել ինձ 'ի տան Տեառն զամ աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն. և հրաման տալ 'ի տաճարի նորա։

Թաքուցեաց զիս 'ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ արար

 զիս

զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում.
՚Ի վէմ բարձր արարեր զիս. եւ
այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի
վերայ թշնամեաց իմոց.

Շուրջ եղէց եւ մատուցից ՚ի խո-
րանի նր պատարագ օրհնութեան.
օրհնեցից եւ սաղմոս ասացից տն.

Լուր տր ձայնի իմում զի կարդա-
ցի առ քեզ. ողորմեա ինձ եւ լուր
ինձ՝ զի քեզ ասաց սիրտ իմ. եւ
խնդրեցին երեսք իմ՝ զերեսս քո
տր խնդրեցից.

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. եւ մի՛ խոտորիր բարկութբ ՚ի
ծառայէ քումմէ.

Օգնական իմ լեր տր՝ մի՛ անարգեր
զիս. եւ մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ.
Հայր իմ եւ մայր իմ թողին զիս. եւ
տէր իմ ընկալաւ զիս.

Օրէնսդէտ արա զիս տր ՚ի ճանա-
պարհի քում. եւ առաջնորդեա ինձ
՚ի շաւիղս քո ուղիղս.

Վասն թշնամեաց իմոց՝ մի՛ մատ-



ներ

ներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։ Յարեան 'ի վերայ իմ վկայք մեղաց. և ստեցին ինձ յանօրէնութեն իւրեանց։ Հաւատացի տեսանել զբարութի Տն յերկրին կենդանեաց. համբեր Տն և քաջալերեաց. զօրասցի սիրտ քո և համբեր Տն։

## Սաղմոս Դաւթի։ ԻԷ։

Առ քեզ Տր կարդացի Ած իմ մի՛ լռեր յինէն. մի՛ երբէք լռիցես յինէն. նմանիցիմ այնոցիկ որք իջանեն 'ի գուբ։ Լուր Տր ձայնի խնդրուածաց իմոց յաղաչել ինձ առ քեզ. 'ի համբառնալ ձեռաց իմոց՝ 'ի տաճար սբ քո։ Մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. և մի՛ ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութիւն՝ կորուսաներ զիս։ Որք խօսին զխաղաղութի ը ընկերս



իւր

իւրէնց՝ եւ չարութի է 'ի սիրտս նոցա
Տո՛ւր նոցա տր ըստ գործոց նոցա.
եւ ըստ անօրէնութե գնացից նոցա՝
հատո՛ նոցա :

Ըստ գործոց ձեռաց նոցա հատո՛
նոցա՝ զհատուցումն նոցա նոցին:

Մի՛ իմացան նոքա զգործս տն. եւ
ո՛չ 'ի գործս ձեռց նր հայեցան. կոր
ծանեսցես զնս եւ այլ մի՛ շինեսցեն:

Օրհնեալ է տր՝ զի լուաւ ձայնի
աղօթից իմոց. տր օգնական իմ եւ
պաշտպան իմ :

Նմա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ
եւ զուարձացաւ մարմին իմ. եւ ես կա
մօք իմովք խոստովան եղէց նմա:

Տր զօրութի ժողովրդեան իւրոյ.
ապաւէն փրկութե օծելոյ իւրոյ:

Փրկեա՛ զժողովուրդս քո. եւ օրհնեա՛
զժառանգութին քո. հովուեա՛ եւ
բարձրացո՛ զնոսա մինչեւ յաւիտեան:

## Սաղմոս Դաւթի: ԻԸ:

Մատուցէք տեառն որդիք այ. մա
տուցէք տն զորդիս խոյոց:

Մատուցէք տն՟ զփառս եւ զպա-
տիւ. մատուցէք տն՟ զփառս ան-
ուան նորա, եւ երկիր պագէք տն՟
'ի սրահ սրբութեան նորա։
Ձայն տն՟ 'ի վերայ ջուրց. եւ ած՟
փառաց որոտաց. եւ տր՟ ինքն 'ի վե-
րայ ջուրց բազմաց։
Ձայն տն՟ զօրութեամբ. եւ ձայն
տեառն մեծ վայելչութեամբ։
Ձայն տն՟ փշրէ զմայրս. եւ մանրէ
տր՟ զմայրսն լիբանանու։
Մանրեսցէ զնս՟ որպէս զմատաղա-
ռուակն լիբանանու. որ սիրելին է
ոպ՟ զորդիս միեղջերուի։
Ձայն տն՟ հատանէ զբոց 'ի հրոյ.
ձայն տն՟ շարժէ զանապատն եւ խռովե-
ցուցանէ տր՟ զանապատն 'ի կադէս։
Ձայն տն՟ հաստատէ զեղջերուս.
եւ յայտնի առնէ զանտառս։
Ի տաճարի նր՟ ամենեքեան ասաս-
ցեն զփառս նորա։
Տր՟ զջրհեղեղս նստուցանէ եւ ցա-
ծուցանէ. թագաւորեսցէ տր՟ յա-
ւիտեան։

Տր զօրութի ժողովրդեան իւրոյ տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ՚ի խաղաղութիւն։

Սաղմոս Դաւթի Օրհնութեան նաւակատեաց տաճարին։ ԻԹ։

Բարձր առնեմ զքեզ Տր՝ զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։

Տր ած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տր հաներ ՚ի դժոխոց զանձն իմ. և փրկեցեր զիս յայն ցանէ՝ որք իջանեն ՚ի գուբ։

Սաղմոս ասացէք Տն սուրբք նր. և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութի է ՚ի բարկութե նր. և կեանք են ՚ի կամս նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտու եղիցի ուրախութի։

Ես ասացի ՚ի բարեկենդանութե իմում թէ ոչ սասանեցայց յաւիտ։

Տր ՚ի կամս քո ետուր զօրութ իմոյ

զօրութիւն. դարձուցեր զերեսս քո
յինէն՝ և ես եղէ խռովեալ։

Առ քեզ տէր կարդացի՝ և առ Աստուած
իմ աղաղակեցի. զինչ օգուտ է քեզ
յարենէ իմմէ՝ թէ իջանեմ ես յա-
պականութիւն։

Մի թէ հող խոստովան առնիցի առ
քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ և
տէր եղև ինձ օգնական։

Դարձուցեր զսուգ իմ յուրախութիւն.
եհերձ յինէն զքուրձ՝ և ինձ զգե-
ցուցեր զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք
իմ. և այլ մի՛ ես զղջացայց տէր Աստ-
ուած իմ. յաւիտեան խոստովան եղէց քեզ

Ի կատարած նահատակութեան զարհուրանաց
Սաղմոս Դաւթի Լ։

Ի քեզ տէր յուսացայ՝ մի
ամաչեցից յաւիտեան. յար
դարութեան քում փրկեա և
ապրեցո զիս։

Խոնարհեցո՛ առիս զունկն քո ․
վաղվաղեա՛ կեցուցանել զիս։
Եր իմ ած̄ պաշտպան և տուն ա
պաւէնի ապրեցուցանել զիս․ զի հը
զօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։
Վս̄ անուան քո տր̄ առաջնորդես
ցես ինձ և սնուսցես զիս ․ և հան
ցես զիս յորոգայթէ յայսմանէ որ
թագուցաւ ինձ։
Դու ես պաշտպան իմ տէր ․ և՚ի
ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։
Փրկեցեր զիս տր̄ ած̄ ճշմարտութ̄
քով ․ ատեցեր զայնոսիկ որք պա
հեն զերկիւղ՚ի սնոտիս։
Ես ՚ի տր̄ յուսացայ ․ ցնծացայց և
ուրախ եղէց ՚ի փրկութեան քում։
Զի հայեցար ՚ի խոնարհութ̄ի իմ․ և
փրկեցեր ՚ի վշտաց զանձն իմ․ և ո՛չ
մատնեցեր զիս ՚ի ձեռս նեղչաց ի
մոց․ և կացուցեր յանդորրու զոտս իմ։
Ողորմեա՛ ինձ տէր՝ զի նեղեալ եմ
ես․ խռովեցաւ ՚ի սրտմտութենէ
ակն իմ անձն իմ և փոր իմ։

Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ.
և ամք իմ յոգոց ելանելոյ։
Աղքատացաւ 'ի տկարութենէ զօ
րութի իմ. և ոսկերք իմ խռովեցան։
Քան զամենայն թշնամիս իմ եղէ
ես նախատ դրացեաց իմոց. յոյժ ահ
և երկիւղ ծանօթից իմոց։
Ամենեքեան որք տեսանէին զիս,
արտաքս փախչէին յինէն։
Մոռացեալ եղէ ես որպ մեռեալ 'ի սըր
տէ. և եղէ ես որպ զանօթ կորուսեալ։
Զի լուայ ես զբամբասանս բազմաց
որք շուրջ էին զինև. 'ի ժողովել նո
ցա իմիասին՝ առնուլ զանձն իմ խոր
հեցան. այլ ես 'ի քեզ տր յուսացայ։
Ասացի դու ես ած իմ. և 'ի ձեռս
քո է ժառանգութի իմ։
Փրկեա զիս 'ի ձեռաց թշնամեաց
իմոց՝ և 'ի հալածչաց իմոց։
Երևեցո զերեսս քո 'ի ծառայս քո.
ապրեցո զիս տէր ըստ ողորմութե
քում. տր մի յամօթ եղէց զի կար
դացի առ քեզ։

 Ամա

Ամաչեսցեն ամբարիշտք և իջցեն
՚ի դժոխս. համր եղիցին շրթունք
նենգաւորք՝ որք խօսէին զարդա-
րոյ զանիրաւութի. յամբարտաւա-
նիլ և յանգոսնել իւրեանց:
Որքա՜ն զի բազում է ողորմութիւն
քաղցրութեան քո տր՝ զոր պահե-
ցեր երկիւղածաց քոց.
Արարեր դու այնոցիկ որք յուսա-
ցեալ են ՚ի քեզ՝ առաջի որդւոց
մարդկան:
Ամրացուցեր զնս ՚ի ծածկոյթ երե-
սաց քոց ՚ի խռովութէ մարդկան:
Ծածկեսցես զնս ՚ի խորանի քում
՚ի հակառակութենէ լեզուաց:
Օրհնեալ է տր՝ զի սքանչելիս արար
զողորմութի իւր ՚ի քաղաք ամուր:
Ես ասացի ՚ի զարմանալ իմում, թէ
ընկեցայ ուրեմն յերեսց աչաց քոց:
Վա այսորիկ լուար ձայնի աղօթից
իմոց յաղաղակել իմում առ քեզ:
Սիրեցէք զտէր ամ սբք նորա՝ զի
ստուգութիւն խնդրէ տր. և հա-


տու

տուցանէ այնոցիկ որք առաւել առ
նեն զամբարտաւանութիւն։
Քաջալերացարո՛ւք եւ զօրասցին
սիրտք ձեր՝ ամենեքեան որք յու-
սացեալ էք ’ի տր։

## Իմաստութիւն Դաւթի։ ԼԱ։

Երանի՛ ում թողութիւն եղեւ մեղաց.
եւ ծածկեցան ա՟մ յանցանք նր։
Երանի այն՝ որում ոչ համարի տր
զմեղս նր. եւ ոչ գոյ նենգութիւն
’ի բերան նորա։
Լռեցի ես եւ մաշեցան ա՟մ ոսկերք
իմ առ աղաղակել ինձ առ տր զօր-
հանապազ ’ի տուէ եւ ’ի գիշերի։
Ծանրացաւ ձեռն քո ’ի վր իմ.
դարձայ ’ի թշուառութիւն՝ զի հա
րան յիս փուշք։
Զմեղս իմ ցուցից քեզ՝ եւ զանօրէ
նութիւն իմ ոչ ծածկեցից ’ի քէն։
Ասացի թէ պատմեցից ինձէն զզ
մեղս իմ. եւ դու թողցես զա՟մ ան-
բարշտութիւնս մեղաց իմոց։



Վ՟ն

Վասն այսորիկ՝ յաղօթս կացցեն առ
քեզ ամենայն սուրբք ՚ի ժամ ընդունելի։

Բայց միայն՝ ՚ի ջուրցն հեղեղաց բազ
մաց՝ որք առ նմա ինչ ոչ մերձեսցին։

Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութենէ
յայսմանէ որ շուրջ եղեն զինև։

Ցնծութիւն իմ՝ փրկեա՛ զիս յայնցա
նէ ոյք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ և խելա
մուտ ՚ի ճանապարհ յոր և գնաս
ցես . և հաստատեցից ՚ի վերայ քո
զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձի և զջորի՝
զի ոչ գոյ ՚ի նոսա իմաստութիւն .
՚ի սանձս և՛ ՚ի դանդանաւանդս՝ ձրմ
լեսցես զկզակս նոցա որք առ քեզ
ինչ ոչ մերձեսցին։

Բազում տանջանք են մեղաւորաց.
բայց ոյք յուսան ՚ի տէր, ողորմու
թիւն ան շուրջ եղիցի զնոքօք։

Ուրախ եղերուք և ցնծացէք ա՛ր
դարք ՚ի տէր . պարծեցարո՛ւք ամենե
քեան ոյք ուղիղ էք սրտիւք։

Անվերնագիր՝ ի Հեբրայեցւոց։

## ԼԲ.

Ցնծացէք արդարք ի տէր. ուղղոց վայելէ օրհնութի. Խոստովան եղերուք տն օրհնութեամբ. տասնաղեան սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա։

Օրհնեցէք զտր յօրհնութին նոր՝ զի բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութբ։

Ուղիղ են պատգամք տն. և ամ գործք նր հաւատովք են. և սիրէ զողորմութի և զիրաւունս տր։

Ողորմութբ տն լի եղև երկիր. և բանիւ տն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Ժողովեաց որպ ի տիկ զջուրս ծովու. և եդ նե ի խորս գանձս իւր։

Երկիցէ՝ ի տնէ ամ երկիր. և ի նմանէ դողասցին ամենայն բնակիչք աշխարհի։

Զի նա ասաց և եղեն. ինքն հրամայեաց և հաստատեցան։



Տէր

Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց. անարգէ՛ տէր զխորհուրդս ժողովրդոց. եւ արհամարհէ տէր զխորհուրդս իշխանաց.

Խորհուրդ տեառն յաւիտեան մնայ. եւ խորհուրդ սրտի նորա յազգէ մինչեւ յազգ։

Երանի ազգի որոյ տէր աստուած օգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց ՚ի ժառանգութիւն իւր։

Յերկնից նայեցաւ տէր յամենայն որդիս մարդկան. ՚ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի.

Ստեղծ առանձին զսիրտս նոցա ՚ի միտ առնու զամենայն գործս նոցա։

Ոչ թէ ՚ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւորն. եւ ո՛չ հսկայ ՚ի բազում զօրութեան իւրում.

Սո՛ւտ է ձի ՚ի փրկութեան իւրում. ՚ի բազում զօրութեան իւրում ո՛չ ապրեցուցանէ զհեծեալն.

Աչք տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց եւ որք յուսան յողորմութիւն նորա։

 Փըր

Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա,
և կերակրել զնոսա 'ի սովու։
Անձինք մեր համբերեսցեն Տեառն. զի
օգնական և պաշտպան մեր է։
Ընդ նա ուրախ եղիցին սիրտք մեր.
և յանուն սուրբ նորա յուսասցուք։
Եղիցի ողորմութիւն քո Տէր 'ի վերայ
մեր՝ որպէս յուսացաք 'ի քեզ։

## Սաղմոս Դաւթի։ ԼԳ.

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն
ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։
'Ի Տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն
հեզք և ուրախ եղիցին։
Մեծ արարէք զՏէր ինև. և բարձր
արասցուք զանուն նորա 'ի միասին։
Խնդրեցի 'ի Տեառնէ և լուաւ ինձ.
յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։
Մատիք առ Տէր և առէք զլոյս.
և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն։
Այս աղքատ կարդաց առ Տէր՝ և
Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ
սորա փրկեաց զսա։

 Բա

Բանակք հրեշտակաց Տն՝ շուրջ
են զերկիւղածովք իւրովք և
պահեն զնոսա։

Ճաշակեցէք և տեսէք զի քա՛ղցր է
Տր․ երանեալ է այր որ յուսայ ՛ի նա։

Երկերո՛ւք ՛ի Տնէ ամ սրբք նորա․
զի ո՛չ ինչ է պակասութիւն երկիւ-
ղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղ-
ցեան․ բայց որք խնդրեն զՏէր,
մի՛ պակասեսցի ՛ի նոցանէ ամե-
նայն բարութիւն։

Եկա՛յք որդեակք իմ՝ լուա՛րուք
ինձ․ և զերկիւղ Տն ուսուցից ձեզ։

Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս․ սիրէ
զաւուրս իւր տեսանել ՛ի բարուէ։

Լուցո՛ զլեզուքո ՛ի չարուէ, և շրթ
թունքքո մի՛ խօսեսցին զնենգութի։

Խոտորեա՛ ՛ի չարէ և արա զբարի․
խնդրեա՛ զխաղաղութիւն և երթ
զհետ նորա։

Աչք Տեառն ՛ի վերայ արդարոց․
և ականջք նր ՛ի վր աղօթից նոցա։

Երեսք տ՟ն՚ի վերայ չարագործաց · սատակել յերկրէ զյիշատակս նոցա:

Կարդացին արդարքն առ տէր՝ և տ՟ր լուաւ նոցա · յա՟մ նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Մերձ է տ՟ր առ այնոսիկ որք մաշեալ են սրտիւք · և զխոնարհս հոգւով՝ կեցուցանէ:

Բազում նեղութիւնք են արդարոց՝ յա՟մն փրկէ զն՟ս տ՟ր՝ և պահէ զա՟մ ոսկերս նոցա · և մի՛ ՚ի նոցանէ մի՛ փշրեսցի

Մահ մեղաւորին չար է · բայց որ ատեն զարդարն, զղջասցի:

Փրկէ՛ տ՟ր զանձինս ծառայից իւրոց · մի՛ զղջասցին ամենեքեան որք յուսացեալ են՚ի տ՟ր ·

## Ի կատարած Սաղմոս Դաւթի: ԼԴ:



ատեա՛ տէր զայնոսիկ որք դատեն զիս · մարտի՛ր ընդ այնոսիկ որք մարտնչին ընդ իս:



Առ

Առ զզէն և զասպար քո՛ և արի՛
յօգնել ինձ. հա՛ն զսուր քո ընդ-
դէմ հալածչաց իմոց. արդ ասա՛ անձին իմում թէ փրկու-
թիւն քո ես եմ:
Ամաչեսցեն և յամօթ լիցին որք
խնդրեն զանձն իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն որք խորհին ինձ չար:
Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հող-
մոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա:
Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խա-
ւար և ՚ի գայթակղութիւն. և հրեշ-
տակ Տեառն հալածեսցէ զնոսա:
Զի նանիր թագուցին ինձ որոգայթ
ապականութեան իւրեանց. և ՚ի
նանիր նախատեցին զանձն իմ:
Հասցէ ՚ի վերայ նոցա որոգայթ զոր
ո՛չ գիտասցեն. և որսն զոր թագու-
ցին առցէ զնոսա. և որոգայթ
՚ի նոյն անկցին:
Այլ անձն իմ ցնծասցէ ՚ի Տէր. ու-
րախ եղիցի ՚ի փրկութիւն նորա. և ամենայն ոս-
կերք իմ ասասցեն, Տէ՛ր ո՞ նման է քեզ



Օ է

Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց հզօրի· զաղքատն և զտնանկն յայնցանէ որք յափշտակեն զնա։

Յարեան 'ի վերայ իմ վկայք չարեաց · և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս։

Հատուցին ինձ զչար փոխանակ բարւոյ · անժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոց 'ի մարդկանէ։

Ես 'ի նեղել նոցա՝ քուրձ զգենուի · խոնարհ առնէի պահօք զանձն իմ · և աղօթք իմ 'ի ծոց իմ դարձցին։

Որպ̃ զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի · որպ̃ զսըգաւոր ևըղտրտում, այնպէս խոնարհ առնէի։

'Ի վր̃ իմ ուրախ եղեն և ժողովեցան · ժողովեցան յիս տանջանք և ես ոչ ծանեայ · ցրուեցան և ոչ զղջացին։

Փորձեցին զիս՝ և արհամարհեցին արհամարհանօք · կրճտեցին 'ի վր̃ իմ զատամունս իւրեանց · տր̃՝ երբ տեսցես։

Ի բա՛ց արա զանձն իմ 'ի խորաման



կու

կութենէ նոցա. և յաւիտենուց ըզ-
միխիթարութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ տէր յեկե-
ղեցիս մեծս. և՚ի ժողովս բազմաց
օրհնեցից զքեզ:

Մի՛ ուրախ եղիցին յիս Թշնամիք իմ
ոյք ատէին զիս 'ի տարապարտուց.
ակն արկին ածէին զիս աչօք իւրեանց:

Ընդ իս զխաղաղութիւն խօսէին.
և՝ ինքեանք բարկութեամբ զնեն-
գութիւն խորհէին:

Բացին ի վ͞ր իմ զբերանս իւրեանց
և ասացին՝ այա՛ այա՛ տեսին աչք մեր:

Տեսեր տ͞ր՝ և մի՛ լռեր. տ͞ր՝ մի՛ 'ի
բացեայ առնիր յինէն:

Զարթիր և հայեաց տէր յիրա-
ւունս իմ. ա͞ծ իմ և տ͞ր իմ 'ի դա-
տաստանս իմ. և իրա՛ւ արա ինձ ըստ
արդարութե͞ քում տ͞ր ա͞ծ իմ:

Մի՛ ուրախ եղիցին յիս Թշնամիք
իմ. և մի՛ ասասցեն 'ի սիրտս իւ-
րեանց թէ՝ վա՜շ վա՜շ անձանց մերոց
զի ընկլուզաք զնա:

Մա

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոյք
խնդան ընդ չար իմ. զգեցցին զա
մօթ և զանարգանս ոյք մեծաբա-
նեն ՚ի վերայ իմ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ
ամ՟քն՝ ոյք կամին ընդ արդարութի՟ իմ։
Ասասցեն յամ՟ ժամ մեծ է ած՟՝ ոյք
կամին զխաղաղութի՟ ծառայի քոյ։
Լեզու իմ խօսեսցի զարդարութիս
քո. զօրհանապազ զգովութի՟ս քո։

՚Ի կատարած ծառայի տ՟ն Դաւթի. ԼԵ։

Ասէ անօրէնն մեղանչել ընդ միտս
իւր՝ թէ չիք երկիւղ ա՟յ առա-
ջի աչաց նորա։
Նենգեաց առաջի նորա՝ գտանել
զանօրէնութիւն և ատել զնա։
Բանք բերանոյ նորա անօրէնութի՟
և նենգութիւն են։
Ո՛չ կամեցաւ նա իմանալ զբարի.
զանօրէնութիւն խորհեցաւ յան-
կողնի իւրում։
Եկաց նա յամ՟ ճանապարհ որ ոչ է



բա

բարի · և՛ ՚ի չարէ նա ո՛չ ձանձրացաւ ։
Տ՟ր՝ յերկինս է ողորմութիւն քո ·
Ճշմարտութ՟ի քո մինչև յամպս ։
Արդարութ՟ի քո որպ՟ լերինք ա՟ծ ·
Իրաւունք քո որպ՟ խորք բազումք ·
զմարդիկ և զանասունս կեցուցա-
նես դու տէր ։
Որպ՟ զի բազում արարեր զողորմութ՟ի
քո ա՟ծ · այլ որդիք մարդկան ՚ի հո-
վանի թևոց քոց յուսասցին ։
Արբեսցին նոքա ՚ի պարարտութ՟է
տան քո · և զուղխս փափկութ՟ե քո
տացես ըմպել նոցա ։
Ի քէն է տ՟ր աղբիւր կենաց · և լու-
սով երեսաց քոց տեսանեմք զլոյս ։
Ձգեա՛ զողորմութ՟իս քո որք ճա-
նաչեն զքեզ · զարդարութիւնս քո
որք ուղիղ են սրտիւք ։
Մի՛ եկեսցեն ՚ի վ՟ր մեր ոտք ամ-
բարտաւանից · և ձեռք մեղաւորաց
մի՛ դողացուսցեն զմեզ ։
Անդ անկցին ա՟մքն որք գործեն
զանօրէնութ՟ի · մերժեսցին և այլ մի՛
կարասցեն հաստատիլ ։

Օրհնութիւն Բծին մովսէսի՝ ա̄ծատեսս մարգարէին ։ յերկրորդ օրինացն։

Նայեցարուք երկինք՝ և խօ
սեսցայց . լուիցէ երկիր ըզ
պատգամս բերանոյ իմոյ։
Ընդունելի՛ լիցի ո̄պ անձրև բարբառ
իմ . և իջցեն ո̄պ ցօղ պատգամք իմ ։
Ո̄պ անձրև ՚ի վերայ սիզոյ . ո̄պ տու
րափ ՚ի վ̄ր խոտոյ . զի զանուն տ̄ն
կարդացուք . և տուք օրհնութիւն
տեառն ա̄յ մերոյ ։
Ա̄ծ որոյ ճշմարտութ̄ք են գործք
նորա . և ա̄մ ճանապարհք նորա
իրաւամբք են ։
Ա̄ծ հաւատարիմ է և ոչ գոյ ՚ի նը
մա անիրաւութիւն . արդար և
ճշմարիտ է տ̄ր ։
Մեղան և ոչ նմա որդիքն արատոյ
ծնունդք խոտորեալք և թիւրեալք։
Ոչ այդ այն է զոր տ̄ն հատուցա
նէիք դուք . ժողովուրդք յիմարք
և ոչ իմաստունք ։

Ոչ սա ինքն է հայր քո որ ստացաւ
զքեզ. արար զքեզ և ստեղծ զքեզ։
Յուշ լիցին քեզ աւուրքն յաւի-
տենից. իմացարուք զամս յազգաց
մինչև յազգս։
Հարցի՛ր դու ցհայրս քո՝ և պատ-
մեսցեն քեզ. ցծերս քո՝ և ասաս-
ցեն քեզ։
Ի ժամանակի յորժամ բաժանեաց
բարձրեալն զազգս ամենայն. որպէս
ցրուեաց նա զորդիսն ադամայ։
Կացոյց սահմանս հեթանոսաց՝ ըստ
թուոյ հրեշտակաց այ։
Եղև բաժին տն ժողովուրդ իւր
յակոբ. և վիճակ ժառանգութեն
իւրոյ իսրայէլ։
Բաւական եղև նմա յանապատի.
ի ծարաւ տօթոյ յանջրդւոջ
պաշտպանեաց զնա։
Խրատեաց զնա և պահեաց որպէս
բիբ ական. որպ զարծուի ի թևս
իւր ընկալաւ զնա. և որպ ի վերայ
ձագուց իւրոց գթացաւ։

Տարածեաց զթեւս իւր և ընկալաւ
զնա. և բարձեալ բերէր զնա 'ի վ̄ր
միջնորդաց իւրոց։
Տէր միայն ածէր զնոսա և ո՛չ գոյր
ընդ նոսա ա̄ծ օտար։
Ած եհան զնոսա 'ի զօրութիւնս
երկրի. և կերակրեաց զնոսա ար
դեամբք անդաստանաց։
Դիեցոյց նոցա՝ մեղր 'ի վիմէ. և
իւղ յապառաժ վիմէ։
Իւղ կովուց և կաթն մաքեաց ճար
պով հանդերձ. խոյոց, որթուց,
ցլուց և նոխազաց։
Զ պարարտութե՛ն երիկամանց ցորե-
նոյ և զարիւն խաղողոյ էարբ գինի։
Եկեր Յակոբ և յագեցաւ. և ան
գուշեաց սիրելին։
Պարարտացաւ, ստուարացաւ, լայնա-
ցաւ. եթող զա̄ծ զարարիչ իւր.
և յետս եկաց յա̄յ փրկչէ իւրմէ։
Բարկացուցին զիս օտարաւք իւ-
րեանց. և կռովք իւրեանց դառ-
նացուցին զիս։

Զոհեցին դիւաց և ոչ այ • դիցն՝ զորս ոչ գիտէին • նորք և առժամայնք • զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա։

Թողին զտր որ ծնաւ զնս • մոռացան զած որ կերակրեաց զնս։

Տեսև տէր և նախանձեցաւ • և սրտմտեցաւ ՚ի վերայ ուստերաց և դստերաց նոցա և ասէ •

Դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ և ցուցից նոցա զինչ լինելոց իցէ յապա ժամանակի։

Զի ազգ մի թիւր են նոքա և որդիք անհաւատք • նոքա նախանձեցուցին զիս ՚ի չաստուածս իւրեանց • և դառնացուցին զիս ՚ի կուռս իւրեանց։

Արդ՝ և ես նախանձեցուցից զնս յազգ անպիտան • և անմիտ ազգաւ զկծեցուցից զնոսա։

Փառք հօր և որդ"։

Նոր փառս այ՝ տուք օրհնութի մարդաւորքն՝ ընդ գոհացօղին յարութենէն • որ կենդանացոյց և հեղձուցանէ ընտանեօք իւրոց։ Արդար"։

Քարոզ Աղերսագրութեանն և Տէր ողորմեա՚՚:
Վասն ՚ի գիշերի և ՚ի տուընջեան և յամ ժամու խօսել մեզ զբան Տն՝ զ՚՚:
Վասն չանկանելոյ մեզ ՚ի փորձութի որում ոչ կարեմք հանդուրժել՝ զ՚՚:
Վասն անբիծ և անպատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քո, զ՚՚:
Վասն առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահանգիստ կենացն անվախճանից՝ զ՚՚:
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեանն՝ զ՚՚:
Վասն հոգ՚՚: Եւ ևս միա՚՚.

Աղօթք:

Ի գիշերի և ՚ի տուընջեան և յամ ժամու զքեզ աղաչեմք և ՚ի քէն խնդրեմք մարդասէր Տր: Առ մեզ ամ փրկիչ մեր. խոնարհեցո՛ ունկն քո ՚ի խնդրուածս մեր. զի մի՛ ունայն լիցին վաստակք ծառայից քոց: Այլ համարեա՛ զաշխատութիս մեր ՚ի գործ արդարութե և ՚ի պտուղ ամ պաշտութե. Ընկա՛լ Տր զաղօթս և զերկրպագութիւնս մեր. և հաստա՛ մեզ զողորմութի քո առատապէս:


Ծած

Ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ ա-
մենազօր աջոյ քո. զօրացո՛ զմեզ տր
զօրութբ սբ հոգւոյդ. պահեա՛ զմեզ
ամ բիբ ակամն. և արա՛ առ մեզ նշան
բարի ՚ի գովեստ և ՚ի փառաբանութի ան-
ձանց քում սբյ: Զի ՚ի քո փառս
կատարի ամ արարածոց մշտնջենա-
ւոր փառաբանութի ՚ի բարձունս հօր և
որդւոյ և հոգւոյդ սբյ. այժմ և":

Աղաղաղութիւն տենչեցան.

Հովի՛ւ քաջ՝ հովի՛ւ բարի և յաւէժ
տենչական. նայեա՛ց և այժմ սրա բա-
նաւոր հօտի քո՝ զոր ժողովեցեր առ
քեզ գթութբ քով. զի քո առաջի կամք
տր. և առ ՚ի քէն ողորմութեանց և գը-
թութեանց ակնունիմք: Զամենե-
սեան օրհնեա՛. զամենն իմաստնացո՛.
զամենն լուսաւորեա՛. և ամենեցուն պար-
գևեա՛ զերկնից արքայութիւնդ:
Վն զի դու ես տր կենաց և ամ ողոր-
մութեանց. և քեզ վայել է փառք՝ իշ":

Ի գիշերի և ՚ի առաւօտեան և յաւուրս ժամա-
մտութեան փառաբանեա զաստուծ և զՍուրբ
և զՍբ Հոգին: Այժմ և միշտ և յա":



Սի


Ignº: Lucchesini Sc.

Ի կատարած Սաղմոս Դաւթի։ ԼԶ.

ՄԻ՛ ՆԱԽԱՆձիր ընդ չարս. և մի ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս ընդ դալարի խոտոյ վաղվաղակի անկցեն

Յուսա՛ ի տէր և արա՛ զքաղցրութիւն. բնակեա՛ յերկրի՝ և հովուեսցիս ի մեծութեան նորա։



Զուր

Վայելեա՛ 'ի տ̃նէ եւ նա տացէ քեզ
զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛
առաջի տ̃ն զճանապարհս քո եւ
յուսա՛ 'ի նա։

Նա՛ արասցէ եւ հանցէ որպէս զլոյս
զարդարութիւն քո. եւ զիրաւունս
քո ո̃պ զօրհասարակ։

Հնազանդ լեր տ̃ն եւ ծառայեա՛ նմա.
եւ մի՛ նախանձիր ընդ այնոսիկ
որոց առակեալ իցեն ճանապարհք
իւրեանց ընդ մարդոյ որ գործէ
զանօրէնութիւն։

Լռեա՛ 'ի բարկութէ̃ եւ հանգիր 'ի
սրտմտութէ̃. եւ մի՛ նախանձիր ը̃ չարս։
Զի չարք փաղփաղակի սատակես-
ցին. բայց որք համբերեն տ̃ն, նոքա
ժառանգեսցեն զերկիր։

Փոքր մի եւ այլ ոչ եւս իցէ ամբա-
րիշտն. խնդրեսցես զտեղի նորա
եւ ոչ գտցես։

Այլ որ հեզքն են՝ նոքա՛ ժառան
գեսցեն զերկիր. եւ փափկասցին 'ի
բազում խաղաղութե̃ իւրեանց։

Սպասէ մեղաւորն արդարոյ և կըր
ճըտէ ՚ի վ՟ր ն՟ր զատամունս իւր.
այլ տ՟ր ծիծաղեսցի զնովաւ.
Քանզի յառաջագոյն տեսանէ՝ զի
հասանելոց է օր ն՟ր.
Սուր հանին մեղաւորք. և լարեցին
զաղեղունս իւրեանց՝ հարկանել
զաղքատն և զտնանկն. սպանանել
զայն որ խոնարհն է սրտիւ.
Սուրք ն՟ց մտցեն ՚ի սիրտս նոցա.
և աղեղունք նոցա փշրեսցին։
Լաւ է սակաւ ինչ արդարոյ՝ քան
զբազում մեծութի մեղաւորաց. և բա
զուկք անբարշտաց խորտակեսցին։
Հաստատէ տ՟ր զարդարս, և ճանա
չէ զաւուրս անբծից. ժառանգու
թի նոցա յաւիտեան եղիցի։
Ոչ ամաչեսցեն նոքա ՚ի ժամանակս չա
րութե. այլ յաւուրս սովու յագեսցին։
Իհա մեղաւորք կորիցեն. այլ թըշ
նամիք տեառն՝ ՚ի փառաւորել և ՚ի
բարձրանալ իւրեանց՝ պակասես
ցին որպ ծուխ զի պակասի.

Փոխ առնու մեղաւորն և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է, ողորմի և տայ։

Ոյք օրհնեն զնա՝ ժառանգեսցեն զերկիր. և որք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ։

Ի Տեառնէ ուղղին գնացք առն. զճանապարհս նորա նա կամի յոյժ։

Թէպէտ և գայթակղեսցի, նա մի՛ կործանեսցի. զի Տէր ձեռնկալու է նորա։

Մանուկ էի ես՝ և ծերացայ. և ոչ տեսի զարդարն արհամարհեալ. և ոչ զզաւակ նորա՝ թէ մուրանայ հաց։

Զօրհանապազ ողորմի և տայ փոխ, զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։

Խոտորեա՛ ի չարէ և արա՛ զբարի. և բնակեսցես յաւիտեանս յաւիտենից ի նմա։

Տէր սիրէ զիրաւունս՝ և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա։

Անօրէնք հալածեսցին խիստ. և զաւակք ամբարշտաց սատակեսցին։

Այլ արդարք ժառանգեսցեն



զեր

զերկիր, և բնակեսցին յաւիտեանս
յաւիտենից 'ի նմա։

Բերան արդարոյ խորհի զիմաստութի.
և լեզու նր խօսեսցի զիրաւունս։

Օրէնք այ իւրոյ են 'ի սրտի իւրում.
և մի' գայթակղեսցին գնացք նր։

Հայի մեղաւոր ընդ արդար՝ և խնդ-
րէ սպանանել զնա. այլ տր ոչ թո-
ղու զնա 'ի ձեռս նր. և ոչ դատա-
պարտէ զնա՝ յորժամ դատէ զնա։

Համբեր տն և պահեա զճանապարհս
նորա. և բարձր արասցէ զքեզ 'ի
ժառանգել զերկիր. և զսատակումն
մեղաւորաց տեսցես։

Տեսի զամբարիշտն վերացեալ և
բարձրացեալ որպ զմայրսն լիբանանու։

Անցի՝ և ահա ոչ էր. խնդրեցի և
ոչ գտաւ տեղի նորա։

Պահեա զանմեղութի և տես զուղ-
ղութիւն. զի գոն մնացուածք
առն խաղաղարարի.

Անօրէնք հալածեսցին իմիասին.
և զաւակք ամբարշտաց կորիցեն։

Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է· վերա
կացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան:
Օգնեսցէ նոցա տէր և փրկեսցէ զնոսա·
ապրեցուսցէ 'ի մեղաւորաց և կե
ցուսցէ զնոսա զի յուսացան 'ի նա:

Սաղմոս Դաւթի՝ առ 'ի յիշատակի շաբաթու:

ԼԷ:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յան
դիմաներ զիս· և մի՛ բար
կութեամբ քով խրատեր զիս:
Զի նետք քո հարան
յիս· և յիս հաստատեցաւ ձեռն քո:
Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ
յերեսաց բարկութեան քո:
Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց
յերեսաց մեղաց իմոց:
Զի անօրէնութիւնք իմ բարձրացան
քան զգլուխ իմ· որպէս բեռն ծանր
ծանրացան 'ի վերայ իմ:
Նեխեցան և փտեցան վէրք իմ յե
րեսաց անզգամութեան իմոյ:
Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև


յոյժ

յոյժ․ զօրհանապազ տրտմեալ գնայի․
զի անձն իմ լի եղեւ չարչարանօք․
եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։
Չարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ
յոյժ․ մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ
Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ․ եւ
հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս՝ եւ եթող
զիս զօրութիւն իմ․ լոյս աչաց իմոց՝
եւ այս ոչ եղեւ ընդ իս․
Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ ա-
ռաջի իմ մերձեցան եւ կացին․ եւ մեր-
ձաւորք իմ հեռի եղեն յինէն։
Բռնադատէին զիս եւ խնդրէին
զանձն իմ ոյք խորհէին չար ՚ի վերայ
իմ․ խորհեցան զանօրէնութիւն եւ զնեն-
գութիւն՝ զօրհանապազ խորհեցան։
Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լուէ․ որպէս
համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։
Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ․ եւ
ոչ գոն խօսք ՚ի բերան նորա։
Զի ՚ի քեզ Տէր յուսացայ, եւ դու
լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ՝ մի՛ ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. ՚ի սասանիլ ոտից իմոց՝
՚ի վ՟ր իմ մեծամեծս խօսեցան։
Ես ՚ի տանջանս պատրաստ եմ. և
ցաւք իմ առաջի իմ են յա՟մ ժամ։
Զանօրէնութիւն իմ պատմեցից՝ և
հոգացայց վասն մեղաց իմոց։
Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են
և զօրացեալք են քան զիս. և բազումք
են որք ատեցին զիս ՚ի տարապարտուց։
Որք հատուցին ինձ չար փոխանակ
ընդ բարւոյ. չարախօսէին զինէն՝
զի ես երթայի զհետ արդարուե՟։
Մի՛ թողուր զիս տ՟ր ա՟ծ իմ. և մի՛
ի բացեայ առնիր յինէն. հայեա՛ց
յօգնել ինձ տ՟ր փրկութե՟ իմոյ։

* Իդիթումայ Սաղմոս Դաւթի։ ԼԸ

Ասացի թէ՝ պահեցից զճանապարհս
իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով։
Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ՚ի
հակառակիլ մեղաւորին առաջի իմ։
Լուռ եղէ և խոնարհեցայ. լռեցի՛ ՚ի
բարուէ՟. և ցաւք իմ նորոգեցան յիս։

 Ջե

Ջեռաւ սիրտ իմ ՚ի փորի իմում.
և ՚ի խորհուրդս իմ վառեցաւ հուր։
Խօսեցայ լեզուաւ իմով և ասա֊
ցի՝ ցո՛յց ինձ տ՟ր զկատարած իմ և
ըզթիւ աւուրց իմոց քանի՞ են է.
զի գիտացից թէ որչափ ինչ պակա
սեալ է յինէն։

Ահա՛ չափով եդեր զաւուրս իմ.
և կայր զօրութ՟ն իմոյ՝ ո՟պ ոչ ինչ է
առաջի իմ. սակայն ամենևին ընդ֊
ունայն է ա՟մ մարդ մնեղի։

Ապաքէն որպէս ՚ի պատկերի շրջի
մարդ. սակայն ի զո՛ւր խռովի. գան
ձէ՛ և ոչ գիտէ ում ժողովէ։

Իսկ արդ՝ ո՞ է համբերութիւն իմ
թէ ոչ դու տ՟ր. կամ կար զօրու՟ն
իմոյ թէ ոչ ՚ի քէն։

Յա՟մ անօրէնութենէ իմմէ փրկե
ցեր զիս. և նախատինս անզգամաց
արարեր զիս։

Լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ
զի դո՛ւ արարեր։

Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ. զի


՚ի

՚ի զօրութէ ձեռին քո՝ ես պակասեցայ։
Կշտամբութեամբ վ(ասն) մեղաց խրատե-
ցեր զմարդ. մաշեցեր որպէս սարդի
զանձն նորա. սակայն՝
ընդունայն է ամ(ենայն) մարդ։
Լո՛ւր տէր աղօթից իմոց. ունկն դիր
խնդրուածոց իմոց. արտասուաց
իմոց մի՛ լռեր։
Պանդուխտ եմ ես առաջի քո. նոյն-
պէս և անցաւոր որպէս ամ(ենայն) հարքն իմ։
Թո՛ղ արա ինձ զի հանգեայց. մինչ
չէ երթեալ իցեմ. և այլ ո՛չ ևս
գտանիցիմ։
*՚Ի կատարած Սաղմոս Դաւթի. ԼԹ.
Համբերելով համբերի տէ(ր). եհայե-
ցաւ առ իս և լուաւ աղօթից իմոց։
Հան զիս ՚ի գբոյ տառապանաց.
՚ի կաւոյ և ՚ի տղմոյ։
Հաստատեաց ՚ի վ(ե)ր վիմի զոտս իմ.
և ուղղեաց զգնացս իմ։
Եարկ ՚ի բերան իմ զօրհնութիւն
նոր. զօրհնութի(ւ)ն տ(եառ)ն ա(ստուծո)յ մերոյ։
Տեսցեն բազումք և երկիցեն. և

յուսասցին ՚ի տ՟ր. երանելի է այր
որոյ անուն տ՟ն յոյս է նորա.
Ո՛չ հայեցաւ նա ՚ի նանրութիւն.
և ո՛չ ՚ի մոլութիւնս սուտս.
Բազում արարեր դու տ՟ր ա՟ծ իմ
զսքանչելիս քո. և խորհրդոց քոց
ո՛չ ոք է որ նմանիցի քեզ.
Պատմեցի և խօսեցայ. և բազումք
եղեն քան զթիւ՟ս. զ՟ զոհս և ընդ-
պատարագս ո՛չ հաճեցար. լսելիս
հաստատեցեր ինձ զողջակէզս, և
ըզ վասն մեղացն ո՛չ խնդրեցեր.
Յայնժամ ասացի թէ՝ ահաւասիկ
գամ ես. ՚ի գլուխս գրոց գր-
րեալ է վասն իմ.
Առնել զկամս քո ա՟ծ իմ կամեցայ.
և զօրէնս քո ՚ի մէջ որովայնի իմոյ.
Աւետարանեցի զարդարութիւս քո
յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս
իմ ո՛չ արգելից ՚ի քէն.
Տ՟ր դու գիտացեր զի զարդարութի՟
քո ո՛չ ծածկեցի ՚ի սրտի իմում.
զճշմարտութիւս քո և զփրկութիւս քո.

Ասացի և ո՛չ Թագուցի զողորմու-
Թիւնս քո • և զճշմարտուԹիւնս քո
'ի ժողովրդենէ մեծ է ։
Այլ դու տ̃ր մի՛ հեռի առներ ըզ
գԹուի̃ քո յինէն • զի ողորմուի̃ և ճըշ
մարտուի̃ քո յա̃մ ժամ ընկալցին զիս
Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ո՛չ
գոյր Թի՛ւ • հասին ինձ անօրէնուի̃ք
իմ և ես ո՛չ կարացի տեսանել ։
Բազումք եղեն քան զհեր գլխոյ
իմոյ • և սիրտ իմ եԹող զիս ։
Կամեա՛ց տէր փրկել զիս • և տէր
յօգնել ինձ նայեա՛ց ։
Ամաչեսցեն և յամօԹ լիցին որք
խնդրէին զանձն իմ բառնալ զնա •
դարձցին յետս և ամաչեսցեն որք
խորհէին ինձ զչար ։
Կրեսցեն զամօԹ առժամայն վաղ
վաղակի որք ասէին ինձ վաշ վաշ ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ
ամենեքեան որք խնդրեն զքեզ տ̃ր ։
Ասասցեն յա̃մ ժամ մեծ է տ̃ծ, և
որք սիրեն զփրկուԹի̃ս քո ։



Ես

Ես աղքատ և տնանկ եմ ա̄ծ խոր
հեա զիս. օգնական և պաշտպան իմ
ես դու ա̄ծ իմ մի՛ յամենար։

## Ի նուագս Սաղմոս Դաւ̄թի։

## Խ

Երանի որ խորհի զաղքատն
և զտնանկն. յաւուր չարի
փրկէ զնա տ̄ր։

Տ̄ր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա 'ի վ̄ր երկրի. և ո՛չ մատնէ զնա 'ի ձեռս թշնամեաց իւրոց

Տ̄ր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. զա̄մ անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդութէ̄ նր̄։

Ես ասացի տ̄ր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նր̄։

Մտանէր տեսանել զնանրութ̄ի. խօսէր 'ի սրտի իւրում. և ժողովէր զանօրէնութ̄ի յանձն իւր։

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր.

զինէն

զինէն շշնջէին ա̃մ թշնամիք իմ։

Խորհեցան չար ՚ի վերայ իմ. բան անօրէնութե̃ եդին ի վերայ իմ։

Մի՞ թէ որ ննջիցէ, և այլ ո̃չ ևս յաւելցի յառնել. քանզի և այրն խաղաղութե̃ իմոյ՝ յոր և ես յուսացայ։

Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց տանել ինձ զխաբէութի̃։

Այլ դու Տ̃ր ողորմեա́ ինձ և կանգնեա́ զիս. և ես հատուցից նոցա։

Յայսմ ծանեայց զի հաճեցար ընդ իս, զի մի́ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։

Այլ զիս յանբծութեան իմում ընկալար. և հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։

Օրհնե̃լ Տ̃ր ա̃ծ իէ̃լի յաւիտենս յաւիտենից. եղիցի եղիցի։

՚Ի կատարած վասն իմաստութեան որդւոցն կորխայ։ ԽԱ̃։

Որ̃ փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ ա̃ծ։



Ծա

Ծարաւի է անձն իմ առ քեզ ա՟ծ հզօր և կենդանի. երբ եկից երևե-
ցայց երեսացդ ա՟յ։
Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն՝ զի ա-
սէին ցիս զօրհանապազ թէ՝ ո՞ւր է ա՟ծ քո։
Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաղցրերէն՝ զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն ա՟յ։
Ի ձայն ցնծութեան խոստովանութեան. և ՚ի ձայն բարեկենդանութեան։
Ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ՝ խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։
Անձն իմ յիս խռովեցաւ. վ՟ն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանու. ՚ի հերմոնէ լեռնէ փոքուէ։
Խորք խորոց կարդացին առ քեզ ՚ի ձայն սահանաց քոց։
Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ՚ի վերայ իմ։
Ի տուէ պատուիրեաց տ՟ր զողորմութ՟ի


իւր

իւր. ՚ի գիշերի զօրհնութիւն նորա. և աղօթք իմ առ Աստուած վն կենաց իմոց ։

Ասացից Աստուծոյ՝ ընդունող իմ ես. ընդէ՞ր մոռացեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի նեղել թշնամեաց իմոց ։

Ի փշրել ոսկերաց իմոց՝ նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ թէ ո՞ւր է Աստուած քո ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած՝ խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։

## Սաղմոս Դաւթի ։ ԽԲ ։

Դատ արա ինձ Աստուած. և իրա՛ւ արա ինձ ՚ի դատաստանի իմում ։

Յազգէ՝ որ ո՛չ է սուրբ՝ ՚ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս ։

Դու Աստուած՝ հզօրիչ իմ ես՝ ընդէ՞ր մոռացար զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի նեղել թշնամեաց իմոց ։

Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւնս քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո ։

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութե՟ ա՟ծ ա՟ծ իմ։

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ա՟ծ՝ խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։

Ի կատարած իմաստութեան որդւոցն կորխայ։

ԽԳ.

Ա՟ծ ականջօք մերովք լուաք զոր հարքն մեր պատմեցին մեզ։

Զգործս զոր գործեցեր յաւուրս նոցա՝ յաւուրսն առաջինս.

Ձեռն քո խլեաց զհեթանոսս՝ և զն՟ս տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո և հաներ զն՟ս։

Զի ոչ եթէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. և ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա։

Այլ աջ քո և բազուկ քո՝ և լոյս



երե

երեսցքոց · զի հաճեցար դու ըն̅ոսա ։
Դու ինքն ես Թագաւոր իմ և Ա̅Ծ
իմ որ հրամայեցեր զփրկութիւն
յակոբայ ։
Քեւ զթշնամիս մեր հարցուք · և
անուամբ քով արհամարհեսցուք
զյարուցեալսն ՚ի վ̅ր մեր ։
Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ·
և ոչ սուր իմ կեցուցանէ զիս ։
Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնա-
մեաց մերոց · և զատելիս մեր
յամօթ արարեր ։
Աստուծով պարծեսցուք զօրհա-
նապազ · և անուան նորա խոստո-
վան եղիցուք յաւիտեան ։
Բայց արդ՝ մերժեցեր և անարգե-
ցեր զմեզ· և ոչ ելեր Ա̅Ծ ը̅ զօրս մեր ։
Դարձուցեր զմեզ յետս քան ըզ
թշնամիս մեր · և ատելիք մեր յա-
փշտակեցին զմեզ ։
Ետուր զմեզ որպ̅ զոչխար ՚ի զենումն
և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ ։
Վաճառեցեր ըզ ժողովուրդս քո


առ

առանց գնոյ . և ո՛չ գոյ թի՛ւ աղա-
ղակի մերոյ .

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց . ծաղր և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ են զմեզք .

Արարեր զմեզ յառակս հեթա̃նոց ՚ի շարժել զգլուխս ժողովրդոց .

Զօր ամենայն նախատինք իմ ա-ռաջի իմ են . և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս .

Ի ձայնէ նախատողին և չարախօ-սի . յերեսաց թշնամոյն և հալածչին .

Այս ա̃մ եկն ՚ի վերայ մեր՝ և մեք զքեզ ո՛չ մոռացաք . և ո՛չ ստեցաք ուխտի քում . և ո՛չ դարձաք յետս սրտիւք մերովք .

Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանա-պարհաց քոց . խոնարհ արարեր ըզ-մեզ ՚ի տեղի չարչարանաց . և ծած-կեցին զմեզ ստուերք մահու .

Թէ մոռացեալ իցէ մեր զանուն ա̃յ մերոյ . կամ ձգեալ իցէ զձեռս մեր առ ա̃ծս օտարս .

Սակայն ա͞ծ խնդրէ զայս. զի նա՛ քննէ զգաղտնիս սրտից մերոց:
Վա͞ս քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք ո͞պ զոչխար 'ի զենումն:
Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տ͞ր. արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ իսպառ:
Զմէ՞ դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ. մոռանաս զաղքատութ͞ի եւ զնեղութիւնս մեր:
Խոնարհ եղեն մինչեւ 'ի հող անձինք մեր. եւ յերկիր կցեցան մէջք մեր:
Արի՛ տէր օգնեա՛ մեզ, եւ փրկեա՛ զմեզ վասն անուա՛ն քո:

Սաղմոս: ԽԴ:

Բղխեաց սիրտ իմ ըզ պատգամս քո բարի, եւ ասացից զգործս իմ թագաւորի:
Լեզու իմ որ͞պ գրիչ՝ արագագրի դպրի. գեղեցիկ տեսլեամբ քան զա͞մ որդիս մարդկան:
Սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց. վասն այսորիկ օրհնեաց զքեզ ա͞ծ յաւիտեան:

Ա՛ծ զսուր ընդ մէջ քո՝ հզօր վայել
չութեամբ և գեղով քո։
Լարեա՛ աջողեա՛ եւ՛ թագաւորեա՛
վասն ճշմարտութե՛ հեզութեան
և արդարութե՛. և առաջնորդեսցէ
քեզ սքանչելապէս աջ քո։
Նետք քո սրեալ են հզօր. և ժո
ղովուրդք ՚ի ներքոյ քո անկցին ՚ի
սիրտս թշնամեաց թագաւորի։
Աթոռ քո ած յաւիտեանս յաւի
տենից. գաւազան ուղղութեան
գաւազան արքայութեան քո։
Սիրեցեր զարդարութի՛, և ատեցեր
զանօրէնութիւն։
Վս այսորիկ էօծ զքեզ ած՝ ած քո
իւղով ուրախութեան՝ առաւել
քան զընկերս քո։
Զմուռս և զհաշտոն և զկասիայ ՚ի
զգեստս քումմէ. ՚ի տանձարաց փղ
ոսկրեից՝ ուստի ուրախ արարին
զքեզ դստերք թագաւորաց ՚ի պատիւ
Կայցէ դշխոյ ընդաջմէ քումմէ ՚ի
հանդերձս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ։

Լո՛ւր դուստր՝ և տես. խոնարհե ցո ղունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քո. զի ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո։
Սա՛ ինքն է Տէր քո՝ երկիր պագցես նմա. և դուստր Ծուրայ՝ երկիր պագցէ նմա. և պատարագօք զե րեսս նորա պաղատեսցեն մեծա մեծք ի ժողովրդոց։
Ամենայն փառք դստեր Թագաւորի ի ներքոյ. ի վերջաւորս ոսկէ հուռս զարդարեալ և պաճուճեալ։
Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա. և զընկերս նորա տարցին նմա Ածցեն ցնծութբ̅ և ուրախութբ̅. և տարցին ի տաճար Թագաւորի. և փո խանակ հարց քոց՝ եղիցին որդիք քո Կացուսցես զնս̅ իշխանս ընդ ա̅մ երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ա̅մ ազգս ազգաց։
Վ̅ն այսորիկ ժողովուրդք խոստո վան եղիցին առ քեզ յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

 Մէ

## Սաղմոս Դաւթի. ԽԵ.

Ած մեր ապաւէն եւ զօրութիւն. օգնական ՚ի վերայ նեղութեանց որք գտին զմեզ յոյժ.

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ՚ի խռովել երկրի. ՚ի փոփոխել լերանց ՚ի սիրտս ծովուց.

Գոչեցին եւ խռովեցան ջուրք նոցա. խռովեցան լերինք ՚ի զօրութենէ նորա.

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Այ. եւ սուրբ արար զյարկս իւր բարձրեալն.

Ած ՚ի մէջ նոցա եւ նոքա մի՛ սասանեսցին. օգնեսցէ նոցա Ած ՚ի վաղորդենէ մինչեւ ՚ի վաղորդեան.

Խռովեցան հեթանոսք՝ եւ խոնարհեցան թագաւորութիւնք. ետ զձայն իւր բարձրեալն եւ խռովեցաւ երկիր.

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ած Յակոբայ.

Եկայք եւ տեսէք զգործս Այ. որ արար զնշանս եւ զարուեստս ՚ի վերայ երկրի.

Որ հար զպատերազմ ՚ի ծագաց մին
չև ՚ի ծագս երկրի. զաղեղունս
փշրեաց, զզէնս խորտակեաց, և զաս
պարս այրեաց հրով:
Կանխեցէք և ծաներո՛ւք՝ զի ես
եմ ա՟ծ. բարձր եղէց ՚ի հեթանոսս
և բարձրացայց ՚ի վերայ երկրի:
Տ՟ր զօրութեանց ընդ մեզ. ընդու
նո՛ղ է մեր ա՟ծ յակոբայ:

՚Ի կատարած վասն որդւոցն կորխայ:
Սաղմոս Դաւթի: ԽԶ:

Ծափս հարէք ամենայն հեթա
նոսք. աղաղակեցէք առ ա՟ծ
՚ի ձայն ցնծութե՟ն:
Տ՟ր բարձրեալ և ահաւորն՝ թագա
ւոր մեծ ի վ՟ր ա՟մ երկրի:
Հնազանդ արար զժողովուրդս մեզ.
և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց
Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութ՟ի.
զգեղեցկութ՟ի յակոբայ զոր սիրեաց:
Համբարձաւ ա՟ծ օրհնութեամբ.


և

եւ տէր մեր ձայնիւ փողոյ ։

Սաղմոս ասացէք այ մերում. սաղ-
մոս ասացէք Թագաւորին մերում
սաղմոս ասացէք ։

Թագաւոր մեծ ՚ի վր ամ երկրի այ
է. սաղմոս ասացէք նմա իմաստութբ։
Թագաւորեաց այ ՚ի վր հեթանոսաց.
այ նստաւ յաթոռ սրբութե իւրոյ ։
Իշխանք ժողովրդոց ժողովեցան
առ այ աբրահամու. զի այ զօրու-
թիւնք յերկրէ յոյժ համբարձան ։

Սաղմոս Դաւթի ։ ԽԷ ։

Մեծ է տր եւ օրհնեալ է յոյժ ՚ի
քաղաք այ մերոյ ՚ի լեառն սբ նր ։
Հաստարմատ ցնծացէ ցնծութբ ամ
երկիր. լերինք սիոնի՝ կողմանք հիւ-
սիսոյ՝ ՚ի քաղաք Թագաւորին մեծի։
Այ ՚ի տաճարս իւրում յայտնի. ՚ի
ժամանակի նղ օգնական լինէր նց ։
Ահաւասիկ Թագաւորութիք երկրի
ժողովեցան եւ անկցին ՚ի միասին։
Ինքեանք տեսին այսպէս եւ զար-
մացան. խռովեցան՝ սասանեցան՝

 եւ

և դողումն կալաւ զնոսա ։

Անդ երկունք որպէս ՚ի ծննդեան․ և հողմն սաստիկ՝ փշրեսցէ զնաւս ՚ի Թարսիս ։

Որպէս լուաք՝ նոյնպէս և տեսաք․ ՚ի քաղաք տն զօրութեց ՚ի քաղաք այ մերոյ ։

Աստուած հիմունս էարկ նմա յաւիտեան․ ընկալաք այ զողորմութի քո ՚ի մէջ ժողովրդեան քո ։

Ըստ անուան քում այ, նոյնպէս և օրհնութի քո ընդ ամ տիեզերս․ և արդարութբ լի է աջ քո ։

Ուրախ եղիցի լեառն սիոն․ և ցնծասցեն դստերք յուդայ վասն իրաւանց քոց տր ։

Շրջեցարուք զսիոնիւ․ պաշարեցէք զնա․ և պատմեցէք զաշտարակս նր ։ Դիք զսիրտս ձեր ՚ի վր զօրութեց նր․ բաժանեցէք զամուրս նր․ զի պատմել կարասջիք յազգ յայլ ։

Զի է այ այ մեր յաւիտեանս յաւիտենից․ և նա հովուեսցէ զմեզ մինչև յաւիտեան ։

'Ի կատարած որդւոցն կորխայ։ ԽԸ։

Լուարուք զայս ամենայն ազգք.
ունկն դիր լերուք ամենեքեան
որք բնակեալ էք յաշխարհի.
Ծնունդք երկրի և որդիք մարդ-
կան. ի միասին մեծամեծք և տնանկք
Բերան իմ խօսեսցի զիմաստութի.
և խորհուրդ սրտի իմոյ զհանճար։
Խոնարհեցուցից յառակսն զունկն
իմ. բացից առակաւ զբերան իմ.
և խօսեցայց զառակս ի սկզբանէ։
Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր
չարի. զի անօրէնութիւնք գնացից
իմոց շուրջ եղեն զինև։
Յուսացեալք 'ի զօրութիւն իւր-
եանց՝ 'ի բազմութի մեծութեան
իւրեանց պարծեսցին։
Եղբայր ոչ փրկէ. և ոչ փրկէ մարդ.
և ոչ տայ այ զփրկանս իւր. և ոչ
զգինս փրկանաց անձին իւրոյ։
Վաստակեաց յաւիտեան՝ և կեցցես
մինչ իսպառ. և ոչ տեսցես զապա-
կանութիւն.

Յորժամ տեսցես թէ իմաստունք
մեռանիցին • իմիասին անզգամք եւ
անմիտք կորիցեն • եւ թողցեն օտա֊
րաց զմեծութիւն իւրեանց ։

Գերեզմանք նոցա՝ տունք նոցա ե֊
ղիցին յաւիտեան • եւ յարկք նոցա
յազգէ մինչեւ յազգ • եւ կարդա֊
ցին անուանք նոցա ՚ի հողս
իւրեանց ։

Մարդ ՚ի պատուի էր եւ ոչ իմացաւ •
հաւասարեցաւ անասնոց անբանից
եւ նմանեցաւ նոցա ։

Այս ճանապարհ է գայթակղութե̃ն
նց̃ նոցին • յետ այսորիկ բերանովք
իւրեանց հաճեսցին ։

Ոպ̃ խաշն ՚ի դժոխս մատնեսցին •
եւ մահ հովուեսցէ զնս̃ • եւ տիրես֊
ցեն նց̃ ուղիղք ընդ առաւօտս ։

Օգնութիւնք նց̃ մաշեսցին ՚ի դժոխս •
եւ ՚ի փառաց իւրեանց անկցին ։

Բայց սակայն Ած̃ փրկեսցէ զանձն
իմ ՚ի ձեռաց դժոխոց յորժամ
ընդունիցին զիս ։

Մի՛ երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա։

Զի ո՛չ թէ ՚ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամ, և ո՛չ թէ իջցեն փառք տան նր ընդ նմա։

Զի անձն նր ՚ի կեանս իւրում օրհնեսցի. և խոստովան եղիցի քեզ յորժամ բարի արասցես դու նմա։

Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց մինչև յաւիտեան զլոյս մի՛ տեսցէ։

Մարդ ՚ի պատուի էր և ո՛չ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա։

Սաղմոս ասափայ։ ԽԹ։

Ած աստուծոց Տր խօսեցաւ. և կոչեաց զերկիր յարևելից մինչև ՚ի մուտս արևու։

՚Ի սիոնէ մեծ վայելչութի փրկութե գեղոյ նորա։

Ած մեր. յայտնապէս եկեսցէ. և
և Ած մեր մի՛ դադարեսցէ.
Հուր առաջի նորա բորբոքեսցի.
և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։
Կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ՝ և
զերկիր, ՚ի դատել զժողովուրդ
իւր. ժողովել առ ինքն զսուրբս իւր՝
և որք դնեն զպատարագս ուխտից
իւրեանց սեղանոյ նորա։
Պատմեսցեն երկինք զարդարութիւն
նորա՝ զի Ած դատաւոր է։
Լուր ժողովուրդ իմ և խօսեցայց
ընդ քեզ. և իսրայէլ քեզ վկայե
ցից. զի Ած՝ Ած քո ես եմ։
Ո՛չ եթէ վս պատարագաց քոց կշ-
տամբեմ զքեզ, զի ողջակէզք քո
առաջի իմ են յամ ժամ։
Ո՛չ ընդունիմ ՚ի տանէ քումմէ զը
ւարակս. և ո՛չ ՚ի հօտից քոց նոխազս։
Իմ է ամենայն գազան անտառի.
երէ լերանց և ամ անասուն։
Գիտեմ ես զամ թռչունս երկնից
գեղեցկութիւն վայրի ընդ իս է։



Թէ

Թէ քաղցեայց, քեզ ինչ ո՛չ ասա-
ցից. զի իմ է աշխարհ լրիւ իւրով։
Ո՞չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց
և ո՛չ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։
Մատո՛ աՙյ պատարագ օրհնուՙե. կա-
տարեա՛ բարձրելոյն զուխտս քո։
Կարդասցես առ իս յաւուր նեղու-
թեան քո. ես փրկեցից զքեզ՝ և
դու փառաւոր արասցես զիս։
Սակայն՝ մեղաւորին ասէ աՙծ. իսկ
դու ընդէ՞ր բնաւ պատմես զար-
դարութիւն իմ, կամ առնուս
զուխտ իմ ՚ի բերան քո։
Զի դու ատեցեր զխրատ իմ.
մերժեցեր և յետս ընկեցեր զաՙմ
բանս բերանոյ իմոյ։
Թէ տեսանէիր զգողս, ընթա-
նայիր ընդ նոսա. և ընդ շունս
դնէիր զբաժին քո։
Բերան քո յաճախէր զչարութՙի.
և լեզու քո նիւթէր զնենգութՙի։
Նստէՙլ զեղբօրէ քումմէ չարախօ-
սէիր. և ՚ի վերայ որդւոյ մօր քո՝

դնել իր զգայթակղութիւն ։
Զայս ամ՟ արարեր և լռեցի քեզ․
կարծեցեր անօրէնդ ՚ի մտի քում
թէ և ես քեզ նման իցեմ ։
Արդ՝ յանդիմանեցից և կացուցից
զայս ամ՟ առաջի քո․ իմացարո՛ւք
ամ՟քն որոց մոռացեալ իցէ զա՟ծ ։
Գուցէ երբէք յափշտակիցէք, և
ո՛չ ոք իցէ որ փրկիցէ․
Պատարագ օրհնութեան փառաւո՛ր
արասցէ զիս․ և անդ է ճանապարհ՝
ուր ցուցից նմա զփրկութի՟ ա՟յ ։

Ի կատարած սաղմոս դաւ՟թի․ ՚ի ժամանակի
իբրև եկն առ նա նաթան մարգարէ՝ յորժամ
մտեալ էր նա առ բերսաբէէ ։ Ծ ։

Ողորմեա՛ ինձ ա՟ծ՝ ըստ մեծի ողոր
մութեան քում․ ըստ բազում
գթութեան քում, քաւեա՛ զա
նօրէնութիւնս իմ ։
Առաւե՛լ լուա՛ զիս յանօրէնութ՟է
իմմէ․ և ՚ի մեղաց իմոց ս՟բ արա զիս ։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն

 գի

դիտեմ. և մեղք իմ առաջի իմ են
յամենայն ժամ։
'Քեզ միայն մեղայ Տէր. և չար ա-
ռաջի քո արարի։
Որպէս արդար երևեցիս 'ի բանս քո.
և յաղթող 'ի դատել դաս։
Անօրէնութեամբ յղացայ և 'ի
մեղս ծնաւ զիս մայր իմ։
Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր.
զանյայտս և զծածկեալս իմաստու-
թեամբ քով յայտնեցեր ինձ։
Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց. լը-
ւա և քան զձիւն սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ զցնծութիւն և
զուրախութիւն. և ցնծասցեն ոս-
կերք իմ տառապեալք։
Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց.
զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս Տէր. և հո-
գի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։
Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց
քոց. և զհոգի սուրբ քո մի՛ հաներ
յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութե՟ ․
և հոգւով պետութեան քո
հաստատեա՛ զիս ։

Ուսուցից անօրինաց զճանապարհս
քո ․ և ամբարիշտք առ քեզ
դարձցին ։

Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ՝ ա՟ծ փր
կութե՟ իմոյ ․ ցնծասցէ լեզու իմ
յարդարութե՟ քում ։

Տ՟ր՝ եթէ զշրթունս իմ բանաս ,
բերան իմ երգեսցէ զօրհնութի՟ս քո ։

Թէ կամեցեալ էիր , պատարագս
մատուցանէաք ․ բայց դու ընդ
ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար ։

Պատարագ ա՟յ՝ հոգի խոնարհ ․ ըզ
սիրտ սուրբ և զհոգի խոնարհ
ա՟ծ ո՛չ արհամարհէ ։

Բարի՛ արա տ՟ր կամօք քովք սիօնի ․
և շինեսցին պարիսպք եղ՟մի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատա
րագս արդարութե՟ , յորժամ ամբ
ողջ պատարագս հանցեն ՚ի սեղան
քո զզ՟արակս ։

՚Ի կատարած իմաստութեան Դաւթի. ՚ի ժամա-
նակի գալն Դովեկայ Եդովմայեցւոյ և պատմելոյ Սա-
ւուղայ՝ թէ Դաւիթ եկեալ է ՚ի
տուն Աքիմելեքայ: ԾԱ:

Զի՞ պարծիս ՚ի չարութեան հզօրդ անօ-
րէնութեան. զօրհանապազ զանօրէնութիւն
խորհեցաւ ՚ի լեզուի իւրում:
Որպէս զածելի սուր՝ սիրեաց զնենգ-
ութիւն. սիրեաց զչարութիւն
քան զբարութիւն. զանօրէնութիւն
քան զխօսս արդարութեան:
Սիրեաց նա զամենայն խօսս կործանման
և զլեզուս նենգաւորս:
Վասն այսորիկ Աստուած կործանեսցէ
զնա իսպառ. խլեսցէ և հանցէ զնա
յարկաց իւրոց. և զարմատս նորա
յերկրէն կենդանեաց:
Տեսցեն արդարք և երկիցեն. զնմա-
նէ ծիծաղեսցին և ասասցեն:
Այս այր է որ ոչ արար զԱստուած իւր
օգնական. այլ յուսացաւ սա ՚ի
բազում մեծութիւն իւր. և զօրա-
ցաւ ՚ի նանրութեան իւրում:

 Այլ

Այլ ես որպէս ձիթենի պտղալից ՚ի տանն Աստուծոյ. յուսացայ յողորմութիւն Աստուծոյ՝ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։

Խոստովան եղէց քեզ տէր յաւիտեան՝ զի արարեր. եւ համբերեցից անուան քում զի քաղցր ես առաջի սրբոց քոց։

## Ի չորրորդ ժամն մտանելոյ իմաստութեան Դաւթի։ ԺԳ։

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած. ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց. եւ ոչ ոք է որ առնէ ըզ քաղցրութիւն։

Տէր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան՝ տեսանել թէ իցէ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱստուած։

Ամենեքեան խոտորեցան իմիասին եւ անպիտանացան։

Ո՛չ ոք է որ առնէ զբարի. եւ չէ՛ ոք մինչեւ ՚ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան

որք գործեն զանօրէնութիւն։
Որք ուտէին ըզ ժողովուրդ իմ
որպէս կերակուր հացի, և առ ա՟ծ
ոչ կարդացին։
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ
իցէ երկիւղ. զի ա՟ծ ցրուեսցէ
զոսկերս մարդահաճոյից։
Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ զի ա՟ծ
անարգեաց զն՟ս։
Ո՞ տացէ ՚ի սիոնէ զփրկութիւն իէլի.
՚ի դարձուցանել ա՟ծ զգերութիւն
ժողովրդեան իւրոյ. ցնծասցէ յա-
կոբ և ուրախ եղիցի իսրայէլ։
Սաղմոս Դաւթի։ ԾԳ։
Ա՟Ծ յանուն քում կեցո զիս. և
՚ի զօրութ քում իրաւ արա ինձ։
Ա՟Ծ լուր աղօթից իմոց. ունկն դիր
բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան ՚ի վ՟ր իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ. և ոչ համա-
րեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց։
Ահա ա՟ծ օգնական իմ. և տ՟ր ըն-
դունօղ հոգւոյ իմոյ։

 Դ

Դարձուցանել զչարիսն ի թշնամիսն
իմ, ճշմարտութբ քով սատակեա զնս։
Նա կամօք իմովք պատարագս մա-
տուցից քեզ. և խոստովան եղէց
անուան քում տր՝ զի բարի է։
Յամ նեղութէ իմմէ փրկեցեր զիս
և՛ ի թշնամիս իմ ետես ակն իմ։

## Սաղմոս Դաւթի։ ԾԴ։

Ո՛ւնկն դիր ած աղօթից իմոց. և մի
անտես առներ զխնդրուածս իմ։
Նայեաց առ իս և լուր ինձ. զի տրտմ
եցայ ես ՚ի ձանձրանալ իմում և
խռովեցայ։
Ի ձայնէ թշնամւոյն և՚ի նեղելոյ մե-
ղաւորին՝ խոտորեցին յիս անօրէնու-
թի. և բարկութբ ոխս պահէին ինձ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս. և եր-
կիւղ մահու անկաւ ի վր իմ։
Ահ և դողումն եկն ՚ի վերայ իմ.
և ծածկեաց զիս խաւար։
Ասացի՝ ո տայր ինձ զթեւս որպէս
աղաւնւոյ. զի թռչէի՝ վերանայի


և

Եւ հեռացայց դադարէի յանապատի ։
Ակն ունէի այ՝ որ փրկէր զիս ՚ի
կարճմտութե̄, ՚ի զայրանալոյ, և ՚ի
մրրկեալ ներգործութենէ ․
Ընկղմ տր՝ և բաժանեա զլեզուս
նոցա ․ զի տեսի զանօրէնութիւն
և զհակառակութի ՚ի քաղաքի ․
Ի տուէ և ՚ի գիշերի շուրջ եղեն ըզ
պարսպօք նորա անօրէնութիւնք ․
չարիք և մեղք են ՚ի մէջ նոցա ․ և
ոչ պակասեաց ՚ի հրապարակաց նց
վաշխ և նենգութիւն ։
Զի եթէ թշնամին նախատեալ էր՝
համբերէի արդեօք ․ կամ ատե
լեայն մեծաբանեալ էր ՚ի վր իմ,
թաքչէի արդեօք ՚ի նմանէ ։
Իսկ դու մարդ հաւասար իմ, ա
ռաջնորդ իմ, և ծանօթ իմ ․
Ապաքէն ՚ի նոյն քաղցրացուցեր ինձ
և քեզ կերակուր ․ զի գնացաք միա
բանութե̄ ՚ի տաճարն այ ։
Եկեսցէ մահ ՚ի վր նց, և կենդա
նւոյն իջցեն ՚ի դժոխս ․ զի չարութի է
՚ի

'ի բնակութեան նոցա և 'ի մէջ նց՟։
Ես առ Ած՟ կարդացի՝ և նա լուաւ ինձ. յերեկոյս, 'ի վաղորդեայն, և 'ի հասարակ աւուր։
Պատմեցից և ասացից և լուիցէ ձայնի իմում. փրկեսցէ խաղաղութեամբ զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց. զի կարեւորք հասին 'ի վերայ իմ։
Լուիցէ Ած՟՝ և խոնարհ արասցէ զնս՟. որ յառաջ է քան զյաւիտեանս։
Զի ոչ գոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յԱյ՟։
Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նց՟. և նոքա պղծեցին զօրէնս նր՟։
Բաժանեցան 'ի սրտմտութենէ երեսաց նր՟. և եհաս 'ի սիրտս նց՟։
Կակուղ եղեն բանք նց՟ քան զձէթ. և նոքեանք ոպ՟ սլաք։
Ընկեա՛ 'ի Տր՟ զհոգս քո՝ և նա՛ կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։
Դու Ած՟ իջուսցես զնոսա 'ի գուբ ապականութեան իւրեանց. արք


արիւ

արիւնահեղք և նենգաւորք մի՛ հա սարակեսցեն զաւուրս իւրեանց . այլ ես 'ի քեզ տէր յուսացայ :

Օրհնութիւն Դձին մովսէսի՝ ածատես մարգարէին : երկրորդ օրհնութ :

Զի հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ իմմէ . այրես ցէ և իջցէ մինչ 'ի դը ժոխս ներքինս :

Կերիցէ զերկիր՝ և զա̅մ բոյսս երկ րի նոցա . վառեսցին հրով և բոր բոքեսցին հիմունք լերանց նց :

Կուտեսցից զչարիս ա̅մ իվերայ նց . և նետիւք իմովք սպառեսցից զն̅ս :

Մաշեալք և հիւծեալք 'ի սովու . գազանաբեկ՝ դէշ անկեալ ամենայն Թռչնոց երկնից :

Լարս առանց բժշկութեան արձա կեցից 'ի վերայ նոցա . զգազանս ա նապատի՝ որք այսր և անդր քար շեսցեն զն̅ս ընդ երկիր :

Արտաքուստ մանկիկոտորս արասցէ

 զն̅ս

զն͞ս սուր․ և՚ի ներքուստ շտեմարա-
նաց նոցա անոյն՝ արհաւիրք ահից։
Զերիտասարդս նոցա կուսանօք
հանդերձ․ և զորդայս՝ հաստատեա-
լովք ծերովք հանդերձ։
Ասացի թէ ցրեցից զն͞ս, և դադա-
րեցուցից զյիշատակս ն͞ց յազգաց։
Թէ ոչ վ͞ս բարկութե͞ սրտմտու͞ե
թշնամւոյն․ որ մի երկայնակեացք
եղիցին․ և մի բարձրասցին հպար-
տացեալ թշնամիքն և ասասցեն։
Թէ ձեռն մեր բարձր է՝ և բա-
զուկ մեր հզօր․ և ոչ տ͞ր ա͞ծ ա-
րար զայս ամենայն։
Զի ազգ մի խորհրդակորոյս են
նոքա՝ և ոչ գոյ ՚ի նոսա իմաստու͞թ․
Եւ ոչ խորհեցան ՚ի միտ առնուլ
զայս ա͞մ․ և արդ ընկալցին զամօթ
յանձինս իւրեանց։
Զարմանք մի մեծ այս են․ զի արդ
մինն զհազարս հալածեսցէ․ կամ
երկուք զբիւրս շարժեսցեն։
Թէ ոչ ա͞ն ո͞յ մատնեալ էր զնոսա․

և տուեալ իցէ զն՟ս ՚ի ձեռս թշնա-
մեաց նոցա։

Զի ո՛չ են դիք ն՟ց ո՟պ զա՟ծ մեր.
այլ թշնամիք մեր փաստախորհուրդք։
Յայգւոյն սոդոմայ էր որթ ն՟ց.
և տունկ նոցա ՚ի գոմորայ։
Խաղող նոցա խաղող դառնութ՟ե.
և ողկոյզ նոցա ՚ի դառնու՟ե լեղւոյ։
Սրտմտութ՟ի բարկութ՟ե վիշապաց
գինի նոցա. սրտմտութիւն իժից
անհնարին առանց բժշկու՟ե։
Ո՞չ այս ա՟մ ժողովեալ է առ իս, և
կնքեալ պահի ՚ի գանձի իմում։
Յաւուր վրիժուց հատուցման հա-
տուցից ն՟ց. ՚ի ժամանակի յորում
հարցի զքարի ոտն նոցա։
Մերձ է օր կորստեան ն՟ց. զի հա-
սեալ է պատրաստութ՟ք տ՟ր ՚ի վ՟ր ն՟ց։
Դատէ՛ տ՟ր զժողովուրդ իւր. և՚ի
ծառայս իւր մխիթարի։
Զի ետես զնոսա լքեալս՝ լու-
ծեալս՝ և մատնեալս ՚ի գերութ՟ի։
Եւ ասիցէ տ՟ր՝ ուր են դիքն ձեր

յորս յուսացեալ էիք դուք 'ի նոսա.
զորոց զճարպս սպանդիցն ուտէիք
եւ ըմպէիք զգինի զոհիցն.
Արդ՝ յարիցեն՝ օգնեսցեն՝ եւ եղի
ցին ձեզ թիկունք.

Նորին Մովսէսի.

Ծանէրո՛ւք եւ տեսէք՝ զի ես եմ.
եւ ո՛չ գոյ այլ Աստուած բաց յինէն.
Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ.
հարկանեմ եւ ես բժշկեմ. եւ ո՛չ ոք
իցէ որ հանիցէ զձեզ 'ի ձեռաց իմոց.
Համբարձից յերկինս զձեռս իմ.
երդուա՛յ աջով իմով եւ ասացի՝ Թէ
կենդանի եմ ես յաւիտեան.
Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ. եւ
իխնդիր վրիժուց արձակեցից զաջ իմ
Հատուցից զհատուցումն թշնա-
մեաց իմոց. եւ ատելեաց իմոց հա-
տուցից զհատուցումն նոցին.
Արբեցուցից զնետս իմ յարենէ նոցա
եւ սուր իմ կերիցէ միս յարենէ վի-
րաւորելոց. գերելոց գլխոց իշխա-
նաց թշնամեաց նոցա.

Ուրախ եղիցին երկինք նովաւ. և
երկիրպագցեն նմա ա՟մ որդիք ա՟յ։
Ուրախ եղերուք հեթանոսք ընդ
ժողովրդեան ն՟ր. և զօրացուսցեն
զնա ա՟մ հրեշտակք ա՟յ։
Խնդրելով խնդրեսցաւ վրէժ ա-
րեան որդւոց ն՟ր. և հատուցումն
թշնամեաց նոցա հատուցաւ ն՟ց։
Հատուցումն ատելեաց նոցա՝ հա-
տուցաւ ն՟ց. և սրբեսցէ տ՟ր զեր-
կիր ժողովրդեան իւրոյ։
Փառք հօր և այլ''։

Պահ ես տ՟ր մեր՝ գոհ ես ՚Ք՟ս կենէնք մեր. շնեղ օրհնեն անձինք մեր։ Մարդասէր Տ՟ր վ՟ս որբոտացոյ տնս''։

՚Քարոզ Մենախաղէնչէր և Խոստովանողան
Կանոնացն։

Մ՟ ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճա-
՚նապարհս խաղաղութե՟ զտ՟ր ա''։
Մ՟ ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խոր
հուրդս չարին՝ զտ՟ր աղաչեսցուք։
Մ՟ պարգևելոյ մեզ առողջ խոր-
հուրդս՝ և առաքինի վարս՝ զտ՟ր''։

 Մ՟

Մ ՟ պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյն իւրոյ՝ զՏէր աղ
Մ ՟ խորտակելոյ զհակառակորդ
վաղվաղակի ընդ ոտիւք մերովք՝ զՏ"։
Մ ՟ հոգ"։ Տ՛ եւս մեա"։

❋ Աղօթ։

Տէր երկնի եւ երկրի՝ արարիչ ամ արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից։ Առ քեզ կարդամք յամ ժամ զի ընդ ամ տեղիս է տէրութի քո եւ արքայութի քո ամենեցուն տէր։ Շնորհեա մեզ երկիւղիւ ՚ի պաշտօն քո կանխել հանապազ։ Սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ՝ եւ ՚ի բովանդակ մտաց. եւ յամ զօրութէ մերմէ պահել զպատուիրանս քո։ Համբառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութի առանց բարկութե եւ երկմտութե. եւ գտանել ՚ի քէն զշնորհս եւ զողորմութի եւ զառաքինասէր գործոցն յաջողութի։ Մ ՟ զի դու ես տր կենաց՝ եւ ած ողորմութեց. եւ քեզ վայելէ փառք իշխանութի եւ պատիւ։ այժմ"։

Խաղաղութեան ողջունն․

Քում ամենազօր և յաղթօղ տէրու-
թեդ՝ կրկնի ամ ծունր յերկրպա-
գուի․ և փառաւորի յամենեցունց
թագաւորութի քո․ Նայեաց յերկիր-
պագութիս մեր՝ և ուսո մեզ առնել
զարդարութի ճշմարտութե․ Ա զի
դու ես ած խաղաղութե․ որ բարձեր
թշնամութի 'ի միջոյ՝ և արարեր
զխաղաղութի յերկինս և յերկրի։
երկնաւորաց և մարմնաւորաց՝ աւե-
տարանեցեր զնոր պարգևս քոյին
արեացդ․ Որում և զմեզ մեծի
որհնացդ արժանաւորս արասցես՝
ասելով ընդ ճշմարիտ երկրպա-
գուս քո․ ած մեր և տր և փրկիչ
մ քո․ Որ ես օրհնեալ ընդ հօր
և սբ հոգւոյդ․ Այժմ և։

Յերգս օրհնութեան և 'ի ձայն Աղօթից,
անդադար փառաւորեմք զՀայր և զՈր
դի և զսբ Հոգին․ Այժմ և միշտ և յաւի
տեանս յաւիտենից Ամէն։



Ողոր


Lucchesini f



Ի կատարածն վասն ժողովրդեանն որ՛ ի սրբ
ութենէն հեռա-
ցեալ էին.



ՂՈՐՄԵԱ՛
ինձ ա՛ծ՝ զի կոխ
եաց զիս մարդ.
զօրհանապազ պա
տերազմունք նե
ղեցին զիս.
Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհա-
նապազ. բազումք էին որք մարտըն
չէին ընդ իս ՚ի բարձանց.
՚Ի տունջեան ոչ երկեայց՝ զի ՚ի քեզ


յու

յուսացայ․ ա̄վ գովեցից զբանս իմ․ յա̄ծ յուսացայ և ոչ երկեայց զի՞ արասցէ ինձ մարդ։

Զօր հանապազ զբանս իմ անարգեցին․ զինէն էին խորհուրդք նոցա ՚ի չարութեան։

Պանդուխտք եղիցին և թաքթաքուրք շրջեսցին․ նոքա դարշապարս իմում սպասեսցեն՝ որպէս և սպասէին անձին իմում։

Որո̄վ առ յոչինչէ մերժեսցես զնո̄ս․ բարկութե̄ զժողովուրդս հնազանդեցուցես։

Ա̄ծ զկեանս իմ պատմեցից քեզ․ եդիր զարտասուս իմ առաջի քո՝ ո̄պ խոստացար դու ինձ։

Դարձցին թշնամիք իմ յետս իւրեանց՝ յաւուր յորում կարդասցուք առ քեզ։

Ահա́ ծանեայ զի ա̄ծ իմ ես դու․ զա̄ծ օրհնեցից ՚ի բանս իմ, և զտ̄ր գովեցից ՚ի խօսս իմ․ յա̄ծ յուսացայ և ոչ երկեայց զի՞ արասցէ ինձ մարդ։

 Յի

Յինէն են ուխտք իմ զոր տացքեզ
օրհնութե̃ ա̃ծ ա̃ծ իմ։
Փրկեցեր զանձն իմ՚ի մահուանէ .
զաչս իմ յարտասուաց . եւ զոտս իմ
՚ի գայթակղութենէ . հաճոյ եղէց
առաջի տ̃ն յերկրին կենդանեաց ։

※ Ի կատարած մ՛ ապականէր . Դաւթի
արձանագիր։ ԾԶ.

Ողորմեա ինձ ա̃ծ՝ ողորմեա ինձ .
զի ՚ի քեզ յուսացաւ անձն իմ։
՚Ի հովանի թեւոց քոց յուսացայց՝
մինչեւ անցցէ անօրէնութիւն։
Աղաղակեցից առ ա̃ծ բարձրեալն՝
առ ա̃ծ բարերար իմ։
Առաքեաց յերկնից եւ կեցոյց զիս .
ետ ՚ի նախատինս որ կոխէին զիս ։
Առաքեաց ա̃ծ զողորմութի̃ եւ զճ-
շմարտութիւն իւր . եւ փրկեաց
զանձն իմ ՚ի միջոյ գազանաց՝
զի ննջէի ես խռովեալ ։
Որդւոց մարդկան ատամունք իւր-
եանց զէն եւ նետք են . եւ լեզուք


նոցա

Նոցա որպէս զսուր սուսերի։
Բարձրեալ ես դու յերկինս ա̅ծ․
և յա̅մ երկրի են փառք քո։
Որոգայթ պատրաստեցին ոտից ի_
մոց․ խոնարհ արարին զանձն իմ․
փորեցին առաջի իմ խորխորատ,
և անկան ինքեանք ՚ի նոյն։
Պատրաստ է սիրտ իմ ա̅ծ․ պատ_
րաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս
ասել քեզ փառօք իմովք։
Զարթիր փառք իմ, զարթիր սաղ
մոսիւք և օրհնութ̅բ․ և ես զար_
թեայց առաւօտուց։
Խոստովան եղէց քեզ ՚ի ժողովուրդս
տ̅ր․ և սաղմոս ասացից քեզ յազգինս։
Մեծ եղև մինչև յերկինս ողորմու_
թի̅ք քո․ մինչև յամպս ճշմարտութի̅ քո։
Բարձրեալ ես դու յերկինս ա̅ծ․
և յա̅մ երկրի են փառք քո։

Ի կատարած մ՚ ապականեր արձանագիր
Սաղմոս Դաւթի․ ԾԷ․

Թէ արդարև զարդարութի̅ խօ_


սէ

սէիք, եւ ուղիղս դատէիք որդիք
մարդկան.
Քանզի եւ արդ իսկ 'ի սրտի ձերում
զանօրէնութիւն գործէք յերկրի. զա
նիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն.
Օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ. խա
բեցան յարգանդէ եւ խօսեցան զսուտ.
Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան
օձի. որպէս իժի եւ քարբի զի խցեալ է
զականջս իւր.
Զի մի լուիցէ նա զձայն թովչի
ճարտարի. եւ մի առցէ զդեղ 'ի դե
ղատուէ իմաստնոյ.
Աստուած փշրեսցէ զատամունս նոցա
'ի բերանս իւրեանց. եւ զժանիս
առիւծուց խորտակեսցէ Տէր.
Անարգք եղիցին նոքա որպէս ջուր զի հե
ղանի. 'ի լարել աղեղանն նորա՝ տկարաս
ցին որպէս մոմ զի հալի եւ սպառեսցին.
Անկաւ հուր եւ ոչ տեսին զարեւ.
մինչչեւ 'ի միտ առեալ էր զփուշս
իւրեանց, որպէս զժնիկ բարկութեան
կենդանւոյն կլլեսցէ զնոսա.

Ուրախ եղիցի արդարն յորժամ
տեսցէ զհատուցումն . եւ զձեռս
իւր լուասցէ յարեան մեղաւորի։
Եւ ասասցէ մարդ՝ թէ արդարեւ
գուցէ պտուղ արդարոյ . եւ է Աստուած
որ դատէ զնոսա յերկրի։

Ի կատարած մի՛ ապականեր . Սաղմոս
Դաւթի։ ԾԸ

Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց
Աստուած . յայնցանէ որք յարուցեալ
են ՚ի վերայ իմ ապրեցո զիս։
Փրկեա զիս յայնցանէ որք գոր-
ծեն զանօրէնութիւն . յարանց ա-
րեանահեղաց ապրեցո զիս։
Որսալ զանձն իմ կամեցան . եւ հա-
սեն ՚ի վերայ իմ հզօրք։
Ո՛չ մեղք իմ եւ ո՛չ յանցանք . առանց
մեղաց ընթացայ եւ ուղիղ եղէ։
Զարթիր ընդ առաջ իմ եւ տես
դու Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի։
Նայեա՛ց եւ այց արա ամենայն հե-
թանոսաց . մի՛ ողորմիր ամենեցուն

ույք գործեն զանօրէնութիւն։
Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին
որպ՟ շունք և շրջեսցին զքաղաքաւ։
Նոքա զօղանջեսցեն բերանով իւր
եանց. և սուր է ՚ի շրթունս նոցա։
Իսկ արդ՝ ով լուաւ զայս. զի դու
Տր՟ ծիծաղեսցիս զնոքօք և արհա-
մարհեսցես զամ՟ հեթանոսս։
Զզօրութի՟ իմ առ քեզ պահեցից.
զի Ած՟ օգնական իմ ես։
Ած՟ իմ, ողորմութի՟ նր՟ կանխեսցէ
առաջի. և Ած՟ իմ ցուցցէ ինձ ՚ի
թշնամիս իմ։
Մի՛ սպանաներ զնոսա՝ զի մի՛ մո-
ռասցին զժողովուրդ քո։
Ցրուեա՛ զնս՟ զօրութ՟ք քով և ընկեցեա՛
զնս՟. զի դու ես պաշտպան իմ Տր՟։
Մեղք բերանոյ նոցա և բանք շր
թանց նց՟, ընկլցին նոքա յամբար
տաւանութեան իւրեանց։
Յանէծս և ՚ի ստութիւնս մատնես
ցին. ՚ի կատարածի բարկութեամբ
սպառեսցին և մի՛ գտցին։

Գիտասցեն՝ զի ա՛ծ տիրէ յակոբայ
եւ ա՛մ ծագաց երկրի:

Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին
որպէս շունք եւ շրջեսցին զքաղաքաւ:

Նոքա ցրուեսցին յուտել. ապա
թէ ոչ յագեսցին, տրտնջեսցեն.

Այս օրհնեցից զօրհնութիւն ա՛ն. եւ ցնծա
ցայց առաւօտուց ողորմութեան քում:

Զի եղեր իմ պաշտպան՝ եւ տուն
ապաւէնի. յաւուր նեղութեան իմոյ՝
օգնական իմ:

Քեզ սաղմոս ասացից՝ ա՛ծ ապա
ւէն իմ. ա՛ծ ողորմութեան իմոյ:

Սաղմոս Դաւթի՝ արձանագիր: Ծթ.

Աստուած մերժեցեր եւ աւերեցեր զմեզ
բարկացար եւ գթացիր ի մեզ:

Շարժեցեր զերկիր՝ եւ խռովեցու
ցեր զնա. բժշկեա զհարուածս նո
րա՝ զի սասանեցաւ.

Ցուցեր ժողովրդեան քում խիս
տութիւն. եւ ետուր ըմպել մեզ
գինի յիմարութեան:

Ետուր երկիւղածաց քոց նշան ,
զի ապրեսցին յերեսաց աղեղան ։
Որպէս փրկեսցին սիրելիք քո • կեցո
աջով քո և լուր մեզ ։
Ած խօսեցաւ 'ի սրբութեան իւրում •
ցնծացայց՝ բարձր եղէց՝ բաժանե-
ցից զսիւքէմ • և զհովիտս յարկաց
չափեսցից ։
Իմ է գաղայադ՝ և իմ է մանասէ •
եփրեմ հզօրին գլխոյ իմոյ ։
Յուդա Թագաւոր իմ • մովաբ ա-
ծաղան յուսոյ իմոյ ։
Յեդովմէ ուղղեսցից զգնացս իմ •
և ինձ այլազգիք հնազանդք եղեն ։
Ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր •
կամ ո՞վ առաջնորդեսցէ ինձ
մինչև ցեդոմ ։
Եթէ ո՞չ դու Ած որ մերժեցեր
զմեզ • և ո՞չ ելեր Ած ընդ զօրս մեր ։
Տուր մեզ օգնութիւն 'ի նեղութեան •
զի ընդունայն է փրկութիւն մարդոյ ։
Աստուծով արասցուք զօրութիւն • և
նա արհամարհեսցէ զայնոսիկ որք
նեղեն զմեզ ։



Լուր

Լուր ած աղօթից իմոց. եւ նայեա՛
տր յաղօթս իմ։

Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ
մինչ ՚ի վաստակել սրտի իմոյ.

Ի վէմս բարձր արարեր զիս. ա
ռաջնորդեցեր ինձ. եւ իմ եղեր
յոյս. եւ աշտարակ հզօր եղեր ինձ
յերեսաց թշնամւոյն։

Բնակեցայց ես ՚ի յարկս քո յաւի
տեան. եւ ծածկեցայց ընդ հովա
նեաւ թեւոց քոց։

Դու ած լուար աղօթից իմոց.
ետուր ժառանգութիւն՝ որք եր
կնչէին յանուանէ քումմէ։

Աւուրս յաւուրս յաւելեր թգրի ա
մացն րա աւուրք յազգաց մինչեւ յազգս

Կայ եւ մնայ յաւիտեան առաջի այ
ողորմութիւն եւ ճշմարտութիւն
որք խնդրեն ՚ի նմանէ։

Այսպէս սաղմոս ասացից անուան
քում յաւիտեանս յաւիտենից. եւ
տաց քեզ զաղօթս իմ օրըստօրէ։

*Ի կատարած 'ի վերայ իդիթումայ. Սաղմոս Դաւթի. ԿԱ.

Բայց միայն ա՟յ հնազանդեալ լեր անձն իմ. զի 'ի նմանէ է ինձ փրկութիւն։

Նա է ա՟ծ իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ, զի մի սասանեցայց առաւել։

Մինչև յերբ յառնէք 'ի վ՟ր մարդոյ սպանանել ամենեքեան. ո՟պ յորմոյ թիւրելոյ և ցանկոյ մերժելոյ։

Բայց միայն զպատիւ իմ խորհեցան մերժել յինէն. և ընթացան 'ի ծարաւս իւրեանց։

Բերանովք իւրեանց օրհնէին, և սրտիւք անիծանէին։

Բայց սակայն ա՟յ հնազանդեալ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ համբերութի՟։

Նա է ա՟ծ իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ զի մի սասանեցայց։

Յա՟յ է զօրութի՟ իմ և փառք իմ. ա՟ծ օգնութե՟ իմոյ. յոյս իմ առ ա՟ծ է։

Յուսացարուք 'ի նա ա՟մ ժողովք ժողովրդոց. սփռեցէք առաջի ն՟ր

զսիրտս ձեր . զի ա՟ծ օգնական է
մեր յաւիտեանս ժամանակաց։
Սակայն ունայն են որդիք մարդ
կան . սուտ են որդիք մարդկան . ՚ի
կշիռս իւրեանց մեղանչեն . և նո
քեանք յունայնութէ՟ են ՚ի միասին։
Մի՛ յուսայք յանիրաւութիւն .
յափշտակութեան մի՛ ցանկայք . և
մեծութիւն թէ առաւելի՛ գայցէ,
մի՛ յօժարեսցին սիրտք ձեր։
Մի անգամ խօսեցաւ ա՟ծ . և եր
կուս զայս լուայ։
Զա՟յ է զօրութիւն՝ և քո տ՟ր ողոր
մութիւն . և դու հատուցանես
իւրաքանչիւր ըստ գործոց նոցա։

Սաղմոս Դաւթի ԿԲ։

Ա՟Ծ իմ, ես առ քեզ առաւօտ
առնեմ . ծարաւեաց առ քեզ հոգի
իմ . քանի՛ պատիկ և մարմին իմ։
Որպէս երկիր անապատ և անջուր՝
ուր ոչ գոյ ՚ի նմա ճանապարհ։
Նոյնպէս ՚ի սրբ՟ս երևեցայց քեզ .
տեսանել ինձ զզօրութիւնս քո և
զփառս քո։

Ա՜ զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ. և շրթունք իմ գովեսցեն զքեզ։

Նոյնպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ. և յանուն քո համբարձից զձեռս իմ։

Որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ. շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ։

Զի եղեր իմ օգնական. ի հովանի թևոց քոց ցնծացայց։

Եկն զկնի քո անձն իմ. և զիս ընկալաւ աջ քո. և նոքա ի նանիր խնդրեցին զանձն իմ։

Մտցեն ի ներքոյ անդնդոց երկրի. մատնեսցին ի ձեռս սրոյ. և բաժինք աղուեսուց եղիցին։

Թագաւոր յուսասցաւ ի տէր. գովեսցին ամենեքեան որք երդնուն նովաւ. խցցին բերանք այնոցիկ որք խօսին զանիրաւութիւն։

 Լուր

Լուր ա՟ծ աղօթից իմոց յաղաչել
ինձ առ քեզ · յերկիւղէ՛ թշնա
մոյն փրկեա՛ զանձն իմ ։
Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չա-
րաց · 'ի բազմութենէ որք գործեն
զանօրէնութիւն ։
Որք սրեցին ո՟պ զսուսեր զլեզուս
իւրեանց · լարեցին զաղեղունս
իւրեանց յիրս դառնութե՟ ։
Ձգել 'ի գաղտնիս այնոցիկ՝ որք
ուղիղ են սրտիւք · յանկարծակի
ձգեսցեն 'ի նս՟ և մի՛ երկիցեն ։
Որք զօրացուցին յանձինս իւր-
եանց զբանս չարութե՟ · խորհեցան
թաքուցանել ինձ որոգայթ · և ա-
սացին ո՛չ տեսանէ զայս տ՟ր ։
Քննեցին զանօրէնութիւն · պար-
տասեցան 'ի քննել զքննութիւն ։
Մատիցէ այր 'ի խորութիւն սրտի
իւրոյ, և բարձր եղիցի ա՟ծ ։
Նետք տղայոց եղեն վէրք նոցա ·
տկարացան 'ի նս՟ լեզուք նց՟ · և խռո

 վե

վեցան ամենեքին որք հայէին ընդ նոսա :
Երկեաւ ամենայն մարդ՝ 'ի պատ
մել զգործս այ̅ . և զարարածս նր̅
'ի միտ առին :
Ուրախ եղիցի արդար 'ի տէր՝ և
յուսասցի 'ի նա . Նովաւ գովեսցին
ամենեքին որք ուղիղ են սրտիւք :

'Ի կատարած սաղմոս դաւթի . Երգ երեմիայ
և եզեկիէլի և ժողովրդեանն՝ յորժամ 'ի պան
դխտութենէ կամէին ելանել :

ԿԴ


եզ վայել է օրհնութիւն ած̅
'ի սիօն . և քեզ տացին
աղօթք յերուսաղէմ :
Լուր աղօթից իմոց՝ զի առ քեզ
ամ̅ մարմին եկեսցէ :
Բանք անօրինաց զօրացան ի վ̅ր մեր .
և զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես
Երանի զոր ընտրեցեր և ընկալար .
և բնակեսցին 'ի գաւիթս քո :
Լցցուք մեք 'ի բարութե̅ տան քո . սր̅բ
է տաճար քո սքանչելի արդարութ̅բ :


Լուր

Լուր մեզ ած փրկիչ մեր. յոյս ամ
ծագաց երկրի՝ եւ որ ՚ի ծով հեռի։
Որ պատրաստէ զլերինս զօրութբ
իւրով. եւ զգեցեալ է զզօրութի։
Որ խռովեցուցանէ զմեծութի ծո_
վու, եւ զձայն ալեաց նր ցածուցանէ։
Խռովեսցին հեթանոսք. եւ երկիցեն
բնակիչք երկրի ՚ի նշանաց քոց։
Ելս առաւօտու՝ ընդ երեկոյս զու
արճացուսցես. հայեցար յերկիր, ար_
բեցուցեր զնա, եւ բազում արարեր
զմեծութիւն նորա.
Գետն այ լի՝ եղեւ ջուրբք. պատ_
րաստ արարեր զկերակուր նորա.
զի այսպէս է պատրաստութի։
Զակօս նորա արբեցուցեր, եւ բա
զում արարեր զարմտիս նր։
՚Ի ցօղել նր՝ զուարթ եղիցի բոյս
նորա. օրհնեսցի պսակ տարւոյ.
քաղցրութեան քո։
Դաշտք քո լցցին պարարտութբ. պա
րարտասցին գեղեցկութիք անապատի.
Բլուրք զմծութեան զգեցցին.

և զգեցցին խոյք մաքեաց.
Հովիտք բազում արասցեն զցորեն
աղաղակեսցեն և օրհնեսցեն:
Ի կատարած Պսաղմի: ԿԵ.
Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր.
սաղմոս ասացէք անուան նորա. և
տուք զփառս օրհնութեան նորա:
Ասացէք Աստուծոյ՝ որպէս զի ահեղ են գործք
քո. ի բազում զօրութեան քում
ստեսցին քեզ թշնամիք քո:
Ամենայն երկիր՝ երկիր պագցեն
քեզ. և սաղմոս ասասցեն քեզ.
սաղմոս ասասցեն անուան քում:
Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ. որպէս
զի ահեղ են խորհրդովք քան զամենայն
որդւոց մարդկան:
Որ դարձոյց զծով ի ցամաք. և
ընդ գետս անցցին ոտանաւորք:
Անդ ուրախ եղիցուք մեք ի նմա.
որ տիրէ զօրութեամբ իւրով յաւիտենից:
Աչք նորա ի հեթանոսս հային.
որք դառնացուցին զնա, մի բարձ-
րասցին յանձինս իւրեանց:

Օրհնեցէք հեթանոսք զԱծ մեր. լսելի արարէք զձայն օրհնութեան նր։
Այն որ ետ զանձն իմ ի կեանս, և ոչ ետ դողդողութիւն ոտից իմոց։
Փորձեցեր զմեզ Ած և քննեցեր. որպէս և քննի արծաթ։
Իջուցեր զմեզ յորոգայթ. եդեր զնեղութիւն ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ ի վր գլխոց մերոց։
Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր. և հաներ զմեզ ի հանգիստ։
Մտից ի տուն քո պատարագօք. տաց քեզ զուխտ իմ. զոր խոստացան շրթունք իմ. զոր բերան իմ խօսեցաւ ի նեղութեան։
Ողջակէզս զուղղալիցս մատուցից քեզ խոյովք և խնկովք. և քեզ մատուցից զուարակս և նոխազս։
Եկայք լուարուք ինձ և պատմեցից ձեզ՝ ամենեքեան որք երկնչիք յԱյ զոր ինչ արար անձին իմոյ։
Առ նա բերանով իմով կարդացի. և բարձր արարի զնա լեզուաւ իմով։

 Զմեղս

Զ մեղս թէ տեսանէի ՚ի սրտի ի-
մում. մի թէ լսէր ինձ տ՟ր։
Վ՟յսորիկ լուաւ ինձ ա՟ծ. և նայե-
ցաւ ՚ի ձայն խնդրուածոց իմոց։
Օրհնեալ է ա՟ծ որ ո՛չ ՚ի բացեայ
արար զաղօթս իմ. և ո՛չ զողորմու-
թիւն իւր յինէն։

Ի կատարած ընդ օրհնութիւնս. սաղմոս
երգոյ։ ԿԶ։

Ա՟Ծ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ.
երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ և
ողորմեա՛ մեզ։
Ծանուցանել յերկրի զճանապարհս քո.
յազգս ա՟մ զփրկութիւնս քո։
Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք ա՟ծ. խոստովան եղիցին
առ քեզ ժողովուրդք ա՟մ։
Ուրախ եղիցին և ցնծասցեն ա-
զինք. զի դու դատես զժողովուրդս
ուղղութ՟բ. և ազգաց երկրի դու
առաջնորդես։
Խոստովան եղիցին առ քեզ ժո-
ղովուրդք ա՛ստուած. գոհասցին

 զքէն

գ.քէն ժողովուրդք ամենայն :
Երկիր ետ զպտուղ իւր . և օրհ
նեաց զմեզ ած ած մեր :
Ած մեր օրհնեսցէ զմեզ . և՛ի նմա
նէ՛ երկիցեն ամ ծագք երկրի :

Ի կատարած Դաւթի . Սաղմոս
երգոյ : ԿԷ

Յարիցէ ած՝ և ցրուեսցին
ամ թշնամիք նր . փախիցեն
ատելիք նր յերեսաց նր :
Որպ պակասի ծուխ՝ պակասեսցին .
որպ հալի մոմ առաջի հրոյ , այնպէս
կորիցեն մեղաւորք յերեսաց այ :
Արդարք ուրախ եղիցին և ցնծաս
ցեն առաջի նր . և զուարճասցին
յուրախութե իւրեանց :
Օրհնեցէք զած մեր՝ և սաղմոս ա
սացէք անուան նր . ճանապարհ արա
րէք այնմիկ՝ որ նստի ընդ արև
մուտս . տր է անուն նր :
Ցնծասցեն առաջի նորա . և խռո
վեսցին յերեսաց նր .

 Որ

Որ հայրն է որբոց՝ և դատաւոր այրեաց
ա͞ծ ՚ի տեղւոջ սրբութեան իւրոյ :
Ա͞ծ բնակեցուցանէ զմիաբանս ՚ի
տան . և հանէ զկապեալս քաջութ͞ե
իւրով . այնպէս և զդառնացօղս՝
որք բնակեալ են ՚ի գերեզմանս :
Ա͞ծ ընդ ելանելն քո առաջի ժողո
վրդեան քո , ընդ անցանելն քո
ընդ անապատ , երկիր շարժեցաւ :
Քանզի և երկինք ցօղեցին յերե
սաց ա͞յ ՚ի սինայէ՝ առաջի ա͞յ ի͞էլի :
Անձրև կամաց պատրաստեսցես ա͞ծ
ժառանգութեան քում . Թէպէտ
և հիւանդացաւ , սակայն դու հաս
տատեսցես զնա . և գազանք քո բը
նակեսցեն ՚ի նմա :
Պատրաստ արարեր քաղցրութ͞ե քով
աղքատի ա͞ծ . տ͞ր տացէ զբան՝ որք
աւետարանեն զօրութ͞ե բազմաւ :
Թագաւոր զօրութ͞եց սիրելւոյ .
գեղեցկութ͞ի տան քո բաժանել
յաւարի . Թէպէտ՝ և ննջէսջիք ՚ի
մէջ վիճակաց :

Թևք աղաւնւոյ արծաթապատ.
և Թիկնամէջ նորա ՚ի գոյն ոսկւոյ:
Ի գումարել երկնաւորին զԹագա-
ւորս ՚ի վերայ նորա՝ ձիւնասցին ՚ի սաղմոն:
Լեառն այ՝ լեառն պարարտ. լեառն
մածեալ՝ լեառն պարարտ. և զի՞նչ
կարծէք լերինք հպարտացեալք:
Լեառն՝ ընդ որ հաճեցաւ ած բը-
նակել ՚ի նմա. քանզի և տր իսկ
բնակեսցի ՚ի նմա իսպառ:
Կառք այ բիւրաւորք՝ հազարք
ուղղիչք. և տր ՚ի նոսա՝ ՚ի սինէ
սրբութեան իւրոյ:
Ել ՚ի բարձունս՝ և գերեաց զգե-
րութիւն. էառ աւար՝ բաշխեաց
պարգևս՝ և ետ որդւոց մարդկան.
քանզի Թերահաւատից ևս բնա-
կեալ եղիցին ՚ի նմա:
Տր ած օրհնեալ՝ օրհնեալ տր զօր
հանապազ. առաջնորդեսցէ մեզ
ած փրկիչ մեր:
Ած մեր՝ ած կենարար. և ՚ի տնէ
են ելք մահու:

Բայց սակայն ա՟ծ փշրեսցէ ըզ
գլուխս Թշնամեաց մերոց. և ըզ
հերն կարձնովէն՝ ոյք գնան յանօ
րէնութեան իւրեանց։
Ասաց տ՟ր՝ ՚ի խորոց անդնդոց դար
ձուցից. և՚ի միջոյ ծանեաց՝ զայն
՚ի դուրս կորզեցից։
Որ՟պ Թացցի ոտնքո յարեան. և լեզուք
շանց քոց յարենէ Թշնամեաց քոց։
Երևեցան գնացք քո ա՟ծ. գնացք
ա՟յ Թագաւորին մերոյ ս՟բյ։
Կանխեցին իշխանք հանել զօրհ-
նութ՟ի ՚ի մէջ կուսանաց և գովչաց։
Յեկեղեցիս օրհնեցէք զա՟ծ. և ըզ
տ՟ր յաղբերացն իսրայելի։
Անդ բենիամին ՚ի տղայութ՟ե զար
մանալի. իշխանք յուդայ՝ առաջ-
նորդք նորա. իշխանք զաբուղոնի՝
և իշխանք նեփթաղիմի։
Հրամայեա՛ ա՟ծ զօրութ՟ե քով. զօրա
ցո՛ զայս՝ զոր հաստատեցեր ՚ի մեզ։
՚Ի տաճարէ քումմէ յեղ՟էմ՝ քեզ
մատուսցեն Թ՟գ՟որք զպատարագս։

 Սաս

Սաստեա՛ ՚ի գազանս եղեգանս ․ ՚ի
ժողովս զուարակաց և՚ի գաստ
երընջոց ։

Խոտեսցին այնոքիկ՝ որք ընտրեալ
են արծաթով ․ ցրուեա՛ զհեթա_
նոսս որք կամին ընդ պատերազմ ։

Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ ։
հնդիկք յառաջագոյն ձեռնտու
լիցին առ ա՟ծ ։

Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք
զա՟ծ ․ և սաղմոս ասացէք տ՟ն ։

Ճանապարհ արարէք այնմիկ՝ որ
նստի յերկինս երկնից ընդ արևելս ։

Ահա՛ տացէ զձայն իւր՝ ՚ի ձայն զօ
րութե՟ ․ և տուք զփառս ա՟յ ։

Ի վերայ իսրայէլի մեծ վայելչութիւն
նորա ․ և զօրութիւն նորա մինչև
յամպս երկնից ։

Սքանչելի է ա՟ծ ՚ի վերայ սրբոց
իւրոց՝ ա՟ծ իսրայէլի ։

Նա՛ տացէ զօրութիւն հաստատու
թեան ժողովրդեան իւրոյ՝
օրհնեալ է ա՟ծ ։

 Կեցո՛

Ի կատարած Սաղմոս Դաւթի՝ վասն փոփոխելոց : ԿԸ :

Կեցո՛ զիս ած զի հասին
ջուրք յանձն իմ. ընկլայ
ես ՚ի խորս անդնդոց՝ ուր
ոչ գոյ ինձ հանգիստ:

Եկի ես ՚ի խորս ծովու, և շրջանք
ընկղմեցին զիս.

Վաստակեցայ ես առ աղաղակել
իմում. և կերկերեցա՛ւ կոկորդ իմ:

Նուաղեցան աչք իմ առ յուսալ
ինձ առ տր ած իմ:

Բազումք եղեն քան զհեր գլխոյ իմոյ
որք ատեին զիս ՚ի տարապարտուց:

Զօրացան յիս թշնամիք իմ և ա-
տելիք իմ ՚ի նանիր. ինչ՝ զոր ոչ
յափշտակեալ էի՝ տուժէի նոցա:

Ած՝ դու ծանեար զանզգամու-
թիւն իմ. և յանցանք իմ ՚ի քէն
ոչ ծածկեցան:

Մի՛ ամաչեսցեն վասն իմ որք համ
բերեն քեզ տր՝ տր զօրութեանց.
մի՛ պատկառեսցեն վասն իմ որք

 խնդրեն

խնդրեն զքեզ Ած իսրայէլի։
Վասն քո համբերեցի նախատանաց. և ծածկեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց. և հիւր որդւոց մօր իմոյ։
Նախանձ տան քո եկեր զիս. և նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վերայ իմ։
Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. ա-րարի զհանդերձս իմ քուրձ, և եղէ յառակ նոցա։
Զինէն խօսէին որք նստէին առ դրունս. և զիս այպն առնէին որք ըմպէին զգինի։
Ես յաղօթս կայի առ քեզ Տր ՚ի ժամանակ ընդունելի։
Ած ՚ի բազում ողորմութե քում լուր ինձ. ՚ի ճշմարտութե փրկութե քո։
Ապրեցո՛ զիս ՚ի կաւո՛յ՝ զի մի՛ ընկլայց. ապրեցայց ես յատելեաց իմոց՝ և ՚ի խորոց ջուրց բազմաց։
Մի՛ ընկլցին զիս պտոյտք ջուրց.

եւ մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. եւ ջրհոր մի՛ կափուսցէ ըզբերան իւր ՚ի վերայ իմ։

Լուր ինձ տէր՝ զի քաղցր է ողորմութիւն քո. ըստ բազում գթութեան քում հայեաց յիս. եւ մի՛ դարձուցաներ զերեսս քո ՚ի ծառայէ քումմէ՝ զի նեղեալ եմ ես՝ վաղվաղակի լուր ինձ։

Հայեաց յանձն իմ եւ փրկեա զիս. եւ վասն թշնամեաց իմոց ապրեցո զիս։

Զի դու գիտես զնախատինս իմ. զամօթ իմ եւ զպատկառանս իմ։

Առաջի քո են ա̃մ նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբեր սիրտ իմ եւ թշուառութեան։

Ակն ունէի թէ ոք տրտմեսցի ընդ դիս՝ եւ ոչ ոք էր. եւ մխիթարիչ ինձ ոք ոչ գտաւ։

Ետուն ՚ի կերակուր ինձ լեղի. եւ ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նց յորոգայթ. ՚ի հատուցումն եւ ՚ի գայթակղութիւն։

Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն · և զթիկունս նոցա հանապազ կորացո՛ ։

Հեղցես ՚ի վերայ նոցա զբարկութիւն քո · և սրտմտութիւն բարկութեան քո՝ հասցէ ՚ի վերայ նոցա ։

Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ · և ՚ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ ։

Զի զոր դու հարեր՝ հալածեցին · և ՚ի վէրս ցաւոց իմոց յաւելին ։

Դիր զմեղս ՚ի վերայ մեղաց նոցա · զի մի՛ մտցեն յարդարութիւն քո ։

Ջնջեսցին նոքա ՚ի դպրութենէ քումմէ կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցին ։

Աղքատ և ցաւած եմ ես · փրկութիւն քո Աստուած ընկալցի զիս ։

Օրհնեցից զանուն Աստուծոյ իմոյ օրհնութեամբ և բարձր արարից զնա գովութեամբ ։

Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զորթ մատաղ · որ բերէ զեղջիւրս և զկճղակս ։

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին · խնդրեսցէք զԱստուած և կեցցեն անձինք ձեր ։

Զի լուաւ Տէր տնանկաց, և զկա-
պեալս իւր ոչ արհամարհեաց։
Օրհնեսցեն զնա երկինք և երկիր.
ծովք՝ և ամ որ զեռայ ՚ի նոսա։
Ած փրկէ զսիոն՝ և շինեսցին քա-
ղաքք հրէաստանի. շինեսցեն՝ բնա-
կեսցին և ժառանգեսցեն ՚ի նմա։
Զաւակ ծառայից քոց հաստա-
տեսցի անդ. և որք սիրեն զանուն
քո, բնակեսցին ՚ի նմա։

Ի կատարած Սաղմոս Դաւթի։ ԿԹ.

Ած յօգնել ինձ նայեաց. և Տէր
յընկերել ինձ փութա։
Ամաչեսցեն և յամօթ լիցին որք
խնդրեն զանձն իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։
Դարձցին առ ժամայն ամաչեցելք
որք ասէին ինձ վա՜շ վա՜շ։
Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ
ամենեքեան որք խնդրեն զքեզ Տէր։
Ասասցեն յամ ժամ մեծ է Ած. և
որք սիրեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ և տնանկ եմ Ա՟ծ՝ օգնեա ինձ. օգնական և փրկիչ իմ ես դու Տ՟ր իմ մի յամենար։

Սաղմոս Դաւթի որդւոցն յովնադաբեայ յառաջնոյ գերութենէն Հ

Ի քեզ Տ՟Ր յուսացայ՝ մի ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում, փրկեա և ապրեցո զիս։

Խոնարհեցո առ իս զունկն քո՝ և կեցո զիս։

Լեր իմ Ա՟ծ ապաւէն՝ և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես։

Ա՟ծ իմ փրկեա զիս ՚ի ձեռաց մեղաւորի. ՚ի ձ՟ռց անօրինի և անիրաւի։

Դու ես համբերութիւն իմ Տ՟ր. Տ՟ր յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ։

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. և առ ՚ի քէնէ օգնութիւն իմ յա՟մ ժամ։



Ող

Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց.
և դու օգնական իմ և հզօրիչ իմ։
Լցցի բերան իմ գովութեամբ.
որպէս օրհնեցից զփառս քո. զօրհա
նապազ զմեծ վայելչութիւնս քո։
Մի՛ ընկենուր զիս ՚ի ժամանակս
ծերութեան. ՚ի պակասել զօրութեան
իմոյ մի՛ թողուր զիս։
Ասացին թշնամիք իմ ինձ՝ և որք
պահէին զանձն իմ. խորհեցան
իմիասին և ասացին։
Աստուած եթող զնա. հալածեցէք և հաս
ցուք նմա. զի ո՛չ ոք է որ փրկէ զնա։
Աստուած իմ մի՛ հեռի առներ յինէն.
և Աստուած յօգնել ինձ նայեաց։
Ամաչեսցեն և պակասեսցին՝ որք
չարախօս կային զանձնէ իմմէ.
զգեցցին զամօթ և զպատկառանս՝
որք խնդրէին ինձ զչար։
Ես յամենայն ժամ յուսացայց՝ և յաւելե
լից յօրհնութիւնս քո։
Բերան իմ պատմեսցէ զարդարութիւն
քո. զօրհանապազ զգովութիւն քո։

 Որպ

Ոպ ոչ թէ խարդախութբ ինչ գիտէի զդպրութի. այլ մտից ՚ի զօրութիւնս տն. տր՛ յիշեցի զարդարութիւնս քո միայն։

Այ իմ ուսուցեր զիս ՚ի մանկութէ իմմէ. եւ ցարդ եւս պատմեցից զար-դարութիւնս քո։

Մինչեւ յալեւորիլ եւ ՚ի ծերանալ, ած իմ մի՛ թողուր զիս։

Մինչեւ պատմեսցի բազուկ քո ազ-գի ամի որ գալոցն է։

Զօրութիւնս քո եւ զարդարութիւնս քո մինչեւ ՚ի բարձունս. զոր արարեր մեծամեծս ած ո՞ նմանի քեզ։

Որչափ ցուցեր ինձ զնեղութիւն բազում եւ չարչարանս, դարձեալ մխիթարեցեր զիս. եւ ՚ի խորոց ան-դընդոց երկրի հաներ զիս։

Յաճախեցեր զզօրութիւնս քո՝ եւ դար-ձար մխիթարեցեր զիս. եւ ՚ի խորոց երկրի միւսանգամ հաներ զիս։

Արդ եւ ես խոստովան եղէց քեզ ՚ի պատրաստութի սաղմոսաց՝ ճըշ-մարիտ ած. սաղմոս ասացից քեզ

օրհնութեամբ սբդ իսրայէլի։
Ցնծասցեն շրթունք իմ յորժամ
սաղմոս ասիցեմ քեզ. և անձն իմ
զոր փրկեցեր։
Այլ՝ և լեզու իմ զօրհանապազ խօ
սեսցի զարդարութիւն քո։
Ի ժամանակի ոպ յամօթ լիցին և ա
մաչեսցեն ոյք խնդրէին ինձ զչար։

Ի սողոմոն Սաղմոս Դաւթի։ ՀԱ

ԱԾ զիրաւունս քո արքայի՛ տուր,
և զարդարութիւնս քո որդւոյ թգւրի։
Դատել զժողովուրդս քո արդա
րութբ, և զաղքատս քո իրաւամբք։
Առցեն լերինք զխաղաղութի ժողո
վրդեան, և բլուրք զարդարութի։
Իրաւ արասցէ աղքատաց ժողովըր
դեան. և կեցուսցէ զորդիս տ
նանկաց. և խոնարհեցուսցէ զամ
բարտաւանս։
Կացցէ և մնասցէ ընդ արևու. յառջ
քան զլուսին յազգէ մինչև յազգ։
Իջցէ ոպ զանձրև ՚ի վր գեղման.
ոպ ցօղ զի ցօղէ յերկիր։



Ծա

Ծագեսցի յաւուրս նորա արդա-րութիւն. բազում խաղաղութիւն. մինչև կատարեսցի լուսին։
Տիրեսցէ նա 'ի ծովէ մինչև 'ի ծով. 'ի գետոց մինչև 'ի ծագս երկրի։
Առաջի նր̄ նախ հնդիկք անկցին. և թշնամիք նր̄ հող լիզցեն։
Թագաւորք Թարսիսի և կղզեաց՝ պատարագս մատուսցեն նմա. թա-գաւորք արաբայ և սաբայ՝ պատա-րագս բերցեն նմա։
Երկիրպագցեն նմա ամենայն թա-գաւորք երկրի. և ամ̄ ազգք ծա-ռայեսցեն նմա։
Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց հզօրի. զաղքատն և զտնանկն որոյ ոչ էր իւր օգնական։
Խնայեսցէ նա յաղքատն և 'ի տը-նանկն, և զանձինս տնանկաց կե-ցուսցէ. 'ի վաշխից չարաց փրկես-ցէ զանձինս նոցա։
Պատուական է անուն նր̄ առաջի նոցա. կեցցէ՝ և տացի նմա յոսկւոյն արաբացւոց։



Յա

Յաղօթս կացցեն առ նա յամ՟ ժամ.
և զօրհանապազ օրհնեսցեն զնա։
Եղիցի հաստատութի՟ ընդ ամ՟ եր
կիր, և՛ ՚ի վր՟ գլխոց լերանց։
Բարձրասցի քան զլիբանան պտուղ
նորա, և ծաղկեսցի ՚ի քաղաքի ան՟
ոպ՟ խոտ երկրի։
Եղիցի անուն ան՟ օրհնեալ յաւտն՟.
զի յառաջ քան զարև է անուն նր՟։
Ի նմ օրհնեսցին ամ՟ ազգք երկրի,
և ամ՟ ազինք երանեսցեն նմա։
Օրհնեալ տր՟ ած՟ իսէլի՟ որ առնէ
սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն
սբ՟ փառաց նր՟ յաւիտեան լցցի փա
ռօք նր՟ ամ՟ երկիր՝ եղիցի եղիցի։

## Օրհն Աննայի Մօրն Սամուէլի,
## Յառաջնում Թագաւորաց։


աստատեցաւ սիրտ իմ ՚ի տր՟
և բարձրացաւ եղջիւր իմ
յած՟ փրկիչ իմ։
Ընդարձակեցաւ բերան
իմ ՚ի վր՟ թշնամեաց իմոց. ուրախ



եղէց

եղէց ՚ի փրկութեան քում։

Ո՛չ ի՞նչ գոյ ս՟բ որպէս զտէր, և ո՛չ արդար ո՟պ զա՟ծ մեր. և չիք ս՟բ բաց յ՟յ մերմէ։

Մի՛ պարծիք և մի՛ խօսիք զամբարտաւանս. և մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութե՟ան։

Մ՟ծ գիտութեանց տ՟ր՝ ա՟ծ պատրաստէ իւրով իմաստութ՟ք զգիտութիւն յարարածս իւր։

Հզօրաց հաստ աղեղունք թուլացան, և տկարք վառեցան զօրութ՟ք։

Յագք և լիք հացի՛՝ նուաղեցան, և քաղցեալք լցին զերկիր։

Ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն նուաղեցաւ ՚ի ծննդոց։

Տէր մեռուցանէ և տ՟ր կեցուցանէ. իջուցանէ ՚ի դժոխս և հանէ։

Տէր աղքատացուցանէ և տ՟ր մեծացուցանէ. խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, և բարձր առնէ զտառապեալս յաղբևաց։

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ

 իշ

իշխանս ժողովրդեան · և զաթոռ
փառաց ժառանգեցուցանէ նոցա։
Վատարէ զուխտս ուխտաւորաց ·
և օրհնեաց զամս արդարոց։
Ո՛չ ի՛նչ թէ իւրով զօրութբ զօրա
նայ հզօր , այլ տ՟ր տկար առնէ ըզ
հակառակորդս իւր՝ տ՟ր ս՟րբ է։
Մի՛ պարծեսցի խորհրդականն ՚ի
խորհուրդս իւր · և մի՛ պարծեսցի
հզօրն ՚ի զօրութ՟ի իւր · և մի՛ պար
ծեսցի մեծն ՚ի մեծութ՟ե իւրում։
Այլ որ պարծին ՚ի տ՟ր պարծեսցի։
՚ի խորհուրդս գիտութ՟ե զտ՟ր ճանաչել
Առնել զիրաւունս՝ և գործել զար
դարութ՟ի ՚ի վ՟ր երեսաց երկրի։
Տ՟ր ել յերկինս և որոտաց · և ինքն
դատէ առանց բարբառելոյ։
Տայ զօրութ՟ի թ՟գւրց մերոց · և բարձր
առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ։
Փառք հօր և որ՟։

Բարձրացաւ եղջիւր իմ յա՟ծ փրկիչ իմ ·
հաստատեցաւ սիրտ իմ ՚ի տէր՝ տէրամբ
և հաստատով։ Արդարութեր տէր ա՟ծ մր՟։

Ա՟

## Բարոյ Սրբոյ և Ինդրութեան Կանանց։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն ի բարերար Տեառնէ մերմէ՝ զ''։
Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան՝ և յորոգայթից սատանայի զ''։
Վասն ամենայն անձանց քրիստոնէից՝ և տանց հաւատացելոց՝ զՏէր աղա''
Վասն որք ի լերինս՝ յայրս և ի փապարս բնակեալ են որպէս հարքն մեր՝ զ''։
Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց՝ զ''։
Վասն հոգւոցն''։ Նոյնպէս ևս մեռելոցն''։
Զանձինս''։ Ողորմեաց։

### Աղօթք։

Գոհանամք զքեն Տէր Աստուած մեր՝ որ զարթուցեր զմեզ ի հանդստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո. Զարթո՛ զմիտս մեր արդարութեան քեզ Տէր Աստուած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Նկեսցէ՛ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն քո. և ողորմութիւնք քո՝ հովանի և պա

 հա

տպան լիցի 'ի վր̄ պաշտօնէից քոց. զմեզ զծ̄այս քո՝ արժանիս՝ որս 'ի տուէ և 'ի գիշերի և յամ ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց. և գոհանալով փ̄աւորել զհայր և զորդի և զսբ̄ հոգին. այժմ, և՛՛:

Սաղմոսութեան օրհնեցուն.

Ամենա[illegible]արար զօրութե̄ և աղբիւր անմահութեան՝ դու ես քն̄ ած̄ փրկիչ մեր. որ շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառնել՝ և խոստովան լինել առ քեզ՝ վս̄ իրաւանց և արդարութե̄ քո: Եւ այժմ աղաչեմք զքեզ տր̄ ած̄ մեր. արա զմեզ արթունս և պատրաստս 'ի ժամ առաւօտու ընդ սբ̄ս քո: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ.
Այժմ, և միշտ, և՛՛:

Պ[illegible]ութե̄ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեսցուք զՀայր և զորդի և զսբ̄ հոգին: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



Ի



Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երեւեցաւ։

Սաղմոս 84. 11.

Ի կատարած Սաղմոս Ասափայ: ՀԸ

ՈՐՉԱ՜Փ բարի է իսրայէլի ած, և որք ուղիղ են սրտիւք։

Բայց զի իմ փոքր մի սասանեալ էին ոտք. սակաւիկ մի եւ գայթակղեալ էին գնացք իմ։

Նախանձեցայ ես ընդ անօրէնս. զխաղաղութիւն մեղաւորաց իբր տեսանէի, զի ոչ գոյր վրէպ մահու նոցա։ Հաստատուն են տանջանք նոցա. Ի վաստակս մարդկան չէին նոքա.



և

և ընդ մարդկան ոչ տանջեսցին։
Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտա
ւանութիւն. արկին զիւրեամբք զանբա
րշտութիւն և զանիրաւութիւն իւրեանց։
Ելցէ որպէս ՚ի ճարպոյ անիրաւութիւն
նոցա. զի գնացին նոքա ըստ խորհր
դոց սրտից իւրեանց։
Խորհեցան և խօսեցան չարութիւն.
և զապիրատութիւն ՚ի բարձունս
խորհեցան։
Եդին յերկինս զբերանս իւրեանց
և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ
Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցի
այսրէն. և աւուրք իմ լի՛ կատա
րեալ գտցին ՚ի նոսա։
Ասացին՝ զիարդ գիտաց Աստուած. կամ
գուցէ արդեօք գիտութիւն առ
՚ի բարձրելոյն։
Ահա մեղաւորք են և յաջողեալ է
նոցա. կան և ունին զմեծութիւն աշխարհի։
Ասացի՝ զո՞ւր ուրեմն արդարացուցի
զսիրտ իմ. լուացի սրբութեամբ զձեռս իմ.
և եղէ ես խոշտանգեալ զօր հանապազ.

և կշտամբանք իմ ընդ առաւօտս ։
Թէպէտ և ասէի թէ՝ այսպէս պատ
մեցից, ահաւասիկ յազգ որդւոց
քոց որոց և ուխտեցի։
Ի մտի եդի թէ՝ սակայն և այս ջանէ
առաջի իմ, մինչև եդից՝ ի սրբութի՟ն
ա՟յ, և՝ ի միտ առից զկատարած նց՟։
Սակայն վ՟ն նենգութե՟ նց՟ տարագիր
արասցես զն՟ս. և կործանեսցես զն՟ս
յամբարտաւանութե՟ իւրեանց։
Իսկ զի՞արդ եղեն յաւէր յանկար
ծակի. սատակեցան, պակասեցան,
կորեան վ՟ն անօրէնութե՟ իւրեանց,
և եղեն ո՟պ երազք զարթուցելոց։
Տ՟ր ՝ի քաղաքի քում զպատկերս նց՟
անարգեսցես. զի հուր բորբոքե
ցաւ՝ ի սրտի իմում, և երիկամունք
իմ այլագունեցան։
Ես արհամարհեալ եղէ՝ և ոչ գիտա
ցի. ո՟պ անասուն համարեցայ առաջի
քո. և ես յա՟մ ժամ ընդ քեզ եմ։
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ. ՝ի խոր
հուրդս քո առաջնորդեցեր ինձ,

և փառօք ընկալար զիս ։

Զինչ կայ իմ բնաւ յերկինս. կամ ՚ի քէն զինչ ես խնդրեցից յերկրի. Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ բաժին իմ Աստուած յաւիտեան։

Զի ահաւասիկ որք հեռի արարին զանձինս իւրեանց ՚ի քէն՝ կորիցեն. սատակեսցես զամենեսեան՝ որք ապստամբք եղեն ՚ի քէն։

Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր զյոյս իմ։

Պատմել զամենայն օրհնութիւնս քո ՚ի դրունս դստեր Սիոնի։

Իմաստութեան սաղմոս ։ ՀԳ։

Ընդէ՞ր մերժեցեր Աստուած իսպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քո։

Յիշեա՛ զժողովուրդ քո՝ զոր ստացար իսկզբանէ. փրկեցեր զվիճակ ժառանգութեան քո։

Լեառն Սիոն այս՝ ուր բնակեցար դու ՚ի սմա. համբարձ զձեռն քո ՚ի վերայ ամբարտաւանութեան նոցա իսպառ։

Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ՚ի
սրբութե քում․ պարծեցին ատելիքն քո
՚ի մէջ բարեկենդանութե իւրեանց։
Եդին զնշանս իւրեանց ՚ի նշանս․ և
ինքեանք ոչ ծանեան զելս ՚ի վերուստ։
Որպ յանտառի փայտատօք կոտորե-
ցին զդրունս նր․ իմիասին փայտա-
տօք և մրճօք կործանեցին զնա։
Այրեցին ՚ի հուր զսրբութի քո յերկ-
րի․ պղծեցին զխորան անուան քո։
Ասացին ՚ի սիրտս իւրեանց ազգք
նց իմիասին, եկա՛յք լռեցուսցո՛ւք
զամ տօնս այ յերկրէ։
Զնշանս մեր ինչ ոչ տեսաք․ և ո՛չ
ևս գուցէ մարգարէ․ և զմեզ ինչ
ոք ո՛չ ճանաչիցէ։
Մինչև յերբ ած նախատէ թշնա-
մին․ բարկացուցանէ՛ հակառա-
կորդն զանուն տր քո։
Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և
զաջ քո ՚ի միջոյ ծոցոյ քումմէ իսպառ։
Ած Թագաւոր մեր յառաջ քան ըզ
յաւիտեանս․ որ արարեր զփրկութի
՚ի մէջ երկրի։

Դու

Դու հաստատեցեր զօրութ̅ քով
զծով. դու խորտակեցեր զգլուխս
վիշապին ՚ի վերայ ջուրց։
Դու փշրեցեր զգլուխս վիշապին, և
ետուր զնա կերակուր զօրացն հնդկաց
Դու բղխեցուցեր զաղբիւրս և
զվտակս. դու ցամաքեցուցեր ըզ
գետս սաստիկս։
Քո է տիւ՝ և քո է գիշեր. զլոյս և
զարև դու հաստատեցեր. և դու հաս
տատեցեր զամ̃ սահմանս երկրի. ըզ
գարուն և զամառն դու ստեղծեր։
Այս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին
նախատեաց զտէրդ. ժողովուրդ ան
զգամ բարկացոյց զանուն տէր քո։
Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ
խոստովան առնի առ քեզ. և զանձինս
տնանկաց քոց մի՛ մոռանար իսպառ։
Հայեա՛ց յուխտ քո՝ զի լցան տունք
ախշելոց յերկրի անիրաւութ̅։
Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ.
այլ աղքատք և տնանկք օրհնես
ցեն զանուն տէր քո։


Արի

Արի՛ ա͞ծ՝ և դատեա՛ զդատաստանս քո. յիշեա՛ զնախատինս՝ որ յանզգամէն զօրհանապազ:

Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց. ամբարտաւանութիւն ատելեաց քոց վերասցի հանապազ:

՚Ի կատարած մի՛ ապականեր. զնդ օրհնութեան սաղմոս յասափ. երգ առ ասորեստանեայս:

## ՀԴ

Խոստովան եղիցուք առ քեզ ա͞ծ՝ խոստովան եղիցուք և կարդասցուք զանուն ք͞ո քո:

Պատմեցից զա͞մ սքանչելիս քո. յոր ժամ ժամ առից ես ուղիղ դատեցից

Մաշեցաւ երկիր՝ և ա͞մ բնակիչք ն͞ր. ես հաստատեցի զսիւնս ն͞ր:

Ասացի անօրինաց թէ՝ մի՛ անօրինիք և մեղաւորաց թէ՝ մի՛ բարձրացուցանէք զեղջիւրս ձեր:

Մի՛ համբառնայք ՚ի բարձունս զեղջիւրս ձեր. և մի՛ խօսիք զա͞յ անիրաւութի͞ւն:

Զի ոչ յարեւելից՝ եւ ոչ յարեւմտից՝ եւ ոչ յանապատէ լերանց,
այլ ած դատաւոր է:

Զայս խոնարհ առնէ՝ եւ զզայն բարձրացուցանէ. բաժակ ՚ի ձեռին տն՝ գինւոյ լի անապակ արկեալ. եւ խոնարհեցուցանէ յայսմանէ յայս:

Սակայն՝ մրուր նր ոչ սպառեսցի. եւ արբցեն զնա ամ մեղաւորք երկրի:

Ես ցնծացայց յաւիտեան. սաղմոս ասացից այ յակոբայ:

Զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես. եւ բարձր եղիցի եղջիւր արդարոյ:

Ի կատարած ընդ օրհնութիւնս Բ՛ տողանիւք.
Սաղմոս Ասափայ. ՀԵ:

Յայտնի է ՚ի հրէաստանի ած. եւ յիսրայէլ մեծ է անուն նորա:

Եղեւ ՚ի խաղաղութեան տեղի նորա. եւ բնակութիւն նորա ՚ի սիօն:

Անդ խորտակեաց տր զզօրութի աղեղանց. զզէն՝ զսուր՝ եւ զճակատամարտս:

 Լու

Լուսաւոր ես դու սքանչելապէս
լերանցն յաւիտենից · խռովեսցին
ամենեքեան որք անմիտք են սըր-
տիւք · ննջեսցին զքունս իւրեանց՝
և ինչ ոչ գտին ։
Ամենայն արք ՚ի մեծութե՟ ձեռաց
իւրեանց՝ ՚ի սաստէ քումմէ ա՟ծ յա
կոբայ ննջեցին · և ոյք հեծեալ
էին ՚ի ձիս ·
Դու ահաւորես՝ և ո՞վ կարէ կալ
առաջի քո · ո՟ւ երևեցար դու յերկ
նից , յայտնի եղև բարկութի՟ քո ։
Երկիր երկեաւ և սարսեցաւ ընդ-
յառնելն ա՟յ ՚ի դատաստան · ընդ-
ապրեցուցանել զա՟մ հեզս երկրի ·
Խորհուրդք մարդկան խոստովան
առնիցին առ քեզ · և ծածկեալք
իմաստութե՟ք օրհնեսցեն զքեզ ։
Ուխտս դիք և կատարեցէք տ՟ն ա՟յ
մերոյ ա՟մէքն որք շուրջ էք զնովաւ ։
Մատուցէք պատարագս ահաւորին՝
որ քաղէ զհոգիս իշխանաց · ահա-
ւոր է նա քան զա՟մ թգ՟աւորս երկրի ։

՚Ի

Ձայնիւ իմով ես առ տր կարդացի ձայնիւ իմով առ ած՝ և նայեցաւ առ իս. Յաւուր նեղութեան իմոյ զած խնդրեցի ձեռօք իմովք. և ՚ի գիշերի առաջի նորա ոչ խաբեցայ։
Ոչ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զած և ուրախ եղէ. հոգայի և նուաղէր յիս հոգի իմ։
Ժամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջինս, և զամսն յաւիտենից յիշեցի։
Խօսեցայ ՚ի գիշերի ը սրտի իմում. հոգայի և տառապէր յիս հոգի իմ։
Մի թէ յաւիտեան մերժեսցէ զիս տր. և ոչ ևս յաւելցի ՚ի հաճիլ և ևս։
Կամ իսպառ արգելցէ զողորմութիւն իւր յինէն. կամ կատարեաց զբան իւր յազգէ մինչև յազգ։
Կամ մոռասցի՞ գթալ ած իմ և ևս. կամ արգելցէ՞ զգթութիւն իւր բարկութբ իւրով։
Ասացի և այժմ սկսայ. այս է նո

ըոդուածն աջոյն բարձրելոյ:
Յիշեցի զգործս տն իսկզբանէ .
յիշեցի զսքանչելիս նորա :
Խորհեցայ յամ գործս քո . և՛ի ձե-
ռագործս քո խորհեցայ:
Ած 'ի սրբութեն են ճանապարհք քո .
ով է ած մեծ՝ ոպ զած մեր . դու ես
ած որ առնես սքանչելիս :
Ցուցեր ժողովրդեան քում զզօ-
րութի քո . փրկեցեր բազկաւ քով
զժողովուրդս քո՝ զորդիսն յակո-
բայ և յովսեփու :
Տեսին զքեզ ջուրք ած՝ տեսին ըզ
քեզ ջուրք և երկեան . և խորք խը
ռովեցան 'ի ձայնէ ջուրց բազմաց :
Ձայն ետուն ամպք . քանզի և նետք
քո գնան 'ի ձայնէ որոտոյ քո անուոյ:
Երևեցան փայլատակունք քո տիե
զերաց . խռովեցաւ և դողաց երկիր:
'Ի ծովու են ճանապարհք քո , և
շաւիղք քո 'ի ջուրս բազումս . և
հետք քո ոչ երևին :
Առաջնորդեցեր որպ խաշինս ժողո
վրդեան քոյ՝ 'ի ձեռն մովսիսի և
ահարօնի :



Նայե

## ՀԷ.

Նայեցարուք ժողովուրդք իմ յօրէնս իմ. խոնարհեցուցէք զունկն ձեր ՚ի բանս բերանոյ իմոյ.

Բացից առակաւ զբերան իմ. և խօսեցայց զառակս իսկզբանէ.

Որպէս լուաք և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ.

Ոչ ինչ ծածկեցաւ յորդւոց նոցա յազգ յայլ. պատմել զօրհնութիւնս տ̃ն զզօրութի̃ և զսքանչելիս իւր զոր արար:

Հաստատեաց զվկայութի̃ իւր առ յակօբ. և օրէնս եդ ՚ի մ̃ջ իսր̃էլի:

Որ ինչ մի անգամ պատուիրեաց հարցն մերոց՝ ցուցանել զայս որդւոց իւրեանց՝ զի ծանիցէ յազգ այլ:

Որդիք որք ծնանիցին՝ յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց. զի դիցեն առ ա̃ծ զյոյս իւրեանց՝ և մի՛ մոռասցին զգործս ա̃յ:

Զպատուիրանս նորա խնդրելով

խնդրեսցեն , և մի՛ եղիցին որպ՟ և
հարքն իւրեանց ։

Ազգ չար և դառնացօղ . ազգ՝ որ
ոչ ուղղեաց զսիրտ իւր . և ոչ հաւա
տացաւ ընդ ա՟ծ զհոգի իւր ։

Որդիք եփրեմի լիադիրկք և պըն
դաձիգք . յաւուր պատերազմի՝
կապարձս դարձուցին .

Ո՛չ կացին նոքա յուխտի ա՟ծ . և
ըստ իրաւանց նր՟ ոչ կամեցան գնալ ։

Մոռացան զերախտիս նորա՝ և զըս
քանչելիսն զոր եցոյց նց՟ ։

Առաջի հարց նց՟ զոր արար զսքանչե
լիսն իւր յերկրին եգիպտացւոց և
՚ի դաշտին տայանու ։

Եհերձ զծովն և անցոյց զնոսա .
և կացոյց զջուրսն որպ՟ ՚ի տիկս ։

Առաջնորդեաց նց՟ ամպով ՚ի տուէ
և զա՟մ գիշեր ՚ի լոյս հրոյ ։

Եհերձ զվէմն յանապատին , և ետ
ըմպել նց՟ որպ՟ ՚ի խորոց մեծէ ։

Եհան զջուրս ՚ի վիմէ , և հոսեաց
որպ՟ զգետս զջուրսն ։

Սակայն յաւելին ՚ի մեղանչել․ ևս
բարկացուցին զԲարձրեալն՝ յանջրդի։
Փորձեցին զա̄ծ ՚ի սիրտս իւրեանց՝ ՚ի
խնդրել զկերակուր անձանց իւրեանց
Տրտնջեցին զա̄յ և ասացին՝ մի թե
կարօղ իցէ ա̄ծ պատրաստել սե-
ղան յանապատի։

Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին
ջուրք․ և վտակք խաղային ՚ի նմանէ
Միթէ՝ հաց ևս կարասցէ՞ տալ նա
մեզ․ կամ պատրաստեսցէ՞ սեղան
ժողովրդեան իւրոյ։

Վա̄ն այսորիկ լուաւ զայս տ̄ր՝ և յա
պաղեաց․ հուր բորբոքեցաւ ՚ի յա
կոբ՝ և բարկութի̄ ել ՚ի վ̄ր իէլի։
Զի ոչ հաւատացին յա̄ծ՝ և ոչ յու
սացան ՚ի փրկութի̄ նր̄։

Հրաման ետ ամպոց ՚ի վերուստ՝ և
զդրունս երկնից եբաց․ և տեղեաց
՚ի նոսա զմանանայ ՚ի կերակուր։
Զհաց երկնից ետ նց̄․ զհաց հրեշ
տակաց կերին մարդիկ․ և էջոյց ՚ի
նոսա զկերակուր ՚ի լիութիւն։

 Եհան

Ահան զհողմն հարաւոյ, եւ էած զօրութեամբ իւրով զհիւսիսին:

Տեղեաց ՚ի նոսա միս որպէս զհող. որպէս զաւազ ծովու զթռչունս թեւաւորս:

Արկ ՚ի մէջ բանակին նոցա, եւ շուրջ զվրանօք նոցա:

Կերան եւ յագեցան յոյժ. եւ զցանկութիւն նոցա ետ նոցա. եւ ոչ ինչ կարօտ եղեն ՚ի ցանկութենէ իւրեանց:

Մինչդեռ կերակուրք ՚ի բերանս իւրեանց էին, բարկութիւն Աստուծոյ ել ՚ի վերայ նոցա:

Սպան զբազումս ՚ի նոցանէ. եւ զընտիրս իսրայէլի սատակեաց:

Յայսմ ամենայնի մեղան եւ եւս, եւ ոչ հաւատացին սքանչելեաց նորա:

Պակասեցան յունայնութեան աւուրք նոցա. եւ ամք նոցա փութապէս անցին:

Յորժամ սպանանէր զնոսա, խնդրէին զնա. դառնային եւ առաւօտ առնէին առ Աստուած:

Յիշեցին՝ զի Աստուած օգնական էր նոցա. Աստուած բարձրեալ փրկիչ էր նոցա:

Մերժեցին զնա բերանօք իւրեանց, և լեզուօք իւրեանց ստեցին նմա. և սիրտք նոցա ոչ էին ուղիղք ընդ նմա. և ոչ հաւատացին ուխտի նր̃:

Այլ նա ինքն գթած էր՝ քաւէր զմեղս նոցա և ոչ ապականէր.

Յաճախէր դարձուցանել զբարկութի̃ իւր, և ոչ բորբոքէր զամենայն սրտմտութիւն իւր:

Յիշեաց թէ մարմին են նոքա. հոգի որ ելանէ՝ այլ ոչ դառնայ:

Քանիցս անգամ դառնացուցին զնա յանապատի, և բարկացուցին զբարձրեալն յանջրդի:

Դարձան և փորձեցին զա̃ծ, և ըզ սբ̃ն Իսրայէլի զայրացուցին.

Ո՛չ յիշեցին զձեռն նորա յաւուր յորում փրկեաց զնոսա ՚ի ձեռաց նեղչաց նոցա:

Որպ̃ արար զնշանս և զարուեստս իւր յերկրին Եգիպտացւոց և ՚ի դաշտին Տայանու:

Դարձոյց յարիւն զգետս նոցա,



և

և զանձրևս նոցա զի մի արբցեն ։
Առաքեաց 'ի նոսա շանաճանճ և եկեր
զնոսա ։ և գորտս՝ ապականեաց զնոսա ։
Ետ ժանգոյ զպտուղս նոցա ։ և զվ
վաստակս նոցա՝ մարախոյ ։
Եհար կարկտիւ զայգիս նոցա ։ և
զԹզենիս նոցա՝ եղեամամբ ։
Մատնեաց 'ի կարկուտ զանասունս
նց ։ և զստացուածս նց՝ հրով դատեաց
Առաքեաց 'ի նոսա զսրտմտուԹիւն
բարկուԹե իւրոյ ։ զսրտմտուԹիւն՝
զբարկուԹիւն՝ և զնեղուԹի ։
Առաքեաց 'ի նոսա տանջանս՝ 'ի ձեռն
հրեշտակի չարի ։ և դիմեցոյց 'ի նոսա
զսրտմտուԹի բարկուԹե իւրոյ ։
Ոչ խնայեաց 'ի մահուանէ զան
ձինս նոցա ։ և զանասունս նոցա՝
'ի մահ մատնեաց ։
Եհար զամ անդրանիկս եգիպտա
ցւոց ։ զսկիզբն ամ վաստակոց նց
'ի յարկս քամայ ։
Հորդան եա իբր խաշինս ժողովրդեն
իւրոյ ։ և եհան զնոսա իբր զհօտ յանապատ

Առաջ

Առաջնորդեաց նոցա յուսով և ոչ
երկեան. և զթշնամիս նոցա՝
ծով ծածկեաց։

Եհան զնս ՚ի լեառն սրբութե իւրոյ.
՚ի լեառն յայն՝ զոր ստացաւ աջ նր։
Մերժեաց յերեսաց նց զհեթա-
նոսս. և վիճակեցոյց ՚ի նս զվիճակ
ժառանգութե իւրոյ. և բնակե-
ցոյց ՚ի յարկս նոցա զազգն իէլի։
Փորձեցին դառնացուցին զած բարձ-
րեալն. և զվկայութի նր ոչ պահեցին։
Դարձան խոտորեցան ոպ և հարքն
իւրեանց. դարձան և եղեն որպէս
զաղեղն թիւր։
Դարձեալ բարկացուցին զնա ՚ի
բագինս իւրեանց. և դրօշելովք
իւրեանց նախանձ արկին նմա։
Լուաւ ած և արհամարհեաց զնս
և նուաղեաց յոյժ զիսրայէլ։
Մերժեաց յիւրմէ զխորանն ՚ի Սե-
լով. զխորանն, զոր բնակեցոյց ՚ի
մէջ մարդկան։
Մատնեաց ՚ի գերութի զզօրութի նց.

և զգեղ նց՝ ի ձեռս թշնամեաց նց։
Արգել՝ ի սուր զժողովուրդ իւր.
և զժառանգութիւն իւր անտես արար։
Զերիտասարդս նց եկեր հուր. և
զկուսանս նց ոչ ոք սգացաւ։
Քահանայք նոցա անկան՝ ի սուր.
և զայրիս նց ոչ ոք էր որ լայր։
Զարթեաւ որպէս՝ ի քնոյ տր. որպ
հզօր զի թափել՝ զգինի։
Եհար յետս զթշնամիս իւր. և նա
խատինս յաւիտենից արար զնս։
Մերժեաց նա զխորանն յովսեփու
և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց։
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ՝
զլեառն սիոն զոր սիրեաց։
Շինեաց որպէս զմիեղջերուի ըզ
սրբութիւն նորա. յերկրի հաստա
տեաց զնա յաւիտեան։
Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր.
և ընկալաւ զնա՝ ի հօտէ խաշանց.՝ ի
վերջին ծնելոցն ընկալաւ զնա։
Հովուել զյակոբ ծառայ իւր, և
զիսրայէլ ժառանգութիւն իւր։

Արածէր զն՟ս իմաստութ՟բ սրտի
իւրոյ· յանմեղութի՟ ձեռաց իւրոց
առաջնորդէր նոցա։

## Սաղմոս Ասափայ. ՀԸ

Ա՟Ծ մտին հեթանոսք ’ի ժա
ռանգութի՟ քո · պղծե
ցին զտաճար ս՟բ քո։

Արարին զե՟մ որպէս զհիւղս մրգապա
հաց · արկին զդիակունս ծառայից
քոց գէշ թռչնոց երկնից · և զմար
մինս ս՟րց քոց՝ գազանաց երկրի։

Հեղին զարիւն ն՟ց որպէս ջուր՝ շուրջ
զեղէմաւ · և ոչ ոք էր որ թաղէր զն՟ս

Եղաք մեք նախատինք դրացեաց
մերոց · ծաղր՝ և այպն կատականաց
այնոցիկ որք շուրջ էին զմեօք։

Մինչև յե՟րբ տ՟ր բարկանաս դու
իսպառ · բորբոքեսցի որպէս հուր
նախանձ քո։

Հեղ զբարկութի՟ քո ’ի վերայ ազ
գաց՝ որք զքեզ ոչ ճանաչեցին ·



’ի

՚ի վերայ թագաւորաց՝ որք զանուն քո ոչ կարդացին . զի կերին զյակոբ՝ և զտեղի նորա աւերեցին։

Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս . վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր՝ զի աղքատացաք յոյժ .

Օգնեա մեզ աստուած փրկիչ մեր վասն փառաց անուան քոյ.

Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քոյ.

Մի՛ երբեք ասասցեն ՚ի հեթանոսս թէ ուր է աստուած նոցա.

Եւ յայտնի լիցի ՚ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց . առ ՚ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց որոց և հեղաւ.

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց . ըստ մեծութեան բազկի քո՝ շահեա դու զորդիս սպանելոց.

Հատո դրացեաց մերոց եօթնպատիկ ՚ի ծոց նոցա՝ զնախատինս իւեանց զոր նախատեցին զքեզ տէր.

Մեք ժողովուրդք և խաշն արօտի

քոյ · խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան · յազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո ։

Ի կատարած ՚ի վերայ փոփոխելոց · վկայութիւն Ասափայ ։ ՀԹ ։

Որ հովուեսդ Իսրայէլի նայեա՛ց · որ առաջնորդես որպէս խաշին յովսեփայ ։ Որ նստիս ՚ի քրովբէս՝ յայտնեա՛ց առաջի եփրեմի բենիամինի եւ մանասէի ։ Զարթո՛ զզօրութիւն քո , եւ եկ ՚ի կեցուցանել զմեզ ։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ · երեւեցո՛ զերեսս քո ՚ի մեզ եւ կեցցուք ։

Տէր Աստուած զօրութեանց՝ մինչեւ յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց ։ Ջամբեցեր մեզ հաց արտասուաց եւ արբուցեր մեզ արտասուս չափով ։ Եդեր զմեզ նախատինս դրացեաց մերոց · այպն կատականաց թշնամեաց մերոց ։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ · երեւեցո՛ զերեսս քո ՚ի մեզ եւ կեցցուք ։

Զայգի յեգիպտոսէ փոխեցեր ·

հաներ զհեթանոսս՝ եւ զնա տնկե
ցեր. եւ առաջնորդեցեր նմա։
Հաստատեցեր զարմատս նր. եւ ելից
զերկիր. ծածկեաց զլերինս հովա
նի նր. եւ բարունակ նր զմայրս այ։
Ձգեաց զորթ իւր մինչեւ ՚ի ծով.
մինչեւ ՚ի գետս են շառաւիղք նր։
Ընդէ՞ր քակեցեր զցանկ նր. եւ կը
թեն զնա անցաւորք ճանապարհի։
Ապականեաց զնա խոզ անտառի.
եւ երէ վայրի արածեցաւ ՚ի նմա։
Ած զօրութեանց՝ դարձ հայեաց յերկնից
եւ տես. այց արա այգւոյս այսմիկ. եւ
դարման տար սմա՝ զոր տնկեաց աջ քո։
Ի վր որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր
զնա ՚ի քեզ. այրեցաւ ՚ի հուր եւ աւե
րեալ՝ ՚ի սաստէ քումմէ կորիցէ։
Եղիցի ձեռն քո ՚ի վր առն. աջ քո
՚ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրա
ցուցեր զնա ՚ի քեզ։
Ո՛չ եւս ի բացէ եղիցուք մեք ՚ի քէն.
կեցուսցես դու զմեզ, եւ զանուն
քո տր կարդասցուք։

 Ած

Ած զօրութեանց դարձո զմեզ. երևեցո զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք։

Ի կատարումն վասն հնձանաց.
Սաղմոս յասափ. Ձ

Ցնծացէք առ Ած օգնական է մեր. աղաղակեցէք առ Ած յակոբայ։
Առէք սաղմոս և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա ՚ի ձայն քաղցրութեան։
Փող հարէք ՚ի գլուխս ամսոց. յաւուր նշանաւոր տարեկանաց մերոց։
Հրաման է այս իսրայէլի. և իրաւունք են այ յակոբայ։
Վկայութիւն յովսեփու զոր եդ ընմա ՚ի ելանել նա յերկրէն եգիպտացւոց. լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։
Իբարձ արար ՚ի բեռանց զթիկունս նորա. և ձեռս նորա յորթ և՚ի թի ծառայելոյ։
Ի նեղութեան կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ ՚ի գաղտնութեան մրրկին. և փորձեցի զքեզ ՚ի վերայ ջուրցն հակառակութեան։



Լուր

Լուր ժողովուրդ իմ եւ վկայեմ քեզ
եւ Իսրայէլ՝ թէ լուիցես ինձ։
Մի՛ եւս եղիցին քեզ աստուածք
առժամայնք․ եւ մի՛ երկիրպագանի-
ցես դու՝ ա՟յ օտարի։
Ես եմ տ՟ր ա՟ծ քո՝ որ հանի զքեզ
յերկրէն եգիպտացւոց․ բա՛ց զբե-
րան քո՝ եւ լցից զդա։
Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի
իմում․ եւ ի՟է՟լ յիս ինչ ոչ նայեցաւ։
Բարձի թողի զն՟ս երթալ զհետ
կամաց սրտից իւրեանց․ զի գնացին
նոքա ըստ կամս անձանց իւրեանց։
Զի թէ ժողովուրդն իմ լուեալ
էր ինձ, կամ Իսրայէլի զճանա-
պարհս իմ գնացեալ էր։
Ը՟դ զոչ ինչ խոնարհ արարեալ էր
իմ զթշնամիս ն՟ց․ եւ ՚ի վ՟ր նեղչաց
նոցա արկեալ էր զձեռն իմ։
Թշնամիք տ՟ն ստեցին նմա․ եւ եղի-
ցին ժամանակք նոցա յաշխարհի։
Կերակրեաց զն՟ս ՚ի պարարտութենէ ցո-
րենոյ․ եւ ՚ի վիմէ մեղր յագեցոյց ն՟ս։


Ա՟Ծ

Ած եկաց 'ի ժողովս աստուածոց. եւ 'ի մէջ նց դատէր զնս:

Մի՛նչեւ յե՞րբ դատէք անիրաւութն. եւ աչս առնուք մեղաւորաց:

Դատ արարէք որբոյն եւ այրւոյ. իրաւունս արարէք տնանկին եւ խոնարհի:

Ապրեցուցէք զաղքատն եւ ըզտընանկն. 'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա:

Ո՛չ իմացան եւ ո՛չ 'ի միտ առին. 'ի խաւարի գնացին. եւ շարժեցան ամ հիմունք երկրի:

Ես ասացի թէ աստուածք իցէք. կամ որդիք բարձրելոյն ամքն:

Դուք աչաւադիք որպ զմարդիկ մեռանիք. եւ որպէս զմի յիշխանաց անկանիցիք:

Արի՛ Ած եւ դատեա՛ զերկիր. զի դու ժառանգեսցես զամենայն հեթանոսս:

Ած ո՞ քեզ նմանեսցի. մի՛ լռ-
եր եւ մի դադարեր ա͞ծ.
Զի ահա թշնամիք քո
գոչեցին. եւ ատելիք քո՝ համբար-
ձին զգլուխս իւրեանց.
Ի վերայ ժողովրդեան քո խորաման-
կեցին զդիտութիւն. խորհեցան ՚ի
վերայ ս͞րբց քոց եւ ասացին.
Եկայք սատակեսցուք զնո͞ յազգաց
եւ մի՛ յիշեսցի անուն ի͞է͞լի եւս.
Խորհեցան միաբանութ͞բ իմիասին.
եւ վասն քո ուխտ արարին.
Բանակք եդովմայեցւոց՝ եւ իսմայե-
լացիք. մովաբ՝ եւ հագարացիք.
Գեբաղ՝ ամոն՝ ամաղեկ. եւ այլազ-
գիքն ամենայն բնակչօքն՝ համ-
դերձ տիւրաւ.
Նաեւ ասուր եկեալ էր ընդ նո͞.
ամենեքեան սոքա՝ զօրավիգն էին
որդւոցն ղովտայ.
Արա՛ զնոսա որպէս զմադիամ. ոպ

զսիսարայ . և որպ զաբին 'ի ձոր_
ձորուն կիսոնի :
Սատակեցան նոքա յականս դոր_
րայ . և եղեն որպ զաղբ երկրի :
Արա զիշխանս նոցա որպ զորեբն .
զզեբն , զզեբեէ , և զսաղմանա . և
զամ իշխանս նոցա :
Որք ասացին՝ ժառանգեսցուք 'ի
մեզ զսրբութիւնն այ :
Այ իմ արա զնս որպ զանիւ . և
որպ զեղեգն առաջի հողմոյ :
Որպէս հուր զի այրէ զանտառս .
որպ բոց զի կիզու զլերինս :
Նոյնպէս հալածեսցես զնս մրրր_
կաւ քով . և բարկութեամբ քով
խռովեցուսցես զնս :
Լից զերեսս նոցա անարգանօք .
և խնդրեսցեն զանուն քո տր :
Ամաչեսցեն և խռովեսցեն յաւի_
տեանս յաւիտենից՝ և ամօթալից
կորիցեն :
Ծանիցեն զի անուն քո տր է . և դու
միայն բարձրեալ ես 'ի վր ամ երկրի :

Որ

Որպ՟ սիրելիք են յարկք քո տ՟ր զօ
րութեանց. ցանկայ եւ փափագէ
անձն իմ ՚ի գաւիթս քո։
Սիրտ իմ եւ մարմին իմ ցնծասցեն
առ ա՟ծ կենդանի։
Զի եւ ճնճղուկ եգիտ իւր տուն
եւ տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձ
ձագս իւր։
Սեղանք քո տ՟ր զօրութեանց՝ թա
գաւոր իմ եւ ա՟ծ իմ։
Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են
՚ի տան տ՟ն. յաւիտեանս յաւիտե
նից օրհնեսցեն զքեզ։
Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն
իւր ՚ի քէն է. ելս եդ ՚ի միտս իւրում
՚ի հովիտս արտասուաց ՚ի տեղւոջ
յորում ուխտեաց։
Զի օրհնու՟թիս տացէ՝ որ զօրէնս դնէ.
գնասցեն նա ՚ի զօրութ՟է ՚ի զօրութի՟.
եւ երեւեսցի ա՟ծ հր՟շտկաց ՚ի սիոն։
Տ՟ր ա՟ծ զօրութ՟եց՝ լուր աղօթից
իմոց. ունկն դիր ա՟ծ յակոբայ։

Ընդունօղ ես դու մեր՝ տէր ած
ևնայեաց յերեսս օծելոյ քոյ ։
Վասն զի լաւ է ինձ մի օր ՚ի գա-
ւիթս քո՝ քան զհազարս ։
Ընտրեցի ես ընդ աղբ կալ ՚ի տանն
այ, առաւել քան զբնականալ ՚ի
յարկս մեղաւորաց ։
Զողորմութի և զճշմարտութի սիրէ
տր ած մեր · զշնորհս և զփառս տացէ
Տր ո՛չ պակասս առնէ զողորմութի
իւր յայնցանէ որ գնան յանբծութե ։
Տէր ած զօրութեց՝ երանեալ է
այր որ յուսայ ՚ի քեզ ։

Ի կատարած որդւոցն Կորխոյ · Սաղմոս
Դաւթի ։ ՁԴ ։

Հաճեցար տր ընդ երկիր քո, և
դարձուցեր զգերութի յակոբայ ։
Թողեր զանիրաւութի ժողովրդեան
քո, և ծածկեցեր զամ մեղս նց ։
Լռեցուցեր զամ սրտմտութիս քո · և
դարձար ՚ի բարկութէ սրտմտութե քո ։
Դարձ առ մեզ ած փրկիչ մեր · և
դարձո՛ զսրտմտութիս քո ՚ի մէնջ ։


Մի

Մ՞ի յաւիտեան բարկանար մեզ Տէր · և մի՛ ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ ։

ԱՍՏՈՒԱԾ դու դարձեալ կեցուսցես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ

Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ ։

Լուայց զինչ խօսի Տէր Աստուած մեր · խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ · առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ որք դարձեալ են առ նա սրտիւք ։

Սակայն՝ մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա · բնակել փառաց նորա յերկրի մերում ։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցեն · արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցեն ։

Ճշմարտութիւն յերկրէ բուսա՛ւ · արդարութիւն յերկնից երևեցա՛ւ ։

Տէր տացէ զքաղցրութիւն · և երկիր մեր տացէ զպտուղ իւր · արդարութիւն առաջի նորա գնասցէ · եդիցէ ՚ի ճանապարհի զգնացս իւր ։

Սաղմոս Դաւթի · Նորին

երեհոյի ՁԵ


ոնարհեցո Տր զունկն քո
և լուր ինձ · զի աղքատ
և տնանկ եմ ես։

Պահեա զանձն իմ Տր՝ Տր · և փրկեա
զծառայս քո Աձ իմ որ՝ ի քեզ յուսացայ։
Ողորմեա ինձ Տր՝ զի առ քեզ աղա
ղակեցի զօրհանապազ· ուրախ արա
զանձն ծառայի քո՝ զի առ քեզ Տր
համբարձի զանձն իմ։
Զի դու Տր՝ քաղցր և ուղիղ ես·
բազում ողորմ առ ամենեսեան
որք կարդան առ քեզ։
Ունկն դիր Տր աղօթից իմոց · և
նայեա՛ ՚ի ձայն խնդրուածաց իմոց։
Յաւուր նեղութե իմոյ կարդացի
առ քեզ՝ և լուար ինձ։
Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տր·
և ոչ ոք է ըստ գործս քո։
Զամ ազգս զոր արարեր՝ եկեսցեն
և երկիր պագցեն առաջի քո Տր · և
փառաւոր արասցեն զանուն քո յաւիտն

 Մեծ

Մեծ ես դու Տէր՝ և առնես սքանչելիս. և դու միայն ես Աստուած.

Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի քում. և գնացից ՚ի ճշմարտութեան քում. և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ բոլորով սրտիւ իմով. փառաւո՛ր արարից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղև ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր. և փրկեսցես զանձն իմ ՚ի դժոխոց ներքնոց։

Աստուած՝ անօրէնք յարեան ՚ի վերայ իմ. և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ Տէր առաջի իւրեանց։

Բայց դու Տէր Աստուած իմ գթած ես և ողորմած. երկայնամիտ՝ բազումողորմ և ճշմարիտ. նայեա՛ առիս և ողորմեա՛ ինձ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո. և արա՛ առիս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու տր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Սաղմոս օրհնութեան։ ՁԶ։

Հիմունք նորա ՚ի լերանց սբ նր. սիրէ տէր զդրունս սիոնի՝ առաւել քան զամ յարկսն յակոբայ։

Փառաւորեալն խօսեցաւ վն ՚քո՝ աստուածայինք քաղաքդ այ։

Յիշեցի զռահաբ և զբաբելոն՝ որք ճանաչեն զիս. ահա այլազգիք և ծուր՝ և ժողովուրդք հնդկաց՝ սոքա եղեն անդ։

Սիոնի ասէ մայր՝ և մարդ ծնաւ ՚ի նմա. և ինքն հիմունս էարկ ՚ի նմա բարձրեալն։

Տր պատմեսցէ գրովք ժողովրդեն իշխանացս այսոցիկ որք եղեն անդ։

Որպ զի ուրախ լիցին ՚ի քեզ ամքն՝ որոց բնակութի ՚ի քեն է։

Օրհնութիւն Սաղմոսաց որդւոյն կոր"։ ՁԷ։

Տր ած փրկութե իմոյ. ՚ի տուէ

կարդացի՛ և գիշերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̅ր.
խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրը-
ուածս իմ։
Զի լցաւ չարչարանօք անձն իմ.
և կեանք իմ 'ի դժոխս մերձեցաւ.
և համարեցայ ես ընդ այնոսիկ՝
որք իջանեն 'ի գուբ։
Եղէ ես որպէս մարդ առանց օգ-
նականի՝ և 'ի մեռեալս ազատ։
Որպէս զվիրաւորս որք ննջեն 'ի
գերեզմանի։
Զորս դու ոչ յիշեցեր՝ նոքա 'ի
ձեռանէ քումմէ մերժեցան։
Եդին զիս 'ի գբի ներքնում. 'ի
խաւարի և 'ի ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութի̃ քո.
զամ զբօսանս քո ածեր 'ի վ̅ր իմ։
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ
և եդին զիս նշաւակ իւրեանց։
Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ
տկարացան յաղքատութենէ։
Աղաղակեցի առ տ̅ր զօրհանապազ.

և համբարձի առ քեզ զձեռս իմ։
Մի թէ մեռելոց առնիցես զսքան
չելիս քո. կամ բժիշկք յարուցեալ
խոստովան առնիցեն առ քեզ։
Մի թէ պատմեսցէ՛ ոք երբեք ՚ի
գերեզմանի զողորմութիւն քո. կամ
զճշմարտութիւն քո ՚ի կորստեան։
Մի թէ ծանիցեն ՚ի խաւարի
սքանչելիք քո. կամ արդարութիւն քո
յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ Տէր աղաղակեցի. առաւօ
տու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ
Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ. կամ
դարձուցանես զերեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի
մանկութենէ իմմէ. ՚ի բարձրութէ
խոնարհեցայ և ափշեցայ։
Յիս հաստատեցաւ բարկութիւն քո.
արհաւիրք քո խռովեցուցին զիս։
Շրջեցան զինև որպէս ջուր. զօր
ամ պաշարեցին զիս իմիասին։
Հեռի արարեր յինէն զբարեկամս
իմ և զծանօթս իմ վասն թշուառու
թեան իմոյ։

Իմաստութիւն Եթանայ Եզրայեցւոյ.

## ՁԸ

Զողորմութիւնս քո տր յաւիտեան օրհնեցից. յազգէ յազգ պատմեցից ըղ ճշմարտութիւնս քո բերանով իմով։

Ասացեր թէ յաշխարհս ողորմութիւն շինեսցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո.

Ուխտ եդի ընտրելոց իմոց. երդուայ Դաւթի ծառայի իմոյ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո և շինեցից յազգէ յազգ զաթոռ քո։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց տր. և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

Ո՞վ է յամպս որ հաւասարիցի քեզ. կամ ով նմանիցի տն յորդիս այ։

Աստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ և ահաւոր ՚ի վերայ ամենեցուն որք շուրջ են զնովաւ։

Տէր Աստուած զօրութեանց՝ ո՞ նման է քեզ. հզօր ես դու Տէր՝ և ճշմարտութիւն քո շուրջ է զքեւ։

Դու տիրես զօրութեանց ծովու. զխռովութիւն ալեաց նորա դու ցածուցանես։

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս. ի զօրութիւն բազկի քո՝ ցրուեցեր զթշնամիս քո։

Քո են երկինք՝ և քո է երկիր. զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր. ըզհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբօր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Քո է բազուկ՝ և քո է զօրութիւն. զօրասցի աջ քո՝ և բարձր եղիցի ձեռն քո։

Արդարութիւն և իրաւունս հաստատեալ է աթոռ քո. ողորմութիւն և ճշմարտութիւն գնասցեն առաջի երեսաց քոց։

Երանի՛ ժողովրդեան՝ որ գիտէ զօրհնութիւնս քո Տէր. ի լոյս երեսաց քոց գնասցեն. և յանուն քո ցըն

 ծաս

ծասցեն զօր հանապազ․ և յարդարութեան քում բարձր եղիցին․

Պարծանք զօրութեանց նոցա դու ես․ և՛ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր։

Ի տեառնէ է օգնութիւն սրբոյն իսրայելի թագաւորին մերոյ։

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո և ասացեր․ եդեց զօգնութիւն իմ՛ի վերայ հզօրին, և բարձր արարից զընտրեալն՛ի ժողովրդենէ իմմէ։

Գտի՛ զդաւիթ ծառայ իմ․ և իւղով սրբով իմով օծի զնա։

Ձեռն իմ ընկալցի զնա․ և բազուկ իմ զօրացուսցէ զնա։

Մի՛ մեղիցէ նմա թշնամի․ և որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա։

Հարից առաջի նորա զթշնամիս նորա․ և զատելիս նորա՝ ի պարտութիւն մատնեցից։

Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա․ և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նորա։



Եդից

Եդից 'ի ծովու զձեռն նորա . և
'ի վերայ գետոց զաջ նր՟։

Նա կարդասցէ առիս՝ հայր իմ ես
դու , ա՟ծ ընդունօղ փրկու՟ե իմոյ .

Եւ ես անդրանիկ արարից զնա . և
բարձր քան զա՟մ թագաւորս երկրի .

Յաւիտեան պահեցից նմա զողոր
մութիւն իմ . և ուխտ իմ հաւա
տարիմ ընդ նմա .

Հաստատեցից յաւիտեանս յաւի
տենից զզաւակ նր՟ . և զաթոռ նր՟
ըստ զաւուրս երկնից .

Թէ թողցեն որդիք նր՟ զօրէնս իմ ,
և յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ .
Թէ զարդարութի՟ս իմ անարգեսցեն ,
և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն .
Հարից գաւազանաւ զանօրէնու
թիւնս նոցա . և տանջանօք զանի
րաւութիւնս նոցա .

Բայց զողորմութի՟ իմ ոչ արգելից
'ի նոցանէ . և ոչ նենգեցից ճշմար
տութե՟ իմում . և ոչ անարգեցից
զուխտ իմ . և զինչ որ ելանէ ընդ

շրթունս իմ, զայն ոչ արհամարհեցից:
Մի անգամ երդուայ 'ի սրբութիւն
իմ, թէ դաւթի ես ոչ ստեցից:
Զաւակ նր՟ յաւիտեան կացցէ.
և աթոռ նորա որպէս զարեգակն
առաջի իմ. և ոպ՟ զլուսին, զի հաս
տատեալ է յաւիտեան վկայ հաւա
տարիմ յերկինս:
Իսկ արդ՝ դու մերժեցեր և անար
գեցեր. և ընդվայր հարեր զօ—
ծեալ քո:
Դարձուցեր զուխտ 'ի ծառայէ
քումմէ. պղծեցեր յերկրի զսր
բութիւն նորա:
Քակեցեր զամ՟ պարիսպս նորա.
և եդեր զամուրս նր՟ 'ի դողումն:
Յափշտակեցին զնա անցաւորք ճա
նապարհի. և եղև նա նախատ
դրացեաց իւրոց:
Բարձր արարեր զաջ նեղչաց նր՟. և
ուրախ արարեր զամ՟ թշնամիս նր՟:
Դարձուցեր զօգնութի՟ 'ի սրոյ նր՟.
և ոչ ընկալար զնա 'ի պատերազմի:

 Լուծար

Անարգեցեր զսրբութին նորա. և
զաթոռ նր յերկիր կործանեցեր:
Նուազ արարեր զաւուրս ժամանա
կաց նր. և հեղեր զնովաւ զամօթ:
Մինչև յե՞րբ դարձուցանես զե-
րեսս քո իսպառ. բորբոքեսցի որպ
հուր բարկութիւն քո:
Իսկ արդ՝ յիշեա և տես թէ ո՞վ է
իմ հանգիստ. մի թէ ՚ի զո՞ւր ինչ
ստեղծեր զամ որդիս մարդկան:
Ո՞վ է մարդ որ կեցցէ և ո՛չ տեսցէ
զմահ. կամ փրկեսցէ զանձն իւր
՚ի ձեռաց դժոխոց:
Ո՞ւր են ողորմութիւնք քո տր ա-
ռաջինք. զոր երդուար դաւթի
ճշմարտութեամբ քով:
Յիշեա զնախատինս ծառայի քո.
զոր ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց
բազմաց:
Զ որ նախատեցին թշնամիք քո տր
նախատեցին փոխանակ օծելոյ քո:
Օրհնեալ տր ած յաւիտեանս յա-
ւիտենից՝ եղիցի եղիցի:

 Օրհ

## Օրհնութիւն Եսայեայ

ութերորդ օրհնութեանց։



գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ Աստուած։

Մանզի լոյս են հրամանք քո ՚ի վերայ երկրի. ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի։

Վարկեսցի ամբարիշտն՝ և այլ ոչ ևս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան։

Բարձցի ամբարիշտն յերկրէ, և մի տեսցէ զփառս Տեառն։

Տէր բարձր ես և բազուկ քո հզօր. և նոքա ոչ գիտացին։

Ծանիցեն՝ ամաչեսցեն՝ և նախանձ արկցէ անխրատ ժողովրդեան. և արդ՝ հուր զթշնամիս քո կերիցէ։

Տէր Աստուած մեր՝ տուր մեզ զխաղաղութիւն քո. զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցեր մեզ։

Տէր Աստուած մեր՝ ստացիր զմեզ. զի



բաց

բաց 'ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք ․
և զանուն քո անուանեմք զօր-
հանապազ։

Իսկ որք՝ մեռեալք զկենդանութի̃
այլ ո՛չ տեսանիցեն ․ և ո՛չ բժիշկք
յարուցանիցեն։

Վասն այսորիկ՝ ածեր՝ հարեր՝ սա-
տակեցեր՝ և ջնջեցեր զա̃մ արու-
մանուկ նոցա ․

Յաւե՛լ տ̃ր զչար 'ի վ̃ր չարինց̃ ․ և
ած զչար 'ի վ̃ր անօրինաց երկ-

Տէր՝ 'ի նեղութեան յիշեցաք ըզ-
քեզ ․ զի փոքր մի նեղութիւն ․
խրատ քո 'ի վերայ մեր։

Որպ̃ երկունք յղւոյ՝ զի հասանել
իցեն 'ի ժամանակս ծննդեան
և առ ցաւս իւր ճչիցէ ․

Նոյնպէս եղաք սիրելւոյ քում
տ̃ր ․ յահէ և յերկիւղ քո յղացաւ
երկնեցաք ․ և ծնաք զհոգի փր
կութեան քոյ։

Ո՛չ եւս կործանիցուք մեք ․ այլ կոր-
ծանեսցին անօրէնք երկրի ․

…արիցեն մեռեալք և կենդանաս
…ցին ամենեքեան որք եդեալ են
՚ի գերեզմանս։
…արթիցեն՝ ցնծասցեն՝ և ուրախ
եղիցին դադարեալքյերկրի։
…ան զի ցօղդ որ ցօղի ՚ի քէն,
…ղդ բժշկութի է նց · բայց երկիրն
ամբարշտեալ տապալեսցի։
…ա՛յս տուր ժողովուրդ իմ · գնա՛
…ուտ ՚ի շտեմարանս քո · և փակեա՛
զդրունս քո առաջի երեսաց քոց։
…ախի՛ր և Թագի՛ր առ ժամանակ մի՝
մինչև անցցէ բարկութի տն։

Փառք Հօր և որ"։

❊ Մաղթանք։

…աղաղութեց տաճօղ Տր, զխա
ղաղութիւն և զերկնային ողոր
մութիւն քո պարգևեա՛ մեզ։
…արդասէր տր՝ վասն սրբուհւոյ
…նարատի մօր քոյ և կուսի, և վս
խաչի քո պատուականի, ընկա՛լ զաղա
չանս մեր և կեցո՛ զմեզ։


Ign. Lucchesini Inc.



## Աղօթք Մովսէսի Առն Աստուծոյ։

### ՁԹ.

Տ՝ ԱՊԱՒԷՆ եղեր մեր յազգէ մինչև յազգ. մինչ չև լերինք հաստատեալ էին. և մինչչև ստեղծեալ էիր զերկիր և զամ տիեզերս։ ա Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես. մի՛ դարձուցաներ զմարդ- ...անս ÷ տառապանս. և ասացեր՝ դարձա- ...րուք ասէ որդիք մարդկան։



Հա

Հազար ամ՝ յաչս տն որպ օր երէ
կն զի էանց. որպ պահ մի գիշերոյ.
և ամք նոցա անարգութք եղիցին։
Ընդ առաւօտս որպ դալարի բուս
ցին. ը̄ առաւօտս որպ դալարի զուար
ճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս
Թարշամեսցին՝ չորասցին՝
և անկցին։
Նուաղեցաք մեք ՚ի բարկութենէ
քումմէ. և՚ի սրտմտութէ քումմէ
խռովեցաք։
Եդեր զմեղս մեր առաջի քո. և
զկեանս մեր ՚ի լոյս երեսաց քոց։
Ամենայն աւուրք մեր նուաղեցան.
և՚ի բարկութէ քումմէ խռովեցաք։
Ժամանակք ամաց մերոց անդադար
որպ սարդի. և թիւ աւուրց ամաց
մերոց ՚ի նն եօթանասուն ամ.
Ապա թէ առաւելեւ՝ ութսուն
ամ. և որ ինչ աւելի է քան զայն,
ցաւք և հեծութք.
Եկն ՚ի վր մեր հեծութի՝ և խրատե
ցաք. իսկ արդ՝ ո գիտասցէ զզօրու

բարկութեան քո․ և կամ յահէ քումմէ սրտմտութեան քո համարեսցի․

Այսպէս ցո՛յց ինձ զաջ քո․ և որ խոնարհ են սրտիւք զիմաստութիւն քո․

Դարձ տէր՝ մինչև յե՞րբ․ մխիթարեա՛ց ՚ի ծառայս քո։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով․ ցնծացաք և ուրախ եղաք զա՜մ աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն յորս խոնարհ արարեր զմեզ․ և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս․

Հայեա՛ տր ՚ի ծառայս քո և ՚ի գործս ձեռաց քոց․ և առաջնորդեա՛ որդւոց նց․ եղիցի լոյս տն այ ՚ի վր մեր։

Զգործս ձեռաց մերոց՝ ուղի՛ղ արա՛ ՚ի մեզ տր․ և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

*Օրհնութիւն գովութեան Դաւթի․ Գ

Որ բնակեալն է յօգնութեան բարձրելոյն, ընդ հովանեաւ այ յերկինս հանգիցէ։

Ասասցէ տն՝ ընդունօղ իմ ես դու․

 ապա

ապաւէն իմ ա̃ծ՝ և ես յուսամ 'ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որ-
սողին. և 'ի բանից 'ի խռովութէ̃։
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.
'ի հովանի թևոց նր̃ յուսասցիս։
Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշ-
մարտութիւն նորա։
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշե-
րի. և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ.
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակ-
ղութէ̃ դիւին 'ի հասարակ աւուր։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հա-
զարք. և բիւրք՝ ընդ աջմէ քումմէ.
և առ քեզ ինչ ոչ մերձեսցին.
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու. և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք. և
տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ
վս̃ քո՝ 'ի պահել զքեզ յամենայն
ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ-
քեզ՝ զի մի՛ երբեք հարցես զքարի
զոտն քո։
Ի վերայ իժից եւ քարբից գնասցես
դու. եւ առ ոտն կոխեսցես զա-
ռիւծն եւ զվիշապն։
Քանզի՛ յիս յուսացաւ եւ փրկեցից
զնա. հովանի եղէց նմա՝ զի
ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս՝ եւ ես լուայց նը-
մա. եւ առ նմա եղէց ՚ի նեղութեան։
Փրկեցից եւ փառաւոր արարից ըզ-
նա. երկայն աւուրբք լցուցից՝ եւ
ցուցից նմա զփրկութիւն իմ։

Սաղմոս օրհնութեան։ ՂԱ

Բարի՛ է խոստովան լինել Տեառն.
եւ սաղմոս ասել անուան քում
բարձրեալ։
Պատմել յառաւօտու զողորմութիւն
քո. եւ զճշմարտութիւն քո ՚ի գիշերի։
Տասնաղեան սաղմոսարանաւ՝ ՚ի
ձայն օրհնութեան գովել։

Ուրախ արարեր զիս տէր յարա-
րածս քո . և ՚ի գործս ձեռաց քոց
ցնծացայց ։

Որպէս զի մեծ են գործք քո տ̃ր ,
և յոյժ խորին են խորհուրդք քո ։
Այր անզգամ զայս ոչ ծանիցէ .
և անմիտն զայս ոչ առնու ՚ի միտ ։
՚Ի բուսանիլ մեղաւորաց որպ խոտ .
՚ի ծաղկիլ այնոցիկ ոյք գործեն
զանօրէնութիւն ։
Սատակեսցին յաւիտեանս յաւի-
տենից . և դու բարձրեալ ես
յաւիտեանս տ̃ր ։
Զի ահա թշնամիք քո տ̃ր՝ զի ահա
թշնամիք քո կորիցեն . ցրուեսցին
ամ̃քն ոյք գործեն զանօրէնութ̃ի ։
Բարձր եղիցի որպէս միեղջերուի
եղջիւր իմ . և ծերութիւն իմ ՚ի
ձէթ պարարտութեան ։
Նայեսցի ակն իմ ՚ի թշնամիսն իմ , ոյք
յարուցեալ են ՚ի վերայ իմ չարութ̃ք .
՚ի նոսա լուիցէ ունկն իմ ։
Արդարքն որպ զարմաւենիս ծաղ

 կես

կեսցեն · որպ՟ զմայրան լիբանանու-
բազումք եղիցին ·

Տնկեալք եղիցին ՚ի տան տեառն,
և՚ի գաւիթս այ՟ մերոյ ծաղկեսցին։
Եւս և՝ բազումք եղիցին ՚ի ծերութ՟
պարարտութ՟ · գերգք և փափուկք
եղիցին ՚ի պատմել · ուղիղ է տր՟ ած՟
մեր՝ և ոչ գոյ ՚ի նմա անիրաւութի՟։

## Օրհնութի՟ գովութե՟ Դաւթի։ Ղ. Բ

Տ Թագաւորեաց՝ վայել-
չութի՟ զգեցաւ · զգե
ցաւ տր՟ զօրութիւն
ընդ մէջ իւր էած ·

Հաստատեաց զաշխարհ զի մի՛ սա-
սանեսցի · պատրաստ է աթոռ քո ·
՚ի սկզբանէ յաւիտեանս դու ես ·
Ամբարձան գետք տէր՝ և համբար
ձին գետք զձայնս իւրեանց · և յա
րիցեն գետք ՚ի գնացս իւրեանց։
Ի ձայնէ ջուրց բազմաց՝ ըսքանչե-
լիք եղեն զբօսանք ծովու ·

 Սքան

Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս • վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք ։

Տան քում վայելէ սրբութիւն տէր ընդ երկայն աւուրս ։

## Սաղմոս Դաւթի՝ Չորեքտասաներորդ. Ղ.Գ.

Աստուած վրէժխնդիր՝ տէր աստուած վրէժխնդիր յայտնեցար ։

Բարձր լեր որ դատես զերկիր • հատո՛ զհատուցումն ամբարտաւանից ։

Մինչև յե՞րբ մեղաւորք տէր, մինչև յե՞րբ մեղաւորք պարծեսցին ։

Բարբառեալք խօսեսցին զանիրաւութիւն • խօսեսցին ամենեքեան որք գործեն զանօրէնութիւն ։

Զժողովուրդ քո տէր խոնարհ արարին • և զժառանգութիւն քո չարչարեցին ։

Զայրին և զպանդուխտն սպանին • զորբսն կոտորեցին • և ասացին՝ ո՛չ տեսանէ զայս տէր • և ո՛չ 'ի միտ առնու աստուած յակոբայ ։

Իմացարո՛ւք անզգամք ժողովր-

 դոց

դոյ . և անմիտք՝ մինչև յե՞րբ ոչ առնուք 'ի միտ։

Որպէս զի թէ որ տնկեաց զունկն՝ ինքն ո՞չ լուիցէ . կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՞չ տեսանիցէ։

Որ խրատէ զազգս՝ ոպ̃ թէ ո՞չ յանդիմանեսցէ . որ ուսուցանէ մարդոյ զգիտութի̃ . տ̃ր ճանաչէ զխորհուրդս մարդկան՝ զի են ընդունայնք։

Երանի՛ մարդոյ՝ զոր խրատես դու տ̃ր . և յօրինաց քոց ուսուցանես դու նմա։

Յածուցանես դու նմա զաւուրս չարութեան՝ մինչև փորեսցի խոր խորատ մեղաւորի։

Ո՛չ մերժէ տ̃ր զժողովուրդ իւր . և զժառանգութի̃ իւր ոչ առնէ անտես։

Մ՛ինչև դարձցին իրաւունք յարդարութիւն , ընկալցին զնա ամենեքեան ոյք ուղիղ են սրտիւք։

Ո՞վ յարիցէ ընդ իս 'ի վր̃ չարեաց . կամ ո՞վ հաւասարեսցի ինձ 'ի վերայ այնոցիկ որ գործեն զանօրէնութի̃։

Եթէ ոչ տէառն օգնեալ էր ինձ,
փոքր մի եւ՝ բնակեալ էր անձն իմ
'ի դժոխս։

Թ.է ասէի թէ ահա՛ սասանեցան
ոտք իմ, ողորմ̃ի քո տ̃ր օգնէր ինձ։

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխ
իթարութիւն քո ուրախ առնէր
զանձն իմ.

Մի՛ հաւասարեսցի քեզ աթոռ ա
նօրէնութեան. որ պատճառէ ըզ
վաստակս ընդդէմ հրամանի։

Որսասցին զանձն արդարոյ, եւ զա
րիւն անմեղ պարտաւոր առնէին.

Եղեւ տ̃ր ապաւէն իմ, ա̃ծ օգնա
կան յուսոյ իմոյ։

Հատուսցէ նոցա տ̃ր ըստ անօրէնու
թեան նոցա. եւ ըստ չարութե̃ն նոցա
կործանեսցէ զնոսա տ̃ր ա̃ծ մեր։

## Օրհնութիւն Դաւթի. Ղ.Դ.

Եկա՛յք ցնծասցո՛ւք 'ի տ̃ր. աղաղա
կեսցո՛ւք առ ա̃ծ փրկիչ մեր.

Կանխեսցո՛ւք առաջի նորա խոս
տովանութեամբ. եւ սաղմոսիւք



աղա

աղաղակեսցուք առ նա.

Զի Ա՟ծ մեծ է. եւ տ՟ր թագաւոր մեծ ՚ի վերայ ա՟մ երկրի։

Ի ձեռս նո՟ր են ա՟մ տիեզերք երկրի. եւ բարձրութիւնք լերանց նո՟ր են։

Նորա է ծով եւ նա՛ արար զնա. եւ զցամաք՝ ձեռք նորա ստեղծին։

Եկա՛յք երկիրպագցուք նմա. անկցո՛ւք եւ լացցուք առաջի տեառն արարչին մերոյ։

Նա ինքն է տ՟ր ա՟ծ մեր. մեք ժողովուրդք ՚ի ձեռին նորա՝ եւ խաշն արօտի նորա.

Այսօր եթէ ձայնի նո՟ր լուիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր ո՟պ ՚ի դառնութեան։

Յաւուրն փորձութե՟ն յանապատի՝ ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ եւ տեսին զգործս իմ զքառասուն ամ։

Զզուեցայ ընդ ազգին ընդ այնմիկ՝ եւ ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք. եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ։

 Ո՟պ

Որ երդուայ 'ի բարկութեան իմում,
Թէ մտցեն 'ի հանգիստ իմ։

Սաղմոս Դաւթի. 'Ի ժամանակին շի տա-
ճարն շինեցաւ յետ գերութեանն։

ՂԵ

Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէ՛ք զՏէր ամենայն երկիր։

Օրհնեցէ՛ք զտէր՝ և օրհնեցէ՛ք զանուն նորա. աւետարանեցէ՛ք օրըստօրէ զփրկութիւն նորա։

Պատմեցէ՛ք 'ի հեթանոսս զփառս նորա. յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա։

Մեծ է տէր՝ և օրհնեալ է յոյժ. ահաւոր է նա 'ի վերայ ամենայն կռոց։

Ամենայն կուռք հեթանոսաց դևք են. և տէր զերկինս արար։

Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա. սրբութիւն և մեծ վայելչութիւն 'ի սրբութեան նորա։

Մատուցէ՛ք տեառն տոհմք ազգաց. մատուցէ՛ք տեառն զփառս և զպատիւ.

մատուցէք տն զփառս անուան նորա ։
Առէք պատարագս և մտէք ՚ի սր
րահս նր ․ երկիրպագէք տն ՚ի գա
ւիթս սրբութեան նորա ․ և խռո
վեսցի յերեսաց նր ամ երկիր ։
Ասացէք ՚ի հեթանոսս թէ տր թա
գաւորեաց ․ հաստատեաց զաշխարհ
զի մի՛ սասանեսցի ․ և դատէ զժողո
վուրդս իւր ուղղութբ ։
Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծաս
ցէ երկիր ․ զուարճասցի ծով լրի
ւ իւրով ․ ցնծասցեն դաշտք՝ և ամ
որ է ՚ի նոսա ։
Յայնժամ ցնծասցեն ամ ծառք
անտառի յերեսաց տն՝ զի գայ ․
և գայ նա ՚ի դատել զերկիր ։
Դատէ զտիեզերս իրաւամբք ․ և
զժողովուրդս ամ ճշմարտութբ իւրով ։

*Սաղմոս Դաւթի ․ չի երկիրն հաստատե
ցաւ ։ ՂԶ ․

Տր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր ․
ուրախ եղիցին կղզիք բազումք ։
Ամպ և մէգ շուրջ են զնովաւ ․

յիրաւունս և յարդարութի՟ ուղ-
ղեալ է աթոռ նորա։

Հուր առաջի նորա գնասցէ, և
այրեսցէ շուրջ զթշնամիս ն՟ր.

Երևեցան փայլատակունք ն՟ր տիե-
զերաց. ետես և սասանեցաւ երկիր։

Լերինք որպ՟ մոմ հալեցին յերե-
սաց տ՟ն. յերեսաց տ՟ն ա՟մ երկրի։

Պատմեսցեն երկինք զարդարութի՟
նորա. և տեսցեն ա՟մ ժողովուրդք
զփառս նորա։

Ամաչեսցեն ամենեքեան որք եր-
կիրպագանեն կռոց, և որք պար-
ծին ՚ի դրօշեալս իւրեանց։

Երկիր պագցեն նմա ա՟մ հրեշտակք
նորա. զի լուաւ և ուրախ եղև
Սիօն. և ցնծասցեն դստերք յու-
դայ վ՟ա իրաւանց քոց տ՟ր։

Զի դու բարձրեալ ես ՚ի վ՟ր ա՟մ
երկրի. յոյժ բարձրացար ՚ի վերայ
ա՟մ կռոց։

Որք սիրէք զ՟տր ատեցէք զչարութի՟
պահէ տ՟ր զանձինս սրբոց իւրոց.



՚ի

'ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնս:
Լոյս ծագեաց արդարոց . ուղղոց
սրտից՝ եղև ուրախութիւն .
Ուրախ եղերուք արդարք 'ի տր .
և խոստովան եղերուք յիշատակի
սրբութե նր:

## Սաղմոս Դաւթի: Ղ.Է.

Օրհնեցէ՛ք զտր յօրհնութիւն նոր՝
զի սքանչելիս արար:
Փրկեաց զնա աջ իւր՝ և բազուկ
սուրբ իւր:
Ցոյց տր զփրկութիւն իւր . առաջի ազ
գաց յայտնեաց զարդարութիւն իւր:
Յիշեաց ողորմութիւն իւրում զյա
կոբ . ճշմարտութե իւրում զտունն
իսրայէլի . և տեսին ամ ծագք երկ
րի զփրկութիւն այ մերոյ:
Աղաղակեցէք առ տր ամ երկիր . օրհ
նեցէք՝ ցնծացէք՝ և սաղմոս ասացէք:
Սաղմոս ասացէք այ մերոյ օրհնութե .
օրհնութե և'ի ձայն սաղմոսաց:
Ի ձայն օրհնութե կռածոյ փողոյ՝ օրհ


նու

նուագս ցնծութեան՝ և ի ձայն եղջեր փողոյ
աղաղակեցէք առաջի թագաւորին տեառն։
Խռովեսցի ծով լրիւ իւրով. տիե
զերք և ամենայն բնակիչք նորա. և գետք
ծափս հարցեն ի միասին ձեռամբ։
Լեռինք ցնծասցեն առաջի տեառն
զի գայ. զի հասեալ է տէր ի դա-
տել զերկիր։
Դատել զաշխարհս արդարութեամբ.
և զժողովուրդս իւր ուղղութեամբ։

## Սաղմոս Դաւթի. ՂԸ.

Տր թագաւորեաց՝ բարկա-
ցան ժողովուրդք. որ
նստի ի քրովբէս՝ սա-
սանեցաւ երկիր։
Տր ի Սիոն մեծ է, և բարձր ի վերայ
ամենայն ժողովրդոց։
Խոստովան եղիցուք անուան քում
մեծի՝ զի ահաւոր և սուրբ է. և պա-
տիւ թագաւորի զիրաւունս սիրէ։
Դու պատրաստեցեր զուղղու-
թիւն. զիրաւունս և զարդարութիւն

 յա

յակոբայ դու արարեր։
Բարձր արարէք զտ՟ր ա՟ծ մեր. եւ եր
կիր պագէք պատուանդանի ոտից
նորա՝ զի սուրբ է։
Մովսէս եւ Ահարոն երիցունք ն՟ր.
սամուէլ ընդ այնոսիկ՝ որք կար-
դան զանուն նորա։
Կարդային առ տ՟ր՝ եւ նա լսէր ն՟ց.
եւ ՚ի սեան ամպոյ խօսէր ընդ նոսա։
Պահէին զվկայութիւնս նորա՝ եւ
զհրամանս՝ զոր ետ նոցա։
Տ՟ր ա՟ծ մեր դու լսէիր նոցա. ա՟ծ
դու քաւիչ լինէիր նոցա. եւ վրէժ-
խնդիր ՚ի վ՟ր ա՟մ գործոց նոցա։
Բարձր արարէք զտ՟ր ա՟ծ մեր. եւ եր
կիր պագէք ՚ի լեառն ս՟բ նորա՝
զի ս՟բ է տ՟ր ա՟ծ մեր։

## Սաղմոս Դաւթի։ Ղ Թ.

Աղաղակեցէք առ տ՟ր ա՟մ երկիր.
ծառայեցէք տ՟ն ուրախութ՟բ։
Մտէք առաջի ն՟ր ցնծութեամբ.
ծանիրո՛ւք՝ զի նա է տ՟ր ա՟ծ մեր։
Նա՛ արար զմեզ՝ եւ ո՛չ մեք էաք. մեք
ժո

ժողովուրդք և խաշն արօտի նորա

Մտէք ընդ դրունս նր͞ խոստովա
նութ͞, և օրհնութ͞ ՚ի յարկս նր͞։
Խոստովան եղերուք տեառն, և
օրհնեցէք զանուն նորա։
Քաղցր է տր͞՝ յաւիտեան է ողոր
մութիւն նորա. յազգէ մինչև
յազգ է ճշմարտութիւն նորա։

### Սաղմոս Դաւթի. Ճ

Յողորմութիւն և յիրաւունս օրհ
նեցից զքեզ տր͞. սաղմոս ասա_
ցից և՚ի միտ առից։
Ճանապարհ անբիծ մինչև եկեսցէ
առ իս, զի գնայի ես յանբծութ͞ն
սրտի իմոյ ՚ի մէջ տան իմոյ։
Ոչ եդի առաջի աչաց իմոց զիրս
անիրաւութ͞. ոյք առնէին զանօ
րէնութիւն՝ ատեցի։
Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր
սրտիւ. խոտորեալ յինէն անզգա
մին՝ և ես ինչ ոչ փոյթ առնէի։
Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ,
զնա բացէիբաց հալածէի։

Որ ամբարտաւանն էր աչօք՝ և ագահ սրտիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի։
Աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի՝ զի նստուցից նոքա ընդ իս։
Որ գնայր ՚ի ճանապարհ անբիծ, նա պաշտէր զիս։
Ոչ բնակէր ՚ի մէջ տան իմոյ՝ որ առնէր զամբարտաւանութիւն. որ խօսէր զանօրէնութիւն, չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց։
Ընդ առաւօտս ըսպանանէի զամ մեղաւորս երկրի. զի սատակեցից ՚ի քաղաքէ տն զամենեսեան՝ որք գործեն զանօրէնութիւն։

Սաղմ. ութսունէ. Իբրև յանձրացի՝ առաջի տեառն սփոփեսցէ զխնդրուածս իւր։

## Ճ՛Ա

Տ՛էր լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի դարձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղութե իմոյ՝ խոնարհեցո



առիս

առ իս զունկն քո · յորում աւուր կար
դամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։
Սպառեցան ոպ՟ ծուխ աւուրք իմ ·
եւ ոսկերք իմ ոպ՟ խառիւ չորացան։
Հարայ որպէս խոտ՝ եւ ցամաքեցաւ
սիրտ իմ · մոռացայ ուտել զհաց իմ
՚ի ձայնէ հեծութե՟ իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ · Նը
մանեցայ ես հաւալուսան անպ՟տի։
Եղէ ես որպէս բու յաւերակի ·
տքնեցայ՝ եւ եղէ ես ոպ՟ ճընճղուկ
միայն ՚ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ
զօրհանապազ · եւ գովիչք իմ
ինեւ երդնուին։
Զի մոխիր ոպ՟ զհաց կերի · եւ զըմ
պելին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութե՟ սրտմտութե՟
քո՝ զի դու բարձրացուցեր եւ խո
նարհեցուցեր զիս։
Աւուրք իմ ոպ՟ հովանի անցին · եւ
ես ոպ՟ խոտ ցամաքեցայ։
Դու Տ՟ր յաւիտեան կաս · եւ յիշա

տակ քո յազգէ մինչեւ յազգ։
Դու յարուցեալ գթասցիս ՚ի վր սիօնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։
Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նր, և ՚ի հողս նր գթասցին։
Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամ թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։
Շինէ տէր զսիօն, և երևեսցի փառօք իւրովք ՚ի նմա։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նց։
Գրեսցի այս յազգ այլ. ժողովուրդ որ ստացեալ է, օրհնեսցէ զտր։
Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբուէ իւրմէ. տր յերկնից յերկիր հայեցաւ։
Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։
Պատմել ՚ի սիօն զանուն տեառն, և զօրհնութիւն նր յերուսաղէմ։
Ժողովել ժողովրդոց ի միասին, և թագաւորաց ծառայել տն։

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապար
հի զօրութեան իւրոյ. զնուազութիւ
աւուրց իմոց ասա՛ ինձ, և մի՛ հա
ներ զիս ՚ի կէս աւուրց իմոց. զի
յազգէ յազգ են ամք քո։

Իսկզբանէ տէր զհիմունս երկրի
հաստատեցեր. և գործք ձեռաց
քոց երկինք են։

Նոքա անցանեն. և դու կաս՝ և
մնաս յաւիտեանս։

Ամենեքեան որպ զձորձս մաշեսցին
և որպէս զվերարկու փոխեսցես
զնս՟ և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես՝ և ամք քո
ոչ անցանեն. որդիք ծառայից քոց
բնակեսցեն ՚ի նմա. և զաւակի նց՟
յաւիտեան յաջողեսցի։

## Սաղմոս Դաւթի. ՃԲ

Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր, և ամ՟ ոս
կերք իմ զանուն սբ՟ նորա։

Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր, և մի՛ մոռա
նար զամ՟ տուրս նորա։

Որ քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո.

Որ փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութ՟բ և գթութ՟բ.

Որ լնու ՚ի բարութենէ զցանկութի՟ քո, նորոգեսցի որ՟պ արծուոյ մանկութի՟ քո.

Առնէ ողորմութիւնս տ՟ր՝ և իրաւունս ա՟մ զրկելոց.

Ցոյց տ՟ր զճանապարհս իւր մովսիսի. և որդւոցն իս՟րլի զկամս իւր.

Գթած ողորմած է տ՟ր. երկայնամիտ և բազումողորմ.

Ոչ իսպառ բարկանայ մեզ տէր. և ոչ յաւիտեան պահէ ոխս.

Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տ՟ր. և ոչ ըստ անօրէնութե՟ մերում հատոյց մեզ.

Այլ որ՟պ բարձր են երկինք յերկրէ, այն՟պ զօրացոյց տ՟ր զողորմութի՟ իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց.

Որչափ հեռի՛ են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր.

Որ՟պ գթայ հայր ՚ի վ՟ր որդւոց իւրոց,



այն՟պ

այնպ՟ գթացի տ՟ր յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս
մեր՝ և յիշեաց թէ հող եմք։
Մարդոյ ոպ՟ խոտոյ են աւուրք իւր.
ոպ՟ ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։
Շնչէ ՚ի նմա հողմ, և ոչ է՝ և
ոչ ևս երևի տեղի նորա։
Բայց ողորմութ՟ի տ՟ն մնայ յաւի-
տեանս յաւիտենից ՚ի վ՟ր երկիւղա
ծաց իւրոց. և արդարութիւն ն՟ր
յորդւոց մինչև յորդիս։
Որք պահեն զուխտս ն՟ր, յիշեն
զպատուիրանս ն՟ր՝ և առնեն զնա։
Տ՟ր յերկինս պատրաստեաց զաթոռ
իւր. արքայութ՟ի ն՟ր ա՟մ՟ց տիրէ։
Օրհնեցէք զտ՟ր ա՟մ հրեշտ՟կք ն՟ր.
հզօրք զօրութ՟բ որք առնէք զբան ն՟ր
՚ի լսել ձայնի պատգամաց ն՟ր։
Օրհնեցէք զտ՟ր ա՟մ զօրութիւնք նորա.
պաշտօնեայք և արարողք կամաց ն՟ր։
Օրհնեցէք զտ՟ր ա՟մ գործք նորա.
զի ընդ ա՟մ տեղիս է տ՟րութ՟ի ն՟ր.
օրհնեա անձն իմ զտ՟ր։

 Սաղ

Սաղմոս Դաւթի ՚ի վերայ աշխարհարար-
ութեանն. ՃԳ.

Օրհնեա անձն իմ զՏ՟ր. Տ՟ր Ա՟ծ իմ մեծ եղեր յոյժ:
Խոստովանութիւն և մեծվայելչութիւն զգեցար. արկեալ զլոյս ոպ՟ զօթոց. ձգեցեր զերկինս որպ՟ զխորան, և արկեր ՚ի վր՟ ջուրց զվերնայարկս նորա:

Որ դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա ՚ի վր՟ թեւոց հողմոց:

Որ արար զհրշտ՟կս իւր յոգիս. և ըզպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ:

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաստատութեան իւրոյ՝ զի մի՛ սասանեսցի յաւիտեանս:

Խորք ոպ՟ զգեստ վերարկու են նր՟. ՚ի վերայ լերանց կացցեն ջուրք:

՚Ի սաստէ քումմէ փախիցեն. և ՚ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն:

Ելանեն լեառնանան, և իջանեն դաշտանան, ՚ի տեղի յոր հաստատեցեր զնոսա:



Սահ

Սահման եդեր և ոչ անցանեն . և
ոչ ևս դառնան 'ի ծածկել զերկիր։
Առաքեցեր զաղբիւրս ընդ ծործորս։
'ի միջոյ լերանց գնասցեն ջուրք։
Արբուցանել զամ գազանս վայրի՝
յագեսցին ցիռք 'ի ծարաւս իւրեանց։
Անդ թռչունք երկնից բոյնս դի-
ցեն . և 'ի միջոյ վիմաց տացեն ըղ-
ձայնս իւրեանց։
Արբուցանէ զլերինս 'ի շտեմարա-
նաց իւրոց . 'ի պտղոյ գործոց
իւրոց լցցի երկիր։
Բուսուցեր զխոտ անասնոց . զդա-
լարի 'ի ծառայութի մարդկան .
Հանել զհաց յերկրէ . գինի ու-
րախ առնէ , իւղ զուարթ , և հաց
հաստատէ զսիրտ մարդոյ։
Յագեսցին ծառքն անտառի . և մայրքն
լիբանանու զորս դու տնկեցեր։
Անդ թռչունք երկնից ձագս հան-
ցեն . և բոյն արագլի ապաւէն է նոցա։
Լերինք բարձունք են եղջերուաց
և վէմք ապաւէնք նապաստակաց։

 Արա

Արարեր զլուսին վն ժամանակի.
արեգակն ծանեաւ զժամ մտա_
նելոյ իւրոյ.
Արարեր զխաւար՝ և եղև գիշեր.
'ի նմա գնան ամ գազանք անտառի:
Կորիւնք առիւծուց մռնչեն և
յափշտակեն . և խնդրեն յայ զկե_
րակուրս իւրեանց.
'Ի ծագել արևու ժողովին , և 'ի մո
րիս իւրեանց դադարին.
Ելանէ մարդ 'ի գործս իւր . և 'ի վաս
տակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ.
Որպէս զի մեծ են գործք քո տր .
զամ իմաստութբ արարեր . և լը_
ցաւ երկիր ստեղծուածովք քովք.
Այս ծով՝ մեծ և անդորր . 'ի նմա
են սողունք՝ որոց ոչ գոյ թիւ .
գազանք մեծամեծք և մանունք .
'ի նմա և նաւք գնան . վիշապն
զոր ստեղծեր խաղալ նովաւ.
Ամենեքեան քեզ սպասեն՝ և դա_
տաս զկերակուր նց 'ի ժամու.
Տաս դու նց՝ և կերակրին . բանաս

 զձեռն

զձեռն քո՝ և կերակրես զամենե-
սեան կամօք քովք։
Պարծուցանես զերեսս քո՛ ՚ի նոցանէ՝
և խռովին. հանես զոգի ՚ի նոցանէ,
պակասին և ՚ի հող դառնան։
Առաքես զոգի քո և ստանաս զնս.
և նորոգես զերեսս երկրի։
Եղիցին փառք տն յաւիտեան. և
տր ուրախ եղիցի յարարածս իւր։
Որ՛ հայի յերկիր և տայ դողալ սմա.
մերձեսցի ՚ի լերինս՝ և ծխեսցին։
Օրհնեցից զտր ՚ի կեանս իմ. սաղ
մոս ասացից այ իմոյ մինչև եմ ես։
Քաղցր եղիցի նմա յօրհնութի իմ.
և ես ուրախ եղէց ՚ի տր։
Պակասեսցին մեղաւորք յերկրէ.
և ամբարիշտք մի՛ ևս գտցին ՚ի նը
մա. օրհնեա՛ անձն իմ զտր։

Ալէլու-իայ։ Ճ՚Դ.

Խոստովան եղերուք տն՝ և կարդա
ցէք զանուն նր. և պատմեցէք
՚ի հեթանոսս զգործս նր։

Օրհնեցէք և սաղմոս ասացէք նմա.
պատմեցէք զամենայն սքանչելիս նորա.
և գովեցարուք յանուն սրբոյ նորա։
Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որք
խնդրեն զՏէր. խնդրեցէք զՏէր և
հզօրք եղերուք. և խնդրեցէք զե-
րեսս նորա յամենայն ժամ։
Յիշեցէք զսքանչելիս նորա զորս
արար. զարուեստս և զիրաւունս
բերանոյ նորա։
Զաւակք աբրահամեան՝ ծառայք
նորա. որդիք յակոբայ՝ ընտրեալք նորա։
Նա ինքն է Տէր Աստուած մեր. յամենայն երկ-
րի են իրաւունք նորա։
Յիշեաց յաւիտենից զուխտ իւր.
և զբանն զոր պատուիրեաց մինչ
՚ի հազար ազգս։
Զուխտն զոր եդ ընդ աբրահամու,
և զերդումն իւր ընդ իսահակայ։
Հաստատեաց առ յակոբ զհրամանս
իւր, և առ իսրայէլ զուխտ իւր յաւիտենից։
Ասէ՝ ձեզ տաց զերկիրն քանանու.
զվիճակ ժառանգութեան ձերոյ։

 Զի

Զի էին նոքա թուով սակաւք.
նուաղք՝ եւ պանդխտեալք ՚ի նմա։
Անցին նոքա յազգէ յազգ. ՚ի թագա
ւորութենէ ՚ի ժողովուրդ այլ։
Ոչ եթող մարդկան մեղանչել նց՟.
եւ կշտամբեաց զթագաւորս վ՟ն նց՟։
Մի՛ մերձենայք առ յօծեալս իմ,
եւ ՚ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք.
Կոչեաց սով յերկիր նց՟. եւ զա՟մ
զօրութիւն հացի եբեկ։
Առաքեաց առաջի նոցա զայր. ՚ի ծա
ռայութիւն վաճառեցաւ յովսէփ.
Խոնարհ արարին ՚ի կապանս զոտս
նր՟. եւ էանց ընդ երկաթ անձն նր՟։
Մինչեւ եկեսցէ բան նորա, եւ
բան տ՟ն փորձեաց զնա։
Առաքեաց թգ՟ւորն եւ եհլոյծ զնա.
իշխան ժողովրդեան եթող զնա։
Կացոյց զնա տ՟ր տան իւրոյ. իշխան
՚ի վ՟ր ա՟մ ստացուածոց իւրոց։
Խրատել զիշխանս նոցա ո՟պ զինքն.
եւ զծերս նց՟ իմաստութեամբ արասցէ.
Եմուտ իսրայէլ յեգիպտոս. եւ յակոբ


պան

պանդխտեցաւ յերկիր քամայ.
Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ,
և զօրացոյց զնա քան զթշնամիս իւր.
Դարձոյց զսիրտս նոցա ատել ըզ
ժողովուրդս իւր, և՛ի նենգել ըզ
ծառայս իւր.
Առաքեաց զՄովսէս ծառայ իւր,
և զԱհարոն ընտրեալ իւր.
Ետ նոցա զբանս նշանաց իւրոց, և
զարուեստս իւր յերկիր քամայ.
Առաքեաց զխաւար և խաւարեցոյց
զնա. զի դառնացուցին զբանս նորա.
Դարձոյց յարիւն զջուրս նոցա,
և սպան զամ ձկունս նոցա.
Եռաց յերկիր նոցա գորտ. և՛ի շտեմա
րանս թագաւորաց նոցա.
Ասաց՝ և եկն շանաճանճ և մժեխ
ընդ ամ սահմանս նոցա.
Դարձոյց զանձրեւս նոցա՛ի կարկուտ.
և հուր յերկիր նոցա բորբոքեցաւ.
Եհար զայգիս և զթզենիս նոցա. և
փշրեաց զամ ծառս սահմանաց նոցա.
Ասաց՝ և եկն մարախ և խառնիճ

 որ

զի ոչ գոյր նոցա թիւ:

Եկեր զա՟մ խոտ երկրի նոցա, եւ սպառեաց զա՟մ պտուղ անդոյ նց՟:

Եհար զա՟մ անդրանիկս եգիպտա ցւոց՝ զսկիզբն ա՟մ վաստակոց նց՟:

Եհան զն՟ս ոսկւով եւ արծաթով. եւ ոչ գոյր յազգի նոցա հիւանդ:

Ուրախ եղեւ եգիպտոս ՚ի ելանել նոցա. զի անկաւ ահ ն՟ց ՚ի վ՟ր նց՟:

Սփռեաց ամպ հովանի առնել նց՟ ՚ի տուէ, եւ հրով լոյս տայր նց՟ ՚ի գիշերի

Խնդրեցին՝ եւ եկն լորամարգի. եւ հացիւ երկնից լցոյց զն՟ս:

Եհար զվէմն եւ բղխեցին ջուրք. եւ գնացին գետք ընդ անջրդիս:

Յիշեաց զբան իւր ս՟բ՝ որ ընդ աբ րահամու ծառայի իւրոյ:

Եհան զժողովուրդ իւր ցնծութ՟բ, եւ զընտրեալս իւր ուրախութ՟բ:

Ետ նց՟ զգաւառս հեթանոսց. ՚ի վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զն՟ս:

Զի պահեսցեն զվկայութիս նր՟. եւ զօրէնս նորա խնդրեսցեն:

☙ Օրհնութիւն Ազարիայ Դանիէլի։

Ճ՛Ն

Խոստովան եղերուք տն՝ զի քաղցր է · զի յաւիտեան է ողորմութի նորա։

Ո՞ խօսեսցի զզօրութիւնս տեառն · լսելի արասցէ զամ օրհնութիւնս նր։

Երանի՛ որք պահեն զիրաւունս՝ և առնեն զարդարութի յամ ժամ։

Յիշեա՛ զմեզ տր ընդ հաճոյս ժո_ ղովրդեան քոյ · և այց արա մեզ ՚ի փրկութեան քում։

Տեսցուք մեք զքաղցրութի ընտ_ րելոց քոց · ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո · և գովէ ցուք մեք ՚ի ժառանգութե քում։

Մեղաք մեք ընդ հարցն մեր անօ_ րինեցաք և յանցեաք։

Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան զսքանչելիս քո, և ոչ յիշեցին զբա զում ողորմութիւնս քո։

Բարկացուցին զքեզ յանցանելն իւրեանց ՚ի ծով կարմիր · փրկեաց



զնոսա

զնոսա վասն անուան իւրոյ՝ զի ծա-
նիցեն զզօրութիւնս իւր։
Սաստեաց ի ծով կարմիր և ցամա-
քեցաւ. առաջնորդեաց նոցա ընդ
անդունդս որպէս ընդ անապատ։
Կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց նոցա.
և փրկեաց զնոսա ի ձեռաց թշնամեաց նոցա։
Ծածկեաց ծով զնեղիչս նոցա.
և մի ի նոցանէ ոչ ապրեցաւ։
Հաւատացին բանի նորա. և օրհնե-
ցին զօրհնութիւնս նորա։
Վաղվաղեցին և մոռացան զգործս
նորա, և ոչ անսացին խորհրդոց նորա։
Ցանկացան զցանկութիւն յանապատի
և փորձեցին զԱստուած՝ յանջրդի։
Ետ նոցա զխնդրուածս նոցա. առա-
քեաց զլիութիւն յանձինս նոցա։
Բարկացուցին զՄովսէս ի բանակի
և զԱհարօն սուրբ Տեառն։
Բացաւ երկիր և եկուլ զԴաթան.
և ծածկեաց զբանակն զԱբիրոնի։
Հուր վառեցաւ ի ժողովս նոցա.
և բոց մաշեաց զմեղաւորս։

 Արա

Արարին զորթն 'ի քորեբ՝ և եր_
կիրպագին պատկերի. և փոխեցին
զփառս իւրեանց՝ 'ի նմանութիւն
որթուն խոտակերի։

Մոռացան զա͞ծ կենարար իւրեանց
որ արար զմեծամեծս յեգիպտոս.
և զսքանչելիս իւր յերկիր քամայ.
և զահ իւր 'ի վ͞ր կարմիր ծովուն։

Ասաց սատակել զն͞ս՝ եթէ ոչ մով
սէս ընտրեալն կայր առաջի նորա։

Դարձուց առ ո͞տր՝ և անոյց զբար
կութ͞ն ն͞ր. զի մի սատակեսցին նոքա։

Անարգեցին զերկիրն ցանկալի, և
ոչ հաւատացին բանի նորա։

Տրտնջեցին 'ի բանակս իւրեանց,
և ոչ լուան ձայնի տեառն։

Համբարձ զձեռն իւր 'ի վերայ ն͞ց՝
հարկանել զն͞ս յանապատի։

Ցրուեցի զաւակ ն͞ց ը͞ հեթանոսս.
ցրուեսցի զաւակ ն͞ց ընդ գաւառս։

Պղծեցան նոքա 'ի բէելբեգովր. զի
կերին զզոհեալ և զմեռելոտի։

Բարկացուցին զնա 'ի գործս իւ͞րնց



և

և յաճախեաց ՚ի վր նոցա բեկումն։
Եկաց ՚ի մէջ փենեհէս. քա-
ւեաց՝ և արգելաւ մահ. համարե-
ցաւ նմա յարդարութիւն յազգէ
յազգ մինչև յաւիտեան։
Բարկացուցին զնա ՚ի վր ջուրցն հա
կառակութե. չարչարեցաւ Մովսէս
վս նոցա՝ զի դառնացուցին զհոգի նր։
Հրամայեաց շրթամբք իւրովք՝ և ոչ սա
տակեցին զազգսն զոր ասաց Տր։
Խառնակեցան ընդ հեթանոսս՝ և
ուսան զգործս նոցա. ծառայեցին
կռոց նոցա՝ և եղև նց ՚ի գայթակղութի։
Զոհեցին զուստերս և զդստերս
իւրեանց դիւաց, և հեղին զա-
րիւն անպարտ.
Արիւն ուստերաց և դստերց իւրեց
զոր զոհեցին կռոցն քանանու։
Պղծեցաւ երկիր յարենէ նոցա.
և պղծեցաւ ՚ի գործոց նոցա. զի
պոռնկեցան ՚ի գնացս իւրեանց։
Բարկացաւ սրտմտութբ Տր ՚ի վր
ժողովրդեան իւրոյ. և գարշեցոյց

զծառայութիւն իւր յոյժ.
Մատնեաց զնս՟ ՚ի ձեռս հեթանոսց՟. տիրեցին նց՟ ատելիք իւրեանց. և թշնամիք իւրեանց նեղեցին զնս՟. և խոնարհ եղեն ՚ի ներքոյ ձեռաց նց՟:
Բազում անգամ փրկեաց զնոսա. և նոքա դառնացուցին զնա ՚ի խորհուրդս իւրեանց. և կորացան յանօրէնութեան իւրեանց:
Հայեցաւ տր՟ ՚ի նեղութիւնս նց՟, ՚ի լսել ձայնի աղօթից նոցա:
Յիշեաց զուխտ իւր՝ և զղջացաւ ըստ բազում ողորմութե՟ իւրում. և ետ զնոսա ՚ի գթութիւ՟ առաջի ամ՟ գերչաց նոցա:
Փրկեա զմեզ տր՟ ած՟ մեր. և ժողովեա զմեզ ՚ի հեթանոսաց:
Խոստվն՟ եղիցուք անուան քում սբյ՟ և պարծեսցուք յօրհնութիւնս քո:
Օրհնեալ տր՟ ած՟ իսրայէլի յաւի-տեանս յաւիտենից:
Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն եղիցի եղիցի:

# Աղօթք Ներսէսի Սրբոյն Հայրապետին։

Ես տեսացի 'ի վերանալ յին-
աւուրց իմոց՝ թէ գնա-
ես 'ի դրունս դժոխոց
Թողի զմն յետին իմ, և տեսայ
թէ այլ ոչ ևս տեսից զփրկութին Տն
յերկրին կենդանեաց. և ոչ ևս տեսից
զմարդ բնակչօք իւրովք հանդերձ
Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ
այսուհետև թողի լքի զամենայն
զկեանս իմ։
Նաւ գնաց մեկնեցաւ յինէն հոգի
իմ. որպ այն որ քակէ զտաղաւար.
և եղէ ես որպ զոստայն սատար գ
մերձ 'ի հատանելը։
Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յա-ա
ւօտէ որպ 'ի ձեռս առիւծու. այնպ
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ, զի
յառաւօտէ մինչ 'ի գիշեր մատնեցայ
Որպ ծիծառն այնպէս ձայնեցի. որպ
զաղաւնի այնպէս մնչեցի. զի նուա-
ղեցան աչք իմ 'ի տեսանելոյ
Հայեցայ 'ի բարձունս առ Տր Տծ
իմ

իմ որ փրկեաց զիս, և փառաւորեցոյց
յինէն զցաւս անձին իմոյ։

Տ՛ վն այսորիկ պատմեցաւ քեզ·
արթուցեր զանձն իմ· դարձուցեր
զհոգի իմ· մխիթարեցայ և կեցի։
հա՛ 'ի խաղաղութի դարձաւ դառնութի
իմ· փրկեցեր զանձն իմ զի մի՛ կորէյց
և ընկեցեր յետոյ զամ զմեղս իմ։
ի ոչ թէ որք 'ի դժոխս են խոս-
տովան առնիցին առ քեզ· և ոչ մե-
ռեալք օրհնեսցեն զքեզ· և ոչ յու-
սասցին 'ի Ճշմարտութիւն քո ամենեք-
քեանն՝ որք իջանեն 'ի դժոխս։
Այլ կենդանիքս օրհնեսցուք ըզ-
զ տր· որպէս և ես այսուհետև
կուանս ծնայց՝ որք պատմեսցեն
արդարութիւս քո տր փրկութե իմոյ։
ս ոչ ես դադարեցից օրհնել ըզ-
եզ յօրհնութի նոր զամ աւուրս կե-
աց իմոց յանդիման տաճարիդ տյ։

Փառք հօր և որ''։

...յս հեղինակութեան, յոյս և ապաւէն մեր
...ութեան տր յմ քո, փրկեա՛ զիս և փառա-
ւորեա՛ զցաւս անձին իմոյ։ Սուրբ''։



Խոս




Ծովն ետես՝ եւ փախեաւ. եւ
Յորդանան անդրէն դարձաւ.

Սաղմոս ՃԺԳ. Գ.

Ալէլուիայ։ ՃԶ.

ԽՈՍՏՈՎԱՆ
եղերուք տ՟ն՝ զի
քաղցր է. զի յաւ՟ի
տեան է ողորմու՟թի
նորա։

Ասասցեն փրկեալք տ՟ն՝ զորս փըր
կեաց ՚ի ձեռաց թշնամւոյն։
Յամենայն գաւառաց ժողովեաց
զնոսա. յարեւելից եւ յարեւմտից՝ ՚ի
հիւսիսոյ եւ ՚ի ծովէ։
Մոլորեցան նոքա յանապատի յան֊


ջրդի

Ջրդհի ճանապարհի. և քաղաք բնա
կութեն ոչ գտին։
Քաղցեան և ծարաւեցան. և ան
ձինք նոցա ՚ի նոսին նուաղեցան։
Աղաղակեցին առ Տէր ՚ի նեղութե իւր
եանց, և ՚ի վշտաց նց փրկեաց զնս։
Առաջնորդեաց նոցա ՚ի ճանապարհ
ուղիղ, զի երթիցեն ՚ի քաղաք բնա
կութեան իւրեանց։
Խոստովան եղիցին Տն ողորմութեց նր.
և սքանչելեաց նր որդւոց մարդկան։
Զի յագեցոյց զանձինս քաղց-
եալս, և զանձինս կարօտեալս
լի արար բարութեամբ։
Որք նստէին ՚ի խաւարի և ՚ի ստո
ւերս մահու, կապեալ էին յաղ
քատութե ոչ յերկաթս։
Զի դառնացուցին զբանն Այ, և զխ
խորհուրդս բարձրելոյն բարկացուցին
Խոնարհ եղեն ՚ի ցաւոց սրտից նց.
տկարացան և ոչ ոք էր որ օգնէր նց։
Աղաղակեցին առ Տէր ՚ի նեղութե
իւրեանց. ՚ի վշտաց նց եհան զնս։

 Փըր

Փրկեաց զնս̃ ՚ի խաւարէ և ստուե
րաց մահու. և խզեաց զկապանս նց̃.
Խոստովան եղիցին տեառն ողոր֊
մութեանց նորա. և սքանչելեաց նր̃
որդւոց մարդկան.

Զի փշրեաց զդրունս պղնձիս,
և զնիգս երկաթիս խորտակեաց։
Օգնեաց նոցա ՚ի ճանապարհի անօ
րէնութեան իւրեանց. զի վասն մեղաց
իւրեանց խոնարհ եղեն յոյժ։
Զա̃մ կերակրոց գարշէին սիրտք
նոցա. մերձեցան մինչև ՚ի դը
րունս մահու։
Աղաղակեցին առ տր̃ ՚ի նեղութեան իւր
եանց. ՚ի վշտաց նց̃ ապրեցոյց զնս̃.
Առաքեաց զբան իւր և բժշկեաց
զնոսա. և փրկեաց զնս̃ յապակա֊
նութենէ իւրեանց։
Խոստովան եղիցին տն̃ ողորմութեանց նր̃.
և սքանչելեաց նր̃ որդւոց մարդկան։
Մատուսցեն նմա պատարագ օրհ
նութ̃. և պատմեսցեն զգործս նր̃
ցնծութեամբ։

Որք իջանեն ՚ի ծով նաւուք, և առնեն զգործս ՚ի ջուրս բազումս։
Նոքա տեսին զգործս տն. և զսքանչելիս նր ՚ի խորս անդնդոց։
Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ. և բարձրացան ալիք նորա։
Ելանեն յերկինս՝ և իջանեն յան դունդս. և անձինք նոցա՝ յան ձինս իւրեանց մաշեցան։
Խռովեցան՝ տատանեցան որպէս ար բեալք. և ամ իմաստութիւն նց ըմկլաւ։
Աղաղակեցին առ տր ՚ի նեղութեան իւրեանց. ՚ի վշտաց նց կեցոյց զնս։
Դարձոյց զմրրիկն յօդս՝ և դադա րեցան ալիք նր. ուրախ եղեն՝ զի դադարեցան. և առաջնորդեաց նց ՚ի նաւահանգիստ կամաց իւրեանց։
Խոստովան եղիցին տեառն ողոր մութեանց նորա. և սքանչելեաց նր որդւոց մարդկան։
Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս ժո ղովրդոց. և յաթոռս ծերոց օրհ նեսցեն զնա։

Զի դարձոյց զգետս 'ի ցամաք. և
զգնացս ջուրց յերկիր ծարաւուտ։
Արար զերկիրն պտղաբեր յաղտաղ
տուտս վս̃ չարութե̃ բնակչաց նց̃։
Արար զանապատն 'ի ճահիճս ջուրց.
և զերկիրն ծր̃ւուտ 'ի գնացս ջուրց։
Բնակեցոյց 'ի նմա քաղցեալս. և շի
նեցին քաղաք բնակութե̃ իւրեանց։
Վարեցին արտս՝ և տնկեցին այգիս
և արարին պտուղ արմտեաց իւրեանց։
Օրհնեաց զն̃ս և բազմացան յոյժ.
և անասունք նց̃ ոչ նուաղեցան։
Նուաղեցան նոքա՝ և չարչարեցան
'ի նեղութե̃ չարեաց և 'ի վշտաց։
Եհեղ անարգութիւն 'ի վերայ իշխա
նաց նոցա. Մոլորեցոյց զն̃ս յանա
պատի՝ և ոչ 'ի ճանապարհի։
Օգնեաց տնանկին յաղքատութե̃. և
հաւասարեաց ոպ̃ խաշին ազգի նց̃։
Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին
և ա̃մ անօրէն խցցէ զբերան իւր։
Ո՞վ է իմաստուն որ պահեսցէ զայս
և 'ի միտ առցէ զողորմութիւնս տն̃։

## Օրհնութիւն Սաղմոս Դաւթի։

ՃԷ։

Պատրաստ է սիրտ իմ ած՝ պատ
րաստ է սիրտ իմ օրհնել և
սղմս ասել քեզ փառօք իմովք
Զարթիր փառք իմ, զար
թիր սաղմոսիւք և օրհնութեամբ.
և ես զարթեայց առաւօտուց։
Խոստովան եղէց քեզ 'ի ժողովուրդս
տր. և սաղմոս ասացից քեզ յազգս։
Մեծ եղև մինչև յերկինս ողորմու
թի քո. մինչև յամպս ճշմարտութի քո.
Բարձրեալ ես դու յերկինս ած,
և յամ երկրի են փառք քո։
Որպս փրկեսցին սիրելիք քո. կեցո
աջով քո և լուր ինձ։
Ած խօսեցաւ 'ի սրբութե իւրում.
բարձր եղէց՝ բաժանեցից զսիքեմ.
և զհովիտն յարկաց չափեցից։
Իմ է գաղայադ՝ և իմ է մանասէ.
եփրեմ հզօրէ գլխոյ իմոյ։
Յուդա թագաւոր իմ. մովաբ՝ աւ
ազան յուսոյ իմոյ.

 Յե

Յեդուցեալ ուղղեցիր զգնացս իմ ·
և ինձ այլազգիք հնազանդք եղեն ։
Ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր · կամ
ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչև ցեդօմ
Եթէ ոչ դու ա͞ծ որ մերժեցեր
զմեզ, և ոչ ելեր ա͞ծ ընդ զօրս մեր ։
Տո՛ւր մեզ զօգնութի͞ն 'ի նեղութե͞ն ·
զի սո՛ւտ է փրկութի͞ն մարդոյ ։
Աստուծով արասցուք զզօրութի͞ն · և
նա յամօթ արասցէ զթշնամիս մեր ։

'Ի կատարած Սաղմոս Դաւթի ՃԸ

Ա͞ծ օրհնութեան իմոյ մի՛ լռեր ·
զի բերան մեղաւորի՝ բերան
նենգաւորի բացաւ 'ի վ͞ր իմ ։
Խօսեցան զինէն լեզուաւ նենգա
ւորաւ, և բանիւ ատելութեան
պաշարեցին զիս ։
Մարտեան ընդ իս 'ի տարապարտուց ·
փոխանակ սիրոյ իմոյ՝ մատնէին զիս
այլ ես յաղօթս կայի ։
Հատուցին ինձ չար փոխանակ ընդ
բարւոյ · ատելութի͞ն փոխանակ սիրոյ
իմոյ ։

Կացո՛ ՚ի վերայ նորա մեղաւոր · սա
տանայ կացցէ ընդ աջմէ նորա։
՚Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապար
տեալ. եւ աղօթք նորա ՚ի մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նորա նուազք ·
եւ զայցելութիւն նորա, զայն այլ տարցէ ։
Եղիցին որդիք նորա որբ · եւ կին նորա
այրի · սասանեսցին փոփոխեսցին ·
որդիք նորա մուրօղք եղիցին · եւ
ելցեն ՚ի բնակութենէ իւրեանց։
Քննեսցէ փոխատու զամենայն
ինչս նորա , եւ յափշտակեսցեն
օտարք զվաստակս նորա։
Մի՛ գտցի օգնական նմա · եւ մի՛ ոք
ողորմեսցի ՚ի վերայ որբոց նորա։
Եղիցին որդիք նորա ՚ի սատակումն ·
եւ յազգէ ջնջեսցի անուն նորա։
Յիշեսցին մեղք հօր նորա առաջի
Տեառն · եւ մեղք մօր նորա մի՛ ջնջեսցին ·
եւ եղիցին առաջի Տեառն յամենայն ժամ։
Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա ·
փոխանակ զի ոչ յիշեաց առնել
զողորմութիւն։

Հալածեց զայր աղքատ և զտնանկ.
սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ.
Սիրեաց զանէծս՝ և եկցէ նմա.
ոչ կամեցաւ զօրհնութիւն՝ հեռի
եղիցի ՚ի նմանէ։
Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ.
մտցէ որպէս ջուր ՚ի փոր նորա,
և որպէս ձէթ ընդ ոսկերս նորա։
Եղիցի նմա որպէս հանդերձ զի ագա-
նիցի. որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ։
Այս գործ է այնոցիկ որք չարա-
խօս կային զինէն առ տէր. և որք
խօսէին չար զանձնէ իմմէ.
Այլ դու տէր տէր արա ընդ իս ըստ
անուան քում, զի քաղցր է ողոր-
մութիւն քո. և փրկեա զիս՝ զի աղքատ
և տնանկ եմ ես։
Սիրտ իմ խռովեցաւ ՚ի փորի իմում.
և ես որպէս ստուեր ՚ի խոնարհիլ
իմում պակասեցայ. և թօթափեցայ
որպէս մարախ։
Ծունկք իմ տկարացան ՚ի պահոց.
և մարմին իմ այլագունեցաւ յիւղոյ.

 Եղէ

Եղէ ես նախատինք նց . տեսին զիս՝
եւ շարժեցին զգլուխս իւրեանց:
Օգնեա ինձ տր ած իմ . եւ փրկեա
զիս ըստ ողորմութեն քում:
Ծանիցեն զի ձեռն քո այս է . եւ
դու տր արարեր զայս:
Նոքա անիծանեն՝ եւ դու օրհնես-
ցես . որք յարուցեալ են՝ ի վր իմ,
զամօթ կրեսցեն . այլ ծառայ քո
ուրախ եղիցի ի քեզ:
Զգեցցին զամօթ որք չարախօս
կային զանձնէ իմմէ . եւ արկցեն որպ
կրկնոց զամօթ իւրնց զիւրեամբք:
Եւ ես խոստովան եղէց առ տէր
յոյժ բերանով իմով . եւ ի մէջ
բազմաց օրհնեցից զքեզ:
Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս .
ի փրկել զիս յայնցանէ՝ որք հալա-
ծեն զանձն իմ:

## Սաղմոս Դաւթի. ՃԹ

Ասաց տր ցտր իմ, նիստ ընդ աջմէ
իմմէ մինչեւ եդից զթշնամիս քո
պատուանդան ոտից քոց:


Գա

Գաւազան զօրութեան առաքեսցէ
քեզ Տէր ՚ի Սիոնէ. և տիրեսցես
դու ՚ի մէջ թշնամեաց քոց։

Ընդ քեզ է սկիզբն աւուրն զօրութեան
՚ի լուսեղէնութեան սրբոց քոց. յարգանդէ
յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։
Երդուաւ Տէր՝ և ոչ ևս զղջասցի.
Թէ դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին Մելքիսեդեկի. և Տէր
ընդ աջմէ քումմէ։

Խորտակեսցէ յաւուր բարկութեան
զթագաւորս. դատէ զհեթանոսս՝ և բա
զում առնէ զհարուածս. և խորտա
կեսցէ զգլուխս բազմաց յերկրի։
Ջուխս ՚ի ճանապարհի արբուսցէ.
վասն այսորիկ և բարձր արասցէ զգլուխս։

## Ալէլուիայ ՃԺ.

ոստովան եղէց քեզ Տէր
բոլորով սրտիւ իմով ՚ի
խորհուրդս ուղղոց, ՚ի
ժողովուրդս. մեծ են գործք Տն.



և

և քննեալ են յամենայն կամս նորա։
Խոստովանութիւն և վայելչութիւն են
գործք նորա. արդարութիւն նորա
մնայ յաւիտեանս յաւիտենից։
Յիշատակ արար սքանչելեաց իւրոց.
ողորմած գթած է Տէր. կերակուր
ետ երկիւղածաց իւրոց։
Յիշեսցէ յաւիտենից զուխտ իւր.
զզօրութիւն գործոց իւրոց պատ-
ուիրեաց ժողովրդեան իւրում.
Տալ նոցա զժառանգութիւն հեթանո-
սաց. և գործք ձեռաց նորա՝ արդա-
րութիւն և իրաւունք են։
Հաւատարիմ են ամենայն պատ-
ուիրանք նորա. հաստատեալ են յա-
ւիտեանս յաւիտենից. արարեալ են
ճշմարտութեամբ և ուղղութեամբ։
Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան
իւրում. պատուիրեաց յաւիտենից
զուխտ իւր. սուրբ և ահեղ է անուն նորա։
Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն.
իմաստութիւն բարի ամենեցուն
որք առնեն զնա. և օրհնութիւն

նր̃ մնայ յաւիտեանս յաւիտենից։

## ԱԼԷԼՈՒԻԱ. դարձման որ-ու-բեւեան. ՃԺԱ.

Երանի է այր՝ որ երկնչի ՚ի Տեառնէ. զպատուիրանս նր̃ նա կամի յոյժ։
Զօր եղիցի յերկրի զաւակ նորա. եւ յազգ ուղղոց օրհնեսցի։
Փառք եւ մեծութիւն են ՚ի տան նորա. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։
Ծագեաց ՚ի խաւարի լոյս ուղղոց. ողորմած գթած եւ արդար է Տր̃։
Քաղցր այր՝ ողորմի եւ տայ փոխ. յօրինէ զբանս իւր ՚ի դատաստանի. զի յաւիտեան նա մի՛ սասանեսցի։
Յիշտկ յաւիտենից եղիցի արդարն ՚ի համբաւէ չարէ նա մի՛ երկիցէ։
Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ աստուած։
Հաստատեալ է սիրտ նր̃, եւ նա մի՛ երկիցէ մինչեւ տեսցէ ՚ի թշնամիս իւր։
Սփռեաց եւ ետ աղքատաց. արդարութիւն նր̃ մնայ յաւիտեանս յՏ̃նից։

եւ եղջիւր նր՟ բարձր եղիցի փառօք։
Մեղաւորն տեսցէ եւ բարկասցի. զատամունս իւր կրճտեսցէ եւ հալեսցի. եւ ցանկութ՟ մեղաւորաց կորիցէ։

## Ալէլուիայ։ ՃԺԲ.

Օրհնեցէք մանկունք զտէր. եւ օրհնեցէք զանուն տ՟ն։

Եղիցի անուն տ՟ն օրհնեալ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու օրհնեալ է անուն տ՟ն։

Բարձր է ՚ի վերայ ա՟մ ազգաց տ՟ր. եւ յերկինս են փառք նր՟։

Ո՞վ է որպէս տ՟ր ա՟ծ մեր ՚ի բարձունս բնակեալ. եւ զխոնարհս տեսանէ յերկինս եւ յերկրի։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. եւ բարձրանէ զտնանկս յաղբեաց

Նստուցանէ զն՟ա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախամիտ. որպ՟ մայր որդւովք բերկրեալ։

 Յե

Յելանելն իէլի յեգիպտոսէ տանն
յակոբայ՝ի ժողովրդենէ այլազգեաց։
Եղեւ հրէաստան սրբութիւն նր․
եւ իսրայէլ իշխանութի նր։
Ծով ետես եւ փախեաւ․ եւ յորդա
նան անդրէն դարձաւ։
Լերինք ցնծացին որպէս խոյք․ եւ
բլուրք որպ գառինք մաքեաց։
Զի՞ է քեզ ծով․ զի՞ տեսեր եւ
փախեար․ կամ դու յորդանան
զի՞ դարձար անդրէն։
Լերինք ցնծացէք որպէս խոյք․
եւ բլուրք որպ գառինք մաքեաց։
Յերեսաց տն սասանեցաւ երկիր․
յերեսաց այ յակոբայ։
Որ դարձոյց զվէմն ՝ի վտակս ջուրց
եւ զապառաժն յաղբերականս։
Մի՛ մեզ տր՝ մի՛ մեզ․ այլ անուան
քում տո՛ւր զփառս․ վն ողորմութե
եւ ճշմարտութեան քո։
Մի՛ երբեք ասասցեն ՝ի հեթանոսս
թէ ո՞ւր է ած նոցա։
Ած մեր յերկինս եւ յերկրի․ զա—
մե

ամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար:
Կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են
ձեռագործ են որդւոց մարդկան:
Բերան ունին եւ ոչ խօսին. աչս
ունին եւ ոչ տեսանեն:
Ականջս ունին եւ ոչ լսեն. ունչս
ունին եւ ոչ հոտոտեն:
Ձեռս ունին եւ ոչ շօշափեն. ոտս
ունին եւ ոչ գնան. եւ ոչ գոյ բար
բառ ՚ի կոկորդս նոցա:
Նման նոցա եղիցին որք արարին զնո
սա. որք յուսացեալ են ՚ի նոսա:
Տունն Իսրայէլի յուսացաւ ՚ի Տէր.
օգնական եւ ընդունող է նոցա:
Տունն Ահարոնի յուսացաւ ՚ի Տէր.
օգնական եւ ընկերող է նոցա:
Երկիւղածք Տեառն յուսացան ՚ի Տէր.
օգնական եւ փրկիչ է նոցա:
Յիշեաց ըզ մեզ Տէր եւ օրհնեաց
զմեզ. օրհնեաց Տէր զտունն Իսրայէլի.
օրհնեաց Տէր զտունն Ահարոնի:
Օրհնեաց Տէր զերկիւղածս իւր.
զփոքրկունս եւ զմեծամեծս:
Յաւելցէ ՚ի ձեզ Տէր. ՚ի ձեզ եւ
յորդիս ձեր:

Օրհնեալ էք դուք ՚ի Տեառնէ. որ արար զերկինս և զերկիր։

Երկինք երկնից Տեառն են. և զեր-կիրս ետ որդւոց մարդկան։

Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն զՔեզ Տէր. և ոչ ամենեքեան որք իջանեն ՚ի դժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք զՔեզ Տէր՝ յայսմհետէ մինչև յաւիտեան։

---

## Սաղմոս. ՃԺԴ.

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Շրջեցան զինև երկունք մահու. և վտանգք դժոխոց գտին զիս։

Նեղութիւն և զանձկութիւն գտի և զանուն Տեառն կարդացի։

Ո՛վ Տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած մեր՝ ողորմի և պահէ զտղայս Տէր։

Ես խոնարհ եղէ՝ և Տէր կեցոյց զիս



դարձ

դարձ անձն իմ 'ի հանգիստ քո՝ զի Տէր օգնեաց քեզ:

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ. զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ 'ի գայթագղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց:

## Ալէլուիայ: ՃԺԵ

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ:

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է:

Զի՞նչ տաց տրիտուր Տեառն՝ ընդ ամենայնի զոր ետ ինձ:

Զբաժակ փրկութեան ընկալայց և զանուն Տեառն կարդացից:

Զուխտս իմ Տեառն տաց՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա:

Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՜վ Տէր՝ ես ծառայ քո եմ. ծառայ և որդի աղախնոյ քո:

Խորտակեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն Տեառն կարդացից:



Զա

Զուխտս իմ Տեառն տաց առաջի
ամենայն ժողովրդեան նորա. ՚ի գաւիթս
տան Տեառն և ՚ի մէջ քո Երուսաղէմ։

※ Սաղմոս ՃԺԶ.

Օրհնեցէք զՏէր ամենայն ազգք. գովես-
ցեն զնա ամենայն ժողովուրդք։
Զօրասցի ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր.
և ճշմարտութիւն Տեառն մնասցէ յաւիտեան։

※ Սաղմոս ՃԺԷ.

Խոստովան եղերուք Տեառն՝ զի քաղցր է.
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ասասցէ տունն Իսրայէլի՝ զի յա″։
Ասասցէ տունն Ահարոնի՝ զի յա″։
Ասասցեն երկիւղածք Տեառն՝ զի յա″։
Ի նեղութեան իմում ես առ Տէր կար-
դացի. և լուաւ ինձ յանդորր։
Տէր է իմ օգնական՝ և ես ոչ եր-
կեայց. զի՞նչ արասցէ ինձ մարդ։
Տէր է իմ օգնական, և ես տեսից
՚ի թշնամիս իմ։
Բարի է յուսալ ՚ի Տէր՝ քան յու-
սալ ՚ի մարդիկ. բարի է յուսալ

 ՚ի

'ի տէր՝ քան յուսալ յիշխանս.
Ամենայն ազգք շրջեցան զինև . և
անուամբ տն յաղթեցի նոցա.
Շրջելով շրջեցան զինև՝ և պա-
շարեցին զիս խմբասին . և անուամբ
տն վանեցի զնս.
Շուրջ եղեն զինև որպ մեղուք .
վառեցան բորբոքեցան որպ փուշք
'ի հուր . և անուամբ տն մերժեցի զնս.
Ի մերժելն գլորեցայ՝ և եղէ մերձ
'ի գլորել . և տր ընկալաւ զիս .
Զօրութիւն իմ և օգնութի իմ
տր . և եղև ինձ 'ի փրկութի.
Ձայն ցնծութեան փրկութեան
'ի յարկս արդարոց.
Աջ տն արար զօրութի . աջ տն բարձր
արար զիս . և աջ տն արար զօրութի.
Ոչ մեռայց, այլ՝ կեցից և պատմե-
ցից զգործս տն.
Խրատելով խրատեաց զիս տր, և
'ի մահ ոչ մատնեաց.
Բացէք ինձ զդրունս արդարութե,
զի մտից ընդ այն, և խոստովան եղէց տն


Այս

Ա՜յս դուռն Տեառն է՝ և արդարք
մտանեն ընդ սա։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լը֊
ւար ինձ. և եղեր ինձ ՚ի փրկութիւն։

Վէմն զոր անարգեցին շինողքն,
նա եղև գլուխ անկեան։

՚Ի Տեառնէ եղև այս. և է սքանչելի
առաջի աչաց մերոց։

Այսօր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։

Ո՛ Տէր փրկեա՛. ո՛ Տէր առաջնորդեա՛.
օրհնեալ որ գալոց ես յանուն Տեառն.
և օրհնեցաք զքեզ ՚ի տանէ Տեառն։

Աստուած մեր երևեցաւ մեզ. արա֊
րէք տօնս ուրախութեան կանխաւ
մինչև յանկիւնս սեղանոյ։

Իմ ես դու՝ և խոստովան ե֊
ղէց քեզ. Աստուած իմ ես դու՝ և
բարձր արարից զքեզ։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լուար
ինձ. և եղեր ինձ ՚ի փրկութիւն։

Խոստովան եղերուք Տեառն՝ զի բա֊
րի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի . եւ ոյք գնան յօրէնս Տեառն.

Երանի՛ ոյք քննեն զվկայութիւնս նորա . բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա.

Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութիւն ՚ի ճանապարհս նորա գնացին.

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՛ ՚ի պահել յոյժ.

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ ՚ի պահել ինձ զարդարութիւնս քո.

Յայնժամ ես ոչ ամաչէի ՚ի զգուշանալ ինձ ՚ի պատուիրանս քո.

Խոստովան եղէց քեզ տէր յուղղութիւն սրտի իմոյ . որպէս ուսայց զիրաւունս արդարութե՛ քո.

Զիրաւունս քո պահեցի . մի՛ թողուր զիս մինչ իսպառ.

Ո՞վ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր . այլ ՚ի պահել զբանս քո.

 Բո

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց.

Ի սրտի իմում թագուցի զբանս քո ո՟պ զի մի՛ մեղայց քեզ.

Օրհնեալ ես դու տէր. ուսո՛ ինձ զարդարութիւնս քո.

Շրթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քո։

Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ ո՟պ յա՟մի ՚ի մեծու՟ե.

Ի պատուիրանս քո հոգացայ, և զգուշացայ ՚ի ճանապարհս քո.

Զիրաւունս քո խօսեցայ, և ո՛չ մոռացայ զբանս քո։

Հատո՛ ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց.

Պանդուխտ եմ ես յերկրի՝ մի՛ թաքուցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափաքեաց անձն իմ ՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո յա՟մ ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ որք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց։

Ի բաց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի։

Բազմցի նստան իշխանք և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին և խորհուրդք իմ յարդարութիւն քո։

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող. տէր կեցո զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ. ուսո ինձ զարդարութիւնս քո։

Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս՝ և քննեցից զսքանչելիս քո։

Տրտմեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալ. հաստատեա զիս ՚ի բանս քո։

Զճանապարհս մեղաց ՚ի բաց արա յինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։

Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի.



և

և զիրաւունս քո ես ոչ մոռացայ։
Մերձեցայ ես 'ի վկայութիւնս քո.
տէր՝ մի՛ յամօթ առներ զիս։
Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթա
ցայ. զի անդորր արարեր սրտի իմոյ։
Օրէնսդէտ արա զիս տէր՝ 'ի ճանա
պարհս իրաւանց քոց՝ և խնդրեցից
զնա յամենայն ժամ։
Իմաստուն արա զիս տէր՝ և քննե
ցից զօրէնս քո. և պահեցից զնա
բոլորով սրտիւ իմով։
Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատ
ուիրանաց քոց տէր՝ զի ընդ նոսա հաճեցայ։
Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայու
թիւնս քո տէր՝ և մի՛ յագահութիւն։
Դարձո՛ զաչս իմ զի մի՛ տեսից զնան
րութիւն. 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս։
Հաստատեա՛ ծառայի քում զբանս քո
յերկիւղ քո։
Հա՛ն յինէն զնախատինս զոր և կար
ծեցի. զի դատաստանք քո քաղցր են։
Ահա՛ ցանկացայ պատուիրանաց քոց
տէր. յարդարութեան քում կեցո՛ զիս։

 Եկես

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր
և փրկութիւն քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի որք նախատեն զիս
բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի՛ իբացեայ առներ ՚ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ
զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամ ժամ. յա-
ւիտեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու՝ զի զպատ-
ուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո առաջի
թագաւորաց և ոչ ամաչէի։
Խորհէի ՚ի պատուիրանս քո՝ զոր
սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուի-
րանս քո զոր սիրեցի. և խորհէի
յարդարութեան քում։
Յիշեա՛ զբան ծառայի քո՝ յոր և
յուսացուցեր զիս։
Այս մխիթարեաց զիս ՚ի խոնարհու-
թեան իմում. զի բան քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ

յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ.

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր՝ և մխիթարեցայ.

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց. և որք թողին զօրէնս քո.

Գովելի են ինձ իրաւունք քո 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ.

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր և պահեցի զօրէնս քո.

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս զի զարդարութիւնս քո խնդրեցի.

Խէթ — խոյ.

Բաժին իմ ես դու Տէր. ասացի պահել ինձ զօրէնս քո

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում.

Խորհեցայ 'ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո.

Պատրաստեցայ՝ և ոչ խռովեցայ.

զի պահեցի զպատուիրանս քո։
Տոռունք մեղաց պատեցան զինև.
այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան
լինել առ քեզ՝ վասն իրաւանց և
արդարութեան քո։
Հաղորդ էի ես ամ՟ երկիւղածաց քոց.
որոց պահէին զպատուիրանս քո։
Ողորմութե՟ տ՟ն լի՛ եղև երկիր.
զարդարութի՟ս քո ուսո՛ ինձ։
Քաղցրութիւն՝ արարեր ընդ ծա
ռայի քում տ՟ր՝ ըստ բանի քում։
Զքաղցրութիւն՝ զխրատ և զգի
տութի՟ ուսո՛ ինձ. զի ՚ի պատուի
րանս քո ես հաւատացի։
Մինչև խոնարհեալ էի ես՝ մեղայ
վ՟ն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տ՟ր. և քաղցրութե՟
քով ուսո՛ ինձ զարդարութի՟ս քո.
Բազմացան յիս անիրաւութիք ան‿
բարտաւանից. այլ ես բոլորով սրտի՟
իմով քննեցի զպատուիրանս քո։
Մածան որ՟պ կաթն սիրտք նոցա.

այլ ես զօրէնս քո խօսեցայ.
Բարի՛ է ինձ՝ զի խոնարհ արարեր զիս. որպ՜ ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո՝ քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս իմաստուն արա զիս՝ և ուսայց ըզ պատուիրանս քո.
Երկիւղածք քո տեսցեն զիս եւ ուրախ եղիցին. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Ծանեայ տէր՝ զի արդարութիւն են դատաստանք քո. յիրաւի՛ խոնարհ հեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթարել զիս՝ ըստ բանի քում զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից. զի օրէնք քո խոսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որ 'ի տարապարտուց անիրաւեցան յիս. այլ ես հոգացայ 'ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո. և որք ճանաչեն զվկայութիւնս քո.

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդա-
րութիւն քում զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ ՚ի փրկութիւն
քո. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում.
ասացի երբ մխիթարեսցես զիս։
Եղէ ես որպէս տիկ ՚ի պարզի. զի զար-
դարութիւնս քո ես ոչ մոռացայ.
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի
քո. երբ արասցես ինձ իրաւունս
՚ի հալածչաց իմոց.
Պատմեցին ինձ անօրէնք զխոր-
հուրդս, այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են.
ի նանիր հալածեցին զիս՝ օգնեա՛ ինձ։
Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս
յերկրի. այլ ես ոչ թողի զպատ-
ուիրանս քո։
Ըստ ողորմութեան քում կեցո՛ զիս. և
պահեցից զվկայութիւնս բերանոյ քո։
Յաւիտեան տէր բան քո կայ յեր-
կինս. յազգէ մինչև յազգ է ճշ-
մարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։
Հրամանի քում մնայ տիւ. զի ամե-
նեքեան ծառայք քո են։
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին,
կանխաւ ես արդեօք կորուսեալ
էի ՚ի խոնարհութեան իմում։
Յաւիտեան ոչ մոռացայց զարդա-
րութիւնս քո՝ զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես և կեցո զիս. զի զար-
դարութիւնս քո խնդրեցի։
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորու-
սանել. զվկայութիւնս քո ես ՚ի միտ առի։
Յամենայն կատարածի տեսի զվախճան. յոյժ
անդորր էին ինձ պատուիրանք քո։
Որպէս սիրեցի զօրէնս քո. զօրհանա-
պազ խօսք իմ էին։
Քան զթշնամիս իմ իմաստուն ա-
րարեր զիս ՚ի պատուիրանս քո. զի
յաւիտեան իմ էին։
Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն
եղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին։
Քան զծերսն իմաստուն եղէ. զի
զպատուիրանս քո քննեցի։

 Յամ

Յա̄մ ճանապարհաց չարաց արգելի
զոտս իմ. ո̄պ զի պահեսցեմ զբանս քո։
Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ
զի դու օրէնսգէտ արարեր զիս։
Ո̄պ զի քա՛ղցր են ՚ի քիմս իմ բանք
քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ։
Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ա-
տեցի զա̄մ ճանապարհս չարաց. զի
դու օրէնսգէտ արարեր զիս։
Ճրագ են բանք քո ոտից իմոց. և
լոյս շաւղաց իմոց։
Երդուայ և հաստատեցի. զի պահե-
ցից զա̄մ իրաւունս արդարութե̄ քո։
Խոնարհ եղէ մինչև յոյժ. Տ̄ր՝ կե-
ցո՛ զիս ըստ բանի քում։
Զկամս բերանոյ իմոյ հաճեա՛
Տ̄ր. և զիրաւունս քո ուսո՛ ինձ։
Անձն իմ ՚ի ձեռս քո է յա̄մ ժամ.
և զօրէնս քո ես ոչ մոռացայ.
Արկին ինձ մեղաւորք որոգայթ. ՚ի
պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։
Ժառանգեցի զվկայութի̄ս քո յաւի-
տեան. զի ցնծութի̄ է սրտի իմոյ.

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան վասն հատուցման։

Զանօրէնսն ատեցի. և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս Ա՟յ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո զիս. և մի յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ և ապրեցո զիս. և խորհեցայց զիրաւունս քո յա՟մ ժամ

Անարգեցեր զա՟մն որք ապստամբք եղեն յարդարութենց քոց. զի անիրաւութի՟ էին խորհուրդք ն՟ց։

Յանցաւորս համարեցայ զա՟մ մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմն իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Արարի իրաւունս և արդարութիւն· մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց։
Ընկալ զծառայս քո ՚ի բարի· զի մի՛ ամբարտաւանք զրկեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութեան քում տէր· և բանից արդարութեան քո։
Արա՛ ընդ ծառայի քում տէր ըստ ողորմութեան քում· զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։
Ծառայ քո եմ ես՝ իմաստո՛ւն արա զիս· և ծանեայց զվկայութիւնս քո։
Ժամ է պաշտել զտէր· խափանեցին զօրէնս քո։
Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զոսկի և զտպազիոն։
Ամենայն պատուիրանք քո յաջողեցին ինձ· զի ատեցի ես զճանապարհս չարաց։
Սքանչելի են վկայութիւնք քո· վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ և իմաստուն առնէ զտղայս։



Ըզ

Զբերան իմ բացի՝ և առի ըզ
հոգի. ՚ի պատուիրանս քո փափա֊
գէաց անձն իմ.
Նայեաց առ իս և ողորմեա ինձ. ըստ
իրաւունս սիրողաց անուան քոյ։
Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ
ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն
ինձ ամ մեղք։
Փրկեա զիս ՚ի զրպարտութէ մարդկան.
և պահեցից զպատուիրանս քո։
Երևեցո զերեսս քո ՚ի ծառայս քո.
և ուսո ինձ զարդարութիս քո։
Վտակք ջուրց իջին յաչաց իմոց.
զի ոչ պահեցին զօրէնս քո։
Արդար ես դու տր. և ուղիղ են
դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութի վկայու֊
թեց քոց տր. և ճշմարտիւ են յոյժ.
Մաշեաց զիս նախանձ քո. զի մո֊
ռացան զբանս քո թշնամիք իմ։
Բոցաւորեալ է բան քո յոյժ. և ծառայ
քո սիրեաց զնա։
Մանուկ եմ ես և արհամարհեալ.

 և

և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Արդարութիւն քո՝ արդարութիւն յաւիտենից . և օրէնք քո ճշմարիտ են։
Նեղութիւնք և վիշտք գտին զիս .
և պատուիրանք քո խոկք իմ են։
Արդարութիւն են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա և կեցո զիս։
Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով . լուր ինձ տէր՝ զի զարդարութիւնս քո խնդրեցից։
Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս . և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի . և ես ՚ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու ,
՚ի խօսել ինձ զբանս քո։
Ձայնի իմում լուր տէր՝ ըստ ողորմութեան քում . և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն . զի յօրինաց քոց հեռի եղեն։
Մերձ ես դու տէր . և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։



Իսկ

Իսկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։
Տես զխոնարհութիւն իմ և փրկեա
զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Դատեա զդատաստան իմ և փրկեա
զիս. և ըստ բանի քում կեցո զիս։
Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն.
զի զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են տէր.
ըստ իրաւանց քոց կեցո զիս։
Բազում են որք հալածեն և նեղ-
զեն զիս. ՚ի վկայութեանց քոց
ես ոչ խոտորեցայ։
Հայէի յանսագորութիւնս և մաշէի.
զի զպատուիրանս քո ոչ պահեցին։
Տես զի զպատուիրանս քո սիրեցի.
տէր ողորմութեամբ քով կեցո զիս։
Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է.
յաւիտեան են ամ իրաւունք ար-
դարութեան քո։
Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր.
և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։
Ցնծացայ ես ՚ի բանս քո. որպէս այն
որ գտանէ աւար բազում։



Զ մեղս

Զմեղս ատեցի և անարգեցի. և
զօրէնս քո սիրեցի։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից
զքեզ վ՟ս իրաւանց և արդարութ՟ե քո։
Խաղաղութ՟ի բազում է այնոցիկ
որք սիրեն զօրէնս քո. և ոչ գոյ ՚ի
նոսա գայթագղութիւն։
Սպասեցի փրկութեան քում Տ՟ր.
և զպատուիրանս քո սիրեցի։
Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո
և սիրեաց զնոսա յոյժ։
Պահեցից զպատուիրանս և զվը֊
կայութիւնս քո. զի ամենայն ճա֊
նապարհք իմ առաջի քո են։
Մերձեսցին խնդրուածք իմ ա֊
ռաջի քո Տ՟ր. ըստ բանի քում
իմաստնացո զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո Տ՟ր.
և բանիւ քով փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու֊
թիւնս քո, յորժամ ուսուցանես
ինձ զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի
ամ՟ պատուիրանք քո արդարութ՟ի են։

 Եղի

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս
զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում տէր. և
օրէնք քո խօսք իմ են։
Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես որպէս ոչխար կորու-
սեալ. խնդրեա զծառայս քո. զի
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

## Օրհնութիւն Եսայեայ [illegible] մարգարէին։

Օրհնեցէք զած յօրհնութիւն
նոր. զի իշխանութիւն նորա
'ի բարձունս փառաւորի։
Եղև անուն նորա փառաւորեալ
է 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի։
Որք իջանէին 'ի ծով նաւօք.
կղզիք և ամ բնակիչք նց ընդ նոս։
Ուրախ եղիցի անապատն՝ և ամ բնա
կիչք իւր. ուրախ եղիցին բանակք
և բակք կեդարու. և ուրախ եղի
ցին բնակիչք վիմին։



'Ի

'Ի գլխոց լերանց գոչեսցեն · տա-
յցեն զփառս ա՟յ · և զքաջութի՟ նր՟
կղզիք պատմեսցեն
Տ՟ր ա՟ծ զօրութեանց դիմեալ գայ ·
զարթուցանել զպատերազմ, յարու-
ցանել զնախանձ, փող հարկանել և
գոչել 'ի վերայ թշնամեաց իւրոց
զօրութե՟ բազմաւ ։
Ուրախ եղիցին երկինք 'ի վե՟ ուստ
և ամպք ցօղեսցեն զարդարութի՟ ։
Բղխեսցէ երկիր զողորմութի՟ · և զար-
դարութի՟ առհասարակ բղխեսցէ ։

## Աղօթք Յովնանու Մարգարէին ։

Ի նեղութե՟ իմում ես առ տ՟ր կար-
դացի · և լուաւ ա՟ծ յանդնդոց
դժոխոց աղաղակի իմում ։
Լուր տ՟ր ձայնի իմում, զի ընկե-
ցեր զիս 'ի խորս ծովու · և շրջանք
գետոց պաշարեցին զիս ·
Ամենայն զբօսանք քո և ալիք քո՝
անցին 'ի վ՟ր իմ · և ասացի թէ մերժե-
ցայ ուրեմն յերեսաց աչաց քոց ·

Սուրբ՝ իջեալ թէ յաւելից հայրն ՚ի
տաճար սուրբ քո • զի հեղան զինեւ
ջուրք մինչև յանձն իմ • և անդունդք
անհնարինք պաշարեցին զիս •

Նստուա գլուխ իմ ընդ փապարս
լերանց • իջի ես ՚ի խորս երկրի՝ և
տեսի զնիգս նոր զի էին ոմն աչիք
յաւիտենից • և ելցեն յապականու
թենէ կեանք իմ •

Մո քո Դ տէր Աստուած իմ ՚ի նուաղել
անձին իմոյ կարդացի • և զքեզ Տէր
յիշեցի • և մտցեն աղօթք իմ ՚ի տա
ճար սուրբ քո •

Ոյք պահէին զունայնութիւն
և զստութիւն ողորմութենէ
իւրեանց մերժեցան •

Այլ ես ՚ի ձայն օրհնութեան խոստովանո
եղեց քեզ • մատուցից պատարագս Նմ •
և կատարեցից զուխտ իմ ՚ի փրկութեան •
Փառք հօր և որ՛ •

Ա՛նկայէն ողջոյն մեզ ՚ի տաճար սուրբ քո •
խնկարկեսցի անձն քո ՚ի խնկարկութիւն մեզ •
Սուրբ աստուածածին՝ Վե՛րին օրհնութեան տէր՝ •



ՏԷ՞Ր զլուր քո լուայ և երկեայ։
Տէր՝ նայեցայ ՚ի գործս քո՝
և զարհուրեցայ։
Ամբ՟ Գ. Բ



Օրհնութիւն Նաւակատեաց.

ՃԺԹ.

ԻՆԵՂՈՒԹԵ-
իմում ես առ որ
կարդացի և լուաւ
ինձ. որ փրկեաց
զանձն իմ ի շըր-
թանց նենգաւորաց և ի լեզուէ չարէ.
Զի՞ տացի քեզ՝ կամ զի՞նչ յաւ-
ելցի լեզու նենգաւոր.
Որպէս նետք հզօրի՝ զի սրեալ են
կայծակամբք կաղնոյ.
Վա՛յ ինձ՝ զի ընդ երկար եղև պան

դըխ

դխտութիւն իմ. և բնակեցայ ես
'ի վրանս կեդարու։
Բազում անգամ բնակեցաւ անձն իմ
ընդ այնոսիկ որք ատէին զողջոյն։
Ես էի խաղաղարար. յորժամ խօ_
սէի, մարտնչէին ընդ իս։

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻ

Համբարձի զաչս իմ 'ի լերինս՝ ուս
տի եկեսցէ ինձ օգնութիւն։
Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ,
որ արար զերկինս և զերկիր։
Մի՛ տայր 'ի սասանութիւն զոտն քո.
և մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ո՛չ ննջէ և ո՛չ 'ի քուն երթայ
պահապանն իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ. և տէր ընդ_
կալցի աջոյ ձեռամբն իւրով։
Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղի
ցէ. և մի՛ լուսինն 'ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ.
պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո.
յայժմհետէ մինչև յաւիտեան։

Օրհնութիւն աստիճանաց. ՃԻԱ.

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս՝ ՚ի տուն տն̄ երթիցուք մեք։

Հաստատեալ կային ոտք մեր առ դը–րունս քո երուսաղէմ։

Օ էմ շինեալ ոպ̄ քաղաք . եւ բնա–կութիւն իւր շուրջ զնովաւ։

Անդ ելանէին ազգք՝ ազգք տեառն ՚ի վկայութիւն իսրայէլի՝ խոստովան լինել անուան տեառն։

Անդ արկեալ են աթոռք դատաստանի . աթոռս արկեալ են ՚ի տան դաւթի։

Հարցէք զողջոյնս եղէմի , եւ ըղ–շինութենէ ոյք սիրէք զտր̄։

Եղիցի խաղաղութիւն ՚ի զօրութեան քում եւ շինութիւն յաշտարակս յամուրս քո։

Վն̄ եղբարց եւ ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութիւն . վն̄ քո եւ վն̄ տան տն̄ այ̄ մերոյ խնդրեցաք զբարութիւն ՚ի քէն։

Օրհնութիւն աստիճանաց. ՃԻԲ.

Առ քեզ տր̄ համբարձի զաչս իմ

որ բնակեալդ ես 'ի յերկինս։
Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ̃ն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։
Նոյնպէս են աչք մեր առ քեզ տ̃ր ա̃ծ մեր՝ մինչև ողորմեսցիս 'ի վ̃ր մեր
Ողորմեա́ մեզ տ̃ր՝ ողորմեա́ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք։
Առաւել առաւել լցան անձինք մեր նախատանօք որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։

## Երգ աստիճանաց։ ՃԻԳ

Եթէ ոչ տ̃ր էր առ մեզ ասասցէ իսէ̃լ, եթէ ոչ տ̃ր էր առ մեզ։
Ընդ յառնել մարդկան 'ի վ̃ր մեր, կենդանւոյն կամեցան կլանել զմեզ։
Ի բարկանալ սրտմտութ̃ե նոցա 'ի վերայ մեր, ապա և ջուրք ուրեմն ընկղմեցին զմեզ։
Ընդ ուղխս անցին անձինք մեր. անցին անձինք մեր ը̃ն ուղխս անդադարս
Օրհնեալ է տէր՝ որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նոցա։

Անձինք մեր ապրեցան որպէս ճնճ
ղուկք յորոգայթէ որսողաց։
Որոգայթք նոցա փշրեցան՝ եւ մեք
ապրեցաք։
Օգնութիւն է մեզ յանուանէ տեառն ·
որ արար զերկինս եւ զերկիր։

Երգ աստիճանաց։ ՃԻԴ.

Որ յուսայ ՚ի տէր որպէս լեառն սիոն ·
մի՛ սասանեսցի յաւիտեան
որ բնակեալն է յերուսաղէմ։
Լերինք շուրջ են զնովաւ · տէր
շուրջ է զժողովրդեամբ իւրով
յայսմհետէ մինչեւ յաւիտեան։
Ո՛չ թողու տէր զգաւազան մեղաւո
րաց ՚ի վիճակս արդարոց · եւ արդարք
մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց
յանօրէնութիւն։
Բարի արա տէր բարեաց · եւ այնո
ցիկ որք ուղիղ են սրտիւք։
Իսկ զթիւրեալսն ՚ի յափշտակու
թիւն , տարցի զնոսա տէր ընդ այնոսիկ՝
որք գործեն զանօրէնութիւն · խա
ղաղութիւն ՚ի վերայ իսրայէլի։

 Ի դառ

Օրհնութիւն երգ աստիճանաց։

ՃԻԵ

Ի դարձուցանել տեառն զգերութիւն սիոնի, և եղաք մեք մխիթարեալք։

Յայնժամ լցան բերանք մեր խնդութեամբ. և լեզուք մեր ցնծութեամբ։

Յայնժամ ասասցեն ի հեթանոսս՝ մեծ արար տէր զառնել իւր ընդ նոսա. մեծ արար տէր զառնել իւր ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք։

Դարձո տէր զգերութիւն մեր՝ որպէս զուղխս ի հարաւոյ. որք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն։

Երթային երթային՝ և լային. որք բառնային զսերմանիս իւրեանց։

Գալով եկեսցեն և ցնծասցեն. որոց առեալ բերցեն զորայս իւրեանց։

*Երգ աստիճանաց։ ՃԻԶ.

Եթէ ոչ տէր շինէ զտունն, ի նանիր վաստակեն շինողք նորա։

Եթէ ոչ տէր պահէ զքաղաքն,

ընդունայն տքնին պահապանք նր՟.
Ի նանիր է և ձեզ յառնելն կան-
խաւ. արդ՝ արի՛ք մինչև էք նստե
ցեալք. որք ուտէք զհաց ցաւոց.
Ի ժամանակի ոչ տացի քուն սիրե-
լեաց իւրոց. ժառանգութիւն տն՟
որդիք են. որոց վարձք իւր են.
այն է պտուղ որովայնի իւրոյ.
Որպ՟ նետք ՚ի ձեռս հզօրի, այնպէս
են և որդիքն թօթափելոց.
Երանի՛ որ էլից զցանկութի իւր ՚ի նո
ցանէ. մի ամաչեսցեն յորժամ խօսես
ցին թշնամիք նց՟ ընդ նս՟ առ դրանն.

※ Երգ աստիճանաց. ՃԻԷ.

Երանի ամենեցուն՝ որք երկնչին
՚ի տե՟նէ. և գնան ՚ի ճանապարհս նր՟.
Զվաստակս ձեռաց քոց կերիցես
երանի է քեզ և բարի եղիցի.
Կին քո որպ՟ այգի վայելուչ յանկիւնս
տան քո. որդիք քո որպ՟ նորատունկ
ձիթենեաց շուրջ զսեղանով քով.
Այսպ՟ օրհնեսցի մարդ որ երկնչի
՚ի տե՟նէ. օրհնեսցէ զքեզ տր՟ ՚ի սիօնէ.

Նա՛ ուսուցես դու զաւրութն եհէմի·
զճ̃մ ա՛ւուրս կենաց քոց։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց·
զխաղաղութի̃ ՚ի վերայ իսրայելի։

Երգ աստիճանաց։ ՃԻԸ

Բազում անգամ մարտեա̃ն ընդ իս ՚ի
մանկութ̃է իմմէ ասասցէ իս̃էլ·

Բազում անգամ մարտեան ը̃ իս ՚ի ման
կութ̃է իմմէ՝ և ինձ ո՛չ յաղթեցին։

Զթիկունս իմ հարին մեղաւո՛րք·
ընդ երկար արարին զանօրէնու
թիւնս իւրեանց։

Տ̃ր արդար է՝ և խորտակէ զուլն
մեղաւորաց։

Ամաչեսցեն և յետս դարձցին ա
մենեքեան ոյք ատեն զսիոն։

Եղիցին նոքա ո̃պ խոտ տանեաց· որ
մինչչև ՚ի բուռն եկեալ՝ չորացաւ։

Ուստի ո՛չ էլից զբուռն իւր հնձօղն
և ո՛չ զգիրկս որ զօրայն ժողովէր։

Ո՛չ ասացին ա̃մքեան ոյք անցանէին
առնոքօք՝ Թէ օրհնութի տ̃ն ը̃ ձեզ·
և օրհնեցաք զձեզ յանուն տ̃ն։

## Սաղմոս աստիճանաց։ ՃԻԹ.

Ի խորոց կարդացի առ քեզ տ՟ր տ՟ր՝ լո՛ւր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։
Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո զի ի քէն է քաւութիւն։
Վասն անուան քո համբերի տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի տէր։
Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ. ի պահէ առաւօտու յուսացաւ իսրայէլ ի տէր։
Ի տ՟նէ է ողորմութ՟ի բազում. ի նմանէ է փրկութ՟ի եւ նա փրկեաց զիսրայէլ յա՟մ նեղութ՟եց նո՟ր։

## Սաղմոս աստիճանաց։ ՃԼ.

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ. եւ ոչ ղբօսան աչք իմ։
Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս. եւ ոչ ընդ այնոսիկ որ֊ք սքանչելի եղեն քան զիս։

Բայց թէ խոնարհեցայ ես որպէս մա-
նուկ սարտուցեալ ՚ի ստենէ մօր
իւրոյ. և դարձնոր անդրէն ՚ի նոյն։
Այլ թէ հպարտացուցի արդեօք
զանձն իմ, այսպէս եղիցի հատուցումն
անձին իմոյ. յուսասցէ Իսրայէլ ՚ի
Տէր՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Օրհնութիւն երգ աստիճանաց։

## ՃԼԱ

Յիշեա՛ Տէր զԴաւիթ. և զամենայն
հեզութիւն նորա։
Որպէս երդուաւ Տեառն, և
ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ։
Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ.
թէ ելից յանկողինս մահճաց իմոց։
Թէ տաց քուն աչաց իմոց. կամ
նինջ արտևանաց իմոց. կամ հան-
գիստ իրանաց իմոց. մինչև գտից
զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ։
Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ.
և գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց։
Մտցուք ՚ի յարկս նորա. երկիրպագցուք
՚ի

ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նր։
Արի՛ տր ի հանգիստ քո . դու և
տապանակ կտակի սրբութե քո։
Քահանայք քո զգեցցին զարդա-
րութի. և սրբք քո ցնծալով ցնծասցեն։
Վասն դաւթի ծառայի քո՝ մի՛ դարձու-
ցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։
Երդուաւ տր դաւթի ճշմարտութբ
և ոչ ստեսցէ նմա . ի պտղոյ որովայնի
նորա նստուցանել յաթոռ նր։
Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս
իմ, և զվկայութիւնս իմ զոր ու-
սուցից նոցա։
Որդիք նոցա նստցին յաւիտեանս
յաւիտենից յաթոռ քո։
Հաճեցաւ տր ընդ սիոն . և ընտրեաց
բնակել ի նմա. ասէ՝ այս է հանգիստ
իմ յաւիտեանս յաւիտենից . ի սմա
բնակեցայց զի հաճեցայ ընդ սմա։
Զայրիս սորա օրհնելով օրհնեցից
և զաղքատս սորա լցուցից հացիւ.
Երիցանց սր զգեցուցից փրկութի.
և սրբք սորա ցնծալով ցնծասցեն։


Անդ

Անդ ծագեցից եղջիւր 'ի դաւիթ պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։ Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ. այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Օրհնութիւն չուսոյ։ ՃԼԲ

Օի՛ բարի կամ զի՛ վայելուչ. զի բնակեն եղբարք իմիասին։

Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մօրուսն ահարոնի. և 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեստու նորա։

Որպէս ցօղ զի ցօղէ 'ի հերմոնէ 'ի վերայ լերին սիօնի։

Զի անդ պատրաստեաց զօրհնութիւն և զկեանսն յաւիտենից։

Օրհնութիւն երգ չուսոյ։ ՃԼԳ

Ահա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր. ո՛ կայք 'ի տուն Տեառն 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն. և օրհնեցէք զՏէր։

Օրհնեսցէ զքեզ տէր 'ի սիօնէ. որ արար զերկինս և զերկիր։



Օրհ

Օրհնութին չուայ։ ՃԼԴ.

Օրհնեցէք զանուն տն· օրհնեցէք
ծառայք տն զտր · որ կայք ՚ի տուն
տեառն ՚ի գաւիթս այ մերոյ·
Օրհնեցէք զտր՝ զի բարի է·սաղմոս
ասացէք անուան նր զի քաղցր է։
Զի զյակոբ ընտրեաց իւր տէր · և
զիսրայէլ ժառանգութի իւր·
Ես ծանեայ՝ զի մեծ է տէր · և
տէր մեծ է քան զամ կուռս։
Զամ զոր ինչ կամեցաւ և արար
տէր ·յերկինս և յերկրի ·՚ի ծով
և յամ խորս։
Հանէ զամպս ՚ի ծագաց երկրի· զփայ
լատակունս իւր յանձրեւս արար · և
հանէ զհողմ ՚ի շտեմարանաց իւրոց։
Եհար զամ անդրանիկս եգիպտա_
ցւոց ·՚ի մարդոյ մինչև յանասուն։
Առաքեաց զնշանս և զարուեստս
իւր ՚ի մէջ քո եգիպտոս ·՚ի փարա
ւոն և յամ զօրս իւր·
Եհար զազգս բազումս · և սպան
զթագաւորս հզօրս։

 Զսեհ

Զսեհոն թագաւոր Ամովրհացւոց՝ զՈվգ թագաւոր Բասանու, և զամենայն թագաւորութիւնս քանանացւոց։

Ետ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն. ժառանգութիւն Իսրայէլի ժողովրդեան իւրոյ։

Տէր անուն քո յաւիտեան. տէր՝ յիշատակ քո յազգէ մինչև յազգ։

Դատէ տէր զժողովուրդս իւր. և՚ի ծառայս իւր մխիթարի։

Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են ձեռագործ են որդւոց մարդկան։

Բերան գոյ՝ և ոչ խօսին. աչք են՝ և ոչ տեսանեն։

Ականջք են՝ և ոչ լսեն. և ոչ գոյ շունչ ՚ի բերանս նոցա։

Նման նոցա եղիցին որք արարին զնոսա՝ ամենեքին որք յուսացեալ են ՚ի նոսա։

Տունն իսրայէլի օրհնեցէք զտէր. տունն ահարոնի օրհնեցէք զտէր։

Տունն ղևեայ օրհնեցէք զտէր. երկիւղածք տեառն օրհնեցէք զտէր։

Օրհնեալ տէր ՚ի սիօնէ. որ բնակեալն է յերուսաղէմ։

## Ալէլուիա․ ՃԼԵ

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է․ զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Խոստովան եղերուք Այն աստուծոց․ զի յա՛։

Խոստովան եղերուք Տն տերանց․ զի՛։

Արար սքանչելիս մեծամեծս միայն․ զի յաւի՛։

Զերկինս արար իմաստութեամբ իւրով․ զի յաւի՛։

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց․ զի յաւիտեան է ող՛։

Արար զլուսաւորս մեծամեծս․ զի՛։

Զարեգակն արար իշխանական ընդ տուընջեան․ զի յա՛։

Զլուսին և զաստեղս իշխանական գիշերոյ․ զի յա՛։

Որ հար զերկիրն եգիպտացւոց անդրանկօք իւրովք հանդերձ․ զի՛։

Որ եհան զիսրայէլ ՚ի միջոյ նորա․ զի՛։

Ի ձեռն բարձր և բազուկ հզօր․ զի՛։

 Որհերձ

Եհերձ զծովն մեծ՝ և բաժանեաց
յերկուս մասունս. զի յաւ՛՛.
Եւ անցոյց զԻէլ ընդ մէջ նր. զի՛՛.
Ընկղմեաց զփարաւոն և զզօրս իւր
՚ի ծով կարմիր. զի յաւ՛՛.
Եւ եհան զժողովուրդ իւր յանա
պատ. զի յա՛՛.
Եհար զազգս մեծամեծս. զի յա՛՛.
Եւ սպան զթագաւորս հզօրս. զի՛՛.
Զսեհոն թագաւոր ամուրհացւոց
զի յաւիտեան՛՛.
Զովգ թագաւոր բասանու. զի՛՛.
Եւ ետ զերկիր նց ՚ի ժառանգութի. զի՛՛.
Ժառանգութիւն իսրայէլի ծա_
ռայի իւրոյ. զի յա՛՛.
Յիշեաց զմեզ տէր ՚ի խոնարհութե
մերում. զի յաւէ՛՛.
Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնա
մեաց մերոց. զի յաւէ՛՛.
Որ տայ կերակուր ամենայն կեն_
դանեաց. զի յաւէ՛՛.
Խոստովա՛ն եղերուք այն երկնա_
ւորի. զի յաւէ՛՛.

Սաղմոս Դաւթի. 'ի ձեռն Երեմիայի անգիր ըստ յեբրայեցւոց։ ՃԼԶ.

Առ գետս բաբելացւոց՝ անդ նըս-
տէաք և լայաք. որժ̃ յիշեցաք մեք
անդ զսիոն։

Ի մէջ ուռենեաց նոցա կախեցաք զը-
կտակարանս մեր։

Զանդ հարցանէին գերիչք մեր զը-
բանս օրհնութեան. գերեվարք մեր
սոխպէին զմեզ և ասէին։

Օրհնեցէք մեզ յօրհնութենէն սիօ-
նի. իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհ-
նութիւնս տ̃ն յերկիր օտար։

Թէ մոռացայց զքեզ երուսաղէմ
մոռասցի զիս աջ իմ։

Կցեսցի լեզու իմ 'ի քիմս իմ թէ
ո՛չ յիշեցից զքեզ. թէ ո՛չ նախ նը-
ւագեցից զքեզ եդէմ, սկիզբն ու-
րախութեան իմոյ։

Յիշեա տէր զորդիսն եդովմայ
յաւուրսն երուսաղէմի։

Որք ասէին՝ քակեցէք քակեցէք.
մինչև 'ի հիմն հասուցէք։

Դուստր բաբելացւոց Թշուառա-
կան . երանի՛ որ հատոյց զհատու-
ցումն քո՝ զոր դու մեզ հատուցեր։
Երանի որ կալցէ զմանկունս քո՝
եւ եհար զքարի։

## Սաղմոս Դաւթի. ՃԼԷ.

Խոստովան եղէց քեզ տ՟ր բոլորով
սրտիւ իմով . առաջի հրեշտակաց
սաղմոս ասացից քեզ։

Զի լուար զբանս բերանոյ իմոյ .
երկիր պագից ՚ի տաճար ս՟բ քո . եւ
խոստովան եղէց անուան քում,
վ՟ն ողորմութե՟ եւ ճշմարտութե՟ քո։
Մեծ արարեր յամի՟ զանուն ս՟բ քո
յորում աւուր կարդամ առ քեզ,
վաղվաղակի լուր ինձ . եւ բազում
արասցես զօրութ՟իս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ տ՟մ
Թագաւորք երկրի . զի լուան ըզ
բանս բերանոյ քոյ . եւ օրհնեսցեն
զճանապարհս քո։

Մեծ են փառք տ՟ն . բարձր է տ՟ր .
ըզ խոնարհս տեսանէ , եւ զբար-

ճոխս ՚ի հեռաստանէ ճանաչէ։
Թէ գնացից ես ՚ի մէջ նեղութեանց,
կեցուցես զիս ՚ի բարկութենէ
թշնամւոյն։
Զգեցեր զձեռն քո՝ եւ փրկեաց զիս
աջ քո. եւ Տէր հատուսցէ ընդ իմ։
Տէր ողորմութիւն քո յաւիտեան.
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

՚Ի կատարած Սաղմոս Դաւթի։

## ՃԼԸ

Տէր փորձեցեր զիս եւ ծանեար
զիս. դու ծանեար զնստել
իմ եւ զյառնել իմ։
՚Ի միտ առեր զխորհուրդս իմ ՚ի
հեռաստանէ. զշաւիղս իմ եւ զվիճակս
իմ դու քններեր. եւ զամ
ճանապարհս իմ յառաջագոյն տե-
սեր. եւ ոչ գոյ նենգութիւն ՚ի
լեզուի իմում։
Ահա դու Տէր՝ ծանեար զյետինս
իմ եւ զառաջինս իմ. դու ստեղծեր
զիս. եւ եդեր զձեռն քո ՚ի վերայ իմ։

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն.
զօրացաւ և ոչ հանդարտեմ նմա։
Ո՞ւր երթայց ես յոգւոյ քումմէ.
կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։
Թէ ելանեմ յերկինս, դու անդ
ես. և թէ իջանեմ ՚ի դժոխս, և
անդ մօտ ես։
Թէ առնից զթևս իմ ը̄ առաւօտս
և բնակեցայց յեզերս ծովու,
Սակայն և անդ ձեռն քո առաջնոր
դեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս։
Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք
ծածկեաց զիս. կամ գիշեր փոխա
նակ լուսոյ փափկութեան իմոյ։
Խաւարն ՚ի քեզ ոչ խաւարեսցի.
և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղի
ցի. և խաւար նորա որպէս լոյս նորա։
Դու ստացար զերիկամունս իմ. և
ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ.
Խոստովան եղէց քեզ տէր՝ զի ահեղ
և սքանչելի ես. սքանչելի են գործք
քո. և անձն իմ սիրեաց յոյժ։
Ո՛չ թաքեաւ ոսկր իմ ՚ի քէն՝ զոր

 արա

տարարեր 'ի ծածուկ. և կար զօ-
րութիւն իմոյ ընդ ստորինս երկրի։
Զանգործս իմ տեսին աչք քո. և
'ի գիրս քո ամենեքեան գրեցան։
Ի տուէ մոլորեցան. և ոչ ոք էր որ
առաջնորդէր նոցա։
Ինձ յոյժ մեծարոս եղեն բարեկամք
քո ա҃ծ. և յոյժ զօրացան իշխանք ն҃ց։
Թուեցից զն҃ս և քան զաւազ բազմա-
ցան. զարթեայ՝ և արդ ընդ քեզ եմ։
Թէ սպանանես զմեղաւորս ա҃ծ,
արք արեան 'ի բաց եղերուք յինէն։
Ի հակառակութիւն և 'ի նախանձ
առցեն 'ի նանիր զքաղաքս քո։
Զատելիս քո տ҃ր ատեցի. և 'ի վ҃ր
թշնամեաց քոց մաշեցայ։
Յատելութիւն կատարեալ ատեցի
զն҃ս. և եղեն ինձ թշնամիք։
Փորձեա զիս աստուած՝ և ծանիր
զսիրտ իմ. քննեա զիս՝ և ծանիր
զշաւիղս իմ. և տես թէ իցեն անօ-
րէնութիւնք 'ի ճանապարհս իմ. և առաջ-
նորդեա ինձ 'ի ճանապարհս քո յաւիտենից։

Ապրեցո զիս տր ՚ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Խորհեցան զանօրէնութի ՚ի սիրտս իւրեանց. զօր ամ պատրաստեցան ՚ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց ոպ զօձի. և Թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանցն ոց։

Պահեա զիս տր ՚ի ձեռաց մեղաւորի. և ՚ի մարդոյ չարէ փրկեա զիս։

Խորհեցան խափանել զգնացս իմ. Թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայթակղութիւն։

Ասացի՝ տէր ած իմ ես դու. ունկնդիր լեր տր ձայնի աղօթից իմոց.

Տր տր զօրութի փրկութե իմոյ. հովանի լեր գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս տր ՚ի ցանկութե մեղաւորաց ոյք խորհեցան վս իմ. մի՛ ընդվայր հարկաներ զիս

Զի մի՛ երբէք բարձրասցին. և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան կատարածի նց՝ վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնս.
Արկցես ՚ի վերայ նց զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնս. ՚ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ.
Մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեսցի ՚ի վր երկրի. զայր մեղաւոր՝ չարիք իւր որսասցեն ՚ի կորուստ.
Ծանեայ՝ զի առնէ տր զդատաստան աղքատի, և իրաւունս տնանկի.
Արդարք գոհասցեն զանուանէ քումմէ. և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց։

## Սաղմոս Դաւթի. ՃԽ

Տր՝ կարդացի առ քեզ և լո՛ւր ինձ նայեաց ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում առ քեզ։
Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի.
Դի՛ր տր՝ պահապան բերանոյ իմոյ



և

դուռն ամուր շրթանց իմոց. զի մի
խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան
ի պատճառել զպատճառս մեղաց ընդ
մարդս որ գործեն զանօրէնութիւն.
և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա։
Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ
և յանդիմանեսցէ. իւղ մեղա-
ւորի մի օծցէ զգլուխ իմ. այլ
աղօթք իմ ՚ի կամս նոցա։
Սուրդելան մերձ առ վիմին դատա-
ւորք նոցա. լուիցեն բանից իմոց
և քաղցրասցին։
Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի
սփռեալ է ՚ի վերայ երկրի. ցրուեսցին
ոսկերք նոցա մերձ ՚ի դժոխս։
Առ քեզ տէր տէր են աչք իմ ՚ի քեզ
յուսացայ. տէր՝ մի հաներ զոգի
յինէն։
Պահեա զիս յորոգայթէ որ թա-
քուցին ինձ ՚ի գայթագղութենէ
գործողաց զանօրէնութիւն։
Անկցին ՚ի ցանցս նոցա մեղաւորք.
միայն եմ ես մինչև անցից։

Խոստովանութի Պաւղոսի Մաշին ՚ի ժամանակի
զի էր նա յայսի տեղւ. (ՃԽԱ)

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի.
ձայնիւ իմով զՏէր աղաչեցի.
Սփռեցից առաջի նորա զաղօթս իմ. և
զնեղութիւն իմ առաջի նորա պատմեցից.
Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ դու
Տէր ծանեար զշաւիղս իմ. ՚ի ճանա
պարհ յոր և գնայի, թաքուցին
ինձ որոգայթ.
Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք
ճանաչէր զիս. կորեաւ յինէն փա
խուստ իմ. և ոչ գտաւ խնդրող
անձին իմոյ.
Աղաղակեցի առ քեզ Տէր և ասացի.
դու ես յոյս և բաժին իմ յերկ
րին կենդանեաց։
Նայեաց Տէր յաղօթս իմ, զի ես խո
նարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ՚ի հա
լածչաց իմոց՝ զի հզօրք եղեն քան զիս
Տէր՝ հան ՚ի բանտէ զանձն իմ. գո
հանալ զանուանէ քումմէ.
Զիս քեզ սպասեն արդարքն մինչև
հատուսցես

Սաղմոս Դաւթի. 'ի ժամանակի յոր հալածէր զնա Աբիսողոմ: ՃԽԲ

Տ' լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութբ քով:

Լուր ինձ արդարութբ քով. եւ մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ նստոյց զիս 'ի խաւարի որպս մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ. եւ սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ. եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տր. զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո

յինէն . նըմանեցիմ այնոցիկ որ.ք
իջանեն ՚ի գուբ.

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողոր
մութիւն քո. զի ես ՚ի քեզ տ̃ր յուսացայ.
Ցոյց ինձ ճանա̃պրհ՝ յոր և գնացից .
զի առ քեզ տ̃ր համբարձի զանձն իմ.
Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց տ̃ր .
զի զքեզ ապաւէն ինձ արարի.
Ուսո՛ ինձ առնել զկամս քո , զի
դու ես ա̃ծ իմ.
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ՛
ինձ ՚ի յերկիր ուղիղ.
Վ̃ն անուա՛ն քո տէր կեցուսցես
զիս . արդարութեամբ քով հանցես
՚ի նեղութենէ զանձն իմ.
Ողորմութեամբ քով սատակեա՛ ա̃ծ
զթշնամիս իմ . և կորո՛ զա̃մ նեղիչս
անձին իմոյ . զի ես ծառայ քո եմ.

## Սաղմոս Դաւ՛թի առ գողիաթ. ՃԽԳ.

Օրհնեալ տէր ա̃ծ իմ որ ուսոյց
զձեռս իմ ՚ի պատերազմ . և ըզ
մատունս իմ ՚ի ճակատամարտ.

 Ողոր

Ողորմութիւն իմ եւ ապաւէն իմ. օգնական իմ եւ փրկիչ իմ. ապաւէն իմ եւ ես յուսամ 'ի նա. ո́ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։
Տէր՝ ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար դմա. կամ որդի մարդոյ՝ թէ համարիս ինչ զնա։
Մարդ նանրոց նմանեցաւ. եւ աւուրք նորա ոպ̃ հովանի անցին։
Տէր՝ խոնարհեցո́ զերկինս եւ էջ. մերձեա́ 'ի լերինս եւ ծխեսցին։
Փայլեա́ զփայլատակունս քո եւ խռովեա́ զնոսա. առաքեա́ զնետս քո եւ ցրուեա́ զնոսա։
Առաքեա́ զձեռն քո 'ի բարձանց՝ եւ փրկեա́ զիս 'ի ջրոց բազմաց. եւ 'ի ձեռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք խօսեցան զնանրութի̃. եւ աջ նց̃ աջ է մեղաց։
Ա̃ծ՝ յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ. տասնաղեան սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ։
Որ տաս զփրկութի̃ թագաւորաց



մե

մերոց. որ փրկելոց իցէ զդաւիթ
ծառայ իւր 'ի սրոյ չարէ։
Փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս 'ի ձեռ-
ռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք իւրեանց խօսեցան
զնանրութի. և աջ նոցա աջ է մեղաց։
Որոց ուստերք իւրեանց որպէս նորա-
տունկ հաստատուն են 'ի մանկութեան
իւրեանց. դստերք նոցա զարդարեալ
և պաճուճեալ 'ի նմանութիւն տաճարի։
Շտեմարանք նոցա լի՛ են և բղխեն
'ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք
են՝ և բազմանան 'ի գնացս իւրեանց.
և անդեայք նոցա պարարտք են։
Ո՛չ գոյ խրամատութիւն ցանկոյ նոցա.
և ո՛չ աղաղակ 'ի հրապարակս նոցա.
Երանեցին ժողովրդեանն՝ որոյ
այս այսպէս է. նա երանելի ժողովուր-
դեան, որոյ տր ած է նոցա.

Սաղմոս օրհնութեան Դաւթի. (Ճխդ)

Բարձր առնեմ զքեզ ած իմ և
թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո
և

յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։
Զօրհանապազ օրհնեցից զքեզ․
և գովեցից զանուն քո յաւիտեան
և յաւիտեանս յաւիտենից։
Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ․ և
մեծութեան նորա ոչ գոյ չափ։
Ազգ և ազգ գովեսցեն զգործս
քո․ և զզօրութիւնս քո պատմեսցեն։
Զմեծ վայելչութիւն փառաց սրբու-
թեան քո խօսեսցին․ և զսքան
չելիս քո պատմեսցեն։
Զզօրութիւն ահի քո ասասցեն․
և զմեծութիւն քո պատմեսցեն։
Զյիշատակ բազում քաղցրութեան
քո բղխեսցեն․ և արդարութեամբ
քով ցնծասցեն։
Գթած ողորմած է Տէր․ երկայնա-
միտ և բազում ողորմ։
Քաղցր է Տէր առ ամենայն․ և գթութիւն
նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց։
Խոստովան եղիցին առ քեզ Տէր
ամենայն գործք քո․ և սուրբք քո
օրհնեսցեն զքեզ։

Զփառս արքայութեան քո ասասցեն ·
և զզօրութիւնս քո պատմեսցեն ։
Ցուցանել որդւոց մարդկան զզօ-
րութիւնս քո · և զփառս մեծ վայել-
չութեան արքայութեան քո
Արքայութիւն քո՝ արքայութիւն
ամենայն յաւիտենից · և տէրութիւն քո
յազգէ մինչև յազգ ։
Հաւատարիմ է տէր յամենայն բանս իւր ·
և արդար է յամենայն գործս իւր ։
Հաստատէ տէր զամենայն գայթակղեալս
և կանգնէ զամենայն գլորեալս ։
Աչք ամենեցուն ի քեզ յուսան ·
և դու տաս զկերակուր նոցա ի ժամու
Բանաս զձեռն քո՝ և լցուցանես
զամենայն քաղցրութեամբ կամօք քովք ։
Արդար է տէր յամենայն ճանապարհս
իւր · և սուրբ է յամենայն գործս իւր ։
Մերձ է տէր առ ամենեսեան որք
կարդան առ նա · առ ամենեսեան՝
որք կարդան առ նա ճշմարտութեամբ ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր · աղօթից նոցա լուէ և կեցուցանէ զնոսա ։

Պահէ տր զամնն ոյք սիրեն զնա ·
և զամ մեղաւորս սատակէ տր ։
Զօրհնութիս տն խօսեսցի բերան
իմ · օրհնեսցէ ամ կենդանի զանուն
սբ նր · յաւտն և յաւտնս յւտնից ։

Միաշաբաթոյ · Միջինքերոյ և Զատկերոյ ։

## ՃԲ

Օրհնեա՛ անձն իմ զտր ·
օրհնեցից զտր 'ի կեանս
իմ · սաղմոս ասացից այ
իմոյ մինչև եմ ես ։
Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդ-
կան · զի ո՛չ գոյ փրկութի 'ի նոա
Ելցէ հոգի 'ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն 'ի հող · և յայնմ աւուր
կորիցեն ամ խորհուրդք նոցա ։
Երանի ազգի՝ որոյ տէր այ յակո
բայ օգնական է նմա · և յոյս նորա
'ի տր այ է ։
Որ արար զերկինս և զերկիր · ըզ
ծով՝ և զամ որ 'ի նոսա ։
Որ պահէ զճշմարտութի յաւիտեան

և

և առնէ իրաւունս զրկելոց:
Տայ հաց քաղցելոց. և արձակէ ըզ
կապեալս տ՟ր:
Տէր բանայ զաչս կուրաց. և կանգ-
նէ զգլորեալս տէր:
Տէր սիրէ զարդարս. տէր պահէ
զպանդուխտս. զորբս և զայրիս
ընդունի տ՟ր. և զճանապարհս ան՟
բարշտաց կորուսանէ:
Թագաւորեսցէ տ՟ր յաւիտեան.
ա՟ծ քո Սիոն յազգէ մինչև յազգ:
Ալէլու-իայ. Անգեայ և Զա՛: (Ճխզ)
Օրհնեցէք զտ՟ր՝ զի բարի է. սաղմոս
ա՟յ մերում քաղցր եղիցի օրհնութի՟:
Շինէ զԵրուսաղէմ տէր. և ըզ
ցրուեալսն Իսրայէլի ժողովէ:
Բժշկէ զբեկեալ սրտիւ. և պատէ
զա՟մ վէրս նոցա:
Որ թուէ զբազմութի՟ աստեղաց. և
զա՟մն զն՟ս յանուանէ կոչէ:
Մեծ է տ՟ր մեր. և մեծ է զօրութի՟
նորա. իմաստութե՟ն նր՟ ոչ գոյ բաւ:
Ընդունի զհեզս տ՟ր. և խոնարհ
առնէ

առնէ զամբրշտ՟ս մինչև յերկիր ։
Օրհնեցէք զա՟ծ խոստովանութ՟բ ․
սաղմոս ասացէք նմա օրհնութ՟բ ։
Որ զգեցոյց զերկինս ամպովք ․ և
պտրաստ արար զանձրև իւր յերկիր ։
Բուսոյց զխոտ ՚ի լերինս ․ և զդալա
րի ՚ի ծառայութիւն մարդկան ։
Որ տայ անասնոց կերակուր ․ ձագուց
ագռաւուց որք կարդան առ նա ։
Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կա
մեցաւ տ՟ր , և ո՛չ ընդ երանս առն
հսկայի հաճեցաւ ։
Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւ
ղածս իւր ․ և ընդ այնոսիկ՝ որք
յուսան յողորմութ՟ն նորա ։

※ Ալէլուիա ․ անգեայ և զա՟″ ։ (Ճխէ)

Գովեա երուսաղէմ զտ՟ր ․
Այլ օրհնեա զա՟ծ քո սիօն ։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց
և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ ․
Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութ՟ն ․
պարարտութ՟բ ցորենոյ լցոյց զքեզ ։

Առաքէ զբան իւր յերկիր․ վաղ
վաղ ընթանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր․ և զմէգ որպէս
փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս․
առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա․
շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ․ զար
դարութիւն և զիրաւունս իւր իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամենայն ազգաց որ․
և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

## Աղօթք Ամբակումայ Մարգարէին։

Տէր զլուր քո լուայ և երկեայ․ տէր նայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ։

Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու․ 'ի մերձենալ ամացն յայտնեսցիս․ և'ի հասանել ժամանակին երևեսցիս

Ի խռովել անձին իմոյ՝ 'ի ժամանակի բարկութեան զողորմութիւն յիշեսցես։

Ա՟ծ ՚ի հարաւոյ եկեսցէ. և սրբն ՚ի փառան լեռնէ։

Ծածկեսցեն երկինք զվայելչութի փառաց նորա. և օրհնութեամբ նորա լցան տիեզերք։

Լ՚ուսագայթք ոպ ՚ի լուսոյ հատան ՚ի նմանէ. և եղջիւրք ՚ի ձեռաւքն նր գտան. և անդ հաստատեցաւ զօրութիւն փառաց նորա։

Յերեսաց նր ելցեն հարուածք. և զհետ շաւղաց նորա՝ երթիցեն մեծամեծք ՚ի Թաղնոց։

Եկաց և չափեաց զերկիր. հայեցաւ և դիտեաց զհեթանոսս։

Լերինք հալեսցին՝ և անտառք վատնեսցին. ճանապարհք որք ՚ի սկզբանէն էին՝ կուրասցին. և ՚ի նմանէ դողասցի ամ երկիր։

Տեսի զբանակս քուշացւոց. խռովեսցին բնակիչք վրանացն մադիամու։

Միթէ ի վր գետոց բարկացցիս դու տր. կամ սրտմտութի քո ՚ի վր գետոց. կամ բարկութի քո ՚ի վր ծովու։



Ելեր

Ելեր դու 'ի կառս քո. հեծելութիւնդ
քո՝ փրկութիւն եղև յելանելն քո։
Զարթեաւ աղեղն քո 'ի նետոս կա-
պարձից քոց. արբուցեր զգետս,
ցրուեցեր զերկիր, և դողացուցեր
'ի սաստկութենէ անձրևի որք ան-
ցանեն ընդ սա։
Անդունդք աղաղակեցին մեծաձայն.
լոյս փայլման արփիականն արգելաւ.
և ծագումն լուսնին դադարեցաւ։
Ընդ 'ի նշոյլս սլաքաց քոց գնասցես.
և ընդ 'ի լոյս փայլատակման սրոյ քոյ։
Բարկութեամբ զարթիցես 'ի վերայ երկրի.
և դողութեամբ կասցես զհեթանոսս։
Երևեցար 'ի փրկութիւն ժողովրդեան
քո՝ 'ի փրկել զընտրեալս քո։
Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդ-
կան ամբարտաւանից. մինչև յան-
դունդս ծովու ընկղմեցան։
Խնդրեցեր զվրէժ զօրութեամբ քով 'ի
զօրագլխացն մեղաւորաց՝ որք յու-
սացեալ էին յանդգնութիւն իւրեանց.
զի կերին զաղքատն 'ի գաղտնիս։



Աս

Արշաքեցեր 'ի վերայ ծովու զերի
վարս քո. և խռովեցան յաղթ ջուրք
անդնդոց։

Կացի ես՝ և դողացան աղիք իմ 'ի ձայնէ
բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոս
կերս իմ. և ես յանձն իմ խռովեցայ։

Ո՞չ այս պահեսցես յաւուր նեղու
թեան. ածել 'ի վր̃ ազգի ա̃մի որք
մարտնչէին ընդ ժողովրդեան քում։

Թզենին ոչ տացէ զպտուղ իւր.
և յայգւոջ՝ բեր մի՛ գտցի. ձիթե
նիք սնասցին. և երկիր մի՛ բու
սուսցէ զդալարի։

Պակասեսցին հօտք 'ի ճարակաց. և
եզինք մի՛ գտցին առ մսուրս։

Ես 'ի տր̃ յուսացայ. ցնծացայց և
ուրախ եղէց յա̃ծ փրկիչ իմ։

Տէր տր̃ ես իմ զօրութիւն. և կա
ցուսց զոտս իմ 'ի հաստատութե̃. 'ի
վր̃ պարանոցի թշնամեացն կացուսց
զիս. և հանգուսց զիս երագ երագ։

---

* Թ-ն Կանոնաց՝ 56 Գաւազանք է։
150 Փոխք է։ և 2460 Տունք է։

* Այս Սաղմոս ինքնագիր դաւթի է՝ արտաքոյ թուոյ ՚ի ժամանակին զի ել նա նահատակ ընդդէմ Գողիաթու ատաղէի սաստանաղոյ և յ՛րգոյն իւրոյէլի.

Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր ՚ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ։

Ձեռք իմ արարին զսաղմոսարան. և մատունք իմ կազմեցին զքնար օրհնութեան.

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տեառն իմում. ինքնին տր ածի լուիցէ զամ։

Նա՛ առաքեաց տր զհրեշտակ իւր և համբարձ զիս ՚ի հօտէ խաշանց հօր իմոյ. և եօծ զիս յօծումն իւղոյ իւրոյ.

Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք՝ և ոչ հաճեցաւ ընդ նոսա տր։

Ելի ես ընդդեմ այլազգոյն՝ և նզովեցի զկուռս նր. հանի զսուսերն ՚ի նմանէ՝ և հատի զգլուխ նորին. և բարձի զնախատինս յորդոցն իէլի։

Փառք հօր և որ"։



Լուր

Մաղթանք:

Լուր մեզ տր՝ լուր մեզ · ածային ողորմութբ եւ գթութբդ քո խնայեա յարարածս քո: Մարդասէր տր՝՝:

## Օրհնութի Երից Մանկանցն

Օրհնեալ ես տր ած հարցն մերոց · օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան:

Յիրաւունս անցուցեր զայս ամ ընդ մեզ · արդար ես դու տէր, եւ ամ գործք քո ճշմարիտ են:

Ճանապարհք քո ուղիղ են · եւ ամ դատաստանք քո արդար են:

Դատաստան արդարութե ածեր ի վը մեր ըստ ամի · զոր ինչ ածեր ի վը մեր՝ եւ քաղաքի սբյ հարցն մերոց երղէմի:

Արդարութբ եւ յիրաւի ածեր զայս ամ՛ի վը մեր վս մեղաց մերոց:

Անօրինեցաք՝ յանցեաք ապստամբ ելեալ՛ի քէն · մեղաք յամի · եւ պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք:

Ո՛չ պահեցաք և ո՛չ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ. զի զբարիս գտցուք մեք 'ի քէն։

Ա՛րդ՝ զա՟մ զոր արարեր և զոր ինչ ածեր 'ի վ՟ր մեր, արդար դատաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խըստաց՝ և ապստամբողաց։

Ի ձեռս թգ՟ւորի՝ անօրինի և չարի քան զա՟մ երկիր մատնեցեր զմեզ։

Եւ՛ արդ՝ ո՛չ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վ՟ն անուան քո. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութի՟ս քո 'ի մէնջ։

Վ՟ն աբրահամու սիրելոյ քո. իսահակայ ծառայի քո. և ի՟էլի ս՟բյ քո։

Խօսեցար ն՟ց և ասացեր. բազմացուցից զզաւակ ձեր ո՟պ զաստեղս երկնից բազմութ՟բ, և ո՟պ զաւազ առ եզր ծովու։

 Եւ՛

Եւ՛ արդ Տր՝ նուաղեցաք մեք քան
զամ ազգս. եւ եմք տառապեալք յամ
երկրի այսօր վս մեղաց մերոց։
Ո՛չ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշ
խան . մարգարէ եւ առաջնորդ .
ո՛չ ողջակէզք պատարագաց . եւ ո՛չ
խունկ օրինաց . եւ ո՛չ տեղի պատա‿
րագս մատուցանել առաջի քո եւ
զողորմութի գտանել ՚ի քէն։
Այլ անձամբ խոնարհեալ՝ եւ հո‿
գւով տառապանաց՝ ընդունելի լի
ցուք մեք որպէս զողջակէզս խոյոց
եւ զզուարակաց . եւ որպ բիւրաւորս
գառանց պարարտաց։
Այնպէս ընդունելի լիցին պատա
րագք մեր այսօր առաջի քո . զի կա
տարեալ գտցուք զկնի քո . եւ չիք
ամօթ յուսացելոցս ՚ի քեզ։
Եւ՛ արդ՝ գամք զհետ քո ամենայն
սրտիւք մերովք . երկնչիմք ՚ի քէն՝
եւ խնդրեմք զերեսս քո . Տր՝ մի՛ յա
մօթ առներ զմեզ։
Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութե

 քում

քում, և ըստ բազում ողորմութեն
քում. փրկեա՛ զմեզ վասն սքան_
չելեաց քոց տր, և փառաւորեսցի
անուն քո յաւիտեան.

Յամօթ լիցին ամենեքեան՝ որք չար
չարեն զծառայս քո. ամաչեսցեալ
լիցին բռնութիւնք նց. և ամենայն
զօրութիւնք նց խորտակեսցին.

Եւ ծանիցեն զի դու ես տր ած
միայն՝ որ փառաւորեալդ ես ՚ի
վերայ ամ տիեզերաց.

Օրհնեալ ես դու տր ած հարցն
մերոց. գովեալ և առաւել
բարձրացեալ անուն քո յաւիտեան.

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց
քոց. գովեալ և առաւ՛՛.

Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց
սրբութեն քո. գովեալ և՛՛.

Օրհնեալ ես ՚ի վերայ աթոռոյ ար
քայութեն քո. գովեալ և՛՛.

Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովբէս՝
և հայիս յանդունդս. գով՛՛.

Օրհնեալ ես ՚ի մէջ հաստատութեն
երկնից. գով՛՛.

 Օրհ

Օրհնեցէք ամ գործք տն զտր․
օրհնեցէք և բարձր արարէք
զնա յաւիտեանս։
Օրհնեցէք երկինք զտր․ օրհ՛։
Օրհնեցէք հրեշտակք տն՝ և ջուրք
որ՚ի վերոյ երկնից զտր․ օրհ՛։
Օրհնեցէք զօրութիւնք տն՝ արե
գակն և լուսին զտր․ օրհ՛։
Օրհնեցէք աստեղք երկնից՝ անձ
րևք և ցօղք զտր․ օրհ՛։
Օրհնեցէք ամ հողմք՝ հուր և ջեր զ՛։
Օրհնեցէք ցուրտ և տօթ՝ ցօղ և
ձիւնաբեր զտր․ օրհ՛։
Օրհնեցէք սառն և պարզ՝ եղեամն
և ձիւն զտր․ օրհ՛։
Օրհնեցէք տիւք և գիշերք՝ լոյս
և խաւար զտր․ օրհ՛։
Օրհնեցէք ամպք եւ փայլատա-
կունք՝ և երկիր զտր․ օրհ՛։
Օրհնեցէք լերինք՝ բլուրք՝ և ամ
բոյսք երկրի զտր․ օրհ՛։
Օրհնեցէք աղբիւրք՝ ծովք՝ եւ
գետք զտր․ օրհ՛։

 Օրհ

Օրհնեցէք կէտք և ամ կայտառք որ ՚ի ջուրս՝ և թռչունք երկնից զ՟։
Օրհնեցէք գազանք և անասունք և որդիք մարդկան զտր · օրհ՟։
Օրհնեսցէ իէլ զտր · օրհնեսցէ և՟։
Օրհնեցէք քահանայք զտր · օրհ՟։
Օրհնեցէք ծառայք տն զտր · օրհ՟։
Օրհ՟ անձինք և շունչք արդրց զ՟։
Օրհ՟ սրբք և խոնարհք սրտիւք զ՟։
Օրհնեցէք անանիա ազարիա եւ միսայէլ զտր · օրհնե՟։

## Օրհնութիւն Մարիամու Աստուածածնին ·

Մեծացուսցէ անձն իմ զտէր · և ցնծասցէ հոգի իմ ած փրկչաւ իմով։
Նայց արար ՚ի վր խոնարհութեան աղախնոյ իւրոյ · այսուհետև երանեսցեն ինձ ամ ազգք։
Նարար ընդ իս մեծամեծս հզօրն · և սբ է անուն նր։
Ողորմութի արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց · և արար զօրութի բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց
սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց։
Զ խոնարհս բարձրացոյց. զկարօտս
ելից բարութեամբ. և զմեծատունս
արձակեաց ունայնս։
Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի
իւրոյ՝ յիշելով զողորմութիւն իւր։
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ
աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

Օրհնութիւն զաքարիայի՝ հօրն Յովհաննու-
մկրտչի։ Պ. ուխտս, Ս.

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի որ յայց ել, և
արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։
Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան
'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ.
որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որք
յաւիտենից մարգարէքն էին։
Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց. և
'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։
Առնել զողորմութիւն առ հարսն մեր՝
և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ.
Երդումն զոր երդուաւ աբրահամու

հօր մերոյ՝ տուր մեզ առանց երկեւ-
ղի զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց։
Պաշտել զնա սրբութե եւ արդարութե
առաջի նր զամ աւուրս կենաց մերոց
Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձ-
րելոյն կոչեսցիս. գնասցես առաջի
տն պատրաստել զճանապարհս նր.
Տալ զգիտութիւն փրկեն ժողովրդեան
իւրոյ 'ի թողութիւն ամ մեղաց մերոց։
Վս գթոյ ողորմութե տն այ մերոյ
որով երեւեցաւ մեզ արեգկն 'ի բար
ձանց լուսաւոր առնել զխաւար մեր։
Ծագել լոյս 'ի վերայ այսոցիկ՝ որք
նստեաք 'ի խաւարի եւ 'ի ստուերս
մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանա-
պարհս խաղաղութեան։

ՍԱՂՄ. ՍԻՄԷՕՆԻ ԾԵՐՈՒՆՈՅՆ. ՂՈՒԿ. Բ.

Արդ՝ արձակեա զծառայս քո տր՝ ըստ
բանի քում 'ի խաղաղութե. զի տե-
սին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատ-
րաստեցեր առաջի ամ ժողովրդոց։
Լոյս յայտնեցոր հեթանոսաց. եւ
փառք ժողովրդեան քում իսրլի։

## ՃԽԲ

Օրհնեցէք զՏր յերկնից · օրհ
նեցէք զնա ՚ի բարձունս։
Օրհնեցէք զնա հրեշտակք նորա ·
օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նր։
Օրհնեցէք զնա արեգակն և լուսին
օրհնեցէք զնա ամ աստեղք և լոյս։
Օրհնեցէք զՏր երկինք երկնից ·
և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս՝
օրհնեցէք զանուն Տն։
Զի նա ասաց՝ և եղեն · հրամայեաց
և հաստատեցան։
Կացոյց զնս յաւիտեան յաւիտե-
նից · սահման եդ և ոչ անցանեն։
Օրհնեցէք զՏր յերկրէ վիշապք
և ամ խորք։
Հուր և կարկուտ · ձիւն և սառն ·
հողմ և մրրիկ՝ որք առնեն զբան նր։
Լերինք և ամ բարձունք · ծառք
պտղաբերք՝ և ամ մայրք։
Գազանք և ամենայն անասունք ·
սողունք՝ և ամ թռչունք թեւաւորք։

 Թա

Թագաւորք երկրի և զօրք իւրեանց·
իշխանք և ա՟մ դատաւորք երկրի։
Երիտասարդք և կուսանք · ծերք
և տղայք օրհնեցէք զանուն տ՟ն
Բարձրացաւ անուն նո՟ր միայն · խոս
տովանութի նմա յերկինս և յերկրի։
Բարձր առնէ տ՟ր զեղջիւր ժողո
վրդեան իւրոյ · օրհնութի նմա յա՟մ
ս՟րբց նո՟ր · յորդւոցն իսէ՟լի ժողովրդեան
որ մերձ է առ տ՟ր ։

Ալէլուիայ · անգէոյ և ըստ՟։ (ՃԽԹ)

Օրհնեցէ՛ք զտ՟ր յօրհնութի նոր ·
օրհնութի նմա յեկեղեցիս ս՟րբց։
Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր
որդիք սիօնի ցնծասցեն ՚ի թագա
ւորն իւրեանց։
Զանուն նորին օրհնելով սաղմոսիւք
և օրհնութբ սաղմոս երգեսցեն նմա։
Հաճի տ՟ր ընդ ժողովուրդ իւր ս՟բ
և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութե։
Պարծեսցին ս՟րբքն փառօք · և ցնծաս
ցեն ՚ի հանգիստ իւրեանց · և բարձր
արասցեն զա՟ծ բերանօք իւրեանց։

 Սուր

Սուր երկսայրի եւ ՚ի ձեռս նոցա ·
առնուլ զհատուցումն ՚ի հեթանոսս։
՚ի յանդիմանութի՟ ա՟մ ժողովրդոց։
՚Ի կապել զթագաւորս ն՟ց կապա_
նօք · զփառաւորս ն՟ց ձեռնակապօք
երկաթեօք։
Առնել նոցա դատաստան ըստ գրոց·
եւ փառք այս են ա՟մ ս՟րբ ն՟ր։

Ալէլուիայ · Անգեայ Եւ Զա՛՛։ ՃԾ

Օրհնեցէք զա՟ծ ՚ի սրբութե՟ ն՟ր ·
օրհնեցէք զնա ՚ի հաստատութե՟
զօրութեան ն՟ր։
Օրհնեցէք զնա ՚ի զօրութե՟ ն՟ր · օրհ
նեցէք զնա ՚ի բազում մեծութե՟ ն՟ր։
Օրհ՛՛ զնա ՚ի ձայն օրհնութե՟ · օրհնե
ցէք զնա սաղմոսիւք եւ օրհնութ՟բ։
Օրհնեցէք զնա ցնծութ՟բ · գովե
ցէք զնա ուրախութ՟բ։
Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր ·
գովեցէք զնա ՚ի բարբառ լսելիս ·
Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութե՟ ·
ամենայն հոգիք օրհնեցէք զտէր։

## Աղօթք Մանասէի Թա
## գաւորին։

Տ ամենակալ՝ ած աբրահա
մու՝ իսահակայ՝ յակոբայ
և զաւակին նց արդարոց.
ամենակալ տր՝ Թող զմեղս իմ։
Որ արարեր զերկինս և զերկիր՝ և
զամ զարդ նոցա . ամենակալ տր"։
Որ կապեցեր զծով բանիւ հրա-
մանի քո , փակեցեր զխորս , կնքե-
ցեր ահաւոր և փառաւորեալ ան-
ուամբ քով . ամենա"։
Որ ամ ինչ սարսի և դողայ յերե-
սաց ահի զօրութեն քո . ամե"։
Անբաւ է մեծ վայելչուն փառաց
սրբութեն քո . սաստիկ է բարկուն
սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւո
րաց . անչափ և անքննելին են ողոր
մուիք աւետեաց քոց . ամե"։
Դու տր բարձրեալ գթած երկայնա
միտ բազումողորմ . և զղջանաս ՚ի
վերայ չարեաց մարդկան . ամե"։
Դու ած՝ ոչ եդեր ապաշխարուն վն
արդարոցն աբրահամու իսահակայ

և յակոբայ՝ որք ոչ մեղան քեզ . ա՛՛:

Այլ եղեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս , զի մեղայ աւելի քան զաւազ ծովու , և բազմացան անօրէնութիւնք իմ . ամե՛՛:

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից՝՝ի բազմու թենէ անօրէնութեան իմոյ . ամե՛՛:

Կորացեալ եմ ես ՚ի բռնութէ կա պանաց երկաթից՝ և ոչ գոյ ինձ հանգիստ . ամե՛՛:

Բարկացուցի զսրտմտութի՞ և զչար առաջի քո արարի . կանգնեցի պատ կեր՝ և բազմացուցի զցասումն անձին իմոյ . ամենա՛՛:

Եւ արդ Տէր խոնարհեցուցանեմ զծունդս սրտի իմոյ՝ և հայցեմ ՚ի քաղցրութենէ քումմէ . ամե՛՛:

Մեղայ տէր մեղայ . և զանօրէնու թիւս իմ ես ինձէն գիտեմ . ամե՛՛:

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն՝ թող ինձ տէր՝ թող ինձ . և մի կորուսաներ զիս ընդ անօրէնութե իմոյ . ամե՛՛:

Մի յաւիտեան բարկանար ինձ տէր,

 և

և մի՛ յիշեր զչարիսն իմ․ և մի՛ պար-
տաւորեր զիս ընդ իջեալսն 'ի ներ-
քոյ երկրի չարեօք․ ամէ՛ն։

Զի դու տէր՝ տէր ապաշխարողաց
ես․ և յիս ցոյց զբարերարութիւն քո,
որ անարժանն եմ․ ամէ՛ն։

Կեցուսցես զիս ըստ բազում ողոր-
մութեան քում․ և ես օրհնեցից զքեզ
զամ աւուրս կենաց իմոց․ ա՛։

Զքեզ տէր՝ օրհնեն ամ զաւր-
թունք երկնից․ և քո՛ են փառք
յաւիտեանս՝ ամէն։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ․
Այժմ և միշտ և՛։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր՝
Թո՛ղ ինձ զմեղս իմ։

Բազում ողորմ տէր՝ ողորմեա՛ ինձ։

Ած՛ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մե-
ղաց և կեցո՛։

Ած՛ գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս․
և ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս
ածածին մարիամ․ բարեխօսեա՛ առ
տէր վասն մեր։

Ամենայն սրբ՟ք այ՟՝ բարեխօսեցէք առ հայր ՚ի յերկինս վս՟ մեր մեղաւորացս.

Քս՟ որդի այ՟ անոխակալ՝ ընկալ զաղաչանս մեր. զի ՚ի քեզ են ապաւինեալ անձինք մեր.

Յաղթօղ զօրութեամբ՝ սրբ՟ եւ կենդանարար եւ պատուական խաչի քո՝ տր՟ պահպանեա զմեզ.

Առաքեա տր՟ զհրեշտակ խաղաղութե քո՝ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ եւ ՚ի գիշերի.

Ըս՛ մարդասիրութբ՟ քով յիշեա ըզմեզ տր՟՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութբ՟ քով եւ ողորմեա մեզ.

Նախադրութի՟ւ խորհրդականք՝ յաղագս տօնիցն՝ զոր արարեալ է Տեառն Ներսէսի Շնորհալւոյն Կաթուղիկոսին՝ Հայոց Աղուանիցոյ.

Աղօթք հասարակաց քրիստոնէից մեծաց եւ փոքունց. զոր պարտին ուսանել ամենեքեան՝ եւ ուսուցանել զմանկունս. Բահանայք զժողովուրդս. հարք զորդիս.

մայրք զդստերս . և ընկեր զընկերն
իւր։ Այլ աղօթեսցեն սովորաբար յա-
ւուրն է անգամ, երկոտասան ծնրա-
դրութեամբ ՚ի ժամուն ։ այսինքն՝
յառաւօտուն, ՚ի ճաշուն, ՚ի հասա-
րակ աւուրն, յերեկոյին, և ՚ի հան-
գստեան ։ Ապա թէ պղերգ ոք լի-
նիցի և ծուլանայ զէ ժամ աղօթս
կատարել, աղօթեսցէ դ անգամ .
կամ գ անգամ . կամ բ անգամ .
կամ մի անգամ յաւուրն։

Որ միայն ճանաչի թէ քրիստոնեայ է .
և զինքն ծանիցէ թէ՝ արարած եմ
այ՝ և երկիրպագու նորա ։ Այլ թէ
զամ բանս աղօթից հեղգայ ուսա-
նիլ, (որք և սատանայական երգս ըզ-
բաղումս փութով ուսանին) ուսցի
զկէսս նորա . կամ այլ նուագ։

Օի թէ տունս երիս ուսանիցէն
՚ի սմանէ՝ և աղօթեսցեն երիս ծըն-
րադրութբ ՚ի ժամուն, ընդունելի է
առաջի այ։ Ապա թէ ոք ՚ի քրիստո-
նէից անփոյթ առնէ զամ յուսա-
նելոյ և յաղօթելոյ, յանդիմանեսցի
և

և՚ի մոլար ժողովոյն այլազգեաց.
Որք՝ զաղօթսն զոր ուսոյց նոցա, ՚ի պատերազմունս անգամ ոչ խափանեն՝ թող թէ ՚ի խաղաղութեան.

Իսկ մեր ժողովուրդք արտաքոյ աղօթից տեղւոյ՝ բնաւ ոչ յիշեն զանուանն ա͞յ. զի ոչ ունին փոյթ ՚ի կարգս աղօթից ո͞պ զա͞ծապաշտս. այլ՝ սիրեն զդատարկաբանութիւն քան զաղօթս: Եւ՛ թէ երբեմն գան ոմանք յաղօթել առ քահանայն, կամ փակեալ բերանով կանգնին, կամ ղրուցատրութի͞ս առնեն ընդմիմեանս: Զի ոչ ինքեանք գիտեն բանս աղօթից, և ոչ քահանայից միտ դնեն սաղմոսաց և պաշտմանց.
Վ͞ս այսր պատճառի արարաք զաղօթս զայս՝ պարզ և յստակ բառիւ. վասն տխմարաց դիւրահաս լինելոյ. Որ է սակաւ ըստ բանից տունս ի͞դ. ըստ ժամուց տուընջեան և գիշերոյ, և ըստ տառից ս͞բց մարգարէիցն. և զօրաւոր ըստ մտաց
Զի է զայլովագոյն պէտս զխնդրուա

ուածոց մերոց որ յայ՛ ունի յինքեան
Ո՜վ տուաք ժողովրդեան մերում
յուսուցման · զի ամ̃ անձն քրիստոնէի
ուսցի զսա · և ուր հանդիպեսցին
՚ի ժամ աղօթիցն՝ խօսեսցին սովա́
ընդ այլ: Թէ յեկեղեցի, թէ ՚ի
տան, թէ յանդի, թէ ՚ի գործ ինչ,
թէ ՚ի ճանապարհի: Ո՜վ որք ուսա-
նիցին զսա և աղօթիցն մտադրութ̃՝
ջերմեռանդ սրտիւ և արտասուօք,
ամենայն խնդրուածք՝ որ գրեալ են
՚ի սմա՝ կատարեսցին ՚ի կենդանու-
թե̃ և յետ մահուն: Իսկ՝ որք ար-
համարհեն և ոչ ուսանիցին և ոչ ա-
ղօթեսցեն, ինքեանք տեսցեն ըզ-
վնասս անձանց իւրեանց:

Մեք հատուք ՚ի մէնջ զպատճառն՝
առնելով զաղօթս զայս · զի մի՛ այլ
եւս պատճառեսցեն՝ թէ ոչ գիտեմք
բանս աղօթից՝ վն̃ այնորիկ ոչ կամք
յաղօթս: Բայց՝ ծանիցեն այնպի-
սիքն · թէ սատանայ ոչ այնչափ ջա-
նայ զայլ բարեգործութիս մեր խա-
փանել, որչափ զաղօթս: զի գիտէ

 որ

որ յաղօթիցն միայն ինքն հալածի
՚ի մէնջ և ա͠ծ բնակի ՚ի մեզ։
Արդ՝ մեք աղաչեսցուք զբարերարն ա͠ծ՝ բանալ զաչս մտաց ձերոց · յօժարութի͠բ ուսանիլ զսա և աղօթել · և ա͠յ սիրելի լինիլ։

*Ո՛վ յաղօթելն՝ զԳրիգորիս Կաթողիկոս հայոց՝ և զեղբայրն նորին զՆերսէս զաղօթիցս յօրինողն յիշեցէք ՚ի քս͠ ։ Ո՛վ որք ընդ օրինակէք ՚ի գիրս զաղօթս, գրեցէք և զխորատակման բանս զայսոսիկ ։ Ո՛վ որք գրեն զսա, գրեսցին ՚ի դպրութի͠ կենացն յաւիտենից ։ Ո՛վ որք ուսանին և աղօթեսցեն, ողորմութի͠ ընկալցին ՚ի քէ͠ ։ և որք ուսուցանիցեն զընկերս, վարձս առցեն ՚ի յս͠յ ։ Ո՛վ որք գրենն, մի՛ առաւել քան զօրինակս՝ բան կամ գիր խառնեսցեն · և մի՛ նուազ գրեսցեն · զի մի՛ այլ և այլ լինիցին բանքն · այլ հաւասար լիցին ա͠մքեան, ուրև գրեսցին ։ Ո՛վ տխմարքն ՚ի գիրս՝ ուղիղ գրողացն տացեն գրել։ Ո՛վ քի͠ փառք յաւիտեանս ամէն։ (360

Աղօթս խորհրդական ամենայն հաւատացելոց ՚Ն.քն. Արարեալ Տեառն Ներսեսի Հայոց Կաթողիկոսի.

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ Հայր և Որդի և Սբ Հոգի. անեղ և անմահ բնութի. արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ եղելոց. ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս միասնական Սբ Երրորդութի և մի Ածութի. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե. և լուսաւորեա զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ՚ի հաճոյս և ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ. և՛։ Հայր երկնաւոր Ած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպ զանառակ որդին. և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմ՛՛։

Որդի՛ այ՝ ած ճշմարիտ՝ որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն մարիամայ վասն մերոյ փրկութե. խաչեցար՝ թաղեցար և յարեար ՚ի մեռելոց. և համբարձար փառօք առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպ զաւազակն յորժամ գաս արքայութբ քով. և ո՛։

Հոգի այ՝ ած ճշմարիտ՝ որ իջեր ՚ի յորդանան և ՚ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութբ սբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին ածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ող՛։

Անեղ բնութի՛ մեղայ քեզ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վն անուան քում սբյ. և ող՛։

Տեսող ամի՛ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ՚ի դպրութե կենաց. և՛։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կա-
մայ եւ ակամայ գիտութեամբ եւ անգիտութեամբ.
Թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի
՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչեւ
ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածու-
թեանդ քո. զգայարանօք իմովք՝ եւ
ամենայն անդամօք մարմնոյս. եւ ող.

Ամենախնամ Տէր՝ դիր պահապան աչաց
իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայիլ
յարատ. եւ ականջաց իմոց՝ ոչ ախոր-
ժել լսել զբանս չարութեան. եւ բերանոյ
իմոյ ոչ խօսել զստութիւն. եւ սրտի իմոյ՝
ոչ խորհել զչարութիւն. եւ ձեռաց իմոց՝
ոչ գործել զանիրաւութիւն. եւ ոտից
իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան.
այլ ուղղեա զշարժումս սոցա լինել
միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ող.

Հուր կենդանի քո՝ զհուր սիրոյ
քոյ զոր արկեր յերկիր, բորբոքեա
յանձն իմ. զի այրեսցէ զախտ հո-
գւոյ իմոյ. եւ սրբեսցէ զխիղճ մտաց
իմոց. եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ
իմոյ. եւ վառեսցէ զլոյս գիտութեան
քո ՚ի սրտի իմում. եւ ող.

Իմաստութ̃ի Հօր յա̃ տո՛ւր ինձ իմաս-
տութիւն՝ զբարիս խորհիլ և խօսիլ
և գործել առաջի քո յա̃մ ժամ.
'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի
գործոց փրկեա́ զիս. և ող″.

Կամեցող բարեաց Տէր կամարար՝
մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ
գնալ. այլ առաջնորդեա́ ինձ լինել
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և″.

Ա̃րքայ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զար-
քայութ̃ի քո, զոր խոստացար սիրե-
լեաց քոց. և զօրացո́ զսիրտ իմ ա-
տել զմեղս՝ և սիրել զքեզ միայն՝
և առնել զկամս քո. և ողոր″.

Խնամող արա̃ծոց՝ պահեա́ նշանաւ
խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի
պատրանաց մեղաց, 'ի փորձութեանց դիւ-
աց և 'ի մարդոց անիրաւաց և յա̃մ
վտանգից՝ հոգւոյ և մարմնոյ. և″.

Պահապան ա̃մե քն̃՝ աջ քո հովանի
լիցի 'ի վ̃ր իմ 'ի տուէ և 'ի գիշերի.
'ի նստել 'ի տան, 'ի գնալ 'ի ճ̃պհ,
'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի՛ երբէք
սասանեցայց. և ող″.

Ա՟ծ իմ, որ բանաս զձեռն քո և լը-
նուս զա՟մ արարածս ողորմութ՟բ
քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ.
զմ՛ւ հոգա և պատրաստեա զպէտս
հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ
մինչև յաւ՛իտեան. և ող՛՛:

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս
՚ի չար սովորութեց իմոց ՚ի բարի սո-
վորութիւն. և բևեռեա՛ ՚ի հոգի իմ
զսոսկալի օր մահուն, և զերկիւղ
գեհենոյն, և զսէր արքայութե՟ն.
զի զղջացայց ՚ի մեղաց՝ և գործեցից
զարդարութիւն. և ող՛՛:

Աղբիւր անմահութե՟՝ աղբերացո
՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխա-
րութե՟ ո՟պ պոռնկին. զի լուա՛ցից
զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զե-
լանելն իմ յաշխարհէս. և ող՛՛.

Պարգևիչ ողորմութե՟՝ պարգևեա
ինձ ուղղափառ հաւա՛տով և բարի
գործով և ս՟րբ մարմնոյ և արեան քո
հաղորդութ՟ն գալ առ քեզ. և՛՛:

Բարերար տ՟ր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս՝ քաղցրութ՟բ



ա՛ն

աւանդել զհոգի իմ, և անխռով
անցուցանել ընդ չարութի այսոցն՝
որք են 'ի ներքոյ երկնից. և՛՛։

Լոյս ճշմարիտ քս՟ արժանաւորեա
զհոգի իմ ուրախութբ՟ տեսանել
զլոյս փառաց քոց 'ի կոչման աւ-
ուրն. և հանգչել յուսով բարեաց՝
յօթևանս արդարոց մինչև յօր մե-
ծի գալստեան քո. և՛՛։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փա-
ռօք հօր՝ դատել զկենդանիս և զմ-
մեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան
ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս
'ի յաւիտենական հրոյն. և լսել տուր
ինձ զերանաւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութիւն. և՛՛։

Ամենողորմ տէր՝ ողորմեա ամ հաւա-
տացելոց 'ի քեզ՝ իմոց և օտարաց՝
ծանօթից և անծանօթից՝ կենդա-
նեաց և մեռելոց. շնորհեա և թշնա-
մեաց իմոց և ատելեաց թողութի՝
որք առ իս յանցանացն. և դարձո զնո-
սա 'ի չարեացն՝ զոր ունին վս՟ իմ,
զի ողորմութեան քում արժանի եղի-
ցին. և ող՛՛։

փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս
ծառայիս քո՝ և կատարեա՛ 'ի բարի
զխնդրուածս իմ. բարեխօսութեամբ սրբու
հոյ Աստուածածնին և յօհաննու մկրտչին
և սրբոյն ստեփաննոսի նախավկային
և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին
եւ՛ սրբոց առաքելոց՝ մարգարէից՝ վար-
դապետաց՝ մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնա-
ւորաց՝ կուսանաց՝ միանձանց՝ և ամենայն
սրբոց քոց, երկնաւորաց և երկրաւորաց.
Եւ՛ քեզ փառք և երկրպագութիւն
անբաժանելի սբ Երրորդութեդ
յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

❊ Սուղ բանք զօրաւորք ընդդէմ որոտմանց
կեղծերանաց, 'ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւո-
յ ասացեալ. Բան, 12.

Ընկալ քաղցրութեամբ տէր Աստուած
հզօր՝ զաղաչանացողիս զաղա-
չանս. Սաստիր գթու-
թեամբ առ պատկառեալս դիմօք.
փարատեա՛ ամենապարգև զամօթա-
կան տխրութիւն. բարձ յինէն ո-
ղորմած զանըմբռնելի ծանրութիւն.


ան

անջրպետեալ հնարաւոր զմահացու-
կրթութիւնս։ աւարեալ միշտ յաղթող
զխաբողին հաճուիս։ բացադրեալ
վերնային զմոլելոյն մառախուղ։
կնքեալ կեցուցիչ զկորուսչին ըն-
թացմունս։ ցրուեալ ծածկոտես զըմ-
բռնողին չար դատմունս։ խորտա-
կեալ անքննին զմարտողին դիմեց-
մունս։ տնազրեալ քո անուամբդ
զլուսանցոյց երդ յարկիս։ Պարփա-
կեալ քո ձեռամբդ զառաստաղ տա-
ճարիս։ գծագրեալ քո արեամբդ
զմուտ սեմոց սենեկիս։ կերպացո՛
զքո նշանդ 'ի հետս ելից մաղթողիս։
ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս
խշտիս։ մաքրեսցես 'ի հաղբից ըզ-
ծածկարան անկողնոյս։ պահեսցես
քո կամօքդ զտառապեալ անձն հո-
գւոյս։ անխարդախ արասցես զքո
շնորհեալ շունչ մարմնոյս։ կացուս-
ցես շրջափակ զպար զօրուդ երկ-
նայնոյ։ կարգեսցես 'ի դիմի ընդ-
դէմ դիւացն զաստու։ Տո՛ւր հնգստ
բերկրութե մահահանգոյնս նիրհման

՚ի խորին գիշերիս՝ բարեխօսութեամբ եւ հայցուածովք սրբուհւոյ Աստուածածնին. եւ ամենայն ընտրելոց։ Ամփոփեա՛ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանաց իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ ՚ի ծփական խռովութեանց՝ կենցաղական զբաղմանց՝ անրջական երազոց՝ խոլականաց ցնորից։

Յիշատակաւ քո յուսոյդ՝ անմոռանալի պաշտպանեալ. եւ սթափեալ վերըստին ՚ի նընջմանէ ծանրութեանց՝ ամենայն զգաստ արթնութեամբ՝ հոգենորոգ զուարթութեամբ՝ ՚ի քեզ արձանացեալ։

Ընդ այս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հոտոց՝ քեզ ամենօրհնել Թագաւոր փառաց՝ անձառելից փառաբանողաց երկնագունդ խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց՝ յաւիտեանս։

Աղօթք շնորհաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն. Բան, 93։

Ով յաւիտենական՝ բարերար եւ ամենակալ. ստեղծիչ լու-

և յօրհնիչ գիշերոյ ․ կեանք 'ի մա֊
հու՝ և լոյս 'ի խաւարի ․ յոյս ակն ու֊
նողաց՝ և երկայնմտութի տառապակու֊
սելոց։ Որ ամէնարուեստ իմաստութբ
քո՝ դարձուցանես յայգ զստուերս
մահու ։ աննուաղ ծագումն և ան֊
մուտ արփին ։ քանզի ոչ զօրէ ծած֊
կել զփառս լուսոյ քո խաւար գի֊
շերոյ ․ որում կրկնի ծունր երկր֊
պագութե ամ եղելոց ․ երկնաւորաց
և երկրաւորաց և սանդրմետականաց
Որ լսես զհեծութի կապելոց ․ և
հայցես յաղօթս խոնարհաց ․ և ընդու֊
նիս զխնդրուածս նոցա։ Տր իմ
և Թգր իմ ․ կեանք իմ և ապաւէն իմ ․
յոյս իմ և վստահութիւն իմ յա քն
ածդ ամք. Արդ՝ հանգուցել 'ի հո֊
գիս մեզ ․ մխիթարութի վշտաց , և
քաւարան մեղուցելոց ։ որ գիտես
զամ յառաջ քան զլինել նց ․ Նայեա՛
զպահպանողական զօրութի աջոյ քո՝
և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և
'ի դիւէ չարէ ․ ոչ զի զայիշատակ սոս֊
կալի և մեծ քո անուանդ՝ միշտ համ

բուրեալ շրթամբք հոգւոյ ըղձուն չնչոյ՝ կեցից պահպանել զ այնոսիկ որք կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ։ Ո՜ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ զոր ածային արեամբ քո ներկել նորոգեցեր՝ և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր՝ և 'ի փառս պատկերի քո նկարել յօրինեցեր, այսու պարգևօք ածականօք ամաչեսցէ սատանայ. քակտեսցին մեքենայքն. բարձցին որոգայթքն. պարտեսցին մարտուցլքն. պակասեսցին զէնքն սայրասուրք. մերժեսցի մէգն. փարատեսցի խաւարն. մեկնեսցի մառախուղն։ Բազուկ քո հովանասցի և աջ քո կնքեսցէ. վասն զի գթած ես և ողորմած. և անուն քո կոչեցեալ է 'ի վր ծառայից քոց։ Ո՜ քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք իշ
խանութի յաւէի՛՛։

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։ Բան, 41։

Որդի այ կենդանւոյ. օրհնեալդ յամենայնի։ Հօրդ ահաւորի



ան

անքննելին ծնունդ · որ տկարանայ առ ՚ի քէն եւ ոչ ինչ։ Որ ՚ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց, հալէին մեղք · հալածին դեւք · ջնջին յանցանք · խզին կապանք · խորտակին շղթայք · կենդանածնին մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութիւնք · տեղի տան տրխրութիւնք · նահանջին հեծութիւնք · փախնու խաւարն · մեկնի մէգն · մերժի մառախուղն · փարատի մըռայլն · սպառի աղջամուղջն · վերանայ մութն · գնայ գիշերն · տարագրի տագնապն · չքանան չարիքն · հալածին յուսահատութիւնք ։ Նա՛ թգու՛րէ ձեռն քո · ամենակալ քաւիչդ ամէն որ ոչ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ՝ կեցուցանել · Թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ քո ։

Ո՛վ ի դու միայն ես յերկնի անճառ, եւ յերկրի անքննին · ՚ի տարր գոյից, եւ յեզր ծագաց աշխարհի ։

Սկիզբըն ամենայնի՝ և յամենայնի.
ամենայնի՛ լըմամբ օրհնեալդ ՚ի
բարձունս. Նո՛ւ քեզ ընդ հօր
և հոգւոյդ մշտ փառք յաւի՛
տեանս յաւ՛իտնից ամէն։

Պուլջասմունութիւն Սողմոսացն Պաւ՛էլի.

Բանք սաղմոսիս է պատուա՛կան.
լըցեալ հոգւովն մծական.
և որք յասելըն յօժարս նան.
արքայութեն արժանա նան։
Սաղմոսըն հաց է երկնայ ին.
սեղան կազմեալ մեծի դաւ՛ թին.
որք՚ի հացէս այս կերակ րին.
աստուա՛ծային սիրովն յա գին։
Սաղմոսըն գանձ է անըս պառ.
այնմ որ ստանայ մըտօք պայ ծառ.
զըլապատեր հոգւոյն պահէ ՚ի վառ.
և մըտանէ ՚ի փառս ան ձառ.
Սաղմոսն աղբիւր կենդանա րար.
մեղաց քաւ՛իչ և սրբա րար.
և որ ասէ զսա մեղմա բար.
նա մըզ հոգւոյն լինի տա ճար.



Խոկ

Իսկ որք չասեն և քուն լի   նին.
և սաղմոսին ոչ փափա   գին.
յանմահական հացէն սո   վին.
յաւուր մեծի դատաստա   նին:
Եւ որք ասեն զսա կիսա   տուն.
վընասս առնեն իւրեանց հո   գուն.
Թէպէտ և կան զգիշերն արթուն.
դատարկ մընան 'ի սբ̃ վար   ձուն:
Իսկ որք ասեն ծայրատե   լով.
անմըտաբար շաղփաղփե   լով:
վայ է նոցա պահեալ յո   լով.
զի յաստուծոյ են ամօ   թով:
Իսկ որ ծայրատ զսաղմոսն   ասէ.
և կիսատուն յաւարտ   ածէ.
նա յո̃յ զամօթ կրես   ցէ.
և'ի բարեացն անմասն եղ   ցէ:
Եղբայր ինձ միտ դիր դու հոգով.
տեսի տաճար մի լի լու   սով.
շինած կազմած ութն անկիւ նով.
և աստիճանքն իւր համա   րով:
Վաթսուն ու չորս ոսկի դըռնով.
հարիւր յիսուն պատուհա   նով.
առ նա կուսանքըն գան լա   լով.
բոզքն և պոռնիկքն պարեն հգ̃վ:


Սա

Սիրէ որ կամի յօժար սըր   տով·
խըմէ ըղձա տօկի թա   սով·
ուրախանայ ինքըն հո   գւով·
յարքայութեան ըն պարե   րով:
Ութըն մաղախ ես ու   նէի·
եւամէն մէկն ութ քըսա   կի·
զոյն որ պիտէր զայն բա   նայի·
նա ինձ բուրէր հոտ կընդըր   կի:
Ութ փարչ տեսի կաթամբ լցած·
գոմով էին քան զհուր վա ռած·
յորոց արբի ես անքօ   տած·
ո՛չ լիցայ զերթ ծարաւ   ած:
Շընորհալի մին աղիւ   սակ·
ունի հազար լեառն ըսպի   տակ·
նոցա մաքիքն են սեւո   րակ·
իւրեանց հովիւքն ո՞չ զհրեշտակ·
Մօրն իւր արգանդն էր սեւայ ին·
հօրըն բարակ անեծէ   ին·
որդիքըն սեաւ ծընանէ   ին·
դաշտ յըսպիտակ բընակէ   ին:
Դաշտ մի արձակ եւ պատուա կան·
ըլցեալ ծաղկօք յոյժ զանա   զան·
ո՛չ յեղանակս միայն գար   նան·
այլ անթառամ ժամա ամե   նայն:



Խըր

## Խնդիր սոյն Աստուածաբանական Պօղոսապօ-
## ժողովածուի Աղիւսակին։

Այլ զԹուականն յորում ամի և կիցես 'ի հանգերպակաց տեղոյն· և առ զգիր տարւոյն՝ որ է մերձ նմին· (եւս որք զոյգ են նոր գրով, նահանջք են նոքին) և գիտ զնոյն գիր 'ի հետևեալ խորանս՝ առաջին աղիւսակաց· Յորս իւրաքանչիւրքն յայտնեն մինչ 'ի քէն՝ գլխագիր տառիւք եդեալք են 'ի շարս սկզբբան յերիս զոյգ երեսս Թղթոյն· և որ ինչ 'ի դէմս իւր գրեալ է այն է մինչև ցամարտ տարւոյն անշրէպ։ Օրինակ՝ Թուական տարւոյս որ է ՌՄԻ, գիր տարւոյն՝ է տառն Օ· զոր շրջեալ զԹուղթսն գտանես յերկրորդում աղիւսակին· և որ ինչ է կից նմին 'ի կարգի յայնմիկ, ցուցանէ յայտնի զամենեսեան Այսինքն՝ զոր յայտնութեն, զմիջոց ուտիսն, և այլն կարգաւ մինչև ցոր բարեկենդանի յայտնութե։ Այլ քի տուողին գիտութե փառք յաւիտեանս ամէն։



Թուա

| Թուական | Գիր տարւոյ | Եօթնեկէ | Մերադեր | Տանուտէր |
|---|---|---|---|---|
| ռմի | զ | զ | իդ | Երկաւորն : |
| ռմիա | դշ | էա | ե | Խեցգետինն : |
| ռմիբ | ժ | բ | ժզ | Առիւծն : |
| ռմիգ | վ | գ | իէ | Կոյսն : |
| ռմիդ | ն | դ | ը | Կշիռն : |
| ռմիե | ծխ | եզ | ժթ | Կարիճն : |
| ռմիզ | պ | է | լ | Աղեղնաւորն : |
| ռմիէ | զ | ա | ժա | Այծեղջիւրն : |
| ռմիը | ժ | բ | իբ | Ջրհոսն : |
| ռմիթ | ձ | գդ | գ | Ձուկն : |
| ռմլ | ծ | ե | ժդ | Խոյն : |
| ռմլա | զ | զ | իե | Ցուլն : |
| ռմլբ | պ | է | զ | Երկաւորն : |
| ռմլգ | իծ | աբ | ժէ | Խեցգետինն : |
| ռմլդ | վ | գ | իը | Առիւծն : |
| ռմլե | ն | դ | թ | Կոյսն : |
| ռմլզ | է | ե | իա | Կշիռն : |
| ռմլէ | ջդ | զէ | բ | Կարիճն : |
| ռմլը | զ | ա | ժգ | Աղեղնաւորն : |
| ռմլթ | գ | բ | իդ | Այծեղջիւրն : |



Գիր

| Գիր տարւոյ | Օր Յայտնութեան | Միջոց աւուրց, օր | Առաջաւորաց բարեկ՛ | Բուն բարեկենդան | ※ ԶԱՏԻԿ | Երեւման խաչ | Համբարձման | Հոգեգալստեան | Սբ Գրիգորի Ելքն'' | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ | փետր | մարտ | ապրիլ | ապրիլ | մայիս | մայիս | յունիս |
| Ա. | Գշ | ղ | ժա | ա | իբ | ժթ | լ | ժ | լա | իը |
| Բ. | Եշ | է | ժբ | բ | իգ | ի | մա‖ա | ժա | յն‖ա | իթ |
| Գ. | Կիր | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ. | Ուրբ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յլ‖ա |
| Ե. | Դշ | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ. | Եշ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է. | Գշ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը. | Գշ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ. | Եշ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ. | Կիր | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի. | Ուրբ | ժզ | իա | ժա | ապ‖ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ. | Դշ | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |

| Մինչ շաբաթք պահոց: | Աստուածածին: | Մինչ շաբաթք պահոց: | Մուրէ խաչ: | Մէ Գէորգայ եարբէ": | Մինչ ատուէ՛ շաբաթք: | Գիւտ խաչ: | Յինանց եարբէնինդան: | Մէ Յակոբայ եարբէ": | Մինչ ատուէ, օր: | Օր եարբէնինդանի Յայտնութէ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս: | | սեպ: | սեպ: | | հոկ: | նոյե: | դեկ: | | |
| է | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | գշ |
| է | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | բշ |
| է | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | կիւ |
| զ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբ |
| զ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| զ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | եշ |
| զ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | դշ |
| զ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | գշ |
| զ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | բշ |
| զ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | կիւ |
| ե | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբ |
| ե | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |

| Գիր տարւոյ | Օր Ցոյցատուութեան | Միջոց տաւնէ · օր | Առաջաւորաց բարեկ՛ | Բուն բարեկենդանին | * Զ. ԱՏԻԿ | Երեւման խաչ | Համբարձման | Հոգեգալուստ | Սբ Գրիգորի տօնէ'' | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունր | փետր | ապրլ | մայիս | մայիս | մայիս | յունիս | յուլիս |
| Խ | Ե չէ | ժը | իգ | ժգ | գ | ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| Ծ | Գ չէ | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | Գ չէ | ի | իե | ժե | ե | գ | ժդ | իդ | ժդ | ժբ |
| Հ | Բ չէ | իա | իզ | ժզ | զ | դ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | կրկ | իբ | իէ | ժէ | է | ե | ժզ | իզ | ժզ | ժդ |
| Ղ | չէ Բ | իգ | իը | ժը | ը | զ | ժէ | իէ | ժէ | ժե |
| Ճ | Դ չէ | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | Ե չէ | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | Գ չէ | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ | ի | ժը |
| Ն | Դ չէ | իէ | փ‖ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | Բ չէ | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | յ‖ա | իբ | ի |
| Ո | կրկ | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |

| Սկզբն շաբաթուն պահօց | Լ[illegible] | Սկզբն շաբաթուն պահօց | Սուրբ Խաչ | Սբ Վարդավառոյ տօնն | Սկզբն առաջի շաբաթուն | Գիւտ Խաչ | Յիսնակոյ բարեկենդանն | Սբ Յակոբայ տօնն | Սկզբն առաջին , օր | Օր բարեկենդանին Յայտնութեան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյե | դեկ | | |
| ե | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | ե շբ |
| ե | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | զ շբ |
| ե | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | գ | ժը | է շբ |
| ե | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | ը շբ |
| ե | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | նշնե |
| դ | ժթ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | ա շբ |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | գ շբ |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | ե շբ |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | զ շբ |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | գ | ժը | է շբ |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | ը շբ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | նշն նշ |

| Գիր տարւոյ | Օր Յայտնութեան | Մեղոյ սատէք․ օր | Առաջաւորաց բարեկէն՛՛ | Բուն բարեկենդան | *ԶԱՏԻԿ | Երևման խաչ | Համբարձումն | Հոգեգալուստ | Սբ Գրիգորի եարք՛՛ | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետ | փետ | ապր | մայս | մայս | յունս | յունս | յուլս |
| Չ | շբթ | լ | դ | իե | ժե | ժգ | իդ | գ | իդ | իբ |
| Պ | զշ | լա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իգ |
| Ջ | եշ | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | դշ | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | գշ | լդ | ը | մրտ ա | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | բշ | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | կիր | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | շբթ | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | յլ ա | իթ |
| Ց | զշ | լը | ժբ | ե | իգ | իա | յն ա | ժա | բ | լ |
| Ւ | եշ | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | դշ | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | օգ ա |
| Ք | գշ | խա | ժե | Զ. Նայեցեալն ՚ի Փետրուարն տես | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մինչեւ շաբաթն պահոց ։ | | գ | գ | գ | գ | գ | գ | գ | բ | բ | բ | բ |
| Նաւասարդածէն ։ | օգոս | ժբ | ժգ | ժդ | ժե | ժզ | ժէ | ժը | ժբ | ժգ | ժդ | ժե |
| Մինչեւ շաբաթն պահոց ։ | | ե | ե | դ | դ | դ | դ | դ | ե | ե | դ | դ |
| Սուրբ խաչ ։ | սեպ | ժզ | ժէ | ժա | ժբ | ժգ | ժդ | ժե | ժզ | ժէ | ժա | ժբ |
| Ս̄բ Գէորգեայ Բարեկ՝ ։ | սեպ | իգ | իդ | ժը | ժթ | ի | իա | իբ | իգ | իդ | ժը | ժթ |
| Մինչեւ [illegible]՝ շաբաթն ։ | | է | է | ը | ը | է | է | է | է | է | ը | ը |
| Գիւտ խաչ ։ | հոկ | իը | իթ | իդ | իդ | իե | իզ | իէ | իը | իթ | իդ | իդ |
| Յիսնակաց Բարեկենդանն ։ | նոյե | ժը | ժթ | ի | իա | ժե | ժզ | ժէ | ժը | ժթ | ի | իա |
| Ս̄բ Յակոբայ Բարեկ՝՝ ։ | դեկ | թ | ժ | ժա | ժբ | զ | է | ը | թ | ժ | ժա | ժբ |
| Մինչեւ [illegible], օր ։ | | ժե | ժդ | ժգ | ժբ | ժը | ժէ | ժզ | ժե | ժդ | ժգ | ժբ |
| Օր Բարեկենդանին Յայտնութեան ։ | | ՃԻԲ | ԴՃԻ | ԵՃԻ | ԶՃԻ | ԷՃԻ | ԸՃԻ | ԹՃԻ | ՃԻԲ | ԴՃԻ | ԵՃԻ | ԶՃԻ |

Յիշատակարան ։

# ՓԱՌՔ ՊԱՏԻՒ

և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ամէն.

Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս օգնականութեամբ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ՚ի վայելումն մանկանց սիօնի.

՚Ի Հայրապետութեան Տեառն Սիմէօնի Սրբազն Կաթողիկոսի ամ Հայոց.

Եւ ՚ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Պօղոսի Երջանկազարդ Վարդապետի.

Իսկ և ՚ի Պատրիարգութեան Կոստանդնուպոլսոյ՝ Տեառն Գրիգորի Խոջամազարդ Վարդապետի.

՚Ի Կոստանդնուպոլիս.

՚Ի Տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի.

Արդ՝ որք հանդիպիք այսմ հոգենուագ սաղմոսարանիս՝ զվերոյգրեալ ստեփաննոսն խուրայնազքն՝ և զնորին գործակիցն ՚ի գործարանիս զտիրացու Պօղոսն՝ և զայլ աշխատաւորսն՝ յիշել ՚ի Քս, աղաչեմք.

Որ [illegible] Տէր [illegible],
՚ի [illegible].

[illegible]
[illegible]
124 [illegible] 15 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Զմեղաւոր Մանուէլ երէց և զմեղաւոր [illegible]
ի մեղաւոր [illegible] ։ Զմեղաւոր [illegible] [illegible] ։
Զմեղաւոր [illegible] [illegible] ։ Զմեղաւոր [illegible]
երէց [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] զմեղաւոր [illegible]
[illegible] յիշեցէք